

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՐՄԵՆԱԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Քաղաքական ուսմունքները նորագույն ժամանակներում

(Ուսումնական ձեռնարկ)

2-րդ հրատարակություն

ՀՀ կրթության և գիտության նախարարությունը
աշխատանքը երաշխավորել է հրատարակելու որպես
ուսումնական ձեռնարկ բուհերի ուսանողների համար

Երևան

ԵՊՀ հրատարակչություն

2015

ՀՏԴ 32.001(07)

ԳՄԴ 66.0 ց7

Մ 283

*Հրահարական է երաժիշավորել
ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի
գիտական խորհուրդը*

Պատասխանատու խմբագիր՝

ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի Քաղաքական պատմության և տեսության ամբիոնի վարիչ, ք.գ.դ. պրոֆեսոր Ա. Ենգոյան

Գրախոսներ՝

ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ ամբիոնի վարիչ, ք.գ.դ. պրոֆեսոր Գ. Քեռյան

ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի Քաղաքական գիտության պատմության և տեսության ամբիոնի պրոֆեսոր, փ.գ.դ. Յ. Մանուկարյան

Մանուկյան Ա.

Մ 283 «Քաղաքական ուսմունքները նորագույն ժամանակներում»։ Ուսումնական ձեռնարկ/ Ա. Մանուկյան։ -Եր., ԵՊՀ հրատ., 2015, 198 էջ։

Ա.Մանուկյանի «Քաղաքական ուսմունքները նորագույն ժամանակներում» ուսումնական ձեռնարկը նախատեսված է բուհերի քաղաքագիտության բաժինների ուսանողների համար։ Այն նպատակ է հետապնդում անհրաժեշտ գիտելիքներ հաղորդել ուսանողներին նորագույն ժամանակների քաղաքական տեսությունների մասին, նրանց մոտ զարգացնելու ժամանակակից քաղաքական կյանքի ինքնուրույն ուսումնասիրության կարողություններ և հմտություններ։

Գիրքը կարող է օգտակար լինել նաև հումանիտար այլ ֆակուլտետների ուսանողների, մասնավորապես՝ պատմաբանների, միջազգայնագետների, սոցիոլոգների, հոգեբանների և ուր., ինչպես նաև քաղաքագիտությամբ հետաքրքրվող ընթերցասերների համար։

ՀՏԴ 32.001(07)

ԳՄԴ 66.0 ց7

ISBN 978-5-8084-2004-5

© ԵՊՀ հրատ., 2015

© Մանուկյան Ա., 2015

Երկու խոսք

Ա. Մանուկյանի «Քաղաքական ուսմունքները նորագույն ժամանակներում» ուսումնական ձեռնարկն առաջին փորձն էր հայերեն լեզվով ներկայացնելու մի դասընթաց, որը նվիրված է ժամանակակից քաղաքագիտության հիմնական խնդիր հանդիսացող՝ ժամանակակից քաղաքական տեսությունների ներկայացմանը: Այն նախատեսված է բուհերի քաղաքագիտության բաժնի բակալավրիատի ուսանողներին ուսուցանելու նորագույն ժամանակների քաղաքական տեսությունները:

Նորագույն ժամանակների տեսությունները՝ որպես առանձին դասընթաց, ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետում ներդրվել է 2010 թվականին Ա. Մանուկյանի կողմից և նրա «Քաղաքական ուսմունքները նորագույն ժամանակներում» ուսումնական ձեռնարկը, որը լույս է տեսել 2011 թ. ֆակուլտետի գիտխորհրդի երաշխավորությամբ, փաստորեն, դրական փորձաշրջան է անցել՝ օգնելով ուսանողներին առավել դյուրին ըմբռնելու առարկան, կողմնորոշվելու բավականին բարդ քաղաքագիտական խնդիրներում, խորանալու ուսումնական ձեռնարկում արժարժված տեսական ուսմունքների մեջ: Պետք է հաշվի առնել այն դժվարությունները, որն ունեցել է հեղինակն՝ առաջին անգամ ներկայացնելով տվյալ դասընթացը հայերեն: Ի պատիվ նրա նշենք, որ բավականին հաջող է լուծել իր առջև ծառացած խնդիրները և կարողացել է հնարավորինս հասկանալի և մատչելի լեզվով մատուցել դասընթացը, ինչը կարևոր է բակալավրիատի ուսանողների համար: Հեղինակի կազմած ծրագիրը հնարավորություն է ընձեռում ամբողջական պատկերացում կազմելու առարկայի մասին՝ միաժամանակ ուսումնասիրելով և յուրացնելով համապատասխան բաժինները, ինչի շնորհիվ բակալավրիատի ուսանողները կարող են ինքնուրույն խորանալ այդ հարցերի մեջ:

Աշխատանքում ներկայացված են արդի քաղաքական տեսությունների ակունքները և հիմնավորման խնդիրները, նորմատիվ քաղաքական տեսությունները, լիբերտարիզմն ու կոմունիստարիզմը, պահպանողական (կոնսերվատիվ) քաղաքական տեսությունները, ֆաշիզմի տեսությունը, մարքսիզմը, նեոմարքսիզմը, անարխիզմը,

ստրուկտուրալիզմը և հետստրուկտուրալիզմը, մոդեռնիզմն ու հետ-մոդեռնիզմը: Վերոնշյալ տեսությունները տրված են այդ ուսմունքների հիմնական տեսաբանների գլխավոր աշխատությունների ներկայացմամբ, ընդ որում՝ հիշատակված են նաև այդ հեղինակների այլ գործեր, ինչը հնարավորություն է տալիս ուսանողներին նաև ինքնուրույն խորանալու արծարծված խնդիրների մեջ: Այդ նպատակով հեղինակն առաջարկել է ինքնուրույն աշխատանքներ կատարելու համար թեմաներ, ինչպես նաև ուսումնական ձեռնարկում առկա է համապատասխան գրականության ցանկը:

Ժամանակակից քաղաքական տեսության կապը գործնական քաղաքականության և մարդկության քաղաքական պատմության հետ անվիճելի է, ուստի պատահական չէ, որ Ա.Մանուկյանը ուսումնական ձեռնարկում ուշադրություն է դարձրել տարբեր հեղինակների քաղաքական տեսությունների համեմատական վերլուծության վրա:

Դասընթացը յուրացնելու, միջանկյալ և ավարտական քննություններին պատրաստվելու հարցում ուսանողներին կարող է օգնել ուսումնական ձեռնարկում ներկայացված «Քաղաքական ուսմունքները նորագույն ժամանակներում» առարկայի ուսումնական ծրագիրը, համապատասխան հարցաշարը և գրականության ցանկը:

Աշխատանքը երկրորդ հրատարակությանը նախապատրաստելիս՝ հեղինակը կարևոր լրացումներ է կատարել քաղաքական տեսաբանների մասին: Հաշվի են առնվել դասավանդման ընթացքում առաջացած մասնակի խնդիրները, ուսանողների կողմից հնչեցրած ցանկությունները, ընդհանուր առմամբ ավելացվել են որոշ գլուխների (1,5,6,8,12) բովանդակությունը, կատարվել են համապատասխան խմբագրումներ, ուղղվել են նկատված վրիպակները և էականորեն ավելացվել է գրականության ցանկը:

Պատասխանատու խմբագիր՝

**ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի
Քաղաքական պատմության և տեսության ամբիոնի վարիչ,
ք.գ.դ. պրոֆեսոր Ա. Փ. Ենգոյան**

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Նորագույն ժամանակների քաղաքական ուսմունքների իմացությունն արդի քաղաքագիտության կարևորագույն և անհրաժեշտ պահանջն է: Ինչպես հայտնի է, քաղաքական գիտությունը միայն 20-րդ հարյուրամյակի կեսերից սկսեց ձեռք բերել ինքնուրույնություն և դարձավ սոցիալական իմացության գլխավոր ուղղություններից մեկը: Հայտնի է, որ մարդկային հասարակության պատմությունը հազարամյակներ է ընդգրկում, նույնքան երկար պատմություն ունի նաև քաղաքականությունը, սակայն միայն նախորդ դարն անվանվեց քաղաքականության դար: Դա, առաջին հերթին կապված էր նրա հետ, որ բազմաթիվ երկրներ անցան ժողովրդավարությանը, լայն զանգվածներ ներգրավվեցին քաղաքականության մեջ, տեղի ունեցավ միջազգային հարաբերությունների գլոբալիզացիա: Քաղաքագիտության ձևավորումն ու զարգացումը կապված է բազմաբույլ քաղաքական մտածողների անվան հետ, որոնցից շատերի տեսությունների հետ կծանոթանանք այս ձեռնարկի ուսուցման ընթացքում:

Դասընթացի նպատակն է քաղաքագիտություն ուսումնասիրող ուսանողներին ծանոթացնել ժամանակակից քաղաքական տեսությունների հետ, որպես քաղաքականություն հետազոտելու միջոց: Ուսանողները, բացի ժամանակակից հիմնական տեսությունները յուրացնելուց, կուսումնասիրեն նաև որոշ հատվածներ դասական և ժամանակակից տեսաբանների աշխատություններից, ինչը հնարավորություն կտա նրանց ծանոթանալու վերջիններիս ստեղծագործական լաբորատորիայի հետ: Դրա անհրաժեշտությունը բխում է այն հանգամանքից, որ ժամանակակից քաղաքական ուսմունքներն առաջացել են նախորդ ժամանակների քաղաքական տեսությունների հիմքի վրա և նորի ընթերցման համար հարկավոր է նախկինի իմացությունը: Առանց հիմնարար քաղաքական տեսությունների իմացության անհնար է հասկանալ և յուրացնել նորագույն ժամանակների ուսմունքներն ու մոտեցումները: Ընդ որում, հիմնական ուշադրությունը դարձվում է այն բանի վրա, որ ուսանողները ծանոթանան քաղաքական մտքի տարբեր ավանդություններ ունեցող ներկայացուցիչների միջև ընթացող բանավեճերի հետ, միաժամանակ՝

ուշադրություն դարձնելով նրանց մեթոդաբանական մոտեցումների տարբերությունների վրա: Շատ դեպքերում դրանք զուտ մեթոդաբանական վեճեր չեն, որոնք ինքնըստինքյան գիտական հետաքրքրություն են առաջացնում, այլ քաղաքական տեսության բազմաթիվ ու բազմաբնույթ պատկերացումներ են, որոնցից են հիմնականում կախված քաղաքագիտական ուսումնասիրությունների արդյունքները: Այդ քաղաքագիտական տեսական-մեթոդաբանական մոտեցումները ձևավորում են քաղաքական աշխարհի սեփական կերպարը: Այսպիսով, ուսումնառության ընթացքում ուսանողները պետք է տիրապետեն նորագույն ժամանակների քաղաքական տեսության հիմնական ուղղություններին, որպեսզի տարաբնույթ քաղաքական խնդիրները հետազոտելիս կարողանան կողմնորոշվել այս կամ այն մեթոդաբանական մոտեցումների օգտագործման նպատակահարմարության մեջ: Առավել ևս, որ այդ մեթոդաբանական մոտեցումները շատ դեպքերում փոխլրացնում են իրար, հնարավորություն ընձեռում շարունակելու ուսումնասիրությունները նորովի, քանի որ հետազոտության խնդիրները, որպես կանոն, համընկնում են: Դրա շնորհիվ քաղաքական տեսությունը ձեռք է բերում զարգացման սեփական դինամիկան (շարժունակությունը):

Ժամանակակից քաղաքական տեսությունը հասարակության մասին գիտելիքների շարժունակ և գործուն ռոլորտ է: Ակնհայտ է նրա կապը գործնական քաղաքականության և մարդկության քաղաքական պատմության հետ: Ուստի այս ձեռնարկում ուշադրություն է դարձվում նաև տարբեր հեղինակների քաղաքական տեսությունների համեմատական և պատմականորեն ձևավորված միջավայրի վերլուծության վրա:

Հասկանալի է, որ հնարավոր չէ ընդգրկել անընդգրկելիս և մեկ ուսումնական ձեռնարկում ամբողջությամբ ներկայացնել նորագույն ժամանակների քաղաքական տեսությունների բոլոր դրսևորումները, ուստի այստեղ տրվում են այն հիմնական տեսական ուղղությունները, որոնք արդիական են և, որոնք պատկերացում կտան նորագույն ժամանակների քաղաքական մտքի գլխավոր զարգացումների մասին, հիմք կծառայեն գիտելիքները խորացնելու և ընդարձակելու համար:

Ուսանողների աշխատանքն առավել արդյունավետ և ինքնուրույն ուսումնասիրություններն ավելի նպատակասլաց դարձնելու համար՝ ուսումնական ձեռնարկի ամեն գլխի վերջում տրված են տվյալ թեմային վերաբերող հիմնական առաջադրանքները, որոնք նաև կնպաստեն գործնական պարապուրդներն ավելի արդյունավետ անցկացնելուն: Տրված են նաև առանձին թեմաներ՝ ինքնուրույն աշխատանքներ (կուրսային և ավարտական աշխատանքներ, ռեֆերատներ, զեկուցումներ և ելույթներ) կատարելու համար, ինչպես նաև համապատասխան քննություններին պատրաստվելու համար առարկայի հարցաշարը և համապատասխան գրականության ցանկը:

Սույն ուսումնական ձեռնարկն առաջին փորձն է հայերենով ներկայացնելու նորագույն ժամանակների հիմնական քաղաքական տեսությունները: Ուսումնական ձեռնարկում ժամանակակից քաղաքական տեսությունները և հեղինակները հիմնականում ներկայացվում են ըստ Երևանի պետական համալսարանի Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի Քաղաքական պատմության և տեսության ամբիոնի կողմից հաստատված «Քաղաքական ուսմունքները նորագույն ժամանակներում» առարկայի ծրագրի, որի օրինակը տրված է գրքում: Հեղինակն իր խորին շնորհակալությունն է հայտնում բոլոր նրանց, ովքեր, այս կամ այն կերպ, նպաստել և օժանդակել են տվյալ ուսումնական ձեռնարկի ստեղծմանը:

Գլուխ 1. «ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒՍՄՈՒՆՔՆԵՐԸ ՆՈՐԱԳՈՒՅՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՒՄ» ԱՌԱՐԿԱ

Որպես կազմակերպված և ինքնուրույն մասնագիտություն, քաղաքագիտությունը գոյություն ունի ավելի քան հարյուր տարի, սակայն մինչ օրս քաղաքագետների մոտ միասնություն չկա նրա բովանդակության շրջանակների և հետազոտությունների մեթոդաբանական և մեթոդական մոտեցումների մասին: Քաղաքագիտության գրեթե ամեն մի մեթոդաբանական մոտեցումը կամ ուսմունք մրցակցում է մյուսի հետ: Այնուամենայնիվ, չնայած այդ բոլոր հակասություններին, քաղաքագիտությունն իրենից ներկայացնում է լիովին ձևավորված, ամբողջական առարկա: Հիմնականում դա բացատրվում է նրանով, որ իր էությանը քաղաքագիտությունը երկխոսություն, վեճ, բանավեճ է, որը թույլ է տալիս բացահայտելու քաղաքական կյանքի բազմաթիվ վիճելի և ոչ միանշանակ կողմերի էությունը: Նմանատիպ բարդությունները քաղաքագիտության մեջ լուծվում են սահմանափակ շրջանակներում գտնվող, սակայն փոխկապակցված ու փոխլրացմող խնդիրները պարզաբանելու ճանապարհով:

Ամերիկացի քաղաքագետ Չարլզ Լինդբլոմը պնդում էր, որ քաղաքագիտությունը դա սովորական գիտական ոլորտի անվանում չէ, այլ յուրահատուկ խնդիրների ու հարցերի շուրջ ընթացող, մշտապես շարունակվող բանավեճի ասպարեզ: Առավել ևս, որ այդ վեճերը չեն բացահայտում մարման միտումներ և հանդիսանում են քաղաքագիտության բնորոշող գծերից:

20-րդ հարյուրամյակում քաղաքագիտությունը՝ պատմության, փիլիսոփայության, սոցիոլոգիայի հետ միաժամանակ սահմանազատվում էր այլ սոցիալական գիտություններից՝ համագործակցելով նրանց հետ, ձգտում էր իր զարգացման մեջ ձևավորել առանձնահատուկ քաղաքագիտական մտածողության տեսակ: Վերջիվերջո, հաջողվեց ստեղծել ինչ-որ միասնական քաղաքագիտական սուբդիսցիպլիններ (ենթաառարկաներ), որոնց համար բնութագրական է ճանաչելի լեզուն և քննարկումների ոճը: Այսպես, քաղաքագիտական հետազոտությունների կենտրոնում է գտնվում ժամանակակից

պետությունը, որը դիտարկվում է իշխանության և հասարակական ընտրության վերլուծության տեսանկյունից, և քաղաքական վարչակարգերի բնույթի և կայունության ուսումնասիրությունը: Այսպիսով, քաղաքական գիտությունը ձեռք է բերել իրեն բնութագրող բովանդակային առանձնահատկություններ և բավականին հստակ սահմաններ, սակայն վեճերը նրա բնույթի մասին չեն դադարում: Այսպիսով, քաղաքագիտությունն ունի սահմանափակ, բայց միաժամանակ արդյունավետ բնույթ: Հնարավոր է, որ քաղաքական գիտությունը չունի որոշիչ և միակը հանդիսացող հետազոտության պարադիգմա (հարացույց), սակայն ունի ակներև սեփական իդենտիֆիկացիան (նույնականացում):

Նախորդ հարյուրամյակում և նոր հազարամյակի սկզբներին քաղաքական գիտությունը կրել է «իր առաջացման հարազատ գծերը» և նրան հիմնականում հետաքրքրել են քաղաքական արժեքները (կամ դրանց ուսումնասիրությունից հրաժարվելու հնարավորությունները, ինչպես դա անում էին պոզիտիվիստներն ու բիհևորիալիստները), ինչպես նաև ժամանակակից պետությունների մասին պատկերացումների ձևավորման (կոնցեպտուալիզացիայի) խնդիրները: Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ քաղաքական տեսությունն առանձնահատուկ ուշադրություն էր դարձնում քաղաքական լիբերալիզմի վրա, բայց ոչ որպես քաղաքական գաղափարախոսության, այլ որպես տեսական ուսմունքի, որը ձևավորվել է Եվրոպայում Մոդեռնի սկզբներին՝ կամաց-կամաց վերածվելով ժողովրդավարության տեսության, ինչն ուղեկցվում է նրա նախադրյալներին ու գործունեության պայմանների նկատմամբ բուռն հետաքրքրությամբ: Քաղաքական գիտության առանձնացումը փիլիսոփայությունից կապված էր առանձնահատուկ մասնագիտացում ստեղծելու հետ, որը կարող էր որոշակի նոր գիտելիքներ տալ լիբերալ (ազատական) վարչակարգերին զորավիճ լինելու և դրանք զարգացնելու համար, չնայած դրանց ժողովրդավարական բնույթի սահմանափակումներին:

Քաղաքական գիտության մյուս գլխավոր գիծը կարելի է համարել այն ձգտումը, որ նա ցանկանում է առանձնացնել իր սահմաններն այլ առարկաներից: Առաջին հերթին, քաղաքագիտությունը սահմանազատվեց քաղաքական պատմությունից՝ կենտրոնացնելով

իր ուշադրությունը ժամանակակից երևույթների ու գործընթացների վրա: Հաջորդ սահմանը դրեց սոցիոլոգիայի հետ, երբ կորցրեց հետաքրքրությունը քաղաքական գործողությունների և անհավասարության սոցիալական հիմքերի նկատմամբ: Հետագայում նա «նվիրեց» քաղաքական տնտեսագիտությունը տնտեսագետներին, սակայն վերջերս նկատվում է քաղաքագիտության մասնագետների հետաքրքրության բարձրացումն այդ խնդիրների հանդեպ, հատկապես համաշխարհային քաղաքականության ուսումնասիրության համատեքստում, ապա նաև ներքին քաղաքականության մեջ: Այդ բաժանումները հանգեցրեցին նրան, որ նոր փորձեր սկսվեցին այս կամ այն հետազոտությունները քաղաքագիտության ոլորտ վերադարձնելու համար: Արդյունքում, նմանատիպ մոտեցումները ևս դարձան քաղաքագիտություն առարկայի կարևոր տարրերը:

Քաղաքական գիտության պատմաբանները առանձնացնում են նրա զարգացման երեք շրջաններ: Վաղ շրջան, որը կապված էր պետության ուսումնասիրության հետ: Միջին շրջան, երբ հետազոտողների ուշադրությունը կենտրոնացվել էր գերադրապես իշխանության խնդիրների վրա: Նորագույն շրջան, որը կապված է քաղաքական ընտրությունների ուսումնասիրությունների հետ: Իրականում, հետազոտության այդ բոլոր ուղղությունները մշտապես գտնվել են քաղաքագիտության մեջ, բայց ժամանակ առ ժամանակ գերադասությունները փոխվել են: Ուսումնասիրելով լիբերալիզմի և ժողովրդավարության մեջ գտնվող կապը, քաղաքագիտությունը չէր կարող ուշադրություն չդարձնել կամ չանդրադառնալ իշխանության խնդիրներին: Քաղաքական ինստիտուտներն ուսումնասիրելիս, այսպես թե այնպես, անդրադառնում էին ընտրությունների խնդիրներին: Ուստի քաղաքական գիտության բովանդակությունը ներառում է այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են արդարությունը և հանրության անդամ լինելը, լեգիտիմությունը (օրինականությունը) և նույնականացումը, քաղաքացիների վարքագծի պոտենցիալն ու շարժառիթը, քաղաքական և սոցիալական ընտրության հարցերը, իշխանության իմաստն ու էությունը, և վերջապես՝ պետության գործունեությունը, ինչպես նաև լիբերալ(ազատական) - դեմոկրատական (ժողովրդավարական) պետության ներկայացուցչական հիմնական գծերը և ավտորիտարիզ-

մից (մենատիրությունից) անցումը (տրանզիտը) ժողովրդավարության, միջազգային կարգի և ուժի հավասարակշռությունը: Այս բոլոր խնդիրները հուզել են և հետաքրքրել են քաղաքագիտության հիմնադիրներին դեռևս հարյուրամյակներ առաջ:

Այս դասընթացում կժանոթանաք քաղաքական գիտության միայն մի քանի առավել կարևոր զարգացումներին, առանց որոնց դժվար կլինի հասկանալ ժամանակակից նորմատիվային և այլ քաղաքական տեսությունները:

Ինչպես հայտնի է գաղափարախոսությունը գաղափարների համակարգ է, տեսական հայեցակարգ կամ տեսություն, որի միջոցով հասարակական խմբերի տեսանկյունից արտացոլվում և գնահատվում են հասարակական հարաբերությունների բնույթը և դրանց զարգացումը, ինչպես նաև արտացոլվում են այդ խմբերի սոցիալական գործունեության նպատակները, ծրագրերը և իդեալները: Այստեղ խնդիրներ են առաջանում ուսմունքների կամ տեսությունների բովանդակության հստակեցման առումով, քանի որ այն հեշտությամբ կարելի է նույնացնել գաղափարախոսության հետ: Առավել ևս, որ քաղաքական տեսությանը կամ ուսմունքին զուգահեռ, որոշ հետազոտողներ փաստորեն գրեթե նույն բովանդակությամբ օգտագործում են այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են հայեցակարգը, ռազմավարությունը, դոկտրինան, մեթոդաբանությունը, մեթոդաբանական մոտեցումը և այլն:

«Տեսություն» («Թեորիա») բառը ծագել է հունարեն «theorien» բառից, որը նշանակում է «մտորել», «տեսնել»:

Մեր կարծիքով, հատկապես ժամանակակից քաղաքական տեսությունները և ուսմունքները ճիշտ ընկալելու տեսանկյունից, հարկ է առանձնացնել «քաղաքական մեթոդաբանություն» կամ «մեթոդաբանական մոտեցում» անվանումը, ինչն առավել հստակ է ցուցադրում այս աշխատությունում քննարկվող խնդիրները: Քաղաքագիտության մեթոդաբանությունը բավականին լայն բովանդակություն ունի, ընդգրկում է ոչ միայն մեթոդաբանությանը բնորոշ հարցեր՝ կապված քաղաքական երևույթների հետազոտման սկզբունքների, եղանակների ու ձևերի ընտրության և կիրառման հետ, այլև քա-

ղաքականության ընդհանուր տեսության և իմացաբանության հիմնահարցերին վերաբերող խնդիրներ: Մեթոդաբանության մեջ իրենց արտահայտությունն են գտնում մարդկանց աշխարհահայացքային-գաղափարախոսական և քաղաքական դիրքորոշումները, աշխարհըմբռնողականության մակարդակը, քաղաքակրթվածության աստիճանը, քաղաքական կուլտուրան, սոցիալ-քաղաքական շահերի բնույթը, քաղաքական իդեալները և դրանց իրականացման վերաբերյալ նրանց պատկերացումները:

Այսպիսով, քաղաքագիտության մեթոդաբանությունը կամ մեթոդաբանական մոտեցումը, որպես քաղաքական երևույթների ճանաչման, արժևորման և գնահատման եղանակների ու հնարների վերաբերյալ հայացքների ու ըմբռնումների որոշակի համակարգ, հանդիսանում է քաղաքական իրականության նմանակը, համահունչ է հետազոտվող քաղաքական երևույթների բնույթին և դրանց առաջացման, զարգացման ու փոխհարաբերությունների օրինաչափություններին: Ուստի քաղաքական տեսությունները կամ ուսմունքները ներկայացնելիս, առաջին հերթին, նկատի է առնվել նրանց վերոհիշյալ բովանդակությունը: Այսինքն, քաղաքագիտական մեթոդաբանական մոտեցումն այն բանալին ու գործիքն է, որոնցով կարելի է հետազոտել և որոշակիորեն հասկանալ քաղաքական երևույթները, գտնել այն հնարավոր ուղիները, որոնք կարող են լուծում դառնալ առաջացած քաղաքական խնդիրների համար: Այստեղ ավելորդ չէ հիշել, որ անցած հարյուրամյակի երկրորդ կեսերին հստակեցվել են քաղաքական գիտության ուսումնասիրության երեք հիմնական ուղղությունները՝ քաղաքականություն, իշխանություն և քաղաքական գործընթացներ: Իհարկե, նրանք բոլորը փոխկապակցված են, սակայն ժամանակակից տեսաբանները, առաջ քաշելով իրենց մեթոդաբանական մոտեցումները, որպես կանոն կենտրոնական են համարում նշվածներից որևէ մեկը: Ավելին, նկատելի է այն, որ նրանք միաժամանակ շեշտադրումները կատարում են արտաքին կամ ներքին քաղաքական խնդիրների վրա, այստեղից էլ «մաքուր» քաղաքագետ տեսաբանների կողքին տեսնում ենք մասնագետների, որոնց ուսումնասիրության հիմնական առարկան արտաքին կամ ներքին քաղաքական հարցերն են: Ընդ որում՝ այդ քաղաքագիտության տե-

սությունների կամ մեթոդաբանական մոտեցումների հնարավորինս անաչառ հետազոտությունը մեկ անգամ ևս ցույց է տալիս, որ դրանք, ինչպես և բոլոր հումանիտար գիտությունները, սուբյեկտիվ արմատներ ունեն, այսինքն գիտակցված արտաքին՝ քաղաքական պատվեր հիմնավորելու պետության, իշխանության կամ քաղաքական գործչի ինչ-որ արտաքին կամ ներքին քաղաքական քայլերը և այլն, կամ ավելի հազվադեպ հանդիպող ոչ գիտակցված՝ ներքին համոզվածություն իրենց հայացքների ճշմարտացիության մասին, որը և փորձում են տեսականորեն հիմնավորել:

Հասկանալի է, որ մեր ժամանակներում մորովի են մոտենում քաղաքական այդ կարևորագույն խնդիրներին, հատկապես փորձում են գտնել քաղաքագիտական տեսությունների գործնական կիրառման ճանապարհները, այսինքն՝ արդյունավետ օգտագործել դրանք ժամանակակից բարդագույն քաղաքական խնդիրները լուծելիս: Այդ տեսանկյունից ժամանակակից քաղաքական ուսմունքների իմացությունը և գործնական կիրառումը լուրջ ազդեցություն է ձեռք բերում հատկապես զարգացած ժողովրդավարության և դրան ձգտող տրանզիտային հասարակությունների քաղաքական կյանքում:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

Ներկայացնել՝

1. Ժամանակակից քաղաքագիտական հետազոտությունների կենտրոնում գտնվող հիմնական հարցերը:

2. Քաղաքական լիբերալիզմի վրա քաղաքական տեսության առանձնահատուկ ուշադրության պատճառը:

3. Ժամանակակից քաղաքական գիտության այն գլխավոր ուղղվածությունը, որով նա ցանկանում է առանձնացնել իր սահմանները այլ առարկաներից:

4. Քաղաքական գիտության պատմաբանների առանձնացրած ժամանակակից քաղաքագիտության զարգացման երեք շրջանները:

Գրականություն

1. **Алексеева Т. А.**, Современные политические теории, МГИМО, 2007.
2. **Алмонд Г.**, Политическая наука: История дисциплины/Политическая наука: новые направления, М., 1999.
3. **Бэрри Б.**, Политическая теория: вчера и сегодня/ Политическая наука: новые направления/, М., 1999.
4. **Дегтяров А. А.**, Основы политической теории, М., 2000.
5. **Соловьев А. И.**, Политология. Политическая теория. Политическая технология, М., 2000.
6. Political Theory, tradition and Diversity. Ed by A. Vincent. Cambridge University Press, 1997.
7. **Մանուկյան Ա.**, Ժամանակակից քաղաքական գործընթացներ, Ուս. ձեռն., Եր., 2011:
8. **Վարդանյան Լ. Գ.**, «Քաղաքական տեսություն» դասընթացի ծրագիր և հանրագիտական բառարան 1-ին կուրսի ուսանողների համար, ԵՊՀ, Եր., 2014:
9. Քաղաքագիտություն, Ուս. ձեռն. ԵՊՀ, Եր. 2006:
10. Քաղաքագիտության հանրագիտական բառարան, (կազմ. Պողոսյան Վ., Միրումյան Կ. և ուր.), Եր., 2004:

Գլուխ 2. ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՆՔՆԵՐԸ

**Մաքս Վեբերը ժողովրդավարության, իշխանության,
հեղինակության, տիրապետության մասին:**

Համաշխարհային և գերմանական հասարակական-քաղաքական մտքի հսկաներից մեկն է Մաքս Վեբերը, որը կանգնած է 20-21-րդ դարերի քաղաքական տեսության ակունքներում: Բազմաթիվ քաղաքական տեսության մասնագետների կարծիքով վեբերյան քաղաքական տեսությունը ձևավորվել է Կարլ Մարքսի «ուրվականի» դեմ երկարատև ու տանջալից պայքարի արդյունքում: Հարկ է նշել, որ Մ. Վեբերը վատ գիտեր Կ. Մարքսի աշխատանքները և հիմնականում բանախոսում էր նրա հետևորդների հետ: Այնուամենայնիվ հարկ է նշել, որ Մարքսի տեսությունը, ինչպես նաև Է. Կանտի, Ֆ. Նիցշեի ու մի քանի այլ իմաստասերների գործերը իրենց ազդեցությունն են թողել Մ. Վեբերի հայացքների վրա: Այստեղ անհրաժեշտ է նշել, որ Մ. Վեբերը երկրորդ գիտնականն էր, որ Կ. Մարքսից հետո կարողացավ տալ առավել հետևողական և տրամաբանական բացատրություններ եվրոպայում և նրա սահմաններից դուրս տեղի ունեցող մշակութային-պատմական ու քաղաքական գործընթացներին:

Մաքս Վեբեր (Մաքսիմիլյան Կարլ Էմիլ Վեբեր, 1864-1920) ծնվել է Էրֆրուտում (Գերմանիա) 1864 թ.-ի ապրիլի 21-ին միջին խավին պատկանող ընտանիքում: Մեկուկես տարի սովորել է Դեյդելբերգյան համալսարանում, ապա կամավոր ծառայել բանակում, այնուհետև սովորել Բեռլինի համալսարանում, որից հետո ստացել է իրավագիտության դոկտորի աստիճան ու սկսել դասավանդել նույն համալսարանում: Սակայն նրա հետաքրքրությունների շրջանակները չսահմանափակվեցին զուտ իրավավաբանությամբ և նա խորացավ տնտեսագիտության, պատմության, քաղաքական տեսության և սոցիոլոգիայի ոլորտներում: Նրա մայրը բողոքական (ավետարանական) էր և ի տար-

բերություն հորը՝ վարում էր ասկետիկ կյանք: Ժամանակի հետ Մ. Վեբերը սկսեց նմանվել մորը, վարում էր զուսպ կյանք ու անչափ շատ էր աշխատում: 1896 թ.-ի հրավիրվեց Յեյթելբերգյան համալսարան պրոֆեսորի պաշտոնի: 1904-1905 թթ. գրեց իր նշանավոր «Բողոքական բարոյականությունը և կապիտալիզմի ոգին» աշխատությունը, ինչպես նաև համաշխարհային կրոնների նվիրված գործեր: Մահվանից առաջ աշխատում էր «Տնտեսություն և հասարակություն» աշխատության վրա: Էմիլ Դյուրկհեյմի և Կարլ Մարքսի հետ համարվում է սոցիոլոգիական գիտության հիմնադիրներից մեկը:

Մ. Վեբերը առանձնահատուկ ուշադրության է արժանացրել Կ. Մարքսի և հատկապես նրա հետևորդների աշխատանքների վրա: Թերևս նրա և Կ. Մարքսի ճանապարհները գլխավորապես հատվել են այն հետաքրքրությամբ, որ նրանք տածում էին կապիտալիզմի նկատմամբ: Հայտնի է, որ մարքսիստական տեսությունը հիմնական ուշադրությունը դարձրել է կապիտալիզմի տնտեսական և քաղաքական կողմերին, իսկ Մ. Վեբերի համար կապիտալիզմն առաջին հերթին մշակութային երևույթ էր: Մարքսիստները գտնում էին, որ սոցիալական կյանքի բոլոր երևույթները բխում են մեկ ակունքից՝ տնտեսությունից: Դրանից գալիս էր նրանց հանրահայտ մոտեցումը, որ կեցությունն է որոշում գիտակցությունը: Ի հակադրություն նրանց՝ Մ. Վեբերը տնտեսական գործոններից ուշադրությունը կենտրոնացրեց գաղափարների վրա ու դրանց ազդեցությանը տնտեսության նկատմամբ: Մ. Վեբերը շեշտը դրեց անհատի և ոչ թե խմբի կամ հանրության վրա: Նրա համար գաղափարներն ինքնուրույն ուժ էին, որոնք կարող էին ազդել տնտեսական կյանքի վրա: Այսպիսով նա կարողացավ հեռանալ այն ավանդական մոտեցումից, որ իրենց գաղափարները կառուցում էին համակարգված հասարակությունների՝ ինչպես օրինակ ազգերի, ժողովուրդների հիմքի վրա: Նա իր ուշադրությունը կենտրոնացրեց անհատի վրա՝ վերջինիս դիտարկելով բողոքականության և լիբերալիզմի բարոյական փիլիսոփայության շրջանակներում: Մ. Վեբերը գտնում էր, որ բանականությունը (ռացիոնալիզմը) արևմտամետրոպական զարգացման առանձնահատուկ

գիծն է: Բանականության առաջացման պատճառները նա կապում էր բանական կյանքի վարքագծի հայտնի տեսակների հետ՝ այն անվանելով «կապիտալիզմի ոգի»: Նրա կարծիքով, «տնտեսական մտածողությունը» և տնտեսության ձևերը կախված են «որոշակի կրոնական ուղղվածությունից»: Այսպես, ժամանակակից արևմտյան կապիտալիզմի առանձնահատկությունները պայմանավորված են բողոքական (ավետարանական) գաղափարաբանությամբ: Մ. Վեբերը նշում է, որ այդ կրոնական ուղղության ներկայացուցիչների մոտ առկա է, «աշխատանքի նկատմամբ պարտքի» գիտակցությունը, որը բարենպաստ հող է նախապատրաստում աշխատանքն ընկալելու որպես կոչում: Այդ հանգամանքը, ըստ նրա, դարձել է եվրոպական բուրժուազիայի վարքագծի հիմնական մոտիվը, ինչը գալիս է ռեֆորմացիայի տարիներից, երբ առաջ եկավ նոր կրոնական ուղղությունն իր արգասաբեր աշխատանքի, արհեստավարժի պարտքի և մասնավոր նախաձեռնության բարոյականությամբ: Հենց այդ բարոյականության միջուկը, Մ. Վեբերի կարծիքով, դարձավ առավել ընդունելի ձևը կապիտալիզմի բարձր, արդյունավետ արտադրության համար: Իր մոտեցումները հիմնավորելու համար Մ. Վեբերը բավականին լրջորեն ուսումնասիրել է համաշխարհային կրոնները՝ գրելով «Համաշխարհային կրոնների տնտեսական բարոյականությունը» աշխատությունը: Թե ինչքանով էր նա ներթափանցել այդ խնդիրների մեջ, ցույց տանք մեկ օրինակով: Այսպես, Մ. Վեբերն առաջարկում է կրոնների դասակարգման սկզբունքի մեջ դնել այն, թե որ սոցիալական շերտերն են հանդիսանում տվյալ կրոնի հիմնական կրողները: Այդ սկզբունքով նա տալիս է համաշխարհային կրոնների հետևյալ դասակարգումը.

- կոնֆուցիոնիստական կրոնի հետևորդը աշխարհը կազմակերպող բյուրոկրատն է,

- հինդուիզմինը՝ աշխարհը կարգավորող մոգը,
- բուդդիզմինը՝ աշխարհով շրջող աղքատ քուրմ-իմաստասերը,
- իսլամինը՝ աշխարհը նվաճող ռազմիկը,
- հուդաիզմին՝ շրջիկ առևտրականը,
- քրիստոնեությանը՝ շրջիկ արհեստավորը:

Ուսումնասիրելով իր ժամանակներում հայտնի բոլոր մոտեցում-

ները՝ Մ. Վեբերը հանգեց այն եզրակացության, որ բանականությունը (ռացիոնալիզմը) վերջիվերջո հաղթահարում է մնացած համակարգերին:

Մ. Վեբերը «բանականություն» հասկացությունն օգտագործում է բազմաթիվ իմաստներով, սակայն հիմնականում դա հաշվարկ է, անձնական տրամաբանության նպատակաուղղված գործողություններ: Գործողությունների նկատմամբ գործնական մոտեցումն արժեքներն ընկալում է որպես բնատուրիկ և կողմնորոշում է նպատակներին հասնելու համար առավել արդյունավետ միջոցների ընտրություն կատարել: Նա բանականության գործընթացը դիտարկում է որպես եվրոպական քաղաքակրթության բնորոշիչ հատկություն: Ընդ որում, դա նկատելի է ոչ միայն զարգացող կապիտալիզմի տնտեսությունում, մշակությունում, այլև ժամանակակից կառավարման ինստիտուտներում, մասնավորապես բյուրոկրատիայի վերելքում:

Մ. Վեբերը, որպես բանականության (ռացիոնալիզացիայի) դասական օրինակ, դիտարկում է բյուրոկրատիան և բյուրոկրատացման պատմական ընթացքը քաղաքական ինստիտուտների առավել լայն շրջանակներում: Ոչ լիբերալիզմի հետ կապված կապիտալիզմը, ոչ արդարության հետ կապված պետական սոցիալիզմը չեն կարող գոյատևել առանց բյուրոկրատիայի տիրապետության: Բյուրոկրատիայի հետ սերտորեն կապված է **ձևական (ֆորմալ) բանականությունը**: Ինչը նշանակում է, որ այն կապված է անհատի կողմից նպատակների ու միջոցների ընտրության հետ:

Բյուրոկրատիան (բառացի գրասենյակային ծառայողների իշխանություն) Մ. Վեբերի մոտ ներկայանում է որպես տիրապետություն, որը հիմնված է ոչ թե ավանդական կախվածությամբ առաջնորդից կամ միապետից, այլ խիստ ու բանական կանոնների ու օրենքների վրա: Այդպիսի տիրապետության տիպն առավելապես համապատասխանում է տնտեսության ձևական-բանական համակարգին: Բյուրոկրատական կառավարումը ենթադրում է տիրապետություն գիտելիքի միջոցով, հենց դրանում է կայանում նրա յուրահատուկ բանական բնույթը: Ինչպես և ամեն անդեմ մեքենա, բյուրոկրատիան ևս ծրագրի կարիք ունի և հենց դա է, որ տրվում է քաղաքական առաջնորդի կողմից, որը ձևական մեխանիզմը դնում է որոշակի արժեքների ծա-

ռայության տակ:

Մ. Վեբերի նկարագրած տիրապետությունը ներառում է մի քանի հիմնական բնութագիր՝

1. առանձնացրած ծառայությունների և իրավասությունների գոյությունը, որը խստորեն որոշակիացվել է օրենքներով և կանոններով՝ որոշումներ կայացնելու և հսկողություն սահմանելու նպատակներով,

2. ծառայողների դիրքի և իրավասությունների պաշտպանություն (ծառայության աստիճաններով բարձրանալու երաշխիքներ և թոշակ պաշտոնյանների համար, դատավորների անփոխարելիությունը, արտոնությունների համակարգ և այլն),

3. կառավարման և կատարման գործառնությունների հստակ աստիճանակարգում,

4. կադրերի ընտրությունը մրցակցության հիմքի վրա,

5. ծառայողական գործառնությունների լիակատար սահմանազատում անձնական հատկություններից և բնութագրից, քանի որ ծառայողը չի կարող լինել պաշտոնի սեփականատերը:

Բյուրոկրատիայի վերոնշյալ սկզբունքները ոչ միշտ են իրագործվում, ուստի հետաքրքիր է Մ. Վեբերի կանխատեսումն ապագայի համար: Նա գտնում էր, որ բոլոր ժողովրդավարական երկրների համար անխուսափելի է հասարակական ու պետական կյանքի համատարած բյուրոկրատացումը: Կապիտալիզմին փոխարինելու կգա ոչ թե սոցիալիզմը, այլ բանական կառավարման համար ծայրահեղորեն բյուրոկրատացված հասարակություն: Իր «Բողոքական բարոյականությունը և կապիտալիզմի ոգին» աշխատության վերջում Մ. Վեբերը հռետեսական եզրահանգումների է գալիս՝ զգուշացնելով, որ ռացիոնալիզացիան վերջիվերջո կհանգեցնի բյուրոկրատիայի անսահման ընդլայնմանը, ինչի հետևանքով լիովին կկորչեն սոցիալ-քաղաքական կյանքի իմաստը և ազատությունները: Այս խնդիրը, նրա կարծիքով, հնարավոր չէ լուծել:

Մ. ՎԵՐԵՐԸ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒՅԱՆ ՄԱՍԻՆ

Ի տարբերություն բազմաթիվ լիբերալ տեսաբանների, որոնք ավելի շատ մտորում էին քաղաքական կազմակերպությունների ցանկալի ձևերի մասին, Մ. Վերերը վերլուծում է իրական վիճակը, ապա նոր է ներկայացնում քաղաքական կառուցվածքի հնարավոր զարգացումները: Առաջին հերթին, նա վերլուծեց «ուղղակի ժողովրդավարությունը», որի տակ հասկանում էր «հասարակական գործերի» վերաբերյալ որոշումներ կայացնելու համակարգը, ինչին քաղաքացիներն անմիջական մասնակցություն են ցուցաբերում: «Տնտեսություն և հասարակություն» աշխատության մեջ նա գրում է, որ այդպիսի համակարգի գոյությունը լիովին հնարավոր է: Այն կարող է անգամ շատ արդյունավետ լինել, բայց միայն այնպիսի կազմակերպություններում, որոնք բավարարում են հետևյալ պահանջները.

1. կազմակերպությունը պետք է լուրջ բնույթ կրի և առանձնանա իր անդամների փոքր թվով,

2. կազմակերպության անդամների սոցիալական դիրքությունը չպետք է շատ տարբերվի,

3. վարչարարական գործառնությունները պետք է լինեն համեմատաբար հասարակ և անփոփոխ,

4. գործառնությունների կատարումը ենթադրում է կատարողների նվազագույն պատրաստվածություն:

Այսպիսով, ուղղակի ժողովրդավարությունը ենթադրում է փոքրագույն սոցիալական և տնտեսական տարբերությունների պայմաններում՝ մասնակիցների հավասարություն: Այդտեղ կառավարման խնդիրները պետք է լինեն հասարակ և հստակ ձևակերպված: Սակայն ժողովրդավարության այս տեսակում կա մի հատկանիշ, որը նրան դարձնում է բավականին անկայուն: Նրա համար բնութագրական է քաղաքական ներկայացուցչական տեսակը, որը բացառում է ցանկացած քաղաքական բանակցությունները, համաձայնությունները և փոխզիջումները: Այլ կերպ ասած, ուղղակի ժողովրդավարությունը չունի ֆրակցիաների, կուսակցությունների կամ ասոցացիաների միջև մրցակցային պայքարը կարգավորելու մեխանիզմներ: Փաստորեն, այն ենթադրում է քաղաքական պայքար անհատ-

ների մեջ, այն էլ դա հաճախ մրցակցություն չի, այլ ինտրիգներ են կամ անդրկուլիսյան խաղեր: Քաղաքական մրցակցությունը դառնում է համատարած բյուրոկրատացման կարևորագույն հակակշիռը, նույն է թե՝ տոտալիտար պետության կայացման հակակշիռը: Մյուս գործիքը, որ կարող է դիմադրել համատարած բյուրոկրատացմանը, դա ուժեղ պառլամենտն է: Այն կարող է դառնալ մի ասպարեզ, որտեղ մրցակցային պայքարի միջոցով կծնավորվի ուժեղ քաղաքական լիդերություն: Այդ կապակցությամբ Մ. Վեբերը բերում է մի քանի կարևոր հիմնավորումներ՝

- պառլամենտը նշանակում է բաց կառավարման որոշակի մակարդակ: Լինելով հանրային քաղաքականության ասպարեզ, պառլամենտը դառնում է տարաբնույթ կարծիքների և գաղափարների արտահայտման երաշխավորը,
- պառլամենտական բանավեճերի կառուցվածքը, այդ բանավեճերի բնույթը և այն անհրաժեշտությունը, որ հռետորական արվեստի միջոցով է պետք լինել համոզեցուցիչ, քաղաքական լիդերների համար դառնում է փորձություն: Վերջիններս պետք է կարողանան մոբիլիզացնել հասարակական կարծիքը և առաջադրել համոզիչ քաղաքական ծրագրեր: Այսպիսով, պառլամենտը դառնում է մրցակցային դաշտ ոչ միայն կուսակցական խմբակցությունների, այլև քաղաքական լիդերների համար,
- միաժամանակ պառլամենտը դառնում է բանակցությունների և փոխհամաձայնությունների հասնելու տեղ տարբեր մոտեցումներ ունեցող ուժերի համար: Այսինքն, նպաստում է հաղթահարելու այն հակամարտությունները, որոնք կարող են բաժանել հասարակությունը: Քաղաքական ներկայացուցիչները այնտեղ կարող են որոշումներն այնպիսի եղանակով կայացնել, որը նման չէ որոշումներ կայացնելու բյուրոկրատական ձևին:

Միաժամանակ, ընդունելով, որ պառլամենտը ձևականորեն այն միակ լեգիտիմ ինստիտուտն է, որտեղ կարող են ընդունվել օրենքներ ու ձևավորել քաղաքական կուրս, Մ. Վեբերը կարծում էր, որ զարգացած ժողովրդավարություններում ավելի կարևոր դերակատարություն ունի կուսակցական քաղաքականությունը: Անցումը զանգվածային հասարակության հիմնարար փոփոխություններ մտցրեց

քաղաքական կյանքի մեջ: Հենց կուսակցությունները հայտնվեցին քաղաքականության (ըստ Մ. Վեբերի ձեռնարկության մի տեսակի) կենտրոնում: Ուստի նրա համար առանձնահատուկ նշանակություն ուներ ժամանակակից քաղաքական կուսակցությունների բնույթի որոշակիացումը: Մ. Վեբերը պնդում էր, որ քաղաքական կուսակցությունը դա մի կազմակերպություն է, որի նպատակը իր ղեկավարների համար իշխանության նվաճումն էր, ընդ որում, շարքային անդամները նույնպես կարող են որոշակի արտոնություններ ստանալ:

Մ. Վեբերը ընդունում էր իշխանության և կուսակցությունների բյուրոկրատացման որոշակի աստիճանը ժողովրդավարական սկզբունքների օժանդակությամբ, սակայն երկու պայմանների առկայությամբ: Առաջին՝ անհրաժեշտ է կուսակցությունների պլուրալիզմ (բազմակարծություն), որը կարտահայտի տարբեր շահեր ու հետաքրքրությունները և բարօրության մասին չհամկնող տեսակետներ: Եթե մրցակից կուսակցությունների քաղաքականությունները շատ նման են, ապա ընտրողը փաստացի զրկվում է լիարժեք ընտրություն կատարելու հնարավորությունից: Ուստի Մ. Վեբերը չէր ընդունում միակուսակցական համակարգի ժողովրդավարությունը:

Երկրորդ՝ ժողովրդավարության գործընթացներում կարևորագույն դերը պատկանում է լիդերությանը: Նրա կարծիքով կառավարումն ընտրանու կողմից անխուսափելի է, սակայն շատ հնարավոր է հասնել նրան, որ ընտրանու կառույցներն արտահայտեն քաղաքացիների շահերը: Այնպիսի քաղաքական լիդերների բացահայտումը և աճը, ովքեր ունակ են հակազդել բյուրոկրատիայի ազդեցությանը և հենվել զանգվածների օժանդակության վրա՝ տեղի է ունենում պառլամենտում: Այլ կերպ ասած, բազմակուսակցական ժողովրդավարությունն ավելի արդյունավետ է դառնում ոչ թե այն, որ գոյություն ունեն բազմաթիվ կուսակցություններ, այլ ի շնորհիվ նրանց լիդերների որակի, որոնք գործում են ընտրախափ մեծամասնության պասիվության ֆոնի պայմաններում: Վերջիններս սկզբունքորեն շատ քիչ հնարավորություն ունեն ազդելու քաղաքական գործընթացների վրա:

Քաղաքական կուսակցությունների գոյության պայմանը Մ. Վեբերը համարում էր ձևի ու իրավունքի տեսանկյունից քաղաքացիների

ազատ մուտքը նրանց շարքերը:

Կարելի է ասել, որ ժողովրդավարությունն ըստ Մ. Վեբերի համագեցվում է որակյալ քաղաքական լիդերների առաջադրման միջոցի և նրանց միջև ընթացող մրցակցության:

Իշխանություն, հեղինակություն, տիրապետություն

Մ. Վեբերի հայացքներում կարևոր նշանակություն ունեն տիրապետության (Herrschaft) և իշխանության (Macht) մեջ գոյություն ունեցող տարբերությունը: Նա վերլուծեց տիրապետությունը ոչ միայն քաղաքական ինստիտուտներում (կուսակցություններում, արհմիություններում), այլև ուրիշ «միավորումներում» (օրինակ՝ եկեղեցում, ձեռնարկություններում): Այդ վերլուծության արդյունքում Մ. Վեբերը տվեց պետության հետևյալ բնութագիրը. «Պետությունը ինստիտուտ է, որը տվյալ կոնկրետ տարածքում ունի բռնություն կատարելու լեգիտիմ (օրինական) իրավունք»:

Դա չի նշանակում, թե պետությունը բռնության մարմնավորումն է, բայց պետությունը միակ հեղինակությունն է, որի համար բռնություն կատարելը լեգիտիմ է: Փաստորեն, Մ. Վեբերի համար տիրապետությունը և հեղինակությունը հոմանիշներ են: Քաղաքական բռնությունը քաղաքականության միակ և նորմալ միջոց չի, այն ավելի շուտ քաղաքականության վերջին միջոցն է: Այստեղ պետք է կարևորել այն, որ լեգիտիմ իշխանությունը ծնունդ է կառավարվողների կամավոր համաձայնություն, ուստի վերածվում է մտածված գործողության: Պետությունը, որի առանձնահատկությունը օրինական բռնություն իրագործելն է, գոյատևում է միայն շնորհիվ նրա, որ նրանք ունեն վրա իշխում են, ենթարկվում են այն հեղինակությանը, որին հավակնում են տիրապետող խմբերը:

ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ կայանում է Ա անհատի ունակությունում Բ անհատականությանից ստանալու այնպիսի վարքագիծ կամ այնպիսի զսպվածություն, որ այլ դեպքում Բ-ն չէր ընդունի և որը համապատասխանում է Ա-ի կամքին (ըստ Մ. Վեբերի):

Ինչպես նկատելի անչափ դժվար է ամրագրել իշխանության պահը: Իր թերություններով հանդերձ՝ Մ. Վեբերի մոտեցումն առավել մոտ է իշխանություն հասկացության ձևակերպմանը և ներկայումս, փաստորեն, համարվում է համընդհանուր ընդունված քաղաքական գիտությունում:

Մ. Վեբերը իշխանության օրինականության իր տեսակներն է առաջարկում՝ այն կապելով իշխանություն իրականացնող անձի հեղինակության վրա և առանձնացնելով նրանց ավանդական, խարիզմատիկ և ռացիոնալ(բանական) - լեգալ(օրինական) տիպերը: Այսպես՝

1. Ավանդական լիդերության հիմքն ավանդույթներն են, սովորույթները, ենթարկվելու սովորույթը: Լիդեր դառնալու իրավունքն այս դեպքում մարդը ձեռք է բերում իր ծագման շնորհիվ: Դա հեղինակության մի տեսակ է, որից ինչ-որ ժամանակ օգտվել են ցեղերի առաջնորդները, ազգերի գլխավորներն ու միապետերը: Լիդերի այդ տեսակը դեռևս չի կորցրել իր նշանակությունը: Ավելին, շատ երկրներում, իրավիճակի բերումով (հասարակության զարգացման աստիճանը, ազգային ավանդույթների ու սովորույթների իշխում, կրոնական գործոնի առաջնայնություն և այլն), ավանդական լիդերության տեսակը դրական դերակատարություն է կատարում ազգային ինքնությունը պահպանելու գործում:

2. Ռացիոնալ-լեգալ (բանական-օրինական) լիդերությունը հենվում է բոլորի կողմից ընդունված իրավական կարգի գոյության օրինականության վրա: Արդի ժողովրդավարական հասարակություններում ընտրական գործընթացները, որոնք տեղի են ունենում այդ հասարակություններում ընդունված իրավական նորմերի շրջանակներում, քաղաքական առաջնորդի կամ լիդերի ձևավորման հիմնական ճանապարհն են: Նման դեպքերում լիդերը հանդես է գալիս ոչ թե որպես անհատ, որից բխում է իշխանությունը, այլ որպես քաղաքական համակարգի մեջ ներգրավված, պետական որոշակի խնդիր իրականացնող գործակալ, որն օժտված է իշխանություն իրականացնելու լիազորությամբ:

3. Խարիզմատիկ (հեղինակության վրա հենվող) լիդերությունը հենվում է անհատի առանձնահատուկ հատկանիշներին հա-

վատալու վրա, որը ոչ թե ձեռքբերովի է, այլ բնատուր, ի վերուստ տրված աստվածային շնորհ: Այլ կերպ ասած՝ խարիզմատիկ լիդերությունը հենվում է առաջնորդի գերմարդկային հատկությունների նկատմամբ հավատի վրա:

Դժվար չէ նկատել, որ ավանդական ու ռացիոնալ-լեզալ տիպի լիդերներն առավել տարածված կարող են լինել կայուն զարգացում ապրող հասարակություններում: Այդ տիպի լիդերների հիմնական տարբերությունը խարիզմատիկ լիդերից կայանում է նրանում, որ առաջիններն ունեն քիչ թե շատ օբյեկտիվ հիմք, ասենք ավանդույթներ կամ օրենքներ, իսկ խարիզմատիկ լիդերի բնույթը պայմանավորված է զուտ նրա անհատականությամբ:

Հասկանալի է, որ Մ. Վեբերի տեսությունն ավելի հարուստ է, քան այս համառոտ շարադրանքը: Օրինակ, նրա բանականությանը վերաբերող աշխատանքները բազմաթիվ պատմական մանրամասներ և տեսական «բացահայտումներ» են պարունակում: Սակայն դա առանձին ուսումնասիրման թեմա է: Ամեն դեպքում, Մ. Վեբերի աշխատությունների ազդեցություն ժամանակակից քաղաքական գիտության տեսության վրա այնքան մեծ է, որ նրան արդարացիորեն համարում են 20-րդ դարի քաղաքական տեսության հիմնադիրը:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

Ներկայացնել՝

1. Մ. Վեբերի դիտարկումները բյուրոկրատիայի և բյուրոկրատացման պատմական ընթացքի մասին:

2. Մ. Վեբերի նկարագրած տիրապետության հիմնական բնութագիր:

3. Մ. Վեբերի հայացքները ժողովրդավարության մասին:

4. Իշխանությունն ըստ Մ. Վեբերի և նրա առաջարկած իշխանության օրինականության տեսակները:

Գրականություն

1. **Алмонд Г.**, Политическая наука: История дисциплины/Политическая наука: новые направления, М., 1999.
2. **Вебер М.**, Протестантская этика и дух капитализма, М., 1990.
3. **Дегтяров А. А.**, Основы политической теории, М., 2000.
4. Политология: хрестоматия (сост М. А. Васирик, М. С. Вершинин), М., 2000.
5. Политический процесс: Основные аспекты и способы анализа, под ред. Мелешкиной Е. Ю., М., 2006.
6. **Մանուկյան Ա.**, Ժամանակակից քաղաքական գործընթացներ, Ոս. ձեռն., Եր., 2011:

Գլուխ 3. ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Պոզիտիվիզմ: Տրամաբանական պոզիտիվիզմ և քաղաքական տեսություն: Ինստիտուցիոնալիզմ: Ռացիոնալ (բանական) ընտրության տեսություն, ռացիոնալիզմը քաղաքականության մեջ: Բիհեիորիզմ, վարքագծային մոտեցումը քաղաքական ուսումնասիրության մեջ, «Հիկագոյի դպրոցը»:

Պոզիտիվիզմ: Տրամաբանական պոզիտիվիզմ և քաղաքական տեսություն

20-րդ դարի քաղաքական տեսության առավել կարևոր խնդիրներից մեկը դարձավ այն հարցը, թե կարո՞ղ են արդյոք քաղաքական խնդիրները լուծվել բանական հիմքերի վրա, թե՞ ոչ: Ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ քաղաքական վերլուծությունները, բացի բանական կողմերը ներկայացնելուց, ներառում են նաև բարոյական ասպեկտները: Այլ կերպ ասած, քաղաքական հարցերի միջոցով, հետազոտողը, որպես կանոն, հիմքեր է որոնում հաստատելու քաղաքական իշխանության իրականացման լավ կամ վատ միջոցները: Բնական գիտությունների հաջողությունները 19-րդ դարում ծնեցին «Պոզիտիվիստական դպրոցը», որի յուրահատկությունը կայանում էր նրանում, որ ձգտում էր շրջապատող սոցիալական աշխարհն ուսումնասիրել հենվելով էմպիրիկ (փորձնական) փաստերի և երևույթների վրա՝ չհավակնելով բացահայտել մարդկային գիտակցությանն անմատչելի պատճառները և էությունը: Սկզբնական շրջանում առավել զարգանում էր իրավաբանական պոզիտիվիզմը (Ջոն Օսթին): Այնուհետև ձևավորվեց սոցիոլոգիական պոզիտիվիզմը (Օգյուստ Կոնտ, Հերբերտ Սպենսեր), որը գտնում էր, թե պետությունը և իրավունքը հասարակական կյանքի անբաժանելի մասն են:

Պոզիտիվիստները ենթադրում են, որ ֆիզիկական և սոցիալական աշխարհի մասին վերլուծական պնդումները բաժանվում

ԵՆ ԵՐԵՔ ԿԱՏԵԳՈՐԻԱՆԵՐԻ.

1. Այդպիսի պնդումները կարող են օգտակար տավտոլոգիաներ լինել (տրամաբանական սխալ, երբ ինչ որ բան որոշակիացվում է կամ ապացուցվում է նույն բանով): Դրանք կարող են լինել մաքուր պարզաբանող պնդումներ, որոնք որոշակի իմաստ են հաղորդում երևույթին կամ հայեցակարգին:
2. Պնդումները կարող են լինել էմպիրիկ, որոնց իրական կամ կեղծ լինելը կարող են հաստատվել դիտարկումների շնորհիվ:
3. Պնդումներ, որոնք չեն վերաբերում վերոնշյալ երկու կատեգորիաներին և վերլուծական իմաստ չունեն: Պոզիտիվիստների համար իմաստավորված վերլուծությունը հնարավոր է միայն իմաստավորված տավտոլոգիայի ու էմպիրիկ պնդումների հիմքի վրա:

Ֆրանսիացի մտածող Օ. Կոնտը, մշակելով մարդկային իմացության զարգացումը, հայտնաբերեց դրա երեք աստիճանները: Նա ենթադրում էր, որ ամեն մարդու միտքն իր էվոլյուցիայի ընթացքում անցնում է նույն աստիճաններով, ինչ որ ողջ մարդկության միտքը: Այլ կերպ ասած, նորածինը և նախնադարյան վայրենի մարդը հավասարապես իրենցից ներկայացնում են կենդանի, որոնց համար նախատեսված է, որ ապագայում վերածվելու են քաղաքակիրթ մարդու: Այդ զարգացման առաջին փուլը Օ. Կոնտը անվանում է թեոլոգիական (աստվածաբանական) կամ կեղծ, երբ ամեն ինչ բացատրվում էր մարդով և նրա կյանքով: Երկրորդ փուլն անվանում է մետաֆիզիկական, երբ անցում է կատարվում մոնոթեիզմին (միաստվածության), ճանաչվում է աշխարհաճանաչության միասնությունը, բոլոր երևույթների ենթակայությունը անփոփոխ օրենքներին: Երրորդ փուլը դրական (պոզիտիվ) կամ իր զարգացման իրական փուլն է: Դրա հիմնական իմաստը «մշտական դիտարկման երևակայության օրենքն է»:

Բացատրությունը կարող է հետևել միայն կայացած իրադարձությանը և ոչ թե նախորդել նրան: Ուստի ցանկացած իրադարձություն պետք է մաքրել ամեն մի այնպիսի իմաստից, որը նրան վերագրում է երևակայությունը: Այդ դեպքում այն վերածվում է գիտական փաստի և կարող է հետազոտվել: Այդ մոտեցման հետևանքները հսկայական էին: Ըստ էության, 20-րդ դարի գիտության հիմնական մասը դա պոզիտիվիստական գիտությունն է:

Այդ հիմքի վրա ձևավորվեց տրամաբանական պոզիտիվիզմը, որն առավել մեծ ազդեցություն թողեց քաղաքական տեսության հետագա զարգացման վրա 20-րդ հարյուրամյակում:

Տրամաբանական պոզիտիվիզմի տեսությունը ձևավորվեց, առաջին հերթին, ավստրիացի գիտնական Լյուդվիգ Վիտգենշտեյնի (1889-1951) աշխատությունների, հատկապես «Տրամաբանական-փիլիսոփայական տրակտատի» (1921 թ. Գերմանիա) ազդեցությամբ: Լ. Վիտգենշտեյնը ծնվել է Վիեննայում: Կրթությամբ ինժիներ է: 1912-1913 թթ. աշխատել է Քեմբրիջի համալսարանում Բերտրան Ռասսելի հետ: Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ ծառայել է ավստրիական բանակում: Համարվում է, որ ապագա «Տրամաբանական-փիլիսոփայական տրակտատի» գաղափարը նրա մոտ առաջացել է 1914 թ.-ի և պատերազմի ողջ ընթացքում դրա հատվածների ձեռագրերը կրել է իր գինվորական ուսապարկում: Ենթադրվում է, որ գերության մեջ է նա ավարտել իր այդ աշխատանքը, որն այնուհետև հրատարակել է Գերմանիայում: Գրքի առաջաբանը, որը գրել էր նրա ուսուցիչը Բ. Ռասսելը, նրան դուր չեկավ, ուստի վիրավորված այդ հանգամանքով՝ նա թողնում է Վիեննան և մեկնում գյուղ ուսուցչություն կատարելու: Վիտգենշտեյնը փաստորեն չի մասնակցել ակադեմիական շրջանակներում նրա «Տրակտատի» շուրջ ծավալված բանավեճերին: Նրա աշխատությունը ոչ միայն սենսացիա առաջացրեց, այլև իսկական փիլիսոփայական փոթորիկ բերեց: 1929 թ. նրան Անգլիա հրավիրեցին: 1939 թ. Քեմբրիջի համալսարանում նա փոխարինեց հայտնի փիլիսոփա, պրոֆեսոր Գ. Մուրին: Երկրորդ աշխարհամարտի տարիներին, որպեսզի ինչ-որ կերպ օգնի դաշնակիցներին, նա թողեց փիլիսոփայությունը և աշխատանքի անցավ Լոնդոնի գինվորական հիվանդանոցներից մեկում: 1947 թ. դադարացրեց ակտիվ աշխատանքը:

«Տրամաբանական-փիլիսոփայական տրակտատ»-ում նա առաջ է քաշում երեք թեզիսներ, որոնք հետաքրքրություն են ներկայացնում մեր ուսումնասիրության առարկայի համար:

Դրանք են՝

1. տրամաբանությունը և մաթեմատիկական կազմված են տավտալոգիայով,
2. լեզուն ունի իրական-ֆունկցիոնալ կառուցվածք և նրա հիմնական տարրերը գոյականներն են,
3. ոչ մի տեսակի էթիկական կամ բարոյական պնդումներ չեն կարող իմացական տեղեկատվություն պարունակել:

«Տրակտատը» մեծ ազդեցություն ունեցավ գիտական աշխարհի վրա: Պոզիվիստները Լ. Վիտգենշտեյնի գաղափարները վերածեցին ծայրահեղ էպիստեմոլոգիայի (գնեստոլոգիայի կամ ծագումնաբանության հոմանիշն է): Հավանաբար ներկա քաղաքագետների համար դժվար կլինի հասկանալ, թե ինչու տրամաբանական պոզիտիվիզմն այդքան մեծ նշանակություն է ունեցել քաղաքական տեսության զարգացման համար: Այս մոտեցման նշանակությունը կայանում է նրանում, որ տրամաբանական գործիքներն իրենց դերը խաղացին մաթեմատիկայի կառուցվածքը բացատրելու համար, ինչը համարվում է աշխարհի բնույթը հասկանալու հիմնական բանալին: Տրամաբանական վերլուծության միջոցների օգտագործումը սովորական լեզվի շրջանակներում բացեցին լեզվի կառուցվածքի վերլուծության հնարավորությունները, ինչպես նաև հնարավորություն ընծեռեցին բացահայտելու նախադասությունների իմաստը: Միաժամանակ տրամաբանական պոզիտիվիզմը ցույց տվեց բարոյական և մետաֆիզիկական տեքստերի սուբյեկտիվիզմը: Ծայրահեղ էմպիրիցիստ-պոզիտիվիստների կարծիքով լեզվի բնական և փաստական օգտագործումը իմաստ է պարունակում: Այդ մոտեցումը ստացավ **վերիֆիկացիայի սկզբունք անունը (նախադասությունն իմաստ ունի միայն այն դեպքում, երբ այն կարող է փորձնական ճանապարհով հաստատվել)**: Հետևաբար, եթե նախադասությունն իմաստ ունի, ապա նա ուղղակիորեն հենվում էմպիրիկ փորձի վրա, իսկ եթե դա բարդ նախադասություն է, ապա այդ ուղղակի կապը կարելի է ապացուցել հատուկ վերլուծություն կատարելուց հետո:

Զխորանալով Լ. Վիտգենշտեյնի տեսության մանրամասների մեջ՝ նշենք, որ նրա մոտեցումների հիմքի վրա առաջացան գիտական մտքի զարգացման մի շարք ուղղություններ և հոսանքներ, իսկ տրա-

մաբանական պոզիտիվիզմը հանգեցրեց մի կողմից ինստիտուցիոնալիզմի և բիհևիորիզմի, իսկ մյուս կողմից՝ վերլուծական փիլիսոփայության զարգացմանը:

«Վերլուծական փիլիսոփայություն» հասկացությունը գիտական դիսկուրսի մեջ հիմնավորապես մտավ 1940-ական թվականներին: Նրա հիմնադիրներն են համարվում Լ. Վիտգենշտեյնը, Ռ. Կառնապը, Ջ. Օստինը, Ջ. Մուլը, Բ. Ռասսելը, Գ. Ռեյխենբախը, Գ. Ֆեյզլը, Կ. Գեմպելը և ուրիշներ: Ժամանակի հետ վերլուծական փիլիսոփայությունը զգալիորեն ընդարձակվեց և սկսեց իր մեջ ներառել լեզուն, գիտելիքը, գիտակցությունը, գիտությունը, պատմությունը, քաղաքականությունը և այլն: Դա հանգեցրեց նրան, որ վերլուծական փիլիսոփայության առարկայական շրջանակները բավականին ամորֆ (անձև) դարձան: Այսպիսով, վերլուծական փիլիսոփայության համար գոյություն ունեն բազմաթիվ հայեցակարգեր, որոնք ընդհանուր հայտարարի չեն գալիս, սակայն նրա համար բնութագրական է հանդուրժողականությունը բանական (ռացիոնալ) քննադատությունը, ինքնաքննադատությունը և զարգացումը:

Չնայած որ հումանիտար ոլորտում հետաքրքրությունը տրամաբանական և լեզվաբանական վերլուծության նկատմամբ ծնվեց Եվրոպայում («Վիեննայի խմբակ», Օքսֆորդի համալսարան) ֆորմալիստական միտումներն ավելի նկատելի դարձան ԱՄՆ-ում: Նրանց հետազոտությունների հիման վրա առաջացան երկու հիմնական հոսանքներ. ֆորմալ վերլուծությունը, որն օգտագործում էր տրամաբանության ապարատը և բնական լեզվի կոնցեպտուալ (իմաստային բովանդակության) վերլուծությունը: Այսպես սկսվեց «վերլուծության դարը», որին բնութագրական էր հետաքրքրության կորուստը բարոյական և սոցիալ-քաղաքական հարցերի, քաղաքական տեսությունների և «դասական» քաղաքական փիլիսոփայության նկատմամբ: Բարոյական փիլիսոփայության և քաղաքական տեսության համար պոզիտիվիզմի արագ տարածումը ծանր հետևանքներ ունեցավ: Քանի որ դրանք իրենց էությանը նորմատիվային են, այսինքն արժեքներ և որոշակի կացության միջոցներ առաջարկող, ապա պոզիտիվիստների համար պարզվեց, որ հնարավոր չէ էմպիրիկ իմաստ տալ նրանցում օգտագործվող նախադասություններին, օրինակ՝

այնպիսի հասկացություններին, ինչպիսիք են բարիքը, իրավունքը, արդարությունը, բարերարությունը, կառավարման լավագույն ձևը և այլն: Բնականաբար նրանք եկան այն եզրակացության, որ այդ հասկացությունները չեն հենվում փաստերի վրա, չնայած որ հաճախ են հանդիպում մարդկային կյանքում: Նորմատիվային լեզուն ավելի շուտ զգացական, քան ճանաչողական իմաստ ունի, ուրեմն սուբյեկտիվ է: Այստեղից եզրակացնում էին, որ նորմատիվ բարոյական փիլիսոփայությունը և քաղաքական տեսությունը, որոնցում բացահայտվում է մարդկային բարօրության հայեցակարգը, դրանք կեղծ գիտություններ են: Ըստ պոզիտիվիստների մոտեցման, այդ գիտությունները ընդամենը մտածողի վերաբերմունքն են արտահայտում ինչ որ բանի նկատմամբ:

Սակայն իրականում դա այդքան էլ պարզունակ չէ, որքան կարող է թվալ առաջին հայացքից, քանի որ մի քանի քաղաքական տեսություններ իրապես հենվում են փաստերի վրա, իսկ զգացական վերաբերմունքն առաջանում է ոչ թե էմպիրիկ դատարկությունից, այլ կապված է աշխարհի նկատմամբ մեր պատկերացումների հետ, դրանով իսկ՝ էմպիրիկ ապացույցների հետ:

Այնուամենայնիվ, **պոզիտիվիստներն ընդունեցին միմյանց լրացնող երկու քաղաքական-տեսական մոտեցումները՝**

1. Քաղաքական վարքագծի մաքուր էմպիրիկ ուսումնասիրությունը հնարավոր է:

2. Քաղաքական տեսությունների տրամաբանական վերլուծությունը հնարավոր է:

Նրանք ստիպված էին ընդունել քաղաքական վերլուծության անհատական և բիհևիորիալ մոտեցումները, ինչպես նաև լուրջ առարկություններ չէին արտահայտում ինստիտուցիոնալիզմի նկատմամբ:

Այսպիսով, պոզիտիվիզմը մեծ ներդրում ունեցավ էմպիրիկ քաղաքական տեսության մեջ, մասնավորապես քաղաքական մտքի այնպիսի հոսանքներում, ինչպիսիք են ինստիտուցիոնալիզմը, բիհևիորիզմը, բանական (ռացիոնալ) ընտրության մոտեցումը, ինչպես նաև՝ վերլուծական փիլիսոփայության կայացման մեջ:

Ինստիտուցիոնալիզմ

Քաղաքական ինստիտուտների ուսումնասիրությունը քաղաքական գիտության կենտրոնական խնդիրն է: Բազմաթիվ հետազոտողների կարծիքով քաղաքական գիտությունն առանձնացել է փիլիսոփայությունից, քաղաքական տնտեսագիտությունից և անգամ սոցիոլոգիայից և դարձել ինքնուրույն առարկա՝ ի շնորհիվ այդ խնդրի: Դա միակ թեման է, որ քաղաքագետները «չեն բաժանում» գիտելիքների այլ ճյուղերի ներկայացուցիչների հետ:

Ինստիտուտ տերմինը ծագել է լատինական «institutum» բառից, որը նշանակում է «հաստատում», «հաստատություն»:

Քաղաքական ինստիտուտը քաղաքական բնագավառի գործընթացները կարգավորող սկզբունքների և նորմերի, ձևական (ֆորմալ) և ոչ ձևական կանոնների ամբողջությունն է:

Քաղաքագետներ Տ. Վեբլենը, Մ. Օրիուն և Ժ. Ռենարը այն ներկայացնում են որպես գաղափարի համերաշխության զգացողության շուրջ միավորված մարդկանց խումբ: Տ. Պարսոնսը և Տ. Զորթոնը այն ընկալում են որպես դերերի, վարքագծերի ու քաղաքական հարաբերությունների համակարգ, իսկ Ռ. Քինգը՝ որպես քաղաքական բնագավառում մարդկանց վարքագիծը կանոնակարգող նորմերի համակարգ:

Ինստիտուցիոնալիզմը բարձրացավ այն փաստի ընդունման հիմքի վրա, որ ամեն մի հանրությունում գոյություն ունեցող սոցիալական ընդհանրությունները և հաստատությունները, այնպիսիք ինչպիսիք են ընտանիքը, կամավոր միությունները, պրոֆեսիոնալ կազմակերպությունները, ինչպես նաև շահառու խմբերն, ըստ էության, ինտեգրված հաստատություններ են, որոնք ապահովում են հասարակության համախմբումն ազգային պետության ձևով: Այդ ռազմավարական ծրագրից բացի, նրանք ավելի մասնավոր դերեր են կատարում, լուծելով առանձին խնդիրներ, իսկ մի շարք դեպքերում՝ ապահովում իրենց մասնավոր շահերը:

Այսպես, օրինակ, բյուրոկրատիա սոցիալական ընդհանրությունը

մի կողմից կարող է լինել հաստատություն, որը ելնելով պետական շահերից՝ ապահովում է միջնորդությունը ժողովրդի և իշխանության միջև, մյուս կողմից՝ սպասարկում է բյուրոկրատական վերահսկողությունը զանգվածների և ինստիտուտների նկատմամբ:

Պետությունը քաղաքական համակարգի գլխավոր ինստիտուտն է կամ ինստիտուտների խումբը:

Պետությունը քաղաքական ամբողջություն է, որը ստեղծվում է էթնիկական կամ բազմազգ ընդհանրությամբ, հաստատված է որոշակի տարածքի վրա, որտեղ գործում է քաղաքական ընտրանու (էլիտայի) կողմից սահմանված իրավական կանոնակարգը, որը նա իր մենաշնորհից դարձնում է ինստիտուցիոնալացված իշխանություն և մտցնում է հարկադրանք կիրառելու օրինական իրավունքը:

Պետության ուսումնասիրությունը դարձել է քաղաքագիտության հիմնական թեմաներից մեկը և նպաստել ինստիտուցիոնալիզմի ձևավորմանը և զարգացմանը:

Այս մեթոդաբանության կողմնակիցները ուսումնասիրվող երևույթը դիտարկում են իշխանական ինստիտուտների՝ քաղաքական գործընթացի հիմնական դերակատարների փոփոխությունների և ձևափոխումների տեսանկյունից: Միջավայրի պայմանները (օրինակ սոցիալական ենթակառուցվածքը) մասնակիորեն է հաշվի առնվում, քանի որ դրանց երկրորդական նշանակություն են տալիս: Այս մոտեցման դեպքում ժամանակի սահմանները մեծ չեն և լավագույն դեպքում կարող են ընդգրկել առանձին պատմական իրադարձություններ:

Ինստիտուցիոնալ մոտեցումը քաղաքականության հետազոտման համար օգտագործում է երեք հիմնական մեթոդներ՝

- նկարագրական-ինդուկտիվ,
- ֆորմալ (ձևական)-լեզալ (օրինական),
- պատմական-համեմատական (կոմպարատիվ):

Նկարագրական-ինդուկտիվ մեթոդ: Նկարագրական մոտեցումը հաճախ անվանում են ժամանակակից պատմություն: Նրա ներկայացուցիչներն օգտագործում են ուսումնասիրության սովորական պատմական մեթոդները, ինչպես նաև հետազոտում են իրադարձությունները, դարաշրջանները, կոնկրետ մարդկանց և ինստիտուտների գործունեությունը: Իրենց ուսումնասիրություններում նրանք նկարագրում և վերլուծում են անցյալում տեղ գտած աչքի ընկնող իրադարձությունները, որոնց միջոցով բացատրում են ժամանակակից երևույթներն ու գործընթացները: Հիմնական շեշտադրումը դրվում է բացատրելու, հասկանալու և ոչ թե օրինաչափությունների վերհանման վրա: Պատմությունը նրանց համար իմաստության մեծ ուսուցիչ է: Հենց այդպես են այսօր աշխատում միջազգայնագետները, որոնք փնտրում են ժամանակակից հակամարտությունների արմատները պատմության մեջ: Մի խոսքով, պատմությունը զբաղվում է կոնկրետով, իսկ քաղաքական տեսությունն՝ առավել ընդհանուրով: Ինչպես գրում է Է. Սեյթը. «Պատմությունը դա նախկին քաղաքականությունն է, իսկ այսօրվա քաղաքականությունը դա ապագա պատմությունն է»: Քաղաքական ինստիտուտները ոչ միշտ են գիտակցաբար ստեղծվում, այլ հիմնականում՝ հակառակը: Նրանք բավականին դանդաղ են զարգացել, աճել են հին պրակտիկայից, իրադարձությունների ազդեցության տակ ձևափոխվել են: Հենց դա է անհրաժեշտ պատմական վերլուծությանը՝ կոնկրետ ինստիտուտի էությունն ու իմաստը հասկանալու համար: Այս մոտեցման առանձնահատկությունը դրա «գերփաստացիությունն է»: Այլ կերպ ասած, դիտարկումը առաջնային է, այսինքն առաջնահերթ նշանակությունը միշտ տրվում է փաստերին: Այս մոտեցման ներկայացուցիչների կարծիքով քաղաքական ինստիտուտներն իրական են և հենց դա է դրանց արժանիքը: **Ինստիտուցիոնալ մոտեցումն ինդուկտիվ է, քանի որ կառուցվում է կրկնվող դիտարկումների հիմքի վրա:** Ամենակարևորը այն է, որ քաղաքական ինստիտուտների հետազոտությունը թույլ է տալիս փաստերին խոսելու իրենց մասին՝ հաստատելով ուսումնասիրության նորմատիվային կողմի անհրաժեշտությունը: Այն միաժամանակ բացահայտում է իր, մեղմ ասած, անտարբերությունը տեսության նկատմամբ, հատկապես ժա-

մանակակից սոցիալական և քաղաքական տեսությունների նկատմամբ, որոնք համարում է երկրորդական:

Ձևական-օրինական մեթոդ: Այս մոտեցումը իր մեջ ներառում է երկու ուղղություն: Մի կողմից այն առաջարկում է ուսումնասիրել հրապարակային իրավունքը, և կոչվում է «օրինական», մյուս կողմից՝ պաշտոնական կառավարական կազմակերպությունները, որտեղից էլ առաջացել է դրա «ձևական» անվանումը: Պրակտիկայում երկու ուղղությունները սերտ կապված են: Այս մոտեցման ներկայացուցիչները հիմնականում զբաղվում են սահմանադրության ուսումնասիրությամբ, սակայն դիտարկում են հիմնարար քաղաքական ինստիտուտների ողջ համակարգը: Ինստիտուտների հետազոտության մեջ կենտրոնականը գոյություն ունեցող կանոնների ազդեցության խնդիրն է մարդկանց քաղաքական վարքագծի վրա: Այս մոտեցումով քաղաքական ինստիտուտների ուսումնասիրությունը երկար ժամանակ քաղաքականության հետազոտությունների մեջ գլխավոր ուղղություն էր: 1950-ական թվականներից այդ ուսումնասիրությունների ոլորտն ընդլայնվեց: Քաղաքական ինստիտուտների ուսումնասիրության առավել աչքի ընկնող մասնագետներն էին ամերիկացի տեսաբան Սեյմուր Լիփսեթը և ֆրանսիացի տեսաբան Մորիս Դյուվելթեն:

Սեյմուր Լիփսեթը ծնվել է 1922 թ.-ին, Նյու-Յորքում: Քաղաքական գիտությունների ամերիկյան ասոցիացիայի նախագահն է, Ամերիկյան արվեստի և գիտությունների ակադեմիայի սոցիալական հարցերի գծով փոխնախագահ (1974-1978): Մի քանի մենագրությունների հեղինակ, որոնցում լուսաբանել է քաղաքական տեսության առանձին այնպիսի հարցեր, ինչպիսիք են մասնավորապես՝ «Առաջին նոր ազգը», «Քաղաքական մարդը, քաղաքականության սոցիալական հիմքերը», «Բաժանված ակադեմիա. պրոֆեսորները և քաղաքականությունը», «Մայրցամաքային բաժանում. Արժեքներ և ինստիտուտներ. ԱՄՆ-ի և Կանադայի արժեքներն ու ինստիտուտները» և այլն:

Ս. Լիփսեթի հայացքները ձևավորվել են Մ. Վերերի և Ռ. Մերթո-
նի զգալի ազդեցությամբ: Հիմնական աշխատանքները նվիրված են
քաղաքականության սոցիոլոգիային, ժամանակակից աշխարհի ժո-
ղովրդավարության և սոցիալական կարգի խնդիրներին:

Ս. Լիփսեթի համար ժողովրդավարությունը դա մարդկային հա-
սարակության հիմնական բնութագիրն է: Հասարակական կարծիքի
հարցումների և ընտրությունների վերլուծության հիման վրա նա բա-
ցահայտեց ժողովրդավարական կարգերին օժանդակող և քայքայող
պատճառները, պայմանները և ուժերը: Ս. Լիփսեթի կարծիքով՝ բոլոր
անկախ պետություններն իրենց հաստատման ժամանակ ընդհար-
վում են երկու հիմնարար խնդիրների՝ քաղաքական իշխանության
օրինականացման (լեգիմիտացիան) և ազգային նույնականության
ձևավորման հետ: Այսպես, օրինակ, «Առաջին նոր ազգը» աշխա-
տությունում (1963) նա հետազոտել է ամերիկյան քաղաքական հա-
մակարգի պատմությունը և եզրահանգում կատարել, որ ԱՄՆ-ն իր
այդպիսի ձևավորման համար գլխավորապես պարտական է առա-
ջին խարիզմատիկ առաջնորդներին՝ ամերիկյան Սահմանադրու-
թյան «Հիմնադիր-հայրերին»:

Ս. Լիփսեթի ուսումնասիրությունների կարևոր մասն է կազմում
հակամարտությունների խնդիրը: Նա կարծում է, որ բարձր լարվա-
ծությունը և հակամարտությունը հատուկ են բոլոր զարգացած պե-
տությունների համար: Կայուն են լինում այն երկրները, որոնցում
մշակված է համաձայնության հասնելու ու կարգը պահպանելու
արդյունավետ մեխանիզմներ: Ինչքան զարգացած է պետությունը,
այնքան բարձր են նրա այդ մեխանիզմները: Ժամանակակից հասա-
րակություններում սովորաբար առկա են երկու տեսակի հակամար-
տություններ՝ ստրատիֆիկացիոն (հասարակության շերտավորումը)
և մշակութային-արժեքային: Առաջինները հատուկ են զարգացած,
խսկ երկրորդները՝ անցումային հասարակությունների համար:

Իր ուսումնասիրությունների արդյունքում նա հանգել է այն եզրա-
կացությանը, որ քաղաքական համակարգի հիմքում ընկած է այսպես
կոչված համաձայնության պարադիգման (եղանակը կամ հարացույ-
ցը), որի հիմքը հակամարտության և համաձայնության բալանսի
սկզբունքն է: Հասարակության մեջ համաձայնության հիմքը «միջին

դասն է», քանի որ հենց նա է արտահայտում հասարակության մեծամասնության շահերը:

Կոնֆլիկտային իրադրության հիմքում ընկած են տարբեր սոցիալական խմբերի ու կուսակցությունների շահերը, ուստի շատ կարևոր է նրանց մեջ համաձայնության հաստատումը, իսկ դրան կարելի է հասնել պետությունում օրինականության և գործունեության արդյունավետության հաստատումով:

«Քաղաքական մարդ. Քաղաքականության սոցիալական հիմքերը» աշխատությունում Ս. Լիփսեթը հետազոտել է քաղաքական գործընթացներում շարքային մարդու ազդեցության խնդիրները: Նրա կարծիքով, շարքային քաղաքացուն քաղաքական կյանքին մասնակցելու հնարավորություն տրվում է միայն ժողովրդավարական համակարգերում: Նա մեծ գործ է կատարել ընտրողների վարքագիծն ուսումնասիրելու ասպարեզում՝ եզրակացնելով, որ ընտրությունները հասարակությունում համաձայնություն ստեղծելու գլխավոր միջոցներից են, իսկ ընտրությունների արդյունքներն արտահայտում են ժողովրդի վերաբերմունքը քաղաքական ինստիտուտների գործունեության հանդեպ:

Սորիս Դյուվերժե. Ֆրանսիացի քաղաքական տեսաբան և սոցիոլոգ: Ծնվել է 1917 թ.-ին, Ֆրանսիայում: 1948-1955 թթ. եղել է Սորբոնի համալսարանի Քաղաքական համակարգերի համեմատական վերլուծության կենտրոնի ղեկավարը, 1955-1985 թթ. նույն համալսարանի քաղաքական սոցիոլոգիայի պրոֆեսոր: Դասավանդել է աշխարհի բազմաթիվ համալսարաններում: «Քաղաքական կուսակցություններ» (1951), «Սոցիալական գիտությունների մեթոդները» (1964), «Քաղաքականության սոցիոլոգիան» (1973) և այլ աշխատությունների հեղինակն է:

Իր առաջին իսկ ուսումնասիրություններում Ս. Դյուվերժեն փորձեց դուրս գալ Ֆրանսիայի քաղաքական համակարգի կառուցվածքին նորմատիվային բացատրություն տալու շրջանակներից և առաջարկեց օբյեկտիվ գործառնության մեխանիզմների վերլուծության մեթոդաբանությունը: Նրա գիտական հետազոտությունների շրջա-

նակներն են քաղաքական ինստիտուտները և սահմանադրական իրավունքը: Հատկապես արժեքավոր նշանակություն ունեցավ «Քաղաքական կուսակցություններ»-ում նրա կատարած այն հետևությունը, որը քաղաքական կուսակցությունների էությունը հասկանալու համար կարևոր են ոչ այնքան նրանց գաղափարական և ծրագրային հիմքերը, որքան նրանց ներքին կառուցվածքը, այսինքն՝ շարքային ու ղեկավար անդամների հարաբերությունների տիպը: Ինստիտուցիոնալ վերլուծությամբ նա առանձնացրեց կուսակցությունների երեք տիպ՝ կադրային, զանգվածային և կենտրոնացված:

Կուսակցական համակարգը դա քաղաքական կուսակցությունների միջև հարաբերականորեն կայուն ցանցն է, որը կախված է նրանց քանակից, անդամների թվաքանակից և գաղափարական ուղղվածությունից:

Մ. Դյուվերթեն բոլոր կուսակցական համակարգերը բաժանեց միակուսակցականների, երկկուսակցականների ու բազմակուսակցականների: Ներկայիս ուսումնասիրողները դրան ավելացրել են ևս մեկը՝ իշխող կուսակցության մոդելը:

Նրա կարծիքով կուսակցական համակարգերի տարբերության հիմքում ընկած են երեք խումբ հիմնական երևույթներ՝ սոցիալատնտեսական, մշակութային-պատմական և տեխնիկական: Քաղաքական ասպարեզում գլխավորը միշտ իշխանության խնդիրն է, որն ուսումնասիրելու համար հարկ չկա դիմելու ինչ-որ յուրահատուկ գիտական մեթոդների: Նա առանձնացրեց իշխանությունը և ազդեցությունը: Հենվելով Մ. Վեբերի իշխանության մասին ձևակերպման վրա՝ Մ. Դյուվերթեն ազդեցությունը ներկայացրեց ուրիշ մարդուն որևէ գործողության դրդելու ձևով, որը նա չէր կատարի առանց այդ ազդեցության: Վերջինս գոյություն ունի բոլոր այն տեղերում, որտեղ կա անհավասարություն:

Պատմական-համեմատական մեթոդ: Այս մեթոդը ներառում է պատմական հայացքը երևույթների վրա, և դրանց համեմատական հետազոտությունը: Այսինքն, ինստիտուտները հետևողականորեն ուսումնասիրվում են ոչ թե ամեն մի երկրում առանձին վերց-

րած, այլ տարբեր երկրների ինստիտուտների համեմատությամբ: Առավել հաջողված աշխատանքն այդ մոտեցմամբ կատարեց Գերման ֆայները 1930-1950-ական թվականներին: Նա համեմատական վերլուծության ենթարկեց ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և Գերմանիայի քաղաքական ինստիտուտները: Նրա վերլուծությունը վերաբերում էր ոչ միայն պետական կազմակերպչական տարրերին, այլև ժողովրդավարության, իշխանության բաժանման, սահմանադրության, կենտրոնի և ռեգիոնների հարաբերության, դաշնային (ֆեդերալիզմի) խնդիրներին: Ապա անդրադարձել է ժամանակակից քաղաքական մեխանիզմի այլ կարևոր մասերին՝ ընտրախավին, կուսակցություններին, պառլամենտին, նախարարների կաբինետին, պետության ղեկավարին, քաղաքացիական ծառայություններին և իրավական մեխանիզմներին:

Հարկ է նշել, որ պատմահամեմատական մեթոդով են աշխատել ժամանակակից քաղաքական տեսության դասականներ համարվող Մաքս Վեբերը, Գաետանո Մոսկան, Վիլֆրեդո Պարետոն, ինչպես նաև հանրահայտ «Քաղաքացիական մշակույթը» աշխատության հեղինակներ Գ. Ալմոնդը և Ս. Վերբան: Ներկայիս շատ տեսաբաններ գիտակցաբար, իսկ երբեմն էլ առանց գիտակցելու օգտագործում են այս մեթոդը:

Ժամանակակից քաղաքական գիտության մեջ ինստիտուցիոնալիզմի պատմահամեմատական մեթոդի ներկայացուցիչներին հատուկ են երեք հիմնական հատկություններ: Առաջին՝ նրանք անդրադառնում են խոշորամասշտաբ, բովանդակալից հարցերին, որոնք հետաքրքրում է ոչ միայն մասնագետներին, այլև լայն զանգվածներին: Երկրորդ՝ նրանք լրջությամբ են վերաբերում ժամանակի խնդրին՝ ընդգծելով հետևանքները և հետևելով փոփոխություններին ու գործընթացներին: Երրորդ՝ նրանք հիմնականում ուսումնասիրում են մակրոհամատեքստերը և կանխատեսումներ են կատարում միաժամանակ գործընթացների և ինստիտուտների ազդեցությունների հետևանքների վերաբերյալ: Ինստիտուցիոնալ մոտեցումը հետազոտում է քաղաքական ինստիտուտների առաջացման պատճառները և դրանց գործունեության հետևանքները, ինչպես նաև արտահայտում է ազատական-ժողովրդավարության արժեքները:

Ռացիոնալ (բանական) ընտրության տեսություն

Բանականությունը (ռացիոնալիզմը) ելնում է նրանից, որ աշխարհը բանական կառուցվածք ունի և նրա օրինաչափություններն ու բաղադրիչները կարելի է բացահայտել մարդկային բանականությունը և քննադատական հետազոտությունն օգտագործելու շնորհիվ: Որպես փիլիսոփայական տեսություն՝ այն ենթադրում է, որ գիտելիքը ձևավորվում է բանականությունից և ոչ թե փորձից՝ դրանով իսկ այն հակադրվում է էմպիրիզմին: Որպես ընդհանուր սկզբունք բանականությունը գլխավոր շեշտադրումը դնում է մարդկանց՝ աշխարհը ճանաչելու և բացատրելու ունակությունների վրա: Չնայած, որ ռացիոնալիզմը չի թելադրում մարդու վարքագծի նպատակները, սակայն ուղղորդում է, թե ինչպես կարելի է հասնել դրանց իրագործմանը:

Բանական ընտրության տեսության մոտեցման մեջ գլխավոր տեղը հատկացվում է անկախ և ակտիվ քաղաքական ակտորի դերում հանդես եկող մարդ - անհատին, փորձ է արվում նայել մարդու վարքագծին «ներսից»՝ հաշվի առնելով նրա ներքին մղումները, լավագույն վարքագծի ընտրությունը, անձնական շահը և այլն: Այս մոտեցման ներկայացուցիչներն առաջնորդվում են հետևյալ սկզբունքներով՝ անհատականություն (անհատն առաջնային տեղ ունի սոցիալ-քաղաքական կառույցների, քաղաքականության և հասարակության հարաբերությունների մեջ), անհատի էզոիզմ (եսասիրություն) և անհատի ռացիոնալիզմ (բանականություն): Այսինքն՝ մարդ-անհատը, քիչ ուժեր ծախսելով, ձգտում է ստանալ հնարավորինս շատ արդյունքներ:

Այս տեսության վաղ հետազոտությունները հիմնականում վերաբերում էին տնտեսությանը, մասնավորապես միկրոտնտեսությանը: Ընդ որում, դրանում մեծ նշանակություն էին տալիս խաղերի տեսությանը: Այս տեսությունը հենց սկզբից սկսեց զբաղվել այն միջոցների ուսումնասիրությամբ, թե ինչպես կարող է բանական խաղացողների ռազմավարական համագործակցությունը հանգեցնել մի արդյունքի, որը կհամապատասխանի կամ շահեկան կլինի կողմերի համար, չնայած որ դա չի համապատասխանի նրանց նախնական մտադրություններին:

Բանական ընտրության մեթոդաբանությունն առաջին անգամ կիրառվեց ԱՄՆ-ում և Անգլիայում Երկրորդ աշխարհամարտի ժամանակ՝ մարտական օպերացիաները նախագծելու համար և ստացավ «օպերացիաների հետազոտություն» անունը: **Այս ուղղության մեջ կարևոր ներդրում ունեցան մաթեմատիկոս Ջոն ֆոն Նեյմանն ու տնտեսագետ Օսկար Մորգենշտերնը՝ խաղերի և տնտեսական վարքագծի տեսությանը նվիրված հիմնարար աշխատության հեղինակները:**

Զնայած նրան, որ սկզբնական շրջանում բանական ընտրության տեսությունը հիմնականում օգտագործվում էր տնտեսագիտության մեջ, վերջին տասնամյակներում այն «հասարակական ընտրության տեսություն» անվանումով օգտագործվում է նաև այլ հասարակական գիտություններում, այդ թվում և քաղաքագիտության մեջ:

1960-ական թվականներից բանական ընտրության տեսությունը կարևոր դեր է խաղում քաղաքական գիտության մեջ: Առաջինն այն կիրառեց Էմտոնի Դաունսը՝ ընտրախափի վարքագիծը և միջկուսակցական մրցակցությունն ուսումնասիրելու համար: Է. Դաունսի «Ժողովրդավարության տնտեսական տեսությունը» աշխատությունը լույս տեսավ 1957 թ.-ին, որտեղ նա ցույց տվեց, որ անհատները, քվեարկելով այս կամ այն կուսակցության օգտին, իրենց համար ակնկալում են որոշակի օգուտներ: Օրինակ, եթե հաղթի այդ կուսակցությունը, ապա կցածրացնեն հարկերը, կամ արտոնություններ կտրվեն առողջապահության ոլորտում և այլն: Ընդ որում, կուսակցությունների մոտիվացիան միայն ընտրություններում հաղթանակի հասնելն է, ուստի նրանք, հաշվի առնելով քվեարկողների ցանկությունները, մշտապես փոխում են իրենց քաղաքականությունը, որպեսզի ստանան քվեարկողների առավելագույն ծայերը:

Ռացիոնալ ընտրության տեսության մշակման մյուս կարևոր քայլը կատարեց «Կոլեկտիվ գործողությունների տրամաբանություն. հասարակական բարօրություն և խմբային տեսություն» աշխատության (1965 թ.) հեղինակ Մ. Օլսոնը, ով եկավ այն հիմնական եզրակացության, որ սեփական շահերն ունեցող անհատը ոչ միշտ է մասնակցում այն կոլեկտիվ գործողություններին, որոնք ուղղված են առանձին նպատակի: Այս տեսությունը լայն տարածում գտավ 1986 թ.-ին, երբ

դրա համար Ձեյմա Բյուկենենը տնտեսագիտության գծով Նորբեյան մրցանակ ստացավ:

Ձեյմա Բյուկենենը ծնվել է 1919 թ-ին, ԱՄՆ Մարֆիսբորո քաղաքում: Ամերիկյան տնտեսագետ, Նորբեյան մրցանակի դափնեկիր: Համարվում է նոր քաղաքատնտեսության հիմնադիրներից մեկը: Դասավանդել է Թեննիսի, Ֆլորիդայի և Վիրջինյայի համալսարաններում: 1962 թ-ին. Գ. Թալլոկի հեղինակությամբ հրատարակեց «Համաձայնության հաշվարկ» աշխատությունը, որտեղ վերլուծության են ենթարկել տնտեսական որոշումներ ընդունելու գործընթացները՝ համադրելով տնտեսական և քաղաքական գիտությունների մեթոդները: Հեղինակ է հանրահայտ «Ազատության սահմանները: Անարխիայի և Լեվիաֆանի արանքում» աշխատության:

Այդ ժամանակներից բանական ընտրության տեսությունն ավելի հաճախ սկսեց օգտագործվել «հասարակական ընտրության տեսություն» անունով: Ինքը՝ Ջ. Բյուկենենը ժամանակակից հասարակական ընտրության տեսության հիմնադիր էր համարում չվեդ հետազոտող Կ.Վիքսելին, ով դեռ 1896 թ. հիմնավորել էր երեք հիմնական սկզբունքները՝

- մեթոդաբանական անհատականություն (ինդիվիդուալիզմ),
- տնտեսական մարդու հայեցակարգը,
- քաղաքականությանը որպես առևտրի (փոխանակության) մոտեցում:

Հասարակական ընտրության տեսաբաններն առաջնորդվում էին այն սկզբունքով, որ չնայած քաղաքական շուկայում գործող մարդիկ կարող են որոշ հոգատարություն ցուցաբերել ուրիշների հանդեպ, սակայն նրանց գլխավոր, առաջնորդող դրդապատճառը (կարևոր չէ դրանք ընտրողներն են, քաղաքական գործիչները, լոբբիստները թե բյուրոկրատները) իրենց անձնական շահն է:

Ջ. Բյուկենենն, այնուամենայնիվ, գտնում է, որ տնտեսական մոտեցմամբ քաղաքականությանը չի նշանակում անհատի էգոիստական շահերի գերադասություն բոլոր մյուսների նկատմամբ: Նա իր

տեսության մեջ տեղ է տալիս նաև ընդհանուր շահերին, սակայն դրանք պետք է առաջանան ոչ թե վերացական (աբստրակտ) գաղափարների հիման վրա (Աստօուց, Կ. Մարքսից և այլն), այլ հասարակության մեջ մարդկանց համագործակցության արդյունքում: Նա առաջարկեց հասարակության սահմանադրական կոնկրետ մոդել: Քաղաքացիների համընդհանուր վարքի կանոնները կարգավորվում են Սահմանադրությամբ, իսկ անհատները կարող են մանր, մասնավոր հարցերի շուրջ հասնել համաձայնության պայմանագրերի և համաձայնագրերի միջոցով: Այս մոտեցման հիմնական գաղափարը ենթադրում է, որ անհատական ընտրությունը հասարակության կողմից վերահսկման ենթակա չէ, իսկ խաղի կանոնները հաստատվում են քաղաքացիական հասարակություն կազմող անհատների կողմից՝ ջանքերով: Նրա տեսության մեջ քաղաքացիական հասարակությունը կարող է ազդել քաղաքական գործընթացների վրա: Պետք է նաև գոյություն ունենան օրենքներ, որոնք կխոչընդոտեն իշխանության հասած խմբերին զբաղվել կոռուպցիայով՝ պաշտոնական դիրքի չարաշահմամբ: «Կանոնների հիմնավորումը» աշխատության մեջ Ջ. Բյուկենենը հիմնավորում է, որ շուկայական վարքագծի վերլուծության մեթոդները կարելի է օգտագործել բոլոր այն իրադրություններում, երբ մարդը կանգնած է ընտրության առաջ: Այստեղ նա ցույց է տալիս, որ շուկայական կանոններն արտացոլում են մարդկային համագործության դրական կողմերը: Գլխավորն այս պարագայում այն է, որ կանոնները սահմանվում են մարդկանց համագործակցության արդյունքում և ոչ թե պետության կողմից: Միաժամանակ նա ընդգծում էր, որ չի կարելի տնտեսական ոլորտի օրինաչափությունները մեխանիկորեն տանել քաղաքական ոլորտ:

Բանական ընտրության տեսության մեթոդների օգտագործումը քաղաքագիտության մեջ հնարավորություն տվեց բացատրելու ընտրողների քվեարկության միտումները, բացահայտելու պառլամենտում դաշինքների ձևավորման և հաղթանակած կուսակցությունների կողմից պաշտոնների ու իշխանության բաժանման մեխանիզմները:

Հասկանալի է, որ այս մեթոդաբանական մոտեցումը լիարժեք հաշվի չի առնում սոցիալական և պատմամշակութային գործոնները,

ինչպես նաև այն, որ մարդիկ հաճախ իռացիոնալ (զգացմունքային) վարքագիծ են դրսևորում՝ գտնվելով կարճաժամկետ գործունեների, աֆեկտի (ցնցման) ազդեցության տակ: Այնուամենայնիվ, այս մեթոդաբանական մոտեցումն ակտիվորեն օգտագործվում է ընտրողների վարքագիծը, պառլամենտական գործունեությունը, միջազգային հարաբերությունները և այլ քաղաքական գործընթացներ վերլուծելիս:

Բիհևիորիզմ

Անցած հարյուրամյակի 50-60-ական թվականներին ակադեմիական հանրության մոտ մեծ տարածում ստացավ բիհևիորիստական (վարքաբանական) գիտական մոտեցումը, որն արմատներով հասնում էր 19-րդ դարի մտածող Օ. Կոնտի աշխատություններին և հատկապես 20-րդ դարի տրամաբանական պոզիտիվիզմի «Վիեննական խմբակին»: Չնայած այս տեսության ներկայացուցիչներն ունեն տարբեր մոտեցումներ, սակայն նրանց նրանց մեծամասնությունը ընդունել են պոզիտիվիստական երկու հիմնարար սկզբունքներ՝ էմպիրիկ տեսությունը և բացատրությունը: Քաղաքական կյանքի բիհևիորիստական մոտեցման բնութագրական գծերն են էմպիրիկ դիտարկումը և էմպիրիկ ստուգումը, ինչն ընդհանուր առմամբ համապատասխանում է պոզիտիվիստական ուսմունքին:

Բիհևիորիստական մեթոդաբանության կողմնակիցները որպես քաղաքականության դերակատարներ դիտարկում են առանձին անհատներին և մարդկային խմբերին: Ուստի նրանց համար քաղաքական գործընթացը ներկայանում է որպես այդ դերակատարների քաղաքական կամքի ու հետաքրքրությունների առումով դրսևորած վարքը՝ «արդյունքի վեկտորի» տեսքով:

Այսինքն, հիմնական ուշադրությունը դարձնում են ոչ թե քաղաքական ինստիտուտներին, այլ իշխանություն իրագործող մեխանիզմներին և վերլուծության առարկան դարձնում քաղաքական վարքագիծը՝ անհատական և համախմբման մակարդակներում (մարդկային խմբերում, սոցիալական ինստիտուտներում և այլն): Այս մեթոդաբա-

նության ներկայացուցիչների ուշադրության կենտրոնում հայտնվեցին քաղաքական վարքագծի հետ կապված բազմաթիվ քաղաքական գործընթացներ՝ քվեարկություններն ընտրությունների ժամանակ, քաղաքական ակտիվության այլ ձևերի դրսևորումները:

Առաջին անգամ այս մոտեցումը քաղաքական գիտության մեջ փորձեցին օգտագործել 1920-30-ական թվականներին Չիկագոյի համալսարանի գիտնականները Չարլզ Մերրիամի (1874-1953) գլխավորությամբ: Դա հատկապես պարզ դրսևորվեց նրա «Քաղաքականության նոր ասպեկտները» գրքում, ինչպես նաև նրա «Քաղաքական իշխանություն. նրա կառուցվածքը և գործունեության շրջանակները» (1934), «Նոր ժողովրդավարություն և նոր դեսպոտիզմ» (1939), «Ի՞նչ է ժողովրդավարությունը» (1941) և այլ աշխատություններում: Նա դարձավ քաղաքագիտության «Չիկագոյի դպրոցի» հիմնադիրը: Չ. Մերրիամի գործը շարունակեց նրա աշակերտ Ջարոլդ Լասսուելլը (1902-1978), ով հեղինակել է «Ով ինչ է ստանում, երբ և ինչպես» (1936) աշխատությունը, որտեղ քաղաքագիտությունը ներկայացրեց որպես ազդեցության և ազդեցիկ լինելու մասին գիտություն: Ազդեցության տակ նա հասկանում էր շատ ընդարձակ, մեղմ իշխանության ձևը, իսկ ժողովրդավարության հիմնական նպատակը համարում էր մարդկային արժանապատվության հռչակումը:

Նրանք օգտագործեցին Թերսթոունի «հոգեմետրիկական մեթոդը», որի հիմքում ընկած է այն գաղափարը, թե որոշակի կապ գոյություն ունի մարդու վարքագծի ու նրա հրահանգների մեջ, ինչը կարելի է պարզել հարցման միջոցով վերլուծելով հասարակական կարծիքը: Դա իրական գիտական հեղափոխություն էր քաղաքագիտության մեջ:

Առանձնապես ուշագրավ էր նրանց այն հետազոտությունները, որոնցում տրվում էին մարդու քաղաքական վարքագծի հոգեբանական կողմը և հայտարարվում, որ մարդկային հոգեբանության գերակա հատկությունն իշխանության հասնելու նրա ձգտումն է: Իշխանությունը սկզբնական ու վերջնական նպատակն է ցանկացած

քաղաքական գործունեության համար: Հիմնականում ի շնորհիվ բիհնիորիստների քաղաքական տեսությունը վերածվեց իշխանության մասին գիտության: Այդ խնդիրն առավել խորությամբ է ուսումնասիրել և ներկայացրել Հարոլդ Լասսուելլը (1902-1978), ով ժխտում էր համընդհանուր բարոությունը՝ որպես պետական գործառնություն ներկայացնելու գաղափարը, և պետությունը՝ որպես ինչ-որ իդեալ ներկայացնելու փորձերը: Նրա կարծիքով, պետական իշխանությունը առաջանում է քաղաքական կամքի մերձեցման, բախման, միավորման և բաժանման, պայքարի ու հավասարակշռության ճանապարհով, այսինքն դա մի ուժային դաշտ է, որտեղ հանդիպում են մարդիկ, որոնք ունեն սեփական վարքագծի տարբերակներ: Պետական իշխանության խնդիրը քաղաքական ուժերի մեջ հավասարակշռության պահպանումն է:

Իշխանության ձգտող և իրար բախվող անհատական կամքերը վերջիվերջո ձևավորում են համագործակցության կայուն կապեր ու որոշակիորեն կորցնում իրենց շարժունակությունը: Իշխանության սուբյեկտները մնում են որոշակի պայմանավորվածությունների կամ «գործարքների» մեջ, որոնց արդյունքները ամրագրվում են կանոններով և նորմերով: Հ. Լասսուելլը կարծում է, որ այդ «կայունացած» վիճակը առաջ է բերում «իշխանության շուկա» և նրանում կատարվող բոլոր իրադարձությունները նկարագրում է որպես «խաղ»: Խաղային պահը այն է, որ հաղթում է նա, ով կանոններով է հաղթում, իսկ բոլոր փորձերը անօրինական ճանապարհով հաղթելու՝ պատժվում են: Այդ քաղաքական շուկայից վեր կանգնած է պետությունը, որը կարգավորող ուժ ունի: Այսինքն, ստացվում է, որ պետությունն անենակարող է: «Քաղաքականություն. ով ինչ է ստանում, երբ և ինչպես» աշխատության մեջ Հ. Լասսուելլը սահմանում է իր քաղաքական համակարգի մի շարք կարևոր հասկացություններ՝ ընտրանի (էլիտա) և զանգված, իշխանություն և ազդեցություն և այլն: Հատկապես ուշագրավ է նրա այն տեսության հիմքերի ստեղծումը, որն այսօր կոչվում է ֆուտուրոլոգիա (ապագայաբանություն): «Քաղաքական գիտություններ» աշխատության մեջ նա դիտարկում է քաղաքական գիտության պատմական զարգացումը, առանձին գիտնականների հայացքները, մոտեցումները քաղաքական գործընթացների վերլուծությանը: Նրա

կարծիքով քաղաքական գիտությունները ներառում են՝

1. մեթոդներ, որոնցով ուսումնասիրվում են քաղաքական հետազոտությունները,
2. քաղաքականության հետազոտման արդյունքներ,
3. ուսմունքներ, որոնք մարմնավորում են մտավոր առաջընթացը տվյալ ժամանակահատվածում:

Քաղաքական գիտության զարգացումն ըստ Յ. Լասսուելլի ենթադրում է հավաստի տեղեկատվության մեթոդների կատարելագործում: Քաղաքական գիտությունը պետք է ուշադրության կենտրոնում պահի աշխարհը որպես ամբողջություն: Բացի դրանից, անհրաժեշտ է մշտապես դիտարկել անցյալը և կանխատեսել ապագան, որպես մեկ միասնական ամբողջի մասեր:

Բիհևիորիզմի մեկ այլ հոսանքի ներկայացուցիչն է տեսաբան Ֆրեդերիկ Սքինները: Ծնվել է 1904 թ.-ին, ԱՄՆ Պենսիլվանիա նահանգի Սասկուեհանայում: Դոկտորական աստիճանը ստացել է 1931 թ. Զարվարդի համալսարանում, որտեղ և դասավանդել է մինչև 1936թ.: Այնուհետև գիտական - մանկավարժական գործունեությամբ է զբաղվել Մինեսոտայի նահանգի Մինեապոլիսի, ապա Ինդիանա նահանգի համալսարաններում: 1946 թ. մինչև իր գործունեության վերջը եղել է Զարվարդի համալսարանի պրոֆեսոր: Մահացել է 1990 թ. Նրա աշխատություններից են «Մարդու վարքագծի մասին գիտությունը» (1953), «Ազատության և արժանապատվության համար» (1971), «Բիհևիորիզմի մասին» (1974), «Մտորումներ բիհևիորիզմի և հասարակության մասին» (1978) և այլն:

Նա իր բոլոր աշխատություններում ներկայացնում է այն գաղափարը, որ մարդը կառավարելի է դրսից, ուստի կարելի է հսկել և ուղղորդել նրա վարքագիծը: Ընդ որում, մարդու վարքագծի վրա ազդում է նաև արտաքին միջավայրը և բնականաբար՝ հակառակը: Հետագայում Ֆ. Սքինների տեսության հիման վրա մշակվեց ծրագրավորված ուսուցման համակարգը, որը բավականին մեծ դեր խաղաց համակարգչային ծրագրերի մշակման գործում: Նրա գաղափարները

օգտագործվեցին նաև արևմտյան պետությունների սոցիալական քաղաքականության մշակման մեջ:

Սակայն հարկ է նշել, որ բիհևորիալմեթոդաբանության շրջանակներում բավարար չափով չեն արտացոլվում քաղաքական գործընթացի լայնածավալ, համակարգային կողմերը: Այս մոտեցման դեպքում էլ ժամանակային չափումները մեծ չեն և հնարավորություն են ընձեռում ուսումնասիրել քաղաքական գործընթացները հիմնականում առօրյա շրջանակներում: Այսպես, երբ ժողովրդավարությունը սկսեցին դիտարկել այս մոտեցումով, ապա այն վերածվեց միայն ընտրությունների վերլուծության և, փաստորեն, կորսվեցին հասարակության ժողովրդավարական մոդելի հիմքում գտնվող գաղափարները, օրինակ, քաղաքական մասնակցությունը, հրապարակային ներկայացուցչությունը և այլն:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

Ներկայացնել՝

1. Տրամաբանական պոզիտիվիզմը և քաղաքական տեսությունը:
2. Լ. Վիգտենշտեյնի տեսության երեք թեզիսները:
3. Ինստիտուցիոնալ մոտեցման երեք հիմնական մեթոդները:
4. Ռացիոնալ ընտրության տեսության գլխավոր դրույթները:
5. Ջ. Բյուկենենի հասարակության սահմանադրական մոդելը:
6. «Չիկագոյի դպրոցը» որպես քաղաքագիտության մեջ բիհևորիզմի ներդրող (Չ. Մերրիամ, Ջ. Լասսուել, Ֆ. Սքիններ):

Գրականություն

1. **Бреннан Дж., Бьюкенен Дж.**, Причина правил. Конституционная политическая экономия, М., 2005.
2. **Бьюкенен Дж.**, Сочинения. Конституция экономической политики. Расчёт согласия. Границы свободы / Нобелевские лауреаты по экономике. Т. 1 / Фонд экономической инициативы, М., 1997.
3. **Дюверже М.**, Политические институты и конституционное право// Антология мировой политической мысли в 5 томах, т.2, с.643-661.
4. **Дюверже М.**, Политические партии, М., 2007.
5. **Липсет С. М.**, Третьего пути не существует (Перспективы левых движений) // Политические иссл...№ 5-6, 1991.
6. **Скиннер Ф.**, О бихевиоризме (About Behaviorism). New York: Knopf. 1974.
7. Политический процесс: Основные аспекты и способы анализа, под ред. Мелешкиной Е. Ю., М., 2006.
8. Политология: хрестоматия(сост М. А. Василик, М. С. Вершинин), М., 2000.
9. **Քեռյան Գ.**, Քաղաքական կուսակցություններ, Եր., 1996:

Գլուխ 4. ՆՈՐՄԱՏԻՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

**Ուտիլիտարիզմ: Լիբերարիզմի էվոլյուցիան 20-րդ դարում:
Հասարակական դաշինքի ժամանակակից վարկածը:
Արդարության սկզբունքները և արդարության տեսության
նոր մեկնաբանությունը:**

Ուտիլիտարիզմ

Նորմատիվ քաղաքական տեսությունը ներկայացնում է այն ինչ պետք է լինի քաղաքական կյանքում: Նա իր արտահայտությունն է գտնում վերացական բարոյական քննարկումներում, սակայն չի հրաժարվում նաև քննարկել քաղաքական ինստիտուտներն ու կոնկրետ քաղաքականությունը: Եթե փիլիսոփայական տեսանկյունից նորմատիվ քաղաքական տեսությունը ձևավորում և կառուցում է բարոյական կանոններ, ապա կիրառական իմաստով այն խոսում է քաղաքական կյանքի պրակտիկայում բարոյական դեղատոմսեր օգտագործելու հնարավորության մասին:

Նորմատիվ քաղաքական տեսության ակունքները հասնում են հունական մտքին՝ Արևմուտքում և հինդուիստական փիլիսոփայությանը՝ Արևելքում: Արևմտական պոզիտիվիստների կողմից այս տեսությունը լուրջ քննադատության արժանացավ, քանի որ նրանք մերժում են բարոյականության մասին քննարկումների նշանակությունը քաղաքական կյանքում: Հասկանալի է, որ պոզիտիվիզմի վերելքի ժամանակ նորմատիվ քաղաքական տեսությանը գրեթե տեղ չէին տալիս, սակայն սկսած 1970-ական թվականներից վերջինս իրական վերածնունդ ապրեց:

Նորմատիվ քաղաքական տեսությունը դա քաղաքական ինստիտուտների մասին մտորումների միջոց է, հատկապես այն ինստիտուտների, որոնք կապված են իշխանության հետ, ինչ-

պես նաև՝ անհատների վերաբերմունքն այդ ինստիտուտների նկատմամբ: Նա զբաղվում է եղած քաղաքական կարգի կամ նրա այլընտրանքների օրինականացմամբ:

1970-ական թվականներից հետո նորմատիվ քաղաքական տեսությունը բաժանվել է երկու հոսանքի: Մեկը գլխավորապես զբաղվում է հաստատված արդարության, ազատության ու արդարության փոխհարաբերությունների խնդիրներով: Մասնավորապես՝ ինչպիսին է ազատության և հավասարության բարոյական նշանակությունը: Ինչպիսին են հրապարակային քաղաքականության բարոյական հիմքերը, որը նպատակ է դրել սոցիալական հավասարություն հաստատել: Համատեղելի է արդյոք նման քաղաքականությունն անհատի ազատության և պրյուլարիզմի (բազմակարծության) հետ: Մյուս հոսանքը գլխավորապես հետաքրքրվում է այնպիսի ինստիտուտի նպատակներով և գործունեությամբ, ինչպիսին է պետությունը: Այս հոսանքի ներկայացուցիչները հետևյալ հարցերն են ուսումնասիրում. թե ինչու պետք է ենթարկվել օրենքներին կամ որ դեպքերում կարող է օրինական լինել քաղաքական անհնազանդությունը:

Ուտիլիտարիզմն առաջին հերթին կապված է Դեվիթ Յունի, Իերեմիա Բենտամի և Ջոն Սթյուարթ Միլլի անունների հետ: Որպես քաղաքական փիլիսոփայություն՝ ուտիլիտարիզմը ենթադրում է, որ առավել գերադասելի է այնպիսի քաղաքական և սոցիալական կազմակերպության ձևը, որն առավելագույն օգուտ է բերում:

Ուտիլիտարիզմը քաղաքական և բարոյական փիլիսոփայություն է, որը մարդկային արարքների բարոյականության և չափորոշիչների հիմքը համարում է օգուտը:

Ավելի լայն իմաստով դա մի տեսություն է, որը ցանկացած քաղաքական հարցի լուծումը փորձում է գնահատել նրա հետևանքների տեսանկյունից: Այդ դեպքում օգուտը համարվում է միակ կամ հիմնարար արժեք: Հենց օգուտն է, որ իմաստավորում է մեր բոլոր գործողությունները, իսկ մնացածները գործիքային (ինստրումենտալ) արժեք ունեն:

Ուտիլիտարիզմին բնորոշ է մաքսիմալիզմի սկզբունքը, ուստի այդ տեսության հոսանքները հիմնականում տարբերվում են «օգուտ» հասկացության իմաստի ներկայացմամբ: Նրանցում գերակայում են տեսական մտքի երեք «դպրոցներ»՝

1. Դասական դպրոց - Հիմնադիրը համարվում է Ի. Բենտամը, որի համար բարձրագույն բարօրությունը հաճույք ստանալն է, իսկ մնաց-յալը՝ երկրորդական է:

2. Բարեկեցության ուտիլիտարիզմ - Կապված է ժամանակակից տնտեսության բարեկեցության հետ: Այս ուղղության ներկայացուցիչ-ների կարծիքով առավելագույն պահանջ պետք է լինի ոչ թե հաճույքը, այլ ցանկությունների ու պահանջների բավարարման փաստացի և կանխատեսելի նախասիրությունները:

3. Իդեալական ուտիլիտարիզմ - Գտնում է, որ այլ իրերը նույն-պես կարող են պարունակել բարձր արժեքներ: Օրինակ, անգլիացի բարոյագետ Գ. Մուրն այդպիսի արժեքներին թվին էր դասում անձնա-կան հարաբերությունները և բարոյագիտական փորձը:

Ուտիլիտար ստուգման են ենթակա հիմնականում երեք ասպա-րեզներ՝

- Անհատական ընտրության և բարոյականության ասպարեզը: Որոշելով, թե ի՞նչն է ամենալավը կյանքում, ուտիլիտարիստը հաստատում է այն՝ ինչ օգուտ է բերում: Սակայն այստեղ պար-զորեն առանձնանում են երկու մոտեցում՝ էգոիստական (օգուտ միայն ինձ համար) և ունիվերսալ (համընդգրկում, օգուտ բոլո-րի կամ մեծամասնության համար): Նրանց մեջ հազվադեպ են հակասություններ առաջանում:
- Հրապարակային կամ սոցիալական քաղաքականության ձևա-վորման ասպարեզը, այսինքն՝ հարկերի, շրջակա միջավայրի աղտոտման, պաշտպանության և նման հարցերի մասին որո-շումներ կայացնելը: Այս հարցերի մասին որոշում կայացնող մարդկանց խորհուրդ են տալիս առաջնորդվել ուտիլիտարիս-տական սկզբունքներով: Դժվարությունն այստեղ այն է, որ այդ որոշումները երբեմն կարող են հակասել ժողովրդավարության սկզբունքներին:
- Երրորդ ասպարեզում հարկավոր է սոցիալական կառույցների

զնահատականն ամբողջությամբ: Գնահատելով «լավ կազմակերպված հասարակության» մրցակցող տեսությունները՝ ուսուխիտարիստը կաջակցի այն համակարգին, որը կբերի առավել մեծ օգուտ:

Այժմ ներկայացնենք թե ինչպես է կիրառվում առավելագույն օգուտի սկզբունքը:

Առաջին միջոց - Դա հնարավորինս շատ մարդկանց համար առավելագույն երջանկությանը հասնելուն օժանդակումն է:

Երկրորդ միջոց - Ամեն մարդ համարվում է մեկ մարդ և ոչ մեկը չպետք է համարվի մեկից ավելին: Այն բավականությունը, որ ստանում է ազնվականը ոչնչով առաջնային չէ հասարակ աշխատավորի երջանկությունից:

Երրորդ միջոց - Վերաբերում է այն հարցին, թե հատկապես ի՞նչպիսի երջանկություն է դիտարկվում:

Հավասարությունը ուսուխիտարիստական տեսանկյունից չի պահպանվում, այլ գոյություն ունի ազնվականի և աշխատավորի հավասար իրավունք: Սակայն դա բավականություն ստանալու հավասար իրավունք է և ոչ թե դրա հավասար բաժնեմասը: Օրինակ, որևէ հանրություն ռազմական վտանգ է ներկայացնում իր հարևանների համար: Նա կարող է օգտագործել իր ուժը որպեսզի ստանա էժան ռեսուրսներ (նյութական կամ աշխատանքային): Դրանով նա կարող է ավելի երջանիկ հանրություն լինել, քան հարևան հանրությունը: Երկրորդը ունի, եթե ավելի հարուստ հանրությունն իր ռեսուրսները ծախսի աղքատ հանրություններին օգնելու ծրագրերի իրագործման վրա, այնպես, որ ռեսուրսներն օգտագործվեն առավել օգտակարությամբ:

Այսպիսով, քաղաքական ուսուխիտարիզմն ուղղորդված է ստեղծելու այնպիսի հասարակական-քաղաքական կառույց, որը կնպաստի օգուտի մաքսիմիլիզացմանը:

20-րդ հարյուրամյակի երկրորդ կեսից մինչ օրս ուսուխիտարիզմի՝ Ի. Բենտամի և Ջ. Միլլի հաջորդները շարունակում են բանավեճը: Առաջինի ավանդույթները ներկայացնող Ջոն Սմարթը շատ է քննարկում արդարության և հավասարության խնդիրները: Նորմալ պայմաններում անհրաժեշտ է պահպանել արդարությունը, իսկ

լավ մտածված բարոյական կանոնները չպետք է խախտել: Սակայն այնպես է ստացվում, որ առավելագույն օգուտ ստանալու համար, երբեմն հարկ է լինում խախտել այդ կանոնները՝ համապատասխան հսկողության պայմաններում: Բայց շատ դժվար է կանխատեսել դրա հետևանքները, հատկապես երբ այն կատարվում է ճնշման ներքո: Տպավորություն է ստեղծվում, որ ուտիլիտարիստական գործունեությունն ի վիճակի չէ պաշտպանելու ուրիշ մարդկանց, քանի որ դրա համար չկան անհրաժեշտ բոլոր հնարավոր հետևանքների հստակ գնահատականները:

Ջ. Միլլի ավանդույթների շարունակող Ռիչարդ Բրանդտն իր «Բարօրության և իրավունքի տեսություն» (1979) գրքում պնդում է, որ ուտիլիտարիստները պետք է հանդես գան բարեկեցության մաքսիմիլիզացիայի պաշտպանությամբ՝ որպես բարոյական համակարգի յուրատեսակ բարոյական կոդեքս: Այդպիսի համակարգում կանոնները կհամապատասխանեն մարդու բնույթին և հաշվի կառնվի միջին մարդու մտավոր ներուժը, ինչպես նաև նրա բացասական որակները՝ էգոիզմն ու իմպուլսիվությունը: Այսպիսով, Ռ. Բրանդտը ենթադրում է, թե որոշումներ ընդունելիս ուտիլիտարիզմի սկզբունքը պետք է բարոյական ուղեկցորդի դեր ծառայի:

Մեծ դժվարություններ են առաջանում, երբ ուտիլիտարիզմի ներկայացուցիչները փորձում են իրենց տեսությունը կիրառել գործնականում: Եթե փորձենք հասարակությունը կառուցել նրանց սկզբունքներով, ապա պետք է ունենանք անհավատալի չափերի տեղեկատվություն: Օրինակ, ինչն է դուր գալիս մարդկանց՝ սկսած կերակրատեսակներից, վերջացած սոցիալական իմստիտուտներով: Դա այնքան բարդ է, որ իրենք էլ, որպես կանոն, սահմանափակվում են տարբեր տեսակի կառույցների ստեղծման հնարավոր դրական հետևանքների մասին ընդհանուր բնույթի քննարկումներով: Արդյունքում, թե՛ ազատ ձեռնարկատիրական կապիտալիզմը և թե՛ սոցիալիզմը դրական են գնահատվում ուտիլիտարիստների կողմից: Շատ տեսաբաններ դա բացատրում են նրանով, որ ուտիլիտարիստական ուսմունքն ամբողջությամբ խիստ թեքում ունի դեպի հավասարությունը:

Այսպիսով, քննարկումներն ու գիտական բանավեճերը ցույց են

տալիս, որ բավականին հիմքեր կան կասկածելու ուսուցիչտարիստական բարօրության և մաքսիմալ օգուտի սկզբունքներին, որը և դարձավ այդ տեսության լուրջ քննադատության պատճառը: Համարվում է, որ լիբերալ (ազատական) ժողովրդավարության հասարակություններում ավելի բարձր է բավականություն ստանալու մակարդակը այլ հասարակությունների համեմատ: Սակայն խնդիրն այն է, որ ուսուցիչտարիզմը ի վիճակի չէ օրինականացնելու և հիմնավորելու լիբերալիզմի քաղաքական արժեքները, այստեղից էլ առաջ է գալիս ժամանակակից լիբերալ տեսաբանների դեմ լինելն այդ հայացքներին:

Լիբերալիզմի էվոլյուցիան 20-րդ դարում. Հասարակական դաշինքի ժամանակակից վարկածը

20-րդ հարյուրամյակի մի քանի տասնամյակ պոզիտիվիստական ազդեցությունը բավականին սահմանափակում էր քաղաքական հարցերի հետազոտությունը: Նույնիսկ անվանի գիտնական Բերտրան Ռասսելը, ով գրել է մեծ քաղաքական-փիլիսոփայական արժեք ունեցող «Իշխանություն» գիրքը, հստակ սահմանազատում էր այդ աշխատանքը իր «իրական փիլիսոփայական» գործերից: Քաղաքական տեսությունն այդ տարիներին փաստորեն վերածվել էր քաղաքական ուսմունքների պատմության և միայն 1971 թվականին ճեղքվեց այդ ճգնաժամը, երբ լույս տեսավ Ջոն Ռոուլսի «Արդարության տեսություն» գիրքը:

Ջոն Ռոուլս (1921-2002) - ռեֆորմիստական լիբերալիզմի ամերիկյան տեսաբան, շուկայական տնտեսական սկզբունքներով արդար հասարակական կառույցի տեսության հեղինակ: Մասնակցել է Երկրորդ աշխարհամարտին, դասավանդել մի շարք ամերիկյան հայտնի համալսարաններում, իսկ կյանքի վերջին տարիներին Հարվարդի համալսարանի պրոֆեսոր էր: 1958-1963 թթ. «Փիլիսոփայական ռեվյու» ամսագրում տպագրեց իր՝ արդարության տեսության մասին առաջին հոդվածները, որոնք լայն արձագանք գտան ակադեմիական շրջանակներում: 1971 թ. հրատարակվեց նրա գլխավոր աշխատությունը՝ «Արդարության

տեսությունը», որը ուժեղ ազդակ դարձավ լիբերալ արժեքների ավանդական մոտեցումների վերախմաստավորման համար:

«Արդարության տեսությունը» միջառարկայական ուսումնասիրություն է, որն ամբողջությամբ ուղղորդված է պրակտիկ նպատակների՝ իրական քաղաքական կյանքում արդարության սկզբունքների ներդրմանը: Նրա հետաքրքրությունները կենտրոնացած էին այն հարցի լուծման վրա, թե իր սկզբունքների համաձայն կառուցված սոցիալ-քաղաքական կառույցը կարո՞ղ է կայուն լինել, թե՛ ոչ: Նրա աշխատանքի առաջին մասը նվիրված է այդ հարցի դրական հիմնավորումը տալուն: Հաջորդ մասում նա վերլուծում է դրա իրականացման ինստիտուցիոնալացման խնդիրը, իսկ վերջինում՝ փորձ է անում ճշտելու, թե կարո՞ղ են իր սկզբունքները ծառայել որպես արդարության հասարակական տեսություն կայուն կարգավորվող հասարակությունում: Ջ. Ռոուլսն ապացուցում է, որ կայունության պահանջներն էական սահմանափակումներ են դնում ցանկացած արդարության տեսության վրա: Սակայն նա կանգ չի առնում միայն կայունության ապահովման պայմանների վրա, այլ դիմում է հոգեբանությանը, տնտեսագիտությանը, սոցիոլոգիային և քաղաքական գիտությանը՝ ձգտելով բացահայտել արդարության իր սկզբունքների պայմանները: Դրանով նա վերադառնում է քաղաքական տեսության ավանդույթներին, ինչը կարևոր ներդրում էր քաղաքագիտական մտքի զարգացման մեջ: Ջ. Ռոուլսը իր հայացքները պաշտպանելու համար երկու հիմնավորում է կատարում՝

1. Այդ տեսության մեջ կատարվող դատողությունները հավասարակշռված և մտածված դատողություններ են: Տեսաբանը դրանց հասնում է մանրամասն վերլուծության արդյունքում՝ ազատվելով ինչ որ «հատուկ հետաքրքրությունների» և այլ նախադրված ազդեցություններից: Այլ կերպ ասած, նա կատարում է տրամաբանական վերլուծության պահանջները՝ չհավատալ նախնական ինտուիցիային:
2. Նա օգտագործում է «ռեֆլեքսային հավասարակշռության» մեթոդը, որն ունի իր նմանատիպ արտահայտությունը տրամաբանության և լեզվաբանության մեջ: Այն դեպքում, երբ դատո-

ղությունները չեն համապատասխանում սկզբունքներին, անհրաժեշտ է շարունակել հարցեր առաջ քաշել ոչ միայն կատարված եզրահանգումների, այլև նախնական դատողությունների մասին և հասնել հավասարակշռության դրանց միջև:

«Արդարության տեսությունը» ոչ միայն վերադարձ էր քաղաքական փիլիսոփայության հիմնարար խնդիրներին, անհրաժեշտի հետազոտությանը, այլև ուղղված էր պրակտիկ նպատակների՝ ընթացող քաղաքական կյանքում արդարության սկզբունքների իրականացմանը: Ջ. Ռոուլսը կենտրոնացել էր այն հարցի լուծմանը, թե արդյո՞ք բավարար կայուն կլինի այն սոցիալ-քաղաքական կառույցը, որը ստեղծվել է իր սկզբունքներով: Այդ արդարության սկզբունքները պետք է կոնկրետացնեն, թե հասարակության հիմնական կառույցը ինչպես պետք է բաժանի «առաջնային բարիքներին» տիրապետելու հնարավորությունները: Առաջնային բարիքներն իրենց մեջ ներառում են հիմնական իրավունքներն ու ազատությունները, իշխանություն, հեղինակություն, կյանքի հնարավորություններ, ինչպես նաև այնպիսի բարիքներ, ինչպիսիք են բարեկեցությունն ու եկամուտները: Ջ. Ռոուլսն ընդգծում է դրանց կարևորությունն ամեն մի բանական մարդու համար, որոնց տիրապետումը գրեթե դառնում է մարդու կյանքի ծրագիր: Ինչպես նշում է Ջ. Ռոուլսը. «Արդարության բարիքները դա՛ ա) սեփական նպատակներին հասնելու առավել ճկուն միջոցներն են, բ) սեփական նպատակներին հասնելու արդյունավետ պայմաններն են, գ) սեփական նպատակների ձևավորման քննադատական և գիտակցված պայմաններն են»:

Այդ նպատակներին հասնելու համար նա ստեղծեց իրավունքի ապահովման ընթացակարգային մեթոդը: Վերջինիս մշակման համար Ջ. Ռոուլսը դիմում է «հասարակական դաշինքի» տեսությանը: Ինչպես հայտնի է, հասարակական դաշինքը դա համաձայնություն է պոտենցիալ քաղաքացիների (կամ նրանց և պոտենցիալ կառավարողների) միջև սոցիալական կամ քաղաքական հարաբերությունների մեջ մտնելու պայմանների մասին:

«Հասարակական դաշինքի» տեսությունը ենթադրում է այնպիսի մի վիճակ, երբ քաղաքական (հնարավոր է նաև սոցիալական) իրավունքներ և պարտականություններ չունեցող մարդիկ հասնում են

քաղաքական և սոցիալական համակարգի հիմքերի մասին համաձայնության, որի պայմաններում նրանք արդեն կունենան իրավունքներ և պարտականություններ, ներառած այդ դաշինքի պայմանները պահպանելու պարտավորություն: Հասարակական դաշինքի խնդիրը միշտ էլ եղել է հետազոտողների ուշադրության կենտրոնում (Թ. Յոբս, Օ. Կոնտ, Ժ. Ժ. Ռուսսո և ուրիշներ):

Հասարակական դաշինքը թույլ է տալիս քաղաքական հայացքների տարբերություն, սակայն պահանջում է մեկ պարտադիր պայմանի կատարում, այն է՝ անհատի համաձայնության կարևորությունը այն կանոններին, որոնք սահմանափակում են իր ենթադրյալներքին ազատությունները: Այսպիսով՝ հասարակական դաշինքի հիմքում ընկած է հասարակության նկատմամբ անհատական մոտեցումը, որի համաձայն մարդիկ իրենց քաղաքական իրավունքների և պարտավորությունների աղբյուրն են, ինչով իրականացնում են այն լիբերալ գաղափարը, որ անհրաժեշտ է օրինականացնել անհատի ազատությունները: Իր բոլոր տարբերակներով հասարակական դաշինքի տեսությունն այնպիսի պատկերացում է տալիս քաղաքական հասարակության մասին, թե դա միության ձև է, որի նպատակն է նրա անդամների շահերի պաշտպանությունը, նրանցից ամեն մեկի ներքին ինքնուրույնության (ավտոնոմիայի) հիմքի վրա: Հասարակական դաշինքի գաղափարը հնարավորություն է ընձեռում միավորելու տարբեր անհատական շահերն ու արժեքները լայնորեն օգտագործվող միջոցների օգնությամբ՝ հարցի լուծման փոխհամաձայնեցված ընթացակարգով: Հենց Ջ. Ռոուլսի տեսության դաշինքի ուղղությունն առավել մեծ ազդեցություն թողեց լիբերալ հոսանքի ժամանակակից մտածողների վրա, քանի որ նա վերականգնեց արևմտյան քաղաքական-փիլիսոփայական նախկին ավանդույթները՝ դրանք օգտագործելով ժամանակակից պայմաններում: Դրանով է բացատրվում նաև այն, որ նա ունեցավ բազմաթիվ հետևորդներ:

Ջ. Ռոուլսը ենթադրում էր, որ հասարակական դաշինքն իրենից ներկայացնում է արդարության սկզբունքների համարժեք մոդել, ինչը կապված էր նրա այն համոզմունքի հետ, որ դաշինքի ազնվությունը ապահովվում է նրա մասնակիցների համաձայնությամբ, թե դրանց իրենք կենթարկվեն ապագայում: Դրա համար Ջ. Ռոուլսը

իր տեսությունն անվանեց. «արդարությունը որպես ազնվություն»: Հիմնական գաղափարը այն է, որ արդարությունը համաձայնության օբյեկտն է: Այսպիսով՝ պատկերացնենք, որ նրանք ովքեր մասնակցում են սոցիալական համագործակցությանը միասին, միասնական գործունեությամբ կընտրեն սկզբունքներ, որոնք ներառում են հիմնական իրավունքներն ու պարտականությունները և կորոշեն սոցիալական բարիքների բաժանման կարգը: Հասարակական դաշինք կնքելով՝ «մարդկանց խումբն իր մեջ պետք է մեկընդմիջտ որոշի, թե ինչն է արդարությունը, իսկ ինչն՝ անարդարությունը»: Այն սկզբունքները, որոնց վրա նրանք կանգ կառնեն, պետք է ուղղորդեն հետագա ողջ քննադատությունն ու ինստիտուտների բարեփոխումները: Այդ տեսանկյունից, հասարակական դաշինքը շատ ընդլայնված սովորական պայմանագրի տեսք ունի: Սակայն ինչպես Ջ. Ռոուլսի, այնպես էլ նրա նախորդների համար ելակետային դաշինքը դա իրական պատմական պայմանագիր չի, այլ վարկածային է: Այսինքն՝ դա ավելի շատ երևակայական ոլորտին է պատկանում և արմատներ չունի ո՛չ պատմության և ո՛չ էլ փորձի առումով:

Ջ. Ռոուլսի կողմից ներկայացված հասարակական դաշինքը պարունակում է մի շարք անճշտություններ: Օրինակ, նա համոզված է, որ մարդիկ կընտրեն որոշման ավելի հանգիստ ձևեր՝ մոռանալով, որ մարդկային բնության հատուկ է ռիսկի գնալու, խաղալու հակումը: Այնուամենայնիվ, կարելի է ասել, որ Ջ. Ռոուլսը, փաստորեն, վերականգնեց հասարակական դաշինքի ավանդույթն արևմտյան լիբերալ քաղաքական-փիլիսոփայական և տեսական մտքում՝ որպես իրենց առաջադրած գաղափարների և «լավ կազմակերպված հասարակության» գաղափարի օրինականացման միջոց:

Արդարության սկզբունքները և արդարության տեսության նոր մեկնաբանությունը

Մարդիկ ելակետային դիրքում դաշինք են կնքում արդարության սկզբունքների հետ, որն ըստ գաղափարի, պետք է երաշխավորի հնարավոր սոցիալական նվազագույնի ամենաբարձր մակարդակը:

Քանի որ ելակետային դիրքում պայմանավորվածություն կա, որ

առավել բանական ճանապարհը պետք է սահմանափակի մարդու համար հնարավոր վնասը, ապա անոնիմ (գաղտնի) ձևով կհաստատվեն հետևյալ երկու սկզբունքները՝

1. Բոլոր մարդիկ ունեն հավասար իրավունքներ՝ հիմնված առավել մեծ, հավասար, հիմնական ազատությունների ամբողջության վրա, որոնց համատեղելի են բոլորի համար նմանատիպ ազատությունների համակարգի հետ (ազատության սկզբունք):

2. Սոցիալական և տնտեսական անհավասարությունը պետք է կարգավորվի այնպես, որ ա) նա ուղղորդված լինի առավել հաջողակներին, բ) ինստիտուտները և դիրքը հասարակության մեջ պետք է հասանելի լինեն բոլորին՝ հնարավորությունների հավասարության պահպանումը ազնիվ պայմաններում:

Հատկապես այդ երկու սկզբունքներն են հիպոթեզային հասարակական դաշինքի արդյունքները: Դրանք արդար են, որովհետև դրանց ձևավորման ընթացակարգն ազնիվ է եղել: Այստեղ հարկ է նշել, որ Ջ. Ռոուլսը առաջնությունը տալիս է առաջին սկզբունքին և գտնում, որ առանց դրա հնարավոր չէ երկրորդի կիրառումը: Սակայն ազատությունը ևս չի կարող անսահմանափակ լինել: Այն կարող է սահմանափակվել ամեն առանձին մարդու հնարավոր առավել ընդհանրական ազատությունները պաշտպանելու նպատակով: Այսպես, օրինակ, մամուլի ազատությունը կարող է սահմանափակվել դատավորների անաչառությունն ապահովելու համար: Եթե հետևենք Ջ. Ռոուլսի սկզբունքներին, ապա ըստ նրա մոտեցման, երկրորդ սկզբունքում առաջնային տեղ է տրվում հաջողակներին, այսինքն՝ ունևորներին, ովքեր առավելություններ պետք է ունենան հասարակական դաշինքի մյուս մասնակիցների նկատմամբ:

Նրա դիրքորոշումը հակասական էր և քննադատության ենթարկվեց «աջից», որոնք մեղադրում էին նրան էգալիտարիզմի մեջ (համընդհանուր հավասարության հիման վրա հասարակական սոցիալական կյանքի կազմակերպման տեսություն) և «ձախից»՝ անհավասարությունն օրինականացնելու համար (առավել հաջողակներին բացարձակ առավելություն տալու համար):

Ըստ Ջ. Ռոուլսի արդարությունն իր մեջ պարունակում է ոչ միայն մարդկանց հավասարության ճանաչումը, այլև տարբերակված մո-

տեցման անհրաժեշտությունը: Եթե հիմնական իրավունքները հասցնենք իր բարձրագույն կետին, որը համատեղելի է հավասար բաշխման հետ, ապա հնարավոր է ներմուծել այլ բարիքների անհավասար բաշխումը, եթե միայն այն ապահովում է առավել օգուտ առավել ոչ արտոնյալ քաղաքացիների համար՝ ինչն ընդունելի է բնակչության բոլոր խավերի համար: Զ. Ռոուլսը կենտրոնանում է ապացուցելու, որ եթե ուտիլիտար սխեմայում առավել անշահեկան վիճակում գտնվող մարդը զոհ է, ապա արդարության տեսությունում նա հանդես է գալիս որպես գործընկեր:

Հավասար իրավունքների սկզբունքը, որը հաստատում է, թե մինևույն մակարդակի տաղանդ և ունակություններ ունեցող մարդիկ, ծախսելով նույն էներգիան և ջանքերը տվյալ ձգտումների ասպարեզում, հավասար հեռանկարներ կունենան: Ընտանեկան դիրքը, ռասան, կրոնը, սեռը, ազգությունը չպետք է խոչընդոտեն նրանց հաջողության հասնելուն: Հավասար հնարավորությունների երաշխիքներ ունենալու համար հասարակությունը ստիպված է մեծ հարկ դնել ժառանգության վրա, ապահովել հասարակական կրթության լայն համակարգ, ընդունել հակադիսկրիմինացիոն (հակախտրականական) օրենքներ: Նման հասարակական միջոցառումների որոշակի մակարդակի արդյունավետության ապահովման դեպքում, բարիքների և ծառայությունների բաժանումը կարող է իրապես կախված լինել տաղանդից, ունակություններից և նպատակասլացությունից:

Զ. Ռոուլսի երկրորդ սկզբունքի մեջ որոշակի դեր է խաղում «արդյունավետությունը»: Դրա տակ նա հասկանում էր, թե իրավունքների ու պարտականությունների կազմակերպումը հասարակության հիմնական կառուցվածքում արդյունավետ կլինեն, եթե հնարավոր չլինի փոխել կամ վերականգնել իրավունքների և պարտականությունների սխեման ոչ թե այն բանի համար, որ բարձրանա յուրաքանչյուր մարդու ակնկալիքների մակարդակը, այլ մարդու ակնկալիքների մակարդակը իջեցնելու շնորհիվ: Սրանից հետևում է, որ, ասենք, բաժանումից հետո, եթե պարզվի, թե ինչ-որ մեկը զգալիորեն ավելի շատ հարստություն ունի, քան մյուսները, ապա արդյունավետության կանոնը կխանգարի դա շտկել վերաբաժանման միջոցով: Սակայն նա կարծում է, որ ելակետային համաձայնության գալու ժամանակ

որոշումը կայացվում է անոնիմ ճանապարհով, ապա որոշում կայացողները գործում են անենաքիչ վնասներ ստանալու սկզբունքով, ուստի, ըստ նրա հասարակական դաշինք կնքելու դեպքում չի գործում արդյունավետության կանոնը:

Ձևակերպելով արդարության երկու սկզբունքները՝ Ջ. Ռոուլսը համառոտ անդրադարձել է այն հարցին, թե ինչպես պետք է կազմակերպվի հասարակության հիմնական կառույցը, որ համապատասխանի այդ սկզբունքներին: Նա իր ուշադրությունը կենտրոնացնում է ինստիտուցիոնալ կառուցվածքի վրա, որը նրա կարծիքով, կարող է համապատասխանել տարբերակման սկզբունքներին: Դրա համար նա գտնում է, որ անհրաժեշտ է ստեղծել չորս կառավարման մարմիններ.

1. Ռեսուրսների կուտակման վրա հսկող մարմին:
2. Կայունության մարմին:
3. Տրանսֆերտային մարմին:
4. Բաշխման մարմին:

Հավասար հնարավորությունների երաշխիքների և հիմնական ազատությունների առավել լայն պայմաններում տարբերակման սկզբունքը կարող է իրականացվել ինստիտուցիոնալ կառույցների միջոցով՝ վերոնշյալ մարմինների օգնությամբ:

1. Գոյություն ունի կապիտալի և բնական պաշարների (ռեսուրսների) մասնավոր սեփականություն: Ազատ շուկայական համակարգը օժանդակվում է պաշարների կուտակման վրա հսկողություն իրականացնող մարմնի կողմից:
2. Կայունության մարմնի գործառնությունը կլինի «բանականորեն լիակատար զբաղվածությունն ապահովելու փորձը»:
3. Տրանսֆերտային մարմինը պետք է երաշխավորի սոցիալական նվազագույնը (այսինքն, ամեն մեկի համար նվազագույն եկամուտը) կամ ընտանիքի ստեղծման ու զարգացման և հիվանդությունների կամ գործազրկության ժամանակ հատուկ վճարումները և այլն:
4. Բաշխման մարմինը պետք է պաշտպանի առավել հնարավոր արդարությունը բաժանման ժամանակ՝ պարտադիր հաշվի առնելով սեփականության իրավունքը:

Ուշադրություն է գրավում այն փաստը, որ արդար հասարակության կառույցների մոդելներում (բացի 2-րդ կետից), արդարության սկզբունքի իրականացումը Ջ. Ռոուլսի կողմից ենթադրվում է միայն բաժանման մեթոդներով, այսինքն աղքատների օգտին հարուստների եկամուտների վերաբաշխման, գլխավորապես՝ հարկահավաքման միջոցով: Այսպիսով՝ նա հնարավոր է համարում արդարության իր սկզբունքների իրականացումը հասարակությունում՝ առանց հրաժարվելու մրցակցային շուկայից և արտադրության միջոցների մասնավոր սեփականությունից: Դա հենց «սոցիալական շուկայական տնտեսության» տեսությունն է, որն այդքան տարածված ու ընդունված է ԱՄՆ-ում և այլ արևմտյան երկրներում:

«Արդարության տեսության» հրատարակումից հետո Ջ. Ռոուլսը երեք տասնամյակների ընթացքում հրապարակեց մի քանի հոդվածներ և էսսեներ, որոնցում խորացրեց որոշ խնդիրներ, բացատրեց իր տեսակետները՝ ոչ ճիշտ մեկնաբանությունների կամ քննադատության դեպքում և վերանայեց մի շարք հարցեր, երբ քննադատությունը համարեց կառուցողական: Նրա հայացքների էվոլյուցիան կարելի է բաժանել երկու կարևոր փուլերի: 1971-1982 թթ. ավարտվեցին Թեյներովյան «Հիմնական ազատություններն ու նրանց առաջնայնությունը» դասախոսություններով: Այդ շրջանի աշխատանքներում առկա է մի քանի քննադատական հոդվածների նրա պատասխանները և արդարության տեսության մեկնաբանության մի շարք մեկնաբանությունների փոփոխություններ, որոնք, առաջին հերթին, հնարավորություն են տալիս նկատել Ջ. Ռոուլսի կապը Է. Կանտի գաղափարների հետ:

Երկրորդ փուլում՝ 1982-ից մինչև 21-րդ դարի սկիզբը հրապարակվեցին նրա «Արդարությունը որպես ազնվություն. քաղաքական և ոչ թե մետաֆիզիկական» (1985), «Սքանչելի համաձայնության գաղափարը» (1987) և «Իրավունքի առաջնայնությունը և բարոյության գաղափարը» աշխատությունները: Վերջին տարիներին նա հեռանում է կանտականությունից և իր տեսությունն ավելի շուտ ներկայացնում է որպես քաղաքական, քան փիլիսոփայական:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

Ներկայացնել՝

1. Ուտիլիտարիզմում գերակայող տեսական երեք դպրոցները և ուտիլիտար ստուգման ենթակա հիմնական ասպարեզները:
2. Առավելագույն օգուտի սկզբունքը:
3. Ջ. Ռոուլսի ռեֆորմիստական լիբերալիզմը: Հասարակական դաշինքի ժամանակակից վարկածը:
4. Արդարության սկզբունքները և արդարության տեսության նոր մեկնաբանությունը:

Գրականություն

1. **Алексеева Т. А.**, Современные политические теории, МГИМО, 2007.
2. **Алмонд Г.**, Политическая наука: История дисциплины/Политическая наука: новые направления, М., 1999.
3. Политология: хрестоматия (сост М. А. Василик, М. С. Вершинин), М., 2000.
4. **Ролз Дж.**, Теория справедливости, Новосибирск, изд-во НГУ, 1995.
5. **Соловьев А. И.**, Политология. Политическая теория. Политическая технология, М., 2000.

Գլուխ 5. ԼԻԲԵՐՏԱՐԻԶՄ ԵՎ ԿՈՍՈՒՆԻՏԱՐԻԶՄ

**Լիբերտարիզմ: Ֆրիդրիխ ֆոն Հայեկի լիբերտարիզմը:
Ռոբերտ Նոզիկը «Մինիմալ (նվազագույն) պետության»
մասին: Գյունտեր Ռորմոզերը ժամանակակից լիբերալիզմի
ճգնաժամի մասին: Կոմունիտարիզմ: Կոմունիտարիստները
արդարության մասին:**

Լիբերտարիզմ: Ֆրիդրիխ ֆոն Հայեկի լիբերտարիզմը

Լիբերտարիզմը ժամանակակից լիբերալիզմի հոսանքներից է, որը շեշտադրումը կատարում է հասարակության ազդեցությանը ձևավորվող անհատի իրավունքների և ազատությունների վրա, իսկ այդ հանգամանքներում պետությանը նվազագույն տեղ է հատկացնում:

Լիբերտարիզմը ժամանակակից գաղափարական հոսանքներից ամենամոտ կանգնած է թերևս անարխիզմին: Նա պետության մեջ տեսնում է մարդու ազատությունները ճնշող, նրա իրավունքները խախտող շուկայի ազատությունը խեղող աղբյուրին:

Բոլոր լիբերտարիստական շարժումները կարելի է բաժանել երկու մեծ խմբի՝ պրագմատիկ լիբերտարիստների և սկզբունքային լիբերտարիստների:

Պրագմատիկները պաշտպանում են «Մինիմալ (նվազագույն) պետության» գաղափարը, սակայն ոչ թե նրա համար, որ նրա կողմից պաշտպանվող մարդու իրավունքները սուրբ են, այլ այն բանի համար, որ նրա կողմից այդ իրավունքները պաշտպանող գործառնությունների սահմանափակումը ստեղծում է մի շարք առավելություններ: Այդ հոսանքի հիմնական գաղափարները բավականին պարզ արտահայտել է Ֆրիդրիխ ֆոն Հայեկը, ով հաստատում էր, որ եթե մենք ցանկանում ենք բավարարել մարդկանց ցանկությունները, ապա հարկ է պետությանը փոքր տեղ հատկացնել, իսկ շուկային մեծ՝ թույլ տալով վերջինիս օգտագործել ողջ տեղեկատվությունը մարդկային

ծգտումների մասին: Որոշ լիբերտարիստներ ենթադրում են, որ պետության դերի այդպիսի սահմանափակումը թույլ կտա զարգացնել արտադրությունը, հետևապես առավելագույնի հասցնել օգուտը և ապահովել արտադրության առավելագույն արդյունավետությունը:

Ֆրիդիխ Ավգուստ ֆոն Յայեկ (1899-1992): Ավստրիոքրիտանական հանրաճանաչ տնտեսագետ և քաղաքագետ, հեղինակ է շուկայական տնտեսության հիմնահարցերին նվիրված հիմնարար հետազոտությունների, ժամանակակից լիբերալիզմի և լիբերտարիզմի դասական ներկայացուցիչներից է: Տնտեսական հետազոտությունների Ավստրիական ինստիտուտի, ինչպես նաև՝ լիբերալ ուղղության փիլիսոփաների, տնտեսագետների, քաղաքագետների եվրոպական միավորման հիմնադիր: Տնտեսագիտության գծով Նոբելյան մրցանակի դափնեկիր (1974): Յեղինակ է տասնյակ աշխատությունների, այդ թվում՝ առանձնակի նշանակալի լիբերտարիստական «Ճանապարհ դեպի ստրկություն» (1944), «Անհատապաշտություն և տնտեսական կարգուկանոն» (1948), «Գիտության հակահեղափոխությունը» (1952), «Կապիտալիզմի պատմաբանները» (1954), «Ազատության հիմնական օրենքը» (1960), «Իրավունք, օրենսդրություն և ազատություն» (1973), «Սոցիալական արդարության տեսիլքը» (1976), «Ազատ ժողովրդի քաղաքական համակարգը» (1979), «Կործանարար ինքնավստահություն, սոցիալիզմի մոլորությունները» (1988) և այլն:

Ֆ. Յայեկի աշխատությունները լուրջ հիմնավորումներ են տալիս հերքելու սոցիալ-ռեֆորմիստական քաղաքականության հիմքերը («համընդհանուր բարեկեցության պետության»): «Ոչինչ այնքան կործանարար չէ անհատական ազատության իրավաբանական երաշխիքների համար, ինչքան սոցիալական արդարության տեսիլքի ձգտումը», - գրում է Ֆ. Յայեկը: Արդեն սկսած 1980 թթ. Ֆ. Յայեկը փորձում էր ցույց տալ, որ կապիտալիզմի և սոցիալիզմի մեջ, «միջանկյալ ճանապարհ» չկա: Պնդում էր, որ սոցիալիզմի պայմաններում բանական տնտեսական հաշվարկը հնարավոր չէ: Նա դրան հակադրում է

կապիտալիստական շուկան, առաջին հերթին՝ տնտեսական ու քաղաքական կյանքի կարգավորման շուկայական միջոցները:

Ֆ. Չայեկը անհաշտելի և հետևողական հակառակորդ է մտավոր նախագծված սխեմաներով և իդեալական մոդելներով հասարակության վերափոխություններին: «Ճանապարհ դեպի ստրկություն» գրքում (1944) ցույց է տալիս, որ անգամ տնտեսական կյանքի չափավոր պետականացումը վերջիվերջո հանգեցնում է տոտալիտարիզմի (ամբողջատիրության) հաստատմանը: Նա համոզված էր, որ այն հասարակությունները, որոնք հենվում են մրցակցության վրա՝ վերջիվերջո մյուսներից ավելի հաջող են հասնում իրենց նպատակներին: Այս եզրահանգումը, նրա կարծիքով, հաստատված է ժամանակակից քաղաքակրթության պատմությամբ:

Ֆ. Չայեկը հստակ տարանջատում էր «տնտեսությունը» և «շուկայական գործընթացը»: Իր հասկացությամբ տնտեսությունը դա կազմակերպություն է կամ սոցիալական կառույց, որտեղ ինչ-որ մեկը՝ նպատակների ընդհանուր չափորոշիչի համաձայն, գիտակցաբար տեղադրում է ռեսուրսները: Ինքնիրեն ստեղծվող շուկայում ոչ մի այդպիսի բան չկա: Ինքնիրեն առաջացած տնտեսությունը, որը պարունակում է անհամար անհատական տնտեսական կառույցներ, ըստ Չայեկի, ունի երկու առավելություն: Առաջին՝ այդ տնտեսությունն օգտագործում է իր բոլոր անդամների գիտելիքները և ոչ թե միայն տնտեսության կազմակերպողներինը: Երկրորդ՝ նպատակները, որին նա ծառայում է, անհատների մասնավոր նպատակներն են՝ իրենց ողջ տարբերությամբ և հակասություններով հանդերձ: Բոլորի համար միակ ընդհանուր նպատակը դա այնպիսի պայմանների ստեղծումն է, որտեղ ամեն մի պատահական ընտրված անհատի հնարավորություններն առավել արդյունավետ լինեն իր նպատակներն իրականացնելու համար: Հենց դա ի նկատի ունեն, երբ պնդում են, թե շուկայական կարգը կարգավորված սոցիալիստական կարգի համեմատ ապահովում է առավելագույնը:

Միաժամանակ Ֆ. Չայեկը ընդունում է, որ շուկայի թելադրանքն իր մեջ վտանգ է պարունակում անհատի ազատության հանդեպ: Մրցակցությունը ստեղծում է ինչ-որ անդեմ պարտադրանք՝ ստիպելով շատ անհատների վերակառուցել իրենց կյանքի ձևն այնպես, որ

դա չէր կարող արվել ոչ մի ցուցումով կամ հրամանով: Նա նաև իրեն չի համարում «ազատ տնտեսվարման» այն կողմնակիցներից, որոնք բացարձակապես դեմ են սահմանափակումներին: Որոշ սահմանափակումներ անհրաժեշտ են, սակայն դրանք չպետք է լինեն արհեստական արգելքներ, այլ պետք է լինեն բնական, որոնք ինքնիրեն առաջանում են սոցիալ-մշակութային զարգացման գործընթացում: Այդ կանոնները, առաջին հերթին, իրենց մեջ պարունակում են ուրիշի սեփականության յուրացման մերժումը և կամավոր կերպով վերցրած պարտականությունների կատարումը:

Բնական ընտրության սկզբունքը, այն է՝ առավել հարմարված սոցիալական ինստիտուտների գոյատևումը ֆ. Չայեկը փոխադրում է մարդկային հասարակության պատմության վրա: Այդ ընտրությանը դիմանում են այն կանոնների համակարգերը, որոնք այն կիրառող խմբի գոյատևման համար ապահովում են առավել լավ պայմաններ: Ըստ ֆ. Չայեկի արդարությունը չպետք է կապել ինչ-որ բաշխման նպատակի հետ: Ինչ-որ անհատ կամ խումբ չի կատարում հարստության կամ այլ իրերի ընդհանուր բաշխումը: Ուստի չի կարելի պնդել, թե բաշխումը կարող է անարդար լինել, քանի որ այդ հասկացությունը կիրառելի է միայն մարդու գործունեությանը: ֆ. Չայեկը դրանից եզրակացնում է, որ ցանկացած բաշխման ճանապարհներն էականորեն հակասում են ազատությանը: Այսպիսով, ապրանքների ազատ շուկայական հասարակությունում, որտեղ տնտեսական գործունեության արդյունքը ոչ թե գիտակցված ընտրությունն է, այլ բազմաթիվ անջատ անհատների ընտրությունը, ընդհանրապես չի կարող առաջանալ արդարության վերաբաշխման գաղափարը, իսկ բաշխման ներմուծման փորձերը հասարակությունում քայքայիչ են ազատության և անհատականության համար:

Ռոբերտ Նոզիկը «Մինիմալ (նվազագույն) պետության» մասին

Սկզբունքային լիբերտարիզմը տարբերվում է պրագմատիկ լիբերտարիզմից գլխավորապես նրանով, որ այն դիտարկում է «մինիմալ պետության» կողմից պաշտպանվող իրավունքը,

ինչպես բնականները կամ հիմնարարները: Իրավունքը ինքնըստինքյան բարօրություն է և ոչ թե ինչ-որ պատահական պատճառների արդյունք: Ընդ որում, դա բարձրագույն նշանակության բարօրություն է, որը չի կարելի զոհել որևէ այլ արժեքի համար:

Այդ հոսանքի առավել նշանավոր ներկայացուցիչն է Ռոբերտ Նոզիկը, որի հիմնական աշխատության՝ «Անարխիա, պետություն և ուտոպիա»-ի մեծ մասը ներկայանում է որպես Ջ. Ռոուլսի «Արդարության տեսության» այլընտրանք:

Ռոբերտ Նոզիկ (1938-2002) - Ամերիկյան գիտնական, լիբերտարիզմի ականավոր գաղափարախոսներից մեկը: Ծնվել է Ռուսաստանից ներգաղթած աղքատ հրեայի ընտանիքում: Եղել է Ֆարվարդի համալսարանի պրոֆեսոր: Հիմնական աշխատություններն են «Անարխիա, պետություն և ուտոպիա» (1974), «Բանականության բնույթը» (1993), «Ի՞նչու ինտելեկտուալներին դուր չի գալիս կապիտալիզմը» (1998) և այլն:

Ռ. Նոզիկը վերոնշյալ աշխատության համար 1975 թ. արժանացավ ԱՄՆ-ի Ազգային մրցանակին՝ որպես տարվա լավագույն գրքի հեղինակ: Նրա հետազոտությունը լիբերտարիստական գաղափարների հիմքերի մասին քաղաքական-փիլիսոփայական հիմնարար աշխատություն է: Լինելով լիբերալիզմի ծայրահեղ ձևը՝ լիբերտարիզմը տարբերություն է դնում անհատական ազատության արժեքների և բարեկեցության ու հավասարության արժեքների մեջ: Հենվելով միակ ազատության արժեքի վրա՝ նա փորձում է ձևակերպել այն կանոնները, որոնք անհատները կարող են կատարել մեկը մյուսի նկատմամբ, առանձնացնել անհատների դերը պետության կազմակերպման մեջ և ընդհանրապես որոշակիացնել, թե ինչպիսի իշխանություն պետք է ունենա պետությունը:

Աշխատության սկզբում Ռ. Նոզիկը նշում է. «Անհատներն ունեն իրավունքներ և կան բաներ, որ ոչ մի այլ անձ չի կարող կատարել նրանց նկատմամբ՝ չխախտելով այդ իրավունքները»: Այս պնդումը բավական է, որ նշվի սկզբունքային լիբերտարիզմի հենման կետը: Ընդ որում, Ռ. Նոզիկը կարծում է, որ խոսքը գնում է ոչ միայն այդ

իրավունքների հարգման մասին, այլ այն մասին, որ դրանք պետք է ունենան հիմնարար կամ, շատ թե քիչ, բացարձակ սահմանափակում: «Իրավունքը որպես սահմանափակում» հասկացությունը կամ ինչպես ինքն է բացատրում «բարոյական կողմի սահմանափակումը» նշանակում է, թե խոսքը գնում է ամեն մի անհատի պաշտպանության երաշխիքների մասին: Տվյալ սահմանափակման բացարձակ բնույթը ենթադրում է, թե անհատական իրավունքները չեն կարող խախտվել ինչ-որ սոցիալական նպատակներ լուծելու համար: Օրինակ՝ ամբողջ հասարակության բարեկեցության կամ անվտանգության համար: Հասկանալի է, որ այդ հենակետային դրույթի ընդունման դեպքում առավել հարմար է «միմիմալ պետության» գաղափարը, որ մի կողմից, ի տարբերություն անարխիզմի, որոշակի երաշխիք է տալիս այդ իրավունքները պաշտպանելու համար, իսկ մյուս կողմից՝ դա վերաբաշխման իրավասություններ ունեցող պետություն չէ, որ կարող է բռնություններ կատարել բնակչության որոշ հատվածի նկատմամբ:

Ռ. Նոզիկի տեսության ներդրած առաջին սկզբունքը այն է, որ ամեն մի անհատ ունի երեք հիմնարար իրավունք: Առաջին՝ ֆիզիկական անվտանգության իրավունք, երկրորդ՝ ոչնչով չսահմանափակվող ազատության իրավունք, երրորդ՝ սեփականության անձեռնմխելիության իրավունք, որին չի կարելի ձեռք տալ առանց իր համաձայնության:

Ռ. Նոզիկի մոտեցման նորությունը այն է, որ փորձել է բացատրել, թե ինչպես կարող է պետությունն առաջանալ բնական ճանապարհով, առանց խախտելու որևէ մեկի իրավունքները, սակայն առանց «հասարակական դաշինքի» գաղափարի օգտագործման: Ընդ որում, խոսքը գնում է «միմիմալ պետության» ստեղծման մասին, որը կարող է ձևավորվել երկու պայմանների առկայության դեպքում: Առաջին, եթե մարդիկ ղեկավարվեն սեփական շահերով: Երկրորդ, եթե նրանք հարգեն մյուսների իրավունքները, չխախտեն դրանք կամ ծայրահեղ դեպքում՝ հատուցեն հասցված վնասը:

Բացառելով ամեն տեսակի պետությունը, բացի նրանից, որ դուրս չի գալիս «պետությունը գիշերային պահակ է» լիբերալ «դասական» հասկացությունից, մեխանիկորեն բնորոշ են այն իրավունքներին, որոնց Ռ. Նոզիկը վերագրում է անհատներին: Ընդունելով այդ տիպի

իրավունքները, որոնք հիմնարար են քաղաքական բարոյականության համար, նշանակում է մեխանիկորեն բացառել արդարության ցանկացած տեսություն, որը նախատեսում է հարստության վերաբաշխում: Իր սկզբունքը Ռ. Նոզիկը համառոտ ձևակերպել է այսպես. «ամեն մեկից իր ընտրության համաձայն, ամեն մեկին ուրիշների կողմից ընտրությամբ»: Այս մոտեցման հիմքում ընկած է քաղաքական ոլորտում բնական ազատության բարձրագույն արժեքի դրույթը: Այդ իմաստով նա նորություն չի բերում: Նա գտնում է, որ արդարության սկզբունքները կարող են բնութագրվել երեք հիմնական տեսանկյունից՝ պատմության տեսանկյունից, չափանիշներին հասնելու նպատակներով և միջոցներով:

Արդարության պատմական սկզբունքը բաշխման արդարությունը կապում է նրա ձևավորման հետ: Այլ կերպ ասած, մարդու գործողություններն անցյալում կամ ինչ-որ իրավիճակ կարող են հանգեցնել տարբերակված իրավունքների ստեղծմանը կամ պարզևատրման ինչ-որ արարքի համար:

Արդարության նպատակային սկզբունքը բաշխման արդարությունը կապում է գործերի վիճակի կամ ինչ-որ կառույցի կամ նպատակի հետ:

Չափանիշային սկզբունքը բաշխման արդարությունը կապում է որևէ յուրահատուկ պատմական փաստի հետ, անհատների բնութագրման հետ (բարոյական արժեք, տաղանդ և այլն):

Ռ. Նոզիկի տեսության հակառակորդները հատկապես ուշադրություն են դարձնում այն խնդրին վրա, որ իրականության մեջ հնարավոր չէ «նվազագույն պետության» ստեղծման գործընթացը, քանի որ այն բացառում է ամեն ինչ նորից սկսելու հնարավորությունը, այսինքն՝ այն կիրառելի չէ: Անգամ նրա փորձը փոփոխությունների ենթարկել իր փաստարկները, դրանք ավելի համոզիչ չեն դարձնում: Տեսական ուշադիր վերլուծության դեպքում նոզիկյան լիբերտարիզմը, այնուամենայնիվ, բավականին խոցելի է: Անհատական իրավունքներն ըստ էության լիարժեքորեն չեն օրինականացվում: Վերջիվերջո, Ռ. Նոզիկը Ջ. Ռոուլսի նման արհեստական կառույց ստեղծեց:

Գյուևտեր Ռորմոգերը Ժամանակակից լիբերալիզմի ճգնաժամի մասին

Ժամանակակից լիբերալիզմի՝ լիբերտարիզմի վերլուծությամբ 20-րդ հարյուրամյակի 90-ական թվականներին հանդես եկավ գերմանացի փիլիսոփա, քաղաքագետ Գ. Ռորմոգերը, ով լինելով պահպանողական հայացքների կրող, սակայն լիբերալ հայացքները լիովին ընդունող անձնավորություն, քննադատաբար անդրադարձավ խնդրին՝ փորձելով ցույց տալ, իր կարծիքով, արդի ժամանակներում ճգնաժամային վիճակում գտնվող լիբերտարիզմին նորովի մոտեցումների կիրառման անհրաժեշտությունը:

Պրոֆեսոր Գյուևտեր Ռորմոգերը ծնվել է Գերմանիայում 1927 թ.: Բազմաթիվ փիլիսոփայական, քաղաքագիտական, կրոնական և մշակութային բնույթի աշխատությունների հեղինակ է: 1994 թ. նրա «Լիբերալիզմի ճգնաժամը» մենագրությունը, մասնագիտական հանձնաժողովի որոշմամբ, մտել է Գերմանիայում տպագրված տասը լավագույն գրքերի ցանկը:

Համոզված լինելով լիբերալիզմի բացարձակ անհրաժեշտության մեջ՝ Գ. Ռորմոգերը պայքարում է ճշմարիտ լիբերալիզմի համար՝ առանց արդի ժամանակներում դրան հատուկ խեղաթյուրումների: Համեմատության նպատակով նա վերցրել է իր կարծիքով լիառատ լիբերալիզմով ապրող Գերմանիայի և դրա բացակայությունն ունեցող Ռուսաստանի օրինակները: Նա իր աշխատությունը սկսել է լիբերալիզմի դեմ սպանիչ մեղադրանքով՝ քաղաքական փիլիսոփայական տկարության, իսկ ավելի կոնկրետ՝ բարձր հոգևոր նպատակների բացակայության մեջ: «Մինչ այժմ արևմտյան աշխարհին հեշտ էր արդարացնել իր գոյությունը և հիմնավորել իր իմաստը: Դրա համար բավական էր մշտապես հենվել իրական սոցիալիզմին հակակշիռ լինելու անհրաժեշտության վրա: Հոգևոր առումով, ինչպես նաև գաղափարապես և քաղաքականապես որոշակի առումներով մենք ապրում էինք սոցիալիզմի հաշվին»: Ներկայումս արևմտյան հանրությունը կանգնել է սեփական փիլիսոփայությունը չունենալու

փաստի առջև: Ոչ միայն սոցիալիզմը և լիբերալիզմը, այլև պահպանողականությունն է կորցրել հողը ոտքի տակ: Արևմտյան աշխարհը շարունակում է մտածել միայն տնտեսական կատեգորիաներով, ինչը չի համապատասխանում ժամանակակից մարտահրավերներին:

Կասկածից վեր է լիբերալիզմի բացարձակ անհրաժեշտությունը, բայց նրա գործունեության շրջանակները սահմանափակ են: Լիբերալիզմը հաջողությամբ է գործում, երբ իրավիճակը նորմալ է և բավարար մակարդակի վրա է գտնվում մարդկանց բարեկեցությունը: ճգնաժամային իրավիճակները հաղթահարելու համար լիբերալիզմի ուժերը չեն բավականացնում (օրինակ՝ նորագույն շրջանի Ռուսաստանում): Իր բոլոր մշտական փորձերում՝ սահմանափակելու պետական իշխանությունը, դնելու նրան օրենքների շրջանակների մեջ, լիբերալիզմն արտակարգ իրավիճակներում ի գործ է օգտագործել իշխանությունը: Նա չունի քաղաքական մտածողություն և պետության հետ նրա հարաբերությունները զուտ գործառնական են: Լիբերալիզմը զբաղված է շահերի համաձայնեցմամբ և կարգավորմամբ, սակայն չի կարող իր սեփական ներդրումն ունենալ այդ համաձայնության հոգևոր և մշակութային հիմքում: Լիբերալ բազմակարծությունն չի կարող ինքնաբերաբար համախմբել հասարակությունը: Ճիշտ է, լիբերալ ժողովրդավարությունը հակակշիռ չունի, սակայն լիբերալիզմը պետք է զսպել, որ չգլորվի դեպի անարխիզմը, ինչի համար հարկավոր է այն ամրապնդել պահպանողականության հետ հոգևոր և մշակութային համագործակցությամբ: Քաղաքական գիտակցությունը ճգնաժամ է ապրում, քանի որ այն զրկված է բարոյական գաղափարից, ինչը նրան լեգիտիմություն կտար: Քաղաքականությանը հարկավոր են գաղափարներ, հեղինակություն և ավանդույթ:

Այսպիսով՝ Գ.Ռորմոզերը, գտնելով որ լիբերտարիզմն ու սոցիալ-ժողովրդավարությունն ապրել են իրենց դարը և լուրջ ճգնաժամի մեջ են, առաջարկում է ժամանակակից լիբերալիզմը փրկելու իր ճանապարհը՝ այն է լիբերալիզմի մեջ ներդնել նոր պահպանողական տարրեր, առավել ակտիվ օգտագործել քրիստոնեական կրոնական գործոնը:

Կոմունիտարիզմ: Կոմունիտարիստները արդարության մասին

20-րդ դարի երկրորդ կեսը հեշտ չէր լիբերալ քաղաքականության տեսաբանների համար: Նրանք 1970-ական թվականներից սուր քննադատության ենթարկվեցին «աջից»՝ ուժ հավաքող նեոպահպանողականների կամ «նոր աջերի» կողմից և «ձախից»՝ ձախ-լիբերալ քաղաքական-տեսական ներկայացուցիչների կողմից:

Այդ ժամանակահատվածում հանդես եկան կոմունիտարիստները, որոնց առավել աչքի ընկնող ներկայացուցիչներից էին Մայքլ Սենդե-լը, Ալիստեր Մաքինթայրը, Մայքլ Ուոլցերը, Չարլզ Թեյլորը:

Կոմունիտարիստական շարժումը, առաջին հերթին, ուղղված է քաղաքացիական արժեքների և կոլեկտիվիզմի վերականգմանը:

Այն միավորում է փիլիսոփաների, քաղաքականության տեսաբանների և սոցիոլոգների մի խումբ, որոնք մտահոգված էին բարոյականության անկումից և դժգոհ վարվող քաղաքականությունից: Մասնավորապես, նրանք կարծում են, թե կառավարությունը, պաշտպանելով բազմաթիվ հատուկ շահեր, ուշադիր չի այնպիսի խնդիրների նկատմամբ, ինչպիսիք են կրթությունը, առողջապահությունը, հասարակական անվտանգությունը:

Կոմունիտարիզմը հասարակության գոյության իմաստը տեսնում է բարոյական արժեքների և հանրության մեջ՝ այն հակադրելով պետականությանը: Նրանք ենթադրում են, որ բարոյական մթնոլորտի փոփոխությունը հասարակության մեջ, վերջին հաշվով, կիջեցնի պետական միջամտության մակարդակը և կհանգեցնի իրավունքների ու պարտականությունների հավասարակշռությանը՝ առանց ավտորիտարիզմի (մենատիրության) կողմը գլորվելու:

Հարկ է նշել, որ կոմունիտարիստական քաղաքական տեսությունը մեծ վերելք է ապրում: Այն սկսվում է անհատականության լիբերալ տեսության քննադատությամբ: Կոմունիտարիստները գտնում են, որ

լիբերալ անհատականությունը ներկա է միայն այնտեղ, որտեղ խաթարվել են հասարակական կապերը, անհատները օտարացում են զգում, սակայն նրա համար հասարակական կյանքը և ավանդույթները անհրաժեշտ բաղադրամասեր են: Նրանք կարծիքով, նորմատիվային առումով այդպիսի անհատականությունը ծայրահեղ անցանկանալի է: Նրանք գերադասում են խոսել մարդկային հանրությունում որոշակի տեղ գրավող և կոնկրետ հանրության ազդեցության տակ ձևավորված մարդկային «ես»-ի մասին: Հատկապես իր հանրությունից (գյուղ, ենթակուլտուրա, հասարակական-քաղաքական շարժումներ, էթնիկական խմբեր և այլն) մենք ձեռք ենք բերում առանձնահատուկ իրավունքներ և պարտավորություններ: Միաժամանակ մենք պարտադիր մասնակցում ենք մեր հանրության նպատակների իրացման գործընթացին:

Կոմունիստարիստական տեսությունը ուսումնասիրելիս առաջ է գալիս մի բարդ խնդիր: Հարցը այն է, որ կոմունիստարիզմը՝ որպես քաղաքական-տեսական մտածողություն, ոչ մի տեղ բաց և հստակ չի շարադրվել: Համենայն դեպս, ո՛չ Մ. Սենդելը և ո՛չ էլ Ա. Մաքսինթայը չեն բացատրում նրա հիմնական բովանդակությունը: Կոմունիստարիստներին առանձնացնելու չափանիշը համարվում է նրանց կողմից այլ տեսությունների քննադատության ձևը: Այդ տեսակի մոտեցման պրակտիկ բացատրությունը կարելի է գտնել միայն Մ. Սենդելի «Բարոյականությունը և լիբերալ իդեալ» հոդվածի մի հատվածում, որտեղ նա այսպես է ներկայացնում իր խմբի տեսաբանների հայացքները. «Երբ լիբերտարիստ-լիբերալները պաշտպանում են մասնավոր սեփականության վրա հենվող տնտեսությունը, իսկ էգալիտարիստ-լիբերալները հանդես են գալիս համընդհանուր բարօրության պետության պաշտպանությամբ, կոմունիստարիստներն անհանգստանում են իշխանության կենտրոնացման և կորպորատիվ տնտեսության ու բյուրոկրատական պետության համար, ինչպես նաև հասարակության միջանկյալ ձևերի քայքայման համար, որոնք, ժամանակ առ ժամանակ, պահպանում էին ավելի աշխույժ հասարակական կյանք, այսինքն՝ քաղաքացիական հասարակության փլուզման համար»: Սա, իհարկե բավարար չէ կոմունիստարիստների առանձնահատուկ գծերը ցույց տալու համար, քանի որ նման

անհանգստություն արտահայտում են նաև այլ ուղղությունների լիբերալները: Կոմունիստարիստների գլխավոր յուրահատկությունը նրանց շուկայական տնտեսության կառավարման անհրաժեշտությունն ընդունելու մերժումն է և հրաժարումն ամեն տեսակի «Համընդհանուր բարեկեցության պետության» գաղափարից: Դա ճիշտ է տեսական իմաստով, իսկ պրակտիկ քաղաքականության մեջ Մ. Սենդելը բացահայտեց միակ տարբերությունը. «Կոմունիստարիստները ավելի հավանականությամբ քան լիբերալները, կգնան քաղաքում այն խանութների փակմանը, որոնք պոռնոգրաֆիա են վաճառում՝ այն հիմնավորմամբ, թե պոռնոգրաֆիան վիրավորում է իրենց պատկերացումները կյանքի պայմանների մասին և դրան համապատասխանող արժեքները»: «Դասական» լիբերալների այն պնդումներին, թե դա կարող է հանգեցնել անհանդուրժողականության և ցենզուրայի հաստատման, Մ. Սենդելը պատասխանում է, թե. «անհանդուրժողականությունը, առաջին հերթին, ծաղկում է այնտեղ, որտեղ կյանքի ձևերը խառնվել են, արմատները ամրացված չեն և դեռևս չեն ձևավորվել ավանդույթները»: Այստեղից բխում է, որ իրենք պետք է օժանդակեն այն քաղաքացիական համապետական հնարավորությունները, որոնք դրսևորվում են իրենց ավանդույթներում, սակայն կորչում են մեր ժամանակներում: Ընդ որում, ավանդույթների տակ, առաջին հերթին, հասկացվում են բողոքական բարոյականությունը և համընդհանուր բարօրության գաղափարը:

Եթե նախկինում «լավ կազմակերպված հասարակության» գաղափարը այդ ուղղության փիլիսոփաները հիմնում էին կոլեկտիվ սեփականության և քաղաքական իշխանության հասանելիության վրա, ապա այսօր այդ պատկերացումները հիմնվում են կայացած ավանդույթների, հանրության մեջ ձևավորված կյանքի ձևի և մշակութային սովորույթների և շրջակա միջավայրի միջոցով՝ մարդու ինքնանախաճան վրա:

Կոմունիստարիստների կարծիքով բարոյականությունը ձևավորվում է իրականում գոյություն ունեցող հանրության պրակտիկայի հիման վրա, ուստի դատարկ զբաղմունք է բացարձակ բարոյականության սկզբունքների որոնումը: Այնպիսի սկզբունքներ, որոնք հասանելի են միայն բանականությանը ուղղակի գոյություն չունեն, քանի

որ բարոյականության հիմքերը պետք է փնտրել ոչ թե փիլիսոփայության մեջ, այլ քաղաքականությունում: Այստեղից հետևում է, որ արդարության լավագույն ձևերը գտնելու համար պետք է ուշադիր վերլուծել սեփական հանրության կյանքը, բարոյական ավանդույթները և արժեքները ու դրանց պաշտպանության միջոցները:

Լիբերալների և կոմունիստարիստների անհամաձայնությունը արդարության հասկացության շուրջ կարելի է ներկայացնել նաև հետևյալ ձևով: Լիբերալները պնդում են, որ իրավունքն առաջնային է բարօրությունից, քանի որ գոյություն չունի բարօրության անվիճելի տեսություն, որն ընդունելի է հասարակության բոլոր անդամների կողմից որպես հասարակական համագործակցության հիմք: Կոմունիստարիստները հակառակ՝ գտնում են, որ առանց ընդունելու բարիքի և բաշխման սկզբունքների տարաբնույթ լինելը՝ հնարավոր չէ որոշակիացնել արդարության սկզբունքները:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

Ներկայացնել՝

1. Ֆ. Ֆոն Զայելի լիբերտարիզմը:
2. Ռ. Նոզիկի «Նվազագույն պետության» մասին տեսությունը:
3. Գ. Ռորմոզերի Ժամանակակից լիբերալիզմի ճգնաժամի մասին:
4. Կոմունիստարիզմը:
5. Կոմունիստարիստները արդարության մասին:
6. Մ. Սենդելի խմբի տեսաբանների հայացքները:

Գրականություն

1. Нозик Р., Анархия, государство и утопия, М.2008.
2. Сэндел М., Справедливость. Как поступать правильно?, М., 2013.
3. Хайек Ф., Дорога к рабству// Антология мировой политической мысли в 5 томах, т.2, с.416-428.
4. Френкин А. А., Новый консерватизм вызов для России, М.,1996.
5. Miler D., Political Theory,// The Blsckwell Dictionary pf Political Thought, N.Y., 1987.

Գլուխ 6. ՊԱՅՊԱՆՈՐԱԿԱՆ (ԿՈՆՍԵՐՎԱՏԻՎ) ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Էդմոնդ Բյորկը դասական պահպանողականության հիմնադիր:

**Ս.Յանթինգթոնը պահպանողականության հիմնական
սկզբունքների մասին: Կուլտուրական պահպանողականության
«Սուլսթերիի խումբը»: Մայքլ Օաքշոթը ռացիոնալիզմի դեմ:
Կառլ Շմիտտը լիբերալիզմի դեմ:**

Պահպանողականությունը, որպես կանոն, որոշակիացվում և հիմնավորվում է կայացած շահերի պաշտպանությամբ: Այն քաղաքական ասպարեզ է եկել որպես հնի, իր դարն ապրածի պաշտպան և կապիտալիզմի կատաղի հակառակորդ, որը քննադատում է վերջինիս ոչ թե «ծախից», այլ՝ «աջից»:

Եթե քաղաքական շարժումների մեծամասնությունն ունեն գաղափարներ և, եթե այդ գաղափարները դիտարկենք որպես մարդու կամ հասարակության բարեկեցության ձգտումը, ապա պահպանողականությունն այդպիսի գաղափար չունի: Այնուամենայնիվ, նա ունի մի շարք գծեր, որոնք հատուկ են բոլոր պահպանողական մտածողներին: Այդ գծերը բացահայտելու համար անհրաժեշտ է անդրադառնալ պահպանողական խոշոր մտածողների հայացքներին, մասնավորապես, անգլիացի Էդմոնդ Բյորկի (1729-1797) մոտեցումներին:

Է. Բյորկի գլխավոր տեսական երկը՝ «Մտորումներ ֆրանսիական հեղափոխության մասին» լույս է տեսել 1790 թ.-ին: Համառոտ ներկայացնենք **Է. Բյորկի առաջադրած հիմնական սկզբունքները.**

- «այն ինչ կարելի է չփոխել, պետք չէ փոխել»,
- հավատ «հնության իրավունքի» և ավանդույթների նկատմամբ,
- դասակարգերի և սոցիալական խավերի միջև սահմանազատման անհրաժեշտությունը սոցիալական կայունության հաստատման համար,
- ազատությունն անհնար է առանց մասնավոր սեփականության գոյության, իսկ հասարակությունն առանց դրա դատա-

**պարտված է կործանման,
-մարդը՝ որպես անկատար և անբան էակ, ենթակա է մեղսա-
վոր վարքի:**

Որպես եվրոպական լուսավորչության և ֆրանսիական հեղափոխության հակառակորդ է. Բյորկը ապացուցում էր, որ հասարակական կյանքը հիմնված է ավանդույթների, սովորույթների, բարոյական և նյութական արժեքների վրա՝ ժառանգված նախորդ սերունդներից և փոխկապակցված միմյանց հետ: Կայունությունը, հավասարակշռությունը, աստիճանական նորացումն այն սկզբունքներն են, որոնց պետք է հետևի հասարակությունը: Միայն այս դեպքում է ապահովվում նրա ապագան:

Պահպանողականության բավականին ընդհանրական ձևակերպում է տալիս անցյալ դարի քաղաքական գործիչ Քուլինթին Յոզը՝ նշելով, որ պահպանողականության հիմնական գործառույթն է՝ պաշտպանել, կիրառել և վերհանել անցյալից եկող լավագույնը:

Ժամանակակից պահպանողականության էությունն ըմբռնելու համար, կարծում ենք, որ առավել դիպուկ է Ս. Հանթինգթոնի մոտեցումը, ով ամփոփելով պահպանողական գաղափարախոսության հիմնական սկզբունքները, դրանցից առանձնացնում է այն վեցը, որոնք ընդունելի են տարատեսակ պահպանողականների համար: Դրանք են՝

1. Մարդն իր էությանը կրոնական արարած է, իսկ կրոնը հասարակության հիմքն է:

2. Հասարակությունը բնական, օրգանական, պատմական բնականոն զարգացման արդյունք է: Գոյություն ունեցող հաստատությունները մարմնավորում են նախորդ սերունդների իմաստությունը, իսկ ճշմարտությունը ժամանակի գործառույթ է:

3. Մարդն ինչպես բնագոյան և զգայական, այնպես էլ բանական էակ է: Խոհեմությունը, նախապաշարմունքը, փորձը և սովորույթն ավելի լավ ուղեցույց են, քան բանականությունը, տրամաբանությունը, վերացականը և մետաֆիզիկան: Ճշմարտությունը գտնվում է ոչ թե ընդհանրական առաջարկություններում, այլ հստակ փորձառություններում:

4. Հանրությունը վեր է անհատից: Մարդու իրավունքները

բխում են նրա պարտականություններից: Չարիքը արմատավորված է մարդկային էության, այլ ոչ թե հաստատությունների մեջ:

5. Բացի բարոյական կողմից, ընդհանրապես մարդիկ անհավասար են: Հասարակական կառուցվածքը բարդ երևույթ է և միշտ իր մեջ է ներառել տարբեր դասեր, կարգեր, խմբեր: Ցանկացած քաղաքացիական հասարակությունում տարբերակումները, աստիճանակարգությունը և առաջնորդությունն անխուսափելի առանձնահատկություններ են:

6. Յուրաքանչյուր հաստատված կառավարման համակարգի շարունակությունը նախընտրելի է որևէ մինչ այդ պահը չփորձարկված ծրագրից: Մարդկանց հույսերը մեծ են, սակայն նրանց տեսլականը կարճ է: Գոյություն ունեցող չարիքները չեզոքացնելու փորձերը սովորաբար հանգեցնում են ավելի մեծ չարիքների:

Կուլտուրական պահպանողականության «Սուլսբերիի խումբը»

1970-ականների վերջին տարբեր ուղղության պահպանողականները լուրջ քայլեր ձեռնարկեցին վերանայելու իրենց ավանդական քաղաքական և տնտեսական գաղափարները, դրանց մասնակի «նորացման» և արդիականացման նպատակով: Ժամանակակից պահպանողականությունը փորձում է իր վրա վերցնել մշակութային ժառանգության, շրջակա միջավայրի, կյանքի ավանդական ձևի, տնտեսական մոնետարիզմի և այլ նման երևույթների պաշտպանի դերը: Սակայն դա չի փոխում նրա էությունը: Պահպանողականության փոխակերպումները տարբեր երկրներում տեղի են ունեցել տարբեր ձևերով: Օրինակ ԱՄՆ-ում, չնայած նրան, որ նեոպահպանողականությունը 1980-ականներին ակտիվ մասնակցություն էր ցույց տալիս գործնական քաղաքականությանը, այնուամենայնիվ, գլխավորապես մնացել էր որպես գաղափարական հոսանք: Արևմտյան Եվրոպայում այն արտահայտվեց քաղաքական կուսակցությունների ստեղծմամբ, որոնք միշտ այն զգացմունքներն է առաջացնում, թե ուժեղ պետությունը հասարակական կյանքի հիմքն է:

Ավանդական պահպանողականության վերակառուցման

փորձը կատարեցին Մեծ Բրիտանիայում: Այսպես անվանված «Սուլբերիի խումբը», որի մեջ մտան երկրի ակադեմիական շրջանակների ներկայացուցիչները՝ ձեռնարկեց այդ փորձը:

Պահպանողականները, որպես կանոն, կամ ժխտում են մանրամասն կազմված ուսմունքները կամ իրենց ծրագրերին ու քաղաքական կանոններին գիտակցաբար լղոզված տեսք են տալիս: Պահպանողական տեսաբանները պարբերաբար կրկնում են, թե ոչ մի բրիտանական պահպանողական չի ստեղծել վերացական քաղաքական գաղափարի կամ ամբողջական գաղափարախոսության համակարգ, քանի որ պահպանողականությունում չկա բանական փիլիսոփայություն:

Զնայած ժամանակակից պահպանողականությունն արտաքինապես բազմազան է, սակայն նրա ուշադրության կենտրոնում են մնացել իշխանությունը, պետությունը և հասարակությունը որպես ամբողջություն ու նրա փոխադարձ կապը հասարակության անդամ մարդու հետ:

«Սուլբերիի խմբի» հիմնական խնդիրը դարձավ «պահպանողականության ամուր տեսական հիմքերի» ձևակերպումը: Խմբի անունը դրվել է ի պատիվ 1881-1902 թթ.-ի պահպանողական կուսակցության առաջնորդ մարկիզ Սուլբերիի, ով հայտնի էր որպես պահպանողականության դրույթների մաքրության համար պայքարող անգիջում մարտիկ: Այդ խումբը սկսեց գործել 1978 թ.-ից, միաժամանակ հինադրվեց նրանց տեսական մարմինը՝ «Սուլբերի ռեվյու» եռամսյա ամսագիրը:

Արդեն իսկ առաջին կոլեկտիվ աշխատությունում՝ «Պահպանողական էսսեներ» (1979), շարադրվեցին ժամանակակից պահպանողականության քաղաքական տեսության հիմնական դրույթները: 1980 թ. խմբի գլխավոր տեսաբան Ռոջեր Սքրոլթոնը հրատարակեց «Պահպանողականության իմաստը» տեսական աշխատանքը, 1981 թ.՝ «Դեկարտից դեպի Վիտգենշտեյնը» և «Մշակույթի քաղաքականությունը» (էսսե), 1982 թ.՝ «Քաղաքական մտքի բառարան» գրքերը:

«Սուլբերիի խմբի» քաղաքական տեսությունն ըստ էության կուլտուրական պահպանողականության ժամանակակից տեսակն է, որը կարելի է բաժանել երեք հիմնական մասերի՝

- անհատի վերաբերմունքը հասարակությանը,

- պետության դերը ժամանակակից աշխարհում,
- քաղաքական տեսության և քաղաքական պրակտիկայի մոտեցումը:

Սուլքերիականները պահպանողականության ավանդույթներով հասարակությունն առաջնային էին համարում անհատից: Նրանց քաղաքական տեսության հիմքը մարդու բնույթի նկատմամբ հայացքն էր, ինչն, ըստ էության, համաձայնություն էր երկու լիովին հակառակ դիրքորոշումների համար, որոնք, չնայած դժվարություններին՝ նրանք փորձում են համատեղել: Նրանք ձգտում են վերականգնել հավատը «մարդու օբյեկտիվ բնույթի մասին, քանի որ առանց այդ հավատի ոչ մի օբյեկտիվ կանոններ չեն կարող համարվել գոյություն ունենալու իմաստով և որակով»:

Այդ խնդրի լուծումը «Սուլքերիի խումբը» հանգեցնում էր հետևյալին.

Առաջին հերթին, հաստատվում է, որ ինստիտուտները «հայեցակարգային» («կոնցեպտուալ») կապ ունեն ինքնամույնականացման հետ, որ մեր «եսը» «հայեցակարգային ձևով» առնչվում է «կուլտուրական օբյեկտների» հետ, ինչն իր մեջ ներառում է այդ հասարակությունում ընդունված ավանդույթները, սովորույթները և ընդհանուր լեզուն: Ընտանիքը դիտարկվում է որպես սոցիալական կապի տարրական ձև, որն ապահովում է սերունդների կապը, իսկ տունը՝ որպես սեփականության կենտրոնացման տեղ: Պահպանողականների համար սեփականությունը մարդուն և բնությանը միավորող առաջին կապն է: Նրանք իրենցից ներկայացնում են առարկայական աշխարհի սոցիալականացման առաջին փուլը և միաժամանակ բոլոր ինստիտուտների ստեղծման պայմանը: Հենց սեփականության միջոցով է մարդն իրեն բացահայտում որպես հասարակական էակ:

Երկրորդ՝ լիբերալների կողմից քննադատվող սնահավատությունը և զգացմունքները իրականում խորը կապի դրսևորումն է ինքնամույնականացման ու կուլտուրայի միջև: Պահպանողականը գտնում է, որ մարդու բնույթը որոշվում է նրա գործունեությամբ և ոչ թե մեկընդմիջ տրված ու համընդգրկուն է: Նրա համար միակ և լավագույն մոտեցումը մարդուն՝ համարվում են սովորույթները, կուլտուրական, ազգային, կրոնական ավանդույթները:

Հատկապես ավանդույթներն են որոշում անհատի հասարակական կեցությունը, ձևավորում են սեփական պատկերացումներն իր մասին որպես մեծ սոցիալական մարմնի մասնիկի, այն ժամանակ, երբ այդ ամբողջ մարմինը ենթադրվում է այդ մասնիկի մեջ: Դա ներկայացնելու համար պահպանողական փիլիսոփաները հաճախ բերում են ազգականների կամ բարեկամների մահվան օրինակը: Դա խորն անձնական ապրումներ է առաջացնում, սակայն թաղման արարողության միջոցով այն անձնական ոլորտից փոխակերպվում է «կուլտուրական օբյեկտի»: Այդ արարողությունը երկակի իմաստ ունի: Մի կողմից մարդն իր ապրումները կիսում է իր հասարակության ամբողջ կուլտուրական ավանդույթի հետ, իսկ մյուս կողմից՝ նրա զգացմունքները «ճանաչում» են ստանում, հասարակական թույլտվություն, որը թեթևություն է բերում:

Սուլբերիականների համար «կուլտուրական օբյեկտները» նույնականանում են անգլիացի փիլիսոփա, կոմունիստարիստ Չ. Թեյլորի սոցիալական օբյեկտի հետ, որի տակ հասկացվում է ընդհանուր պրակտիկայի համատեքստում առաջացած գործունեությունը և փորձը: Սակայն առաջինները դրան մի փոքր այլ իմաստ են տվել: Ընդգծելով «կուլտուրական օբյեկտի» առաջնայնությունը՝ նրանք համարում են, որ դրանք իրենք իրենցով հեղինակության աղբյուր են: Հենց այդ պատճառով էլ նրանք այդքան թշնամաբար են վերաբերում ամեն տեսակի անհատական դրսևորումներին: Միաժամանակ նրանք ընդունում են, որ անհատն ինքնագիտակցություն ունի և կարող է ընդլվզել «կուլտուրական օբյեկտների» բռնությունների դեմ, սակայն այդ դեպքում նա դրանք կոչնչացնի այնպես, ինչպես կոչնչացնի այն «ճանաչումը», որը նրան տվել են այդ օբյեկտները: Այսինքն, կոչնչացնի ինքն իրեն: «Սուբյեկտը սոցիալականի արդյունքն է և, եթե վերացվեն ավանդույթներին հետևելու բոլոր պահանջները, ապա դա նրան ոչ թե ինքնաազատում կբերի, այլ կհանգեցնի ինքնառնչացման»: Սակայն ինստիտուտները, սովորույթներն ու ավանդությունները միաժամանակ ինչ-որ արտաքին գործոններ են հանդիսանում անհատի համար և նրանք պետք է մշտապես վերականգնվեն նրա գործունեության ընթացքում: Այստեղից էլ բխում է նրանց վերաբերմունքն ազատության հանդեպ: Ռ. Սքրոթոնը գտնում էր, որ ազա-

տությունն առանց ինստիտուտների կույր է, այն չի ընդգրկում ոչ իրական պատմական ժառանգականությունը, ոչ էլ՝ իրական անհատական ընտրությունը: Այն հավասար է ոչ ավելի, քան բարոյական դատարկությունում կատարված ժեստի: Այսինքն, ազատության հայեցակարգը կենտրոնական տեղ չի գրավում պահպանողական քաղաքական տեսության մեջ: Նրանց կարծիքով, անհատը ոչ այնքան ազատության է ձգտում, որքան «լավ կառավարմանը»: Ջ. Քեյսին դա ձևակերպում է հետևյալ կերպ. «Ինստիտուտների իմաստը կայանում է նրանում, որ նրանք ազատագրում են անհատին անհատականությունից», իսկ Ռ. Սքրուքոնը ուղղակի գրում է. «Պահպանողականի համար անհատական ազատությունը բացարձակ չէ, այլ ենթարկվում է այլ, ավելի բարձր արժեքի – կառավարող իշխանությանը»: Պահպանողականները գտնում են, որ «ռեֆորմիզմը» խիստ վտանգավոր է հասարակության համար: Նրանք տարանջատում են հեղինակություն և իշխանություն հասկացությունները՝ առաջնությունը տալով հեղինակությանը և Մ. Վեբերի հետքերով՝ այն բաժանում են երեք տիպերի. բանական-օրինական, ավանդական և խարիզմատիկ, սակայն սուլսբերիականների համար հատկապես կարևոր է հավատը հեղինակության նկատմամբ: Այդ դեպքում, ինչպես նշում է Ռ. Սքրուքոնը ինքը՝ հեղինակությունը նշանակում է կայացած օրինականացված իշխանություն, այսինքն, հեղինակությունն ու իշխանությունը համընկնում են: Այլ կերպ ասած՝ իշխանությունը, որին ձգտում է պետական գործիչը, պետք է լինի հավանության արժանացած իշխանություն: Այն ժողովրդի կողմից պետք դիտարկվի ոչ թե ուղղակի որպես իշխանություն, այլ որպես հեղինակություն:

Պահպանողական մտքի վրա մեծ ազդեցություն է թողել ինստիտուտների որպես ինքնավար սուբյեկտների մասին տեսությունը: Այստեղ են նրանք տեսնում իրենց տարբերությունը տոտալիտարիզմից (ամբողջատիրությունից), քանի որ գտնում են, որ վերջինիս հայեցակարգի էությունը այն է, որ ոչ մի ինստիտուտ չի կարող ինքնուրույն լինել պետությունից: Ուստի, որպես կանոն, ժամանակակից պահպանողականներն ընդունում են, որ կառավարության և անհատական ազատության միասնականության ամենալավ միջոցը դա իշխանության բաժանման սկզբունքն է:

Կուլտուրական պահպանողականության տեսանկյունից պետությունը պետք է եռակի դեր խաղա: Առաջին, լինի միակ ինստիտուտը, որն ի վիճակի է ապահովել տվյալ ազգային միավորի համընդհանուր կուլտուրական ժառանգության պահպանումը: Այստեղից է գալիս նրանց հակակրանքը աշխարհի ընկալման այն մոտեցումներին, որոնք իրենց մեջ կրում են լիբերալ-կոսմոպոլիտական որևէ տարր: Օրինակ, «խաղաղության և հակամարտությունների խնդիրների ուսումնասիրությունները» կամ «Եվրոմիության քաղաքական ինտեգրացման հարցերը» և այլն:

Երկրորդ, այն պետք է «արտահայտի» անհատ քաղաքացու ձևավորած ողջ կուլտուրական ժառանգությունը: Պետությունը պետք է շրջապատված լինի իր նկատմամբ «նվիրվածության և խորը հարգանքի» միֆոլ(տեսիլքով):

Երրորդ, պետական գործչի գլխավոր հոգսը պետք է լինի ընդհանուր կուլտուրայի առողջության օժանդակումը: Կոռումպացված ինստիտուտները, որոնք քայքայում են քաղաքացիների «նվիրվածությունը» պետության նկատմամբ, պետք է անխնա ոչնչացվեն:

Այսպիսով, պահպանողականության տեսության մեջ առկա է ուժեղ ավտորիտար սկիզբ: Սակայն իշխանությունը չպետք է անպատասխանատու լինի, ինչպես նաև անթույլատրելի է իշխանության չարաշահումը: Դրա համար սուբերիականները շատ ուշադիր են կառավարման բնույթի, կառավարության հասարակությանը ծառայելու, համընդհանուր շահերի մասին հոգատարության հարցերի նկատմամբ:

Մայքլ Օաքշոթը ռացիոնալիզմի դեմ

Մայքլ Օաքշոտ (1901-1990) - Բրիտանական քաղաքական փիլիսոփայության և տեսության ներկայացուցիչ: Ավարտել է Քեմբրիջի համալսարանը: 1949-1951 թթ. Օքսֆորդի համալսարանի պրոֆեսոր: 1951 թ. Լոնդոնի տնտեսագիտության և քաղաքական գիտության դպրոցի քաղաքագիտության ամբիոնի պրոֆեսոր: 1966 թ.-ից Բրիտանական Ակադեմիայի անդամ: 1947-ից մինչև 1953 թվականը բրիտանական պահպանողական մտքի

օրգաններից մեկը համարվող «Քեմբրիջ Ջորնեյի» խմբագիր: 1933 թ. լույս է տեսել նրա «Փորձը և նրա տիպերը» փիլիսոփայական աշխատությունը, 1962 թ.՝ «Բանականությունը քաղաքականության մեջ», որը նրան պահպանողական հեղինակի համարում բերեց: Հասուն տարիքում՝ 1976 թ. գրեց իր ամենաճանաչված էսսեն՝ «Մարդկային բարքի մասին»: Որոշ գործեր՝ «Կրոնը, քաղաքականությունը և բարոյական կյանքը», «Հավատի քաղաքականությունը և վատատեսության քաղաքականությունը», «Բարոյականությունը և քաղաքականությունը ժամանակակից եվրոպայում» լույս են տեսել նրա մահվանից հետո:

Պահպանողական մտածողները, որպես կանոն, Մ. Օաքշոտին պահպանողական են համարում: Իրոք, դրա համար նրանք ունեն որոշ հիմքեր: Նա ձեռնոց մետեց Լուսավորչության կարևորագույն դրույթին՝ մարդու բանականության նկատմամբ հավատին: Լուսավորչականները և նրանց հետևորդները՝ լիբերալները, գտնում են, որ մարդը սկզբունքորեն բանական էակ է, չնայած երբեմն արտահայտվող իռացիոնալիզմին: Բանականությունն իր մեջ կրում է մարդու կարողությունը մտածելու, այլընտրանքային տարբերակներ առաջարկելու, ընտրություն կատարելու՝ ղեկավարվելով գիտելիքով և հաշվարկով: Մարդու բանականությունն է նաև իր նպատակներին հասնելու համար առավել նպաստավոր միջոցներ ընտրելու մեջ: Ինչպես շատ պահպանողականներ՝ Մ. Օաքշոտը բացառում է պատճառահետևանքային կապը՝ չհավատալով նպատակներ-միջոցներ սկզբունքով գործելու հնարավորությանը:

Ինչպես գրում է նա «Բանականություն և քաղաքականություն» աշխատության մեջ, բանականությունը չի ընդունում պրակտիկ գիտելիքները և համարում է, որ գիտելիքը կարող է միայն տեխնիկական լինել: Ռացիոնալիստի համար գերագույն իշխանությունը բանականությունն է, որը նշանակում է տեխնիկայի գերագույն իշխանություն: Մ. Օաքշոտի կարծիքով այդ տիպի մտածողությունը բնութագրական է ժամանակակից կյանքի զգալի մասի, և հատկապես քաղաքական տեսության համար: Նա դա ճիշտ չի համարում, քանի որ քաղաքական ոլորտը ամենաքիչը բանականությանը ենթարկվող

ասպարեզ է, որտեղ հատկանշական է խորապես իրար հետ կապել ավանդականը, պատահականը և անցումայինը: Պրակտիկ գործի վարումը ռացիոնալիստը տեսնում է միայն նրանում, որ լուծի խնդիրը: «Նրանք իրենց հոգով ինժեներներ են» և նրանց բանականությունը լիովին համապատասխանում է դրված խնդրի կատարման տեխնիկային: Հատկապես քաղաքականությունը որպես ինժեներության մասնավոր դեպքի ընդունման մեջ է կայանում ռացիոնալիստական քաղաքականության մասին տեսիլքը: Այդ մոտեցման պատճառով քաղաքական կյանքը վերածվում է համատարած ճգնաժամերի հերթականության:

Ուշադրության արժանի են Մ. Օաքշոտի մտորումները փիլիսոփայության և քաղաքականության համադրումների մասին.

- քաղաքականության փիլիսոփայությունը կարող է նույնականացնել, քանի որ դրա հիման վրա իրագործվում է քաղաքական գործունեությունը, սակայն չի կարող ենթադրություն ստեղծել: Իրապես քաղաքականության փիլիսոփայությունը հարկավոր է քաղաքական պրակտիկայի համար, քանի որ նա այդ պրակտիկայի հետ կապ ունեցող ենթադրություններից և տրամադրություններից վեր է կանգնած,
- քաղաքականության փիլիսոփայությունն ընդունում է. քանի որ այդ պնդումները հատուկ են հենց գործունեությանը, ապա դրանք միակ հիմնավորումներն են հանդիսանում որոշելու վարքագծի լավ կամ վատ լինելը: Ցանկացած փորձը մեկ ասպարեզի գործունեության նախադրյալները փոխակերպել այլ ասպարեզում՝ հանգեցնում է մարդկային վարքագծի միակ կապվածության աղբյուրի կործանմանը:

Նրա կարծիքով, երբ պետությունը կամ մեկ այլ կենտրոնացված իշխանություն ռացիոնալ քաղաքական նպատակներին հասնելու համար փորձում է քաղաքացիներին թելադրել որոշակի վարքի տեսակ, ապա միտումները կորցնում են իրենց կապվածությունը և ունակությունը հաստատելու ընթացակարգը իրենց մասնավոր նպատակներին հասնելու համար:

Անհրաժեշտ է նշել, որ Մ. Օաքշոտի քաղաքական տեսության որոշ այլ դրույթներ թույլ են տալիս նրան համարել նաև լիբերալ, պրագ-

մատիկ, էքզիստենցիոնալիստ և նույնիսկ հետմոդեռնիստ: Այսպիսով, նրա աշխարհայացքը հնարավոր չէ կապել որևէ մեկ կոնկրետ տեսության հետ:

Կառլ Շմիտտը լիբերալիզմի դեմ

Վեյմարյան Գերմանիայի իրավունքի և քաղաքականության տեսաբան, 1930-ականներին Գերմանիայի նացիոնալ-սոցիալիստական կուսակցության ակտիվ անդամ, աջերի ու ձախերի քննադատության օբյեկտ Կարլ Շմիտտն այսօր ճանաչված է որպես լիբերալիզմի ակամավոր քննադատ ու քաղաքական տեսաբան: Թերևս վերջին հարյուրամյակում աշխարհում չի եղել մեկ այլ մտածող, որն այդպես մանրազնին և համոզեցուցիչ ձևով ցույց է տվել լիբերալ տեսության և պրակտիկայի թուլություններն ու հակասությունները և այդպիսի մեծ ազդեցություն է թողել պահպանողականության վրա, հատկապես ԱՄՆ-ում:

Կարլ Շմիտտ (1888-1985) - ազգությամբ գերմանացի, քաղաքականության և իրավունքի պահպանողական տեսաբան: Բավականին հակասական կյանք է ապրել: Նրան համարում են 20-րդ դարի խոշոր քաղաքական տեսաբաններից մեկը: 1921-1945 թթ. Գրայֆսվալդի, Բոնի, Քյոլնի և Բեռլինի համալսարանների պրոֆեսոր: 1930-ականներին Շմիտտը միացավ նացիստներին: 1936 թ. Ա. Ռոզենբերգի կողմից քննադատվելուց հետո գտնվում էր «ներքին էմիգրացիայում»: 1940-1950-ականներին շրջվեց դեպի աշխարհաքաղաքականության թեման՝ փորձելով հակակշիռ գտնել ամերիկյան զավթողականությանը: Ավտորիտար էթաթիզմի (գաղափարախոսություն, որը հաստատում է պետության առաջնային դերակատարությունը քաղաքական կյանքում) դարոցի հիմնադիրն է:

1923 թ. Կ. Շմիտտը հրատարակեց «Հռոմեական կաթոլիկությունն ու քաղաքական ձևը» աշխատությունը, որտեղ շարադրեց իր հայացքները «քաղաքական թեոլոգիայի (աստվածաբանության)» մա-

սին: Այստեղ նա արդեն առաջ է քաշում հասարակության քաղաքական բնույթը կանխորոշող «բարեկամ - թշնամի» հարաբերությունների տեսակետը: Այդ տարիներին լինելով խորը հավատացյալ-կաթոլիկ՝ նա եկեղեցին ռեսուրս էր համարում որոշելու համար այն չափանիշները, թե ում կարելի է համարել թշնամի, միաժամանակ՝ տանիք, որի տակ կարող էին միավորվել բոլոր «եվրոպական բարեկամները»: Կանգ առնելով ժամանակակից տնտեսության վերելքի և բողոքականության կապի վրա, որին իր ժամանակներում անդադարձել էր Մ. Վեբերը, Կ. Շմիտտը եզրահանգում է, որ լիբերալիզմը, կապիտալիզմը և ռոմանտիզմը, այսինքն նույն է թե քաղաքականը, տնտեսականը և բարոյականը՝ նորացված բողոքականության արտահայտությունն է, որը թուլացնում է Եվրոպային հորհրդային Ռուսաստանի դեմ պայքարում:

Բողոքականությունը ռեֆորմացիայի տարիներին հանգեցրեց հիմնավոր սոցիալական փոփոխությունների: Այն բերեց սոցիալական հարցերի նկատմամբ պասիվության, ընդգծեց անհատականությունը և իր գազաթին հասցրեց մասնավոր կյանքի ապաքաղաքականացումը: Այդ ամենին հակադրվում է կաթոլիկությունը, որը մասնավոր-սուբյեկտիվին հակադրում է հրապարակային-սուբյեկտիվը: Այս ամենի արդյունքում քաղաքականության մեջ առաջնությունը տրվում է ընտանեկան, տնտեսական ոլորտին: Մասնավորի աստվածացումը հանգեցնում է եվրոպական հրապարակայնության ոլորտի կրճատման, որը նախկինում մի հրապարակ էր, որտեղ ներկայացված էին իշխանության կամ հասարակության, արդարության, ժողովրդավարության և հատկապես հումանիզմի սկզբունքները: Ժամանակակից եվրոպական հրապարակային ոլորտը, ըստ նրա, դա մասնավոր սեփականության տերերի և շահառու խմբերի ու կուսակցությունների անդամների միասնությունն է, որոնք քվեարկում են սեփական նյութական շահերի պահպանման օգտին: Նրանց ներկայացուցիչները այլևս իրական իմաստով «ներկայացուցիչներ» չեն, այլ տնտեսական-տեխնիկական դեր են խաղում: Հենց այդ արժեքներն են, որ Կ. Շմիտտի կարծիքով բաժանում են եվրոպական քաղաքակրթությունն Արևելյան Եվրոպային սահմանակից երկրների «բյուզանդական քրիստոնեության ամալգամայից (տարաբնույթ երևույթների համա-

տեղում, միավորում-Ա. Մ.), կոմունիզմից և անարխիզմից»:

Կ. Շմիտտը կարծում է, որ լիբերալ սխեման շեշտադրումը կատարում է ոչ թե որակի այլ քանակի վրա (օրինակ, 500000 բնակչից մեկ պատգամավոր): Նա մեղադրում է արևմտյան կապիտալիստներին, լիբերալներին և սոցիալիստներին, որ նրանք խաղում են այն մտածողության տեսակի հետ, որը հատուկ է խորհրդային Միությանը, այսինքն՝ զոհաբերում են որակականն ու բովանդակայինը մարդկային իրականության տնտեսապես հաշվարկված ասպեկտների տեխնիկական մանիպուլյացիաների համար: Իսկ կաթոլիկությունն ի հակադրություն դրանք՝ շեշտադրումը կատարում է կյանքի որակական կողմի վրա:

Քաղաքականության գաղափարի մասին ավելի պարզ ձևով Կ. Շմիտտը հանդես եկավ 1932 թ. հրատարակված «Քաղաքականի հայեցակարգը» էսսեում, որը մեծ աղմուկ առաջացրեց ակադեմիական շրջանակներում: Այստեղ նա անդրադառնում է այն հարցին, ինչից է սկսվում է ցանկացած քաղաքական տեսությունը. «ի՞նչ է քաղաքականությունը», որը նա վերածնակերպել էր. «ի՞նչ է քաղաքականը» հարցով: «Քաղաքական» հասկացության տակ նա հասկանում էր ոչ թե կյանքի ձևը կամ ինստիտուտների ամբողջությունը, այլ որոշակի տեսակի որոշումներ ընդունելու չափանիշները: Բոլոր քաղաքական գործողություններին և մոտիվներին հանգեցրած յուրահատուկ քաղաքական որոշումները դրանք բարեկամի և թշնամու տարբերակումն է: Հետագայում Կ. Շմիտտը կգրի. «Ասա ով է քո թշնամին և ես կասեմ, թե ով ես դու»: Թշնամանքը մարդկային կյանքի էական անհրաժեշտ տարրն է: Մարդու ողջ կյանքը պայքար է և ամեն մի մարդ, խորհրդանշանային (սիմվոլիկ) իմաստով՝ մարտիկ է: Կյանքն առանց պատերազմի կլինի աշխարհի առանց քաղաքականության, առանց քաղաքականության աշխարհը կդառնա առանց թշնամանքի աշխարհի, իսկ առանց թշնամանքի աշխարհը կլինի առանց մարդկային էակի աշխարհի:

Այսպիսով, Կ. Շմիտտի «քաղաքականի» իմաստը նրանում է, որ պետական իշխանությունը հիմնված է ներքաղաքական անտագոնիզմի (հակամարտության) և միջազգային գործերում մշտական զգուշավորության ու զգոնության վրա: Իշխանությունը նշանակում

է ներքին կյանքում և միջազգային համակարգում բարեկամների ու թշնամիների տարբերությունը որոշելու ունակություն:

Նա լիովին բացառում է հումանիզմը համարելով, որ դա քաղաքական տեսություն չի և ոչ մի քաղաքական միասնություն կամ հասարակություն, ոչ մի կարգավիճակ նրան չեն համապատասխանում: Նա բարոյական սահմանազատում չի դնում բարեկամի ու թշնամու միջև: Ամեն մի մարդկային խումբ անկախ ղեկավարի կարիք ունի, ուն խնդիրն է որոշումներ կայացնել արտակարգ կամ բացառիկ իրավիճակներում, այդ թվում ամենակարևորն է՝ որոշել պատերազմ սկսել, թե ոչ և ուն դեմ կռվել: Պետական ինքնիշխան որոշումը հենց այդպիսին է:

4. Շմիտտի ուսմունքը «դեսիզիոնիզմ» անունը ստացավ: Այն իրավական կառավարման պայմաններում պետությունը դիտարկում է որպես չեզոք ինստիտուտ, որը զբաղվում է անհատների և խմբերի միջև եղած հակամարտություններում համաձայնության և լուծումների հասնելու կայացմանը: Նա եկավ այն եզրակացության, որ լիբերալ քաղաքականություն ընդհանրապես գոյություն չունի, այլ կա միայն քաղաքականության լիբերալ քննադատություն: Նրան համաշխարհային ճանաչում բերած մինչպատերազմյան աշխատություններում նա խոսում է թշնամության մասին և դրանք կարող են կարդացվել որպես քաղաքական թշնամության և ինքնուրույն դեսիզիոնիզմի սկզբունքների հաստատում: 4. Շմիտտը հրապարակայնորեն օժանդակեց նացիստներին, ավելին դարձավ նացիստական վարչակարգի պաշտոնական պաշտպանը: Պատերազմից հետո նրան չդատեցին, բայց զրկեցին դասավանդելու իրավունքից: Նրա հետպատերազմյան աշխատանքները ավելի պակաս վիճահարույց էին, սակայն զուրկ չէին հավակնություններից: Նա իրական ճանաչում գտավ իր մահից տասը տարի հետո՝ 1990-ականներին, հատկապես ԱՄՆ-ում:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

Ներկայացնել՝

1. Է. Բյորկի առաջադրած հիմնական սկզբունքները:
2. Կուլտուրական պահպանողականության «Սուբերիի խումբը»:
3. Մ. Օաքշոթը ռացիոնալիզմի դեմ:
4. Կ. Շմիտտը լիբերալիզմի դեմ:

Գրականություն

1. **Белов М. В., Витальева А. И.**, Эдмунд Бёрк - ранний идеолог Британской империи. Диалог со временем. Альманах интеллектуальной истории, 34, М., 2011.
2. **Френкин А. А.**, Новый консерватизм вызов для России, М., 1996.
3. **Шмитт К.**, Понятие политического// Антология мировой политической мысли в 5 томах, т. 2, с. 290-310.
4. **Шмитт К.**, Диктатура. От истоков современной идеи суверенитета до пролетарской классовой борьбы / Пер. с нем. Ю. Коринца под ред. Д. Кузница. — СПб.: Наука, 2005.
5. **Шмитт К.**, Левиафан в учении о государстве Томаса Гоббса. М., Владимир Даль, 2006.
6. Պահպանողական հոսանքներ և գաղափարներ, Եր., 2010:
7. **Hantington Samuel**, Conservatism as an Igeology, The American Political Scense Review, N 12, June 1957.
8. **Quitin Hogg**, The Case for Conservatism, Harmondsworth, 1948.

Գլուխ 7. ՖԱՇԻԶՄ

Ֆաշիզմի գաղափարական ակունքները: Ֆաշիզմի քաղաքական ուսմունքը:

Ֆաշիզմը 20-րդ հարյուրամյակի քաղաքական գաղափարախոսություն է, որը հենվում է նացիոնալիզմի և միլիտարիզմի վրա, ընդգծում է պետության դերը և անհատի լիակատար ենթարկումը նրա շահերին:

Ֆաշիզմի անունն առաջացել է իտալերեն “fascimo-fascio” բառից, որը նշանակում է փունջ, տրցակ, միավորում: Դա աջ ծայրահեղական սոցիալ-քաղաքական շարժումների, գաղափարախոսությունների ընդհանուր անվանումն է: Այդ տերմինը օգտագործվել է դեռևս 3ին Հռոմում որպես հեղինակության և արդարության խորհրդանիշեր: Ֆաշիզմը ձևավորվել է Իտալիայում (1919), ապա՝ 1930-ականներին տարածում գտել Եվրոպայում, հատկապես՝ Գերմանիայում: Հիտլերի կառավարման տարիներին Գերմանիայում ֆաշիզմն իր մեջ ներառեց նացիոնալիստական (ազգայնամոլական) սկզբունքներ և վերածվեց «նացիզմի»:

Ֆաշիզմին, իր տարբեր դրսևորումներով հանդերձ, ընդհանուր առմամբ, բնորոշ է՝ ժողովրդավարությանը հակադրել «նոր կարգուկանոն» և բռնությամբ հաստատել այդ կարգերը: Ֆաշիզմը հենվում է ժողովրդական զանգվածների, զանգվածային քաղաքական կուսակցության (որը իշխանության գալուց հետո վերածվում է պետական-մենաշնորհային կազմակերպության), արիմիությունների, ինչպես նաև առաջնորդի(ֆյուրեր, դյուչե, կաուդիլիո) անառարկելի հեղինակության վրա:

Զնայած որ ֆաշիզմի տիրապետության շրջանն ավարտվեց 1945 թ. դաշնակիցների հաղթանակով, սակայն ֆաշիզմը որպես գաղափարախոսություն չդադարեցրեց իր գոյությունը: Գրեթե բոլոր արևմտյան ժողովրդավարություններում կան ֆաշիստական ուսմունքի փոքրաքանակ հետևորդներ: Հարկավոր է պարզաբանել նաև ֆաշիզմի քաղաքական, գաղափարատեսական ժառանգություն-

նը, քանի որ այն դատարկ տեղում չի առաջացել և դեռևս չի անհետացել:

Ֆաշիզմի գաղափարական ակունքները

Ֆաշիզմը որպես ինքնուրույն տեսություն ձևավորվեց Առաջին համաշխարհային պատերազմից հետո, սակայն նրա արմատները կարելի է բացահայտել արդեն 19-րդ դարի սկզբներին: Լուսավորչության և Ֆրանսիական հեղափոխության արժեքների և գաղափարների դեմ որոշ փիլիսոփաներ ու այլ ոլորտի մտավորականներ սկսեցին տեսություններ մշակել, որոնք հետագայում կարող էին ֆաշիստական անունը ստանալ: Մասնավորապես ռացիոնալիզմի, լիբերալիզմի և ժողովրդավարության հակառակորդների շարքերում հայտնվեցին այնպիսի մտավորականներ, ինչպիսիք էին Ի. Գյոթեն, Ֆ. Շելլինգ և ուրիշներ: Նրանք ժխտում էին, թե մարդու բնույթը կարելի է բացատրել ընդհանուր օրենքներով և այն տարածված կարծիքը, թե քաղաքականությունը և տնտեսությունը պետք է ուղղորդվեն դեպի ժողովրդավարությունը և համընդգրկունը: Նրանք, հետագայում «ռոմանտիկներ» անունը ստացած մտավորականների հետ շեշտը դնում էին մացիոնալիզմի և ավանդույթների վրա և խիստ քննադատության էին ենթարկում արդեն ամուր հաստատվող նյութական արժեքների դերը հասարակական կյանքում:

Անգլիայում և Ֆրանսիայում 18-րդ դարում առաջին անգամ հայտնվեց մացիոնալիզմը կոնկրետ քաղաքական տեսության ձևով, որն, առաջին հերթին, նշանակում էր ժողովրդի ինքնակառավարում: Դա համայնքների և աճող ձեռներեցների ու կոմերսանտների լուծունգն էր ազնվական էլիտայի կառավարման դեմ, որին մեղադրում էին իշխանությունը ոչ թե ազգի, այլ զուտ իրենց անձնական շահերի համար օգտագործելու մեջ:

Ի տարբերություն մյուս քաղաքական տեսությունների՝ մացիոնալիզմը չունի «հիմնադիր հայր», ում գաղափարները կարող էին ոգևորության հիմք ծառայել հետնորդների համար: Ջոն Լոքքի լիբերալիզմի, Էդմունդ Բյորկի պահպանողականության կամ Կարլ Մարքսի կոմունիստական տեսությանը համարժեք մացիոնալիստական տեսաբան չկա:

Նացիոնալիստական տեսությունների հիմքում ընկած է այն համոզմունքը, որ մարդը հասարակական արարած է, որն իր բնավորությունը և ձգտումները ձեռք է բերում հասարակությունում:

Ֆրանսիայում և Գերմանիայում նացիոնալիզմը դուրս եկավ ընդհանուր ժառանգության և նույնականացման հաստատման սահմաններից և կամաց-կամաց սկսեց զարգանալ ռասիզմի ուղղությամբ:

Ֆրանսիայում Մորիս Բարրը (1862-1923) առաջ քաշեց «ռասիֆիկացիայի» տեսությունը, որի համաձայն երկրում կապ գոյություն ունի ներկայում ապրողների և մահացած քաղաքացիների միջև, դրանով իսկ առաջնային տեղ տալով «ազգ» հասկացությանը, որպես իրենց նախնիների ավանդույթներն ու արժեքները կրողների: Նրա և Ժոզեֆ դե Գոբինոյի գաղափարները (մշակել էր ի սկզբանե ռասաների անհավասարության մասին գաղափարը) ընկան պատմության մեջ առաջին լիարժեք ֆաշիստական կազմակերպություն համարվող «Ֆրանսիական գործողություն» կազմակերպության հիմքում: Այս շարժումը (1899) գլխավորում էին Ժորժ Սորելը և Ժորժ Վալուան, ովքեր որպես ազգի նոր միավորման միջոց, Ֆրանսիայի մեծությունը վերականգնելու համար առաջադրել էին պայքարը արտաքին և, որն ավելի կարևոր էր, ներքին թշնամիների դեմ: Ներքին գլխավոր թշնամիներ էին անվանում հրեաներին, որոնք Ժ. Սորելի կարծիքով, կապիտալիզմի դրսևորման նյութական և խորհրդանշական արտահայտությունները կրողներն էին: Հատկապես հեշտ էր հրեաների վրա զցել երկրի տնտեսական և քաղաքական պարտությունները ու քաղաքացիների կողմից ժողովրդավարական բարեփոխումներից հիասթափվածությունը: Չնայած այս շարժումը հաջողություն չունեցավ Ֆրանսիայում, սակայն իրենից հետո թողեց քիչ թե շատ կապված գաղափարների շղթա, որը հետագայում հիմք ծառայեց ծայրահեղ նացիոնալիզմի և պետական խիստ հսկողության գաղափարների համար: Որպես գաղափարական ուսմունք ձևավորվելով Ֆրանսիայում՝ ֆաշիզմը քաղաքական հաղթանակներ տարավ Իտալիայում և Գերմանիայում:

Գերմանիայում, ինչպես և Ֆրանսիայում նացիոնալիզմը նույնպես իր ժառանգության և ավանդույթների համար առողջ հպարտությունից անցավ դեպի ռասսիզմը, հակասեմիտիզմը, ապա նաև՝

Ֆաշիզմը: Գերմանական ֆաշիզմում նացիոնալիստ մտավորականների ազդեցությունն ավելի մեծ էր, քան Ֆրանսիայում: Ամեն ինչ սկսվեց գերմանացի աստվածաբան, պատմաբան, գրաքննադատ Յանս Յերդերի խաղաղ մտորումներից ավանդույթների, սովորույթների և զգացմունքների մասին: Ի տարբերություն ֆրանսիացի մտավորականների, որոնք երկար տարիներ ապրում էին քաղաքական անկախության և միասնական պետությունում, Յ. Յերդերը և նրա հայրենակիցները երկար տարիներ ապրում էին հարյուրավոր տարբեր պետությունների բաժանված ազգի պայմաններում: Ուստի, նա ֆրանսիական կոսմոպոլիտական մտածողությանը հակադրում է այն գաղափարը, որ ամեն մի ժողովուրդ ամեն մի դարաշրջանում ունեցել է սեփական մտածողության տեսակ և հայացք, սեփական զգացողություն և գործունեություն: Ելնելով դրանից՝ նա կարող է հասկանալի լինել և գնահատվել միայն սեփական չափորոշիչներով և ոչ թե ուրիշ կուլտուրայի արժեքների տեսանկյունից, առավել ևս ոչ ինչ-որ անդեմ, համընդգրկուն և բացարձակ չափորոշիչներով:

Յ. Յերդերը գտնում էր, թե կառավարման միակ բանական ձևը դա ազգային պետությունն է, որը ստեղծում է ժողովուրդը: Իհարկե, Յ. Յերդերի հայացքները բավարար չէին ամբողջական նացիոնալիստական տեսություն ստեղծելու համար, սակայն մեծ է նրա դերը նացիոնալիզմի տեսության ձևավորման մեջ: Նա առաջինը շրջանառության մեջ դրեց «նացիոնալիզմ» բառը և մանրամասն հիմնավորեց կոնկրետ կուլտուրական խմբին պատկանելու զգացմունքային կապի նշանակությունը, ինչպես նաև այն, թե ցանկալի է, որ քաղաքական իշխանությունը հենվի այդպիսի խմբերի վրա: Դրանով նա ազգային պետության տեսության հիմքերը դրեց:

Նացիոնալիստական մտքի զարգացման գլխավոր փուլերից է մեկ այլ գերմանացի մտածող Յոհան Ֆիխտեի (1762-1814) հայացքներն են: Նա հայտարարեց, որ անմիջական կապ գոյություն ունի լեզվի, մշակույթի և ազգի ձեռքբերումների միջև: «Հավերժության ծրագրով հերթական քայլը, որ պետք է անենք մենք, դա ազգի դաստիարակությունն է կատարյալ մարդ ստեղծելու ուղղությամբ», որի շնորհիվ նա կկարողանա բարձր կանգնել մյուսներից: Իր վերջին դասախոսությունում Յ. Ֆիխտեն արդեն խոսում էր «գերմանական ոգու» մա-

սին և ուղղակի ցուցում է տալիս, թե այն պետք է տարածվի Գերմանիայից և վերջիվերջո ղեկավարի աշխարհը: Ըստ նրա, պետությունը չպետք է ծառայի մասնավոր շահերին, այլ պետք է ծառայի ողջ ազգի շահերին: Այդպիսի պետությունը կանգնած է բարոյականության պաշտպանության դիրքերում, որի կրողը ժողովուրդն է: Ոչ թե իրավունքն է մարդուն ազատ դարձնում, այլ նրա բարոյականությունը, նրա համապատասխանությունը «ազգի ոգուն»:

Վերոնշյալ և այլ մտածողների գործերում արդեն որոշակիացվել էին նացիոնալիզմի՝ որպես քաղաքական տեսության բնույթը, արժանիքները և հնարավոր վտանգները, սակայն նրանք դեռևս չէին հասել սարսափելի տրամաբանական վերջին: Մնացել էր միավորել նացիոնալիզմը պետության հետ: Հատկապես դա կատարեց մյուս գերմանացի մեծ փիլիսոփան՝ Գ. Հեգելը:

Նրա մոտեցումները էական տարբերություն ունեն իր նախորդներից: Առաջին, նա գլխավոր շեշտադրումը կատարեց ազգային պետության արժանիքների վրա՝ որպես քաղաքական կազմակերպության ձևի, և ոչ թե նրա կուլտուրական նշանակության վրա: Գ. Հեգելը ենթադրում էր, որ առանձնահատուկ պայմաններում պետության կառավարողները կարող են բարոյական արդարացում ստանալ իրենց գործունեության համար, եթե այն կատարվել է հանուն պետության բարօրության: Սա մի նոր շունչ տվեց Ն. Մաքիավելու «Պետական նպատակահարմարության» տեսությանը, որը գրեթե մոռացության էր մատնվել:

Երկրորդ, Գ. Հեգելը Յ. Ֆիխտեի գերմանական ազգի հատուկ նշանակությունը փոխեց պատմական անխուսափելիությամբ: Նապոլեոնյան կայսրությունը փոխարինվելու է մեկ այլ փուլով, ազգային պետությունների փուլով: Այսպիսով՝ Հ. Հերդերի բարոյական և կուլտուրական ռեյաստիվիզմից (մեթոդոլոգիական սկզբունք գիտելիքի բավանդակության հարաբերականության և պայմանականության մետաֆիզիկական բացարձակացման մասին) պատմական հայացքները փոխակերպվեցին որոշակի անհետևողական Յ. Ֆիխտեյի, ապա՝ Գ. Հեգելի դիալեկտիկայի բարոյական որոշակիացմանը: Այսպես ստեղծվեցին ազգային պետությունների և նացիոնալիստական գաղափարախոսության գաղափարատեսական հիմքերը:

Ֆաշիզմի քաղաքական ուսմունքը

Ֆաշիզմի քաղաքական տեսությունը շարադրված է երկու հիմնական՝ Բ. Մուսոլինիի «Ֆաշիզմի ուսմունքը» և Ա. Յիտլերի «Իմ պայքարը» գրքերում: Առաջին աշխարհամարտը և նրան հետևած համաշխարհային տնտեսական ճգնաժամը, ինչպես նաև ձախ շարժումների վերելքը դարձան այն հիմնական դրդիչները, որ ցրված գաղափարները վերածվեցին ֆաշիզմի փոխկապակցված և ամբողջական քաղաքական տեսության:

Ստորև համառոտ ներկայացնենք նրա հիմնական տարրերը:

Նացիոնալիզմ - Իր արտահայտությունն է գտել ամեն մարդու հանդեպում այն, որ ազգը իրեն է պատկանում և որ ինքն իր հերթին պատկանում է ազգին: Չնայած վեճեր կան այն հարցի շուրջ, թե կարելի՞ է արդյոք այդ տեսակի նացիոնալիզմը համարել ֆաշիզմի գաղափարախոսության միջուկը, այնուամենայնիվ, ֆաշիզմի բոլոր տարբերակներում առկա է նացիոնալիզմը և մեծ դեր է խաղում պրակտիկ կյանքում: Ֆաշիզմի փիլիսոփայությունն ակնհայտ հակալիբերալ բնույթ ունի և նա ազգը դիտում է որպես սոցիալական և քաղաքական կյանքի կարևորագույն միավոր: Անհատը արժեք է ներկայացնում միայն այնքանով, որքանով որ ներդրում է կատարում ազգային հանրության ընդհանուր բարեկեցության և ծաղկման մեջ: Բոլոր ֆաշիստական տեքստերում առկա է նաև ազգային վերածննդի և նորացման գաղափարը: Ֆաշիստական տեսության մյուս բնորոշ կողմն այն է, որ նա ազգը դիտարկում է որպես մի մարմին, որն ունի սեփական իրավունքները, որպես մի մարմին, որն ի վիճակի է ապրել անկումներ ու վերելքներ: Դա նշանակում է, որ ազգը կազմող մարդիկ իրենց վրա պարտականություն են կրում հոգալ նրա բարեկեցության մասին, պաշտպանել նրան, այդ թվում՝ կյանքի գնով: Այդպիսի «ոչ լիբերալական նացիոնալիզմը» վերջիվերջո հանգեցնում էր ռասիզմին՝ «հարազատի» և «օտարի» բաժանելով ազգերը, սակայն դա ռասայական այլ խմբերի պարտադիր հետապնդմանը չէր հանգեցնում, չնայած որ այն տեղ գտավ Գերմանիայում և մասնակիորեն Իտալիայում ֆաշիստների իշխանության գալուց հետո:

Ծայրահեղ նացիոնալիզմը, որը հատուկ է ֆաշիզմին, նրա գլխա-

վոր նպատակի, այն է՝ «նոր կարգի» հաստատման հիմնավորումն էր տալիս:

Նացիզմ - ֆաշիզմի նացիստական մոդելը լրացվեց կեղծ գիտական բաղադրամասով, որը հիմնվում էր սոցիալ-դարվինիզմի տեսության վրա, որպեսզի հիմնավորի և օրինականացնի ռասսիզմը և անտիսեմիտիզմը: Չնայած անգլիացի բնագետ Չ.Դարվինի ծնակերպած միտքը՝ «գոյատևում է ուժեղը» վերաբերում էր կենդանական աշխարհին, այն դարձրել էին ֆաշիստական տեսության մաս: Գերմանիայում նացիստական վարչակարգը սկսեց բնական ընտրություն կատարել իր սեփական չափանիշներով որոշելով, թե ով է արժանի լինել «նոր կարգի» մաս:

«Նոր կարգի» ստեղծումը – Հասարակությունը փոխակերպելու համար հարկավոր էր ներդնել «նոր կարգի» որոշակի չափանիշներ: Ֆաշիզմը գլխավորապես հենվում էր ուժեղ ավտորիտար պետության և զանգվածային քարոզչության վրա: Դրանք փոխադարձաբար իրար ուժեղացնելու արդյունք էին տալիս, քանի որ քարոզչությունը նպաստում էր տոտալիտար վարչակարգի տիրապետությանը, իսկ վերջինս իր հերթին ուժեղացնում էր անհատների կյանքի վրա հսկողությունը՝ ուժեղացնելով քարոզչության ազդեցության արդյունավետությունը:

Նացիստները հենվում էին հոգեբանական տեսությունների, մասնավորապես Գուստավ Լեբոնի (1841-1931) ամբոխի վարքի և հոգեբանության հետազոտությունների վրա, ինչպես նաև շատ արդյունավետ օգտագործում էին խորհրդանիշերի և ավանդույթների պարզունակ միջոցների կիրառման հետևանքները: Դրա շնորհիվ, չստեղծելով համակարգված և բանական տեսություն, ֆաշիզմը կարողացավ իր կողմը գրավել մարդկանց ահռելի բանակներ: Ֆաշիզմը կարողացավ օգտագործել նաև խարիզմատիկ առաջնորդներին, որոնք ֆյուրեր, դյուչե և այլ վերամբարձ կոչումներն էին կրում:

Ընդդիմության նկատմամբ քաղաքականությունը – Ֆաշիստական բոլոր տեսակի ընդդիմության ոչնչացման սկզբունքը դա լիբերալ գաղափարների դեմ թշնամանքի ևս մեկ դրսևորումն է: Ֆաշիստական պետությունը բացառում էր լիբերալիզմի բոլոր գաղափարները, այսինքն՝ բազմակարծությունը, անհատականությունը,

պառլամենտական ժողովրդավարությունը և «մարդու բնական իրավունքի» տեսությունները: Կենտրոնացված միակուսակցական պետությունն այն հիմքն էր, որի վրա ֆաշիզմը ծրագրավորում էր կառուցել «նոր կարգը»:

«Երրորդ ճանապարհ» - Ֆաշիզմը և կոմունիզմը մեկ ընդհանուր գաղափարական թշնամի ունեին՝ կապիտալիզմը, ուստի որոշ հետազոտողներ կարծում են, որ ֆաշիզմը «Երրորդ ճանապարհի» յուրահատուկ գաղափարի կրողն էր, որը գտնվում էր կապիտալիզմի և կոմունիզմի արանքում: Ֆաշիզմն իր բոլոր դրսևորումներում կորպորատիվիզմի կողմնակիցն էր, սակայն երբեք հանդես չէր եկել դասակարգային հակամարտության գաղափարի դեմ: Նա կողմնակից չէր նաև կապիտալիստական այն գաղափարին, որ տնտեսական շահագրգռվածությունն է ազգի հաջողության բանալին: Նրանք կարծում էին, թե դասակարգային պայքարը պետք է միջազգային ասպարեզ հանել՝ դարձնելով պայքար հարուստ և աղքատ ազգերի միջև, իսկ ներքին կյանքում անհրաժեշտ է ազգային միասնություն ընդհանուր լեզվի, մշակույթի, ռասայի և ավանդույթների հիմքի վրա: Ֆաշիզմը թույլ էր տալիս մասնավոր սեփականության գոյությունը: Նրա տնտեսական քաղաքականությունը կառուցվում էր սեփականատերերի, բանվորների և պետության համագործակցության սկզբունքի վրա, որոնք համատեղ ստեղծում են սինդիկատներ և կորպորացիաներ: Իրականում բանվորների շահերի վրա լուրջ ուշադրություն չէին դարձնում, իսկ արհմիությունները վերածվել էին պետական մարմինների և չէին արտահայտում նրանց շահերը: Միաժամանակ սեփականատերերը օգտվում էին պետության երաշխիքներից և ապահովվում էին պետական պատվերներով: Դրան կարելի է ավելացնել պայքարը գործազրկության դեմ (մարդկանց ներգրավում էին ճանապարհների շինարարության և ենթակառուցվածքային այլ աշխատանքների մեջ): Հենց այս ամենի ամբողջությունը Գերմանիայում անվանվեց «նացիոնալ-սոցիալիզմ»:

Միլիտարիզմ - Ֆաշիզմը և միլիտարիզմը հաճախ հանդես են գալիս որպես հոմանիշներ: Ֆաշիզմի համար ռազմական ուժը և հաղթանակները պատերազմի դաշտում ընկած էին անձնական և ազգային նույնականացման կենտրոնում: Դրանց շնորհիվ էր, որ կարելի էր

հաստատել հերոսական «նոր կարգը»: Սրանով է նաև հիմնավորվում ֆաշիստների արտաքին քաղաքականության ագրեսիվությունը նոր «կյանքի տարածքներ» գրավելու նրանց մոլուցքը, որը հնարավոր դարձավ կանխել դաշնակիցների մեծ ջանքերի շնորհիվ:

Խարիզմատիկ առաջնորդ - Առաջնորդը ֆաշիստների համար դիտարկվում էր որպես «կենդանի աստված» և Հիտլերը «հաստատելով» այդ մոտեցումը խոստանում էր փոխել աշխարհը: Նրա ուժը և ազդեցությունը ոչ այնքան կոնկրետ բառերի մեջ էին, որքան այն զգացողության տարածման մեջ, որ «մենք մի ընդհանուր հանրույթ ենք ֆյուրերի գլխավորությամբ» և որ մենք՝ առանձին վերցրած «գերմարդիկ» ենք: Հանուն դրա մարդը պատրաստ էր գնալու ամեն մի քայլի, իսկ իրականում դա տանում էր ինքնառնչացման: Այդպիսի մարդու ապագան վախեցնում էր անգամ իրեն՝ Ա. Հիտլերին, որը գրել է. «Ես տեսել եմ նոր մարդու կերպարը՝ անխիղճ և սարսափելի: Նա ինձ մոտ դող առաջացրեց»:

Երկրորդ աշխարհամարտում Գերմանիայի և Իտալիայի պարտությունից հետո ֆաշիզմը չի անհետացել քաղաքական քարտեզից: Նեոֆաշիստները վերանայել են իրենց շատ գաղափարները և դրանք ավելի մեղմ ձևերով են քարոզում, քան իրենց նախորդները: Չնայած որպես շարժում այն մարգինալ(սահմանային) բնույթ ունի, սակայն ֆաշիզմի շատ գաղափարներ մտնում են այլ կուսակցությունների և շարժումների քաղաքական ծրագրերի մեջ, հատկապես՝ ծայրահեղ աջ ուղղվածություն ունեցողների: Մեր ժամանակներում այն հաճախ ներկայանում է հակամիգրացիոն գաղափարախոսության և հակազլոբալիզմի տեսքով:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

Ներկայացնել՝

1. Ֆաշիզմի գաղափարական ակունքները:
2. Ֆաշիզմի քաղաքական ուսմունքի հիմնական տարրերը:

Գրականություն

1. **Արոն Բ.**, Демократия и тоталитаризм// Антология мировой политической мысли в 5 томах, т. 2, с. 508-523.
2. **Алексеева Т. А.**, Современные политические теории, МГИМО, 2007.
3. **Дегтяров А. А.**, Основы политической теории, М., 2000.

Գլուխ 8. ԿԱՐԼ ՄԱՐՔՍԸ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

*Կարլ Մարքսի ֆաղափական տեսությունը:
Մարքսիզմի զարգացումը Կ. Լենինի կողմից:
Սալիսիզմի ֆաղափական տեսությունը:*

Կարլ Մարքսի քաղաքական տեսությունը:

Մարքսիստական քաղաքական տեսությունը կարևոր տեղ է գրավել և այժմ էլ կարևոր տեղ ունի հասարակության մտավոր կյանքում: Մարդկային պատմության մեջ թերևս չի եղել այնպիսի մի գիտական տեսություն, որն այդպիսի մեծ ազդեցություն է թողել սոցիալական և հումանիտար գիտելիքների բոլոր ոլորտների վրա: Մարքսիստական տեսությունը զարգացել է 19-20-րդ դարաշրջանների ողջ ընթացքում և հետաքրքրություն է ներկայացնում շատ քաղաքական տեսաբանների համար և մեր ժամանակներում:

Մարքսիզմը տնտեսական, սոցիալ-քաղաքական և փիլիսոփայական հայացքների համակարգ է, որը սկսել է ձևավորվել 19-րդ դարի 40-ական թվականներին Գերմանիայում: Հիմնադիրներն են Կարլ Մարքսը և Ֆրիդրիխ Էնգելսը:

Կարլ Մարքս (1818-1883) - Գերմանական տնտեսագետ, քաղաքական փիլիսոփա, բանվորական և կոմունիստական շարժման տեսաբան ու ակտիվ մասնակից: Կ. Մարքսը արագացված ընթացակարգով ավարտել է Բեռլինի համալսարանը և 1941 թ. պաշտպանելով ատենախոսությունը՝ ստացել փիլիսոփայության դոկտորի աստիճան: Նա մշակել է պատմության մատերիալիստական հայեցակարգը, հասարակության զարգացումը մեկնաբանելով որպես բնապատմական գործընթաց և այլն: Կ. Մարքսի հիմնական երկերն են «Կոմունիստական կուսակցության մանիֆեստը» (Ֆ. Էնգելսի հետ համահեղինակ, 1848), «Լուի Բոնապարտի բրյուների տասնուրը» (1852),

«Գոթայի ծրագրի քննադատությունը (1875), «Կապիտալ» (հի. 1, 2, 3, 1867, 1894) և այլն:

Ֆրիդրիխ էնգելս (1820-1895) - Գերմանացի փիլիսոփա, քաղաքական տեսաբան, տնտեսագետ, մարքսիզմի հիմնադիրներից մեկը, կոմունիստական ու բանվորական շարժումների ակտիվ մասնակից և տեսաբան: Նրա հիմնական աշխատություններն են «Կոմունիստական կուսակցության մանիֆեստը» (Կ.Մարքսի հետ համահեղինակ, 1848), «Անտի-Պյուրինգ» (1878), «Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը» (1884) և այլն:

Մարքսիստական տեսությունը հասարակությունը դիտարկում է որպես ամբողջական և անընդհատ զարգացող սոցիալական համակարգ և հասարակության զարգացումը բացատրում է հիմնականում տնտեսական գործոնով: Հասարակության կառուցվածքում ընդգրծում է արտադրողական ուժերի և արտադրական հարաբերությունների (բազիսի) վճռորոշ դերը հասարակական կյանքի մյուս ոլորտների՝ քաղաքականության, իրավունքի, բարոյականության և այլնի (վերնաշենքի) համեմատ («Նյութական կյանքի արտադրության եղանակը պայմանավորում է կյանքի սոցիալական, քաղաքական և հոգևոր գործընթացները»): Այդ տեսության համաձայն «հասարակական կեցություն է որոշում հասարակական գիտակցությունը»: Մարքսիզմի հիմնարար հասկացություններից է հասարակական-տնտեսական հասարակարգի (ֆորմացիայի) հասկացությունը՝ որպես հասարակության զարգացման որոշակի փուլ: Արտադրողական ուժերի զարգացման շնորհիվ դրանք հակասության մեջ են մտնում արտադրական հարաբերությունների հետ, որը հանգեցնում է սոցիալական հեղափոխության, այսինքն մի հասարակարգից անցում է կատարվում մեկ այլ՝ զարգացման ավելի բարձր աստիճանում գտնվող հասարակարգի: Հեղափոխության շարժիչ ուժը դասակարգային պայքարն է, որն ի վերջո կապիտալիզմի փուլում հանգեցնում է սոցիալիստական հեղափոխության և պայմաններ է ստեղծում կոմունիստական՝ անդասակարգ հասարակության հաստատման համար: Մինչ կոմունիզմի անցումը հաստատվում է անցումային պրոլետարական դիկ-

տատուրա: Հեղափոխություն կատարելու և իշխանությունը գրավելու համար բանվոր դասակարգը պետք է ստեղծի քաղաքական կուսակցություն: Կուսակցական քաղաքական պայքարը մարքսիզմի տեսության մեջ դա անհատական, կուսակցական, դասակարգային և պետական շահերի բախումն է: Ըստ մարքսիզմի՝ կապիտալիզմից անցումը սոցիալիզմի հնարավոր է միաժամանակ արդյունաբերական զարգացած երկրներում: Մարքսիզմի ուսմունքում կարևորվում է պետությունն իբրև քաղաքական ինստիտուտ, որն առաջացել է հասարակության զարգացման որոշակի աստիճանում: Պետությունը դիտելով որպես աշխատանքի հասարակական բաժանման, մասնավոր սեփականության և դասակարգերի առաջացման արդյունք՝ եզրահանգում է կատարվում, որ կոմունիզմի ժամանակ դասակարգերի, մասնավոր սեփականության վերացման հետ պետությունը աստիճանաբար կմահանա: Ի տարբերություն Գ.Հեգելի՝ մարքսիզմը պնդում է, որ ոչ թե պետությունն է որոշում քաղաքացիական հասարակությունը, այլ հակառակը, քաղաքացիական հասարակությունն է պայմանավորում պետությունը:

Մարքսիզմը իբրև զուտ տեսական համակարգ կառուցված է կուռ տրամաբանությամբ: Հիմնվելով տնտեսական հարաբերությունների փոփոխությունների վրա՝ այն տալիս է հատկապես եվրոպական հասարակությունների զարգացման ընդհանուր պատկերը և ուղղվածությունը:

Մարքսիստական տեսության արմատները հասնում են հին հունական մտածող Պլատոնին, սոցիալիստ ուտոպիստներին (Թոմաս Մոր, Շարլ Ֆուրյե, Ռոբերտ Օուեն), ժան ժակ Ռուսոյին, անգլիական քաղաքատնտեսությանը (Ադամ Սմիթ) և հատկապես՝ գերմանական «դասական» փիլիսոփաներին, որոնցից առավել օգտագործվել են Գ. Հեգելի և Լ. Ֆոյերբախի փիլիսոփայական աշխատությունները:

Մարքսիզմի զարգացումը Վ. Լենինի կողմից

Վլադիմիր Լենինը (Ուլյանովը-1870-1924) մարքսիստական տեսաբան է, միջազգային և ռուսական բանվորական շարժման առաջնորդն, ով ղեկավարեց Ռուսաստանի 1917 թվակա-

նի Հոկտեմբերյան-սոցիալիստական հեղափոխությունը և դարձավ Խորհրդային պետության հիմնադիրը: Նա պրակտիկայում «փորձարկեց» մարքսիզմի տեսությունը և իր կարևոր ներդրումը կատարեց մարքսիստական քաղաքական տեսության մեջ: Նրա բազմաթիվ աշխատություններից կարելի է առանձնացնել քաղաքագիտական միտքը հարստացնող հետևյալ գործերը. «Կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում (1899), «Մարքսիզմի երեք աղբյուրները և երեք բաղկացուցիչ մասերը» (1913), «Իմպերիալիզմը որպես կապիտալիզմի բարձրագույն ստադիա» (1916), «Պետություն և հեղափոխություն» (1917) և այլն:

Վ. Լենինը քաղաքականությունը համարում էր միջդասակարգային հարաբերությունների ոլորտ և պրոլետարական հեղափոխության նախապատրաստման արվեստ: Բանվոր դասակարգի հաղթանակի անհրաժեշտ պայմանը նա համարում էր կոմունիստական կուսակցությունը, որը նրա ավանգարդի դերն է կատարում: Կուսակցության նպատակն է «լուսավորել» ու «կազմակերպել» բանվոր և մյուս շահագործվող դասակարգերը բուրժուազիայի դեմ պայքարում, հաստատել պրոլետարիատի դիկտատուրա և ապահովել անցումը սոցիալիզմին, ապա փոխարինելով այն սոցիալիստական ժողովրդրականությանը՝ նաև կոմունիզմին, այսինքն՝ անդասակարգ հասարակությանը: Ըստ Վ. Լենինի՝ մինչսոցիալիստական շրջանում ձևավորված ժողովրդավարությունը, ազատություններն ու իրավունքները, հումանիզմի սկզբունքները և այլն սոսկ իշխող դասակարգի (բուրժուազիայի) դիկտատուրայի իրականացման, դա արտաքուստ ուշագրավ հատկանիշներով քողարկելու, աշխատավոր զանգվածներին մոլորության մեջ քցելու ու պետության շահագործողական բնույթը թաքցնելու միջոցներ են:

Նա պրոլետարական դիկտատուրայի, աշխատավորներին քաղաքական կյանքի մեջ ներգրավելու պետական ձև ընդունեց Խորհրդային հանրապետությունը: Նրա կարծիքով՝ Խորհրդային հանրապետությունը զուգորդում է պետական և հասարակական կազմակերպության գծերը, ներկայացուցչական ու անմիջական ժողովրդավարության տարրերը:

Վ. Լենինը մարքսիզմի քաղաքական տեսության ինքնատիպ մեկնաբանն ու զարգացնողն է, դրա գործնական կիրառողը պատմական նոր պայմաններում: Նա գտնում էր, որ կապիտալիզմը թևակոխել է իր զարգացման բարձրագույն ու վերջին՝ իմպերիալիստական փուլը, ինչը վկայում է դրա կործանման սկիզբը և սոցիալիստական հեղափոխության նախաշեմը: Իմպերիալիզմի փուլում «մոնոպոլիստական կապիտալիզմը» ստեղծել է միջազգային շուկա, խորացրել է աշխատանքի հասարակական բաժանումը և զարգացրել արտադրողական ուժերը, որոնք սոցիալիստական հեղափոխության անհրաժեշտ նյութական պայմաններն են: Իսկ առաջին համաշխարհային պատերազմի վերածումը քաղաքացիական պատերազմի՝ ուղղված սեփական կառավարությունների դեմ, նրա կարծիքով, կարող է էապես խթանել իմպերիալիզմի տապալմանը, համաշխարհային հեղափոխության բռնկմանը: Այդ հեղափոխական գործընթացում Վ. Լենինն առաջնային դեր էր հատկացնում Ռուսաստանին՝ որպես իմպերիալիզմի շղթայի ամենաթույլ օղակին:

Ստալինիզմի քաղաքական տեսությունը

Խորհրդային կոմունիստական մոդելի ձևավորման վրա հսկայական ազդեցություն է ունեցել Իոսիֆ Ստալինը:

Իոսիֆ Ստալին (Ջուզաշվիլի- 1879-1953) – Կոմունիստական կուսակցության և Խորհրդային պետության առաջնորդ: Ծնվել է Վրաստանի Գորի քաղաքում, սովորել Թբիլիսիի հոգևոր ծեմարանում: Ռուսաստանի հեղափոխական շարժման ակտիվ մասնակից:

1930-ական թվականներին տեղի ունեցավ «երկրորդ հեղափոխությունը», որի իմաստը այն է, որ ԽՍՀՄ փաստացի ղեկավար Ի.Ստալինը պաշտպանեց դեռևս 1924 թ. խորհրդային երկրի ղեկավարներից մեկի՝ Բուխարինի կողմից առաջ քաշած այն թեզը, որ հնարավոր է սոցիալիզմի կառուցումը մեկ առանձին երկրում: Այդ թեզի բովանդակությունը նրանում էր, որ ԽՍՀՄ-ը սկսում է սոցիալիստական հասարակության կառուցումը առանց սպասելու համաշխարհային հեղափոխությանը: Դա նորություն էր մարքս-լենինյան

տեսության համար, քանի որ այն պնդում էր համաշխարհային միա-
ժամանակյա հեղափոխության մասին: Ռուսաստանի հեղափոխությ-
յունը այդ հեղափոխության առաջին քայլն էր, ուստի այդ պայման-
ներում առաջնությունն ազգային տնտեսության զարգացման վրա
ուղղվելը իրոք հեղափոխական քայլ էր:

Ինչպես հայտնի է, 1921 թ. Վ. Լենինի նախաձեռնությամբ կիրառ-
վում էր Նոր տնտեսական քաղաքականությունը (ՆԵՊ), որի ժամա-
նակ զարգանում էր խառը տնտեսությունը, որտեղ գյուղական տնտե-
սությունները և մանր արտադրությունը գտնվում էին մասնավոր
ձեռքերում, իսկ պետությունը վերահսկում էր «տնտեսությունը հրա-
մանատարական բարձրունքներից» (Վ. Լենին): 1928 թ. Ի.Ստալինը
հայտարարեց Առաջին հնգամյա պլանը, որը նախատեսում էր երկրի
արագ ինդուստրացում: Այս գյուղում սկսվեց զանգվածային կոլեկ-
տիվացումը, վերջնականապես հաստատվեց «պետական սոցիալիզ-
մը» ժողտնտեսության բոլոր ոլորտներում: Կապիտալիստական շու-
կան լիովին ոչնչացվեց և փոխարինվեց կենտրոնական կառավար-
ման համակարգով:

Տնտեսության մեջ տեղի ունեցող հիմնարար փոփոխություննե-
րը իրենց հետ բերեցին խոշոր քաղաքական փոփոխություններ:
Կուսակցական գործիչները սկսեցին նշանակվել «վերևից» և ոչ թե
ընտրվել «ներքևից», ինչպես կատարվում էր նախկինում: Ժողովրդ-
դավարական կենտրոնացումը, որը մտցրել էր Վ. Լենինը, դարձավ
ավելի քիչ ժողովրդավարական և ավելի կենտրոնացված, ինչը հան-
գեցրեց «իշխանության շրջապտույտին»: 1930-ականներին մի քա-
նի անգամ կուսակցության շարքերի «զտումներ» անցկացրին, որը
հնարավորություն տվեց ազատվելու բոլոր կասկածյալներից և նոր
կանոնների հետ չհամաձայնվողներից:

Ստալինից մեծ վերածվեց ամբողջատիրական (տոտալիտար) դիկ-
տատուրայի, որը իրագործվում էր միաձույլ կառավարող կուսակցու-
թյան միջոցով, որտեղ վերջ տրվեցին բոլոր տեսակի բանավեճերն և
քննադատությունը, հաստատվեց Ստալինի «անձի պաշտամունքը»:

**Իր տեսական աշխատություններում՝ «Լենինի գմի հիմքե-
րի մասին», «Լենինի գմի հարցերի մասին», Ի. Ստալինը տվեց
պրոլետարական դիկտատուրայի ընդարձակ բնութագիրը:** Նրա

կարծիքով՝ «Լենինիզմը դա ընդհանրապես պրոլետարական հեղափոխության տեսությունն է և պրակտիկան» կամ «Լենինիզմի հիմնական հարցը, նրա հենակետը և հիմքը պրոլետարիատի դիկտատուրայի մասին է»։ Պրոլետարական դիկտատուրայում Ի.Ստալինը նշում էր այնպիսի կողմերը, ինչպիսիք էին իշխանությունը, բռնությունը, ճնշումը, պարտադրումը. «պրոլետարիատի դիկտատուրա երևույթը չի սահմանափակվում օրենքներով»։

Ստալինին է պատկանում նաև այն գաղափարը, որ սոցիալիզմի ամրապնդմանը զուգընթաց ուժեղանում է դասակարգային պայքարը, ինչը դարձավ չհամաձայնողների նկատմամբ բռնությունների գաղափարական ու տեսական հիմնավորումը։ 1937 թ. հնչեցրած իր մի զեկուցման մեջ Ի. Ստալինը ասում էր, թե քանի դեռ գոյություն ունի կապիտալիստական շրջապատը, կլինեն և վնասարարներ, խափանարարներ, լրտեսներ, որոնց Խորհրդային Միության թիկունք են ուղարկում արտասահմանյան երկրների հետախուզական մարմինները։

Ստալինի քաղաքական-տեսական մտածողության յուրահատկությունը դա անողոք դասակարգային պատերազմի միացումն էր ռուսական ազգայնամոլության հետ։

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

Ներկայացնել՝

1. Կ. Մարքսի քաղաքական տեսությունը։
2. Մարքսիզմի զարգացումը Վ. Լենինի կողմից։
3. Ստալինիզմի քաղաքական տեսությունը։

Գրականություն

1. **Соловьев А. И.**, Политология. Политическая теория. Политическая технология, М., 2000.
2. **Մարքս Կ., Էնգելս Ֆ.**, Կոմունիստական կուսակցության մանիֆեստ, Եր., 1967։
3. **Լենին Վ.**, Իմպերիալիզմը՝ որպես կապիտալիզմի բարձրագույն ստադիա, Եր., 1962։ 4. Լենին Վ., Պետություն և հեղափոխություն, Եր., 1956։
5. **Մանուկյան Ա. Ս.**, Քաղաքական բռնաճնշումները Հայաստանում 1920-1953 թթ., Եր., 1999։

Գլուխ 9. ՆԵՈՍԱՐՔՍԻԶՄ

**Սոցիալ-ժողովրդավարություն: Անտոնիո Գրամշիի
սոցիալ-ժողովրդավարությունը: Նիկոս Պուլանգասի,
Քնադատական («Ֆրանկֆուրտյան դպրոց») և
Յուրգեն Հաբերմասի տեսությունները:**

Մեր օրերում դժվար է պատասխանել այն հարցին, թե ու՞մ կարելի է ժամանակիցներից անվանել մարքսիստ: Այս հարցի պատասխանը փորձել է տալ հունգարացի մարքսիստ փիլիսոփա Դ. Լուկաչը (1885-1971) իր «Պատմությունը և դասակարգային պայքարը» աշխատության մեջ: «Բոլորովին պարտադիր չէ մարքսիստ լինելը, բավական է միայն արտաբերել մեկ մարքսիստական տեսակետ և քեզ անպայման մարքսիստ կանվանեն», - գրում է նա: Այդ եզրահանգումն արդիական է նաև մեր ժամանակներում:

Երբ մարքսիզմը (մարքսիզմ-լենինիզմը) կամաց-կամաց սեկուլյար (աշխարհական) կրոնի էր վերածվում, որը բացառում էր նոր դոկտրինաներն ու տեսական բանավեճը, Արևմուտքում զարգանում էր մարքսիզմի նոր, ավելի բարդ ձևը, որը երբեմն անվանում են «արևմտյան մարքսիզմ», «նեոմարքսիզմ» կամ «ժամանակակից մարքսիզմ»: Այն իրենից ներկայացնում էր մարքսիզմի մի շարք «դասական» դրույթների վերաիմաստավորումը՝ միաժամանակ պահպանելով հավատարմությունը նյուս մարքսիստական սկզբունքներին կամ Կ. Մարքսի մեթոդաբանական սկզբունքներին:

Ժամանակակից մարքսիզմի վրա առանձնահատուկ ազդեցություն բողեցին երկու գործոն: Երբ Կ. Մարքսի կանխատեսումը կապիտալիզմի անխուսափելի կործանման մասին չիրականացավ, ժամանակակից մարքսիստները ստիպված էին վերանայել հակամարտության մասին ավանդական մեկնաբանությունը: Նրանք կրկին դիմեցին Գ. Հեգելի և Կ. Մարքսի այն գաղափարներին, որ «մարդը ստեղծագործող է», որը նշանակում էր, թե մարդը պատմության կերտողն է և ոչ թե անդեմ նյութական ուժերի խամաճիկը (մարիոնետկան): Դրանով նրանք կարողացան դուրս գալ հիմքի և վերնաշենքի հարաբերությ-

յունների մասին կարծի ձևակերպումից: Երկրորդ, ժամանակակից մարքսիստները չընդունեցին սոցիալիստական հասարակության ավտորիտար բնույթը և անգամ նրա գիտական ու ճշմարիտ լինելու հավակնությունը:

Սոցիալ - ժողովրդավարություն

«Սոցիալ-ժողովրդավարություն» եզրը մի քանի մեկնաբանություններ ունի: Նրա նախնական իմաստը կապված էր օրթոդոքսալ (ուղղափառ) մարքսիզմի հետ և նեղ իմաստով ենթադրում էր քաղաքական ժողովրդավարության հետ տարանջատում ու արտադրողական հարստության կոլետիվացման ավելի ծայրահեղ խնդիր էր դնում: 19-րդ դարի վերջերին մարքսիստական կուսակցությունները, սովորաբար, իրենց սոցիալ-ժողովրդավարական էին անվանում: 20-րդ հարյուրամյակի սկզբին նրանցից մի քանիսը գերադասեցին հեղափոխական պայքարի ակտիվության պառլամենտական ձևը և սկսեցին անդել սոցիալիզմին անցնելու էվոլյուցիոն ճանապարհի անհրաժեշտության մասին: Կամաց-կամաց սոցիալ-ժողովրդավարություն հասկացությունը սկսեցին նույնացնել ժողովրդավարական սոցիալիզմի հետ: Ռուսաստանի Յոկտեմբերյան հեղափոխությունից հետո սոցիալ-ժողովրդավարական ռեֆորմիստական կուսակցություններից տարբերվելու նպատակով՝ հեղափոխական կողմնորոշում ունեցող շատ սոցիալ-ժողովրդավարներ սկսեցին իրենց անվանել «կոմունիստներ»: Վերջնական տարանջատումը տեղի ունեցավ 20-րդ դարի երկրորդ կեսին, երբ սոցիալ-ժողովրդավարական կուսակցությունների մեծ մասը ոչ միայն հաստատեց իր պառլամենտական մարտավարությունը, այլև սկսեց հիմնարար ձևով վերանայել իրենց սոցիալիստական նպատակները: Օրինակ՝ արևմտյան սոցիալ-ժողովրդավարները այլևս չէին ձգտում կապիտալիզմի ոչնչացմանը, այլ ցանկանում էին այն ավելի մարդկային դարձնել և կատարելագործել:

Արդյունքում՝ սոցիալ-ժողովրդավարները կենտրոնական դիրք գրավեցին շուկայական տնտեսության և պետական միջամտության կողմնակիցների մեջ: Այդ մոտեցումը ավելի բնութագրական է, այսպես կոչված՝ ռեֆորմիստական (բարեփոխիչ) սոցիալիզմին:

Սոցիալ-ժողովրդավարներին հատուկ են հետևյալ հիմնական գաղափարները՝

- սոցիալ-ժողովրդավարներն ընդունում են լիբերալիզմի սկզբունքները, առաջնորդվում են նրանով, որ քաղաքական փոփոխությունները կարող են և պետք է իրագործվեն խաղաղ ճանապարհով՝ եղած սահմանադրությունների շրջանակներում:
- կապիտալիզմն ընկալվում է որպես հարստություն ստանալու միակ միջոց, ուստի այդ պատճառով՝ սոցիալիզմը որակական տարբերություն չունի կապիտալիզմից:
- կապիտալիզմը դիտարկվում է որպես բարոյապես վնասակար համակարգ, հատկապես այն, թե ինչպես է բաշխում հարստությունը: Կապիտալիզմը կառուցվածքային անհավասարության և աղքատության զգացողություն է բերում:
- կապիտալիզմի արատները կարող են ուղղվել պետության կողմից տնտեսական և սոցիալական ինժեներիայի գործընթացի միջոցով: Պետությունը դա հասարակական կամ ընդհանուր շահերի արտահայտությունն է:
- քաղաքական կառավարման տեսակետից ազգային պետությունն իմաստ ունի այն առումով, որ իր սահմաններում պետությունը ունի տնտեսական և սոցիալական կյանքի կարգավորման ներուժ:

Սոցիալ-ժողովրդավարությունը առավել առաջընթաց ապրեց Երկրորդ աշխարհամարտից հետո: 1970-1980-ական թվականներից այն որոշ անկում ապրեց՝ հանդիպելով մրցակցության ռեֆորմիստական լիբերալիզմի հետ: Արդյունքում, որոշ սոցիալ-ժողովրդավարական կուսակցություններ ստիպված եղան ինչ-որ չափով ձևափոխել իրենց ուսմունքի տեսական հիմքերը: Առաջ եկան «մոդեռնիստական» սոցիալ-ժողովրդավարություն, «ժայռահեղ-կենտրոնական» սոցիալ-ժողովրդավարություն, «երրորդ ճանապարհի», «ակտիվ կենտրոնի» սոցիալ-ժողովրդավարություն և այլն: Ամեն դեպքում, ժամանակակից սոցիալ-ժողովրդավարության փոխհարաբերության հարցերը «դասական»-ի հետ դարձել են ակադեմիական և քաղաքական սուր բանավեճերի առարկա:

Սկզբնական շրջանում սոցիալ-ժողովրդավարության նպատակը համարվում էր այն, որ արտադրված ողջ հարստությանը մարդիկ պետք է միասին տիրապետեն և այն պետք է օգտագործվի բոլորի բարօրության համար: Դա ենթադրում էր մասնավոր սեփականության ոչնչացում և սոցիալական հեղափոխություն, որի արդյունքում պետք է անցում կատարվեր արտադրության կապիտալիստական ձևերից՝ սոցիալիստականին: Հիմնարար սոցիալիզմի կողմնակիցները համոզված էին, որ կապիտալիզմը հնարավոր չէ շտկել, քանի որ դա դասակարգային շահագործման և ճնշման համակարգ է, ուստի սկզբունքորեն պետք է ոչնչացվի և ոչ թե պարզապես բարեփոխվի:

Դեռևս 19-րդ դարի վերջերին սոցիալ-ժողովրդավարներից ոմանց մոտ կասկած առաջացավ, որ Կ. Մարքսի վերլուծության մեջ կան նաև թերություններ: Այդ մոտեցման ամենապարզ տեսական հիմնավորումը տրվեց Էդուարդ Բերնշտեյնի «Սոցիալիզմի էվոլյուցիան» գրքում, որը հրապարակվեց 1898 թ.: Նա մերժեց Կ. Մարքսի վերլուծական մեթոդը՝ պատմական մատերիալիզմը, քանի որ նրա կանխատեսումները չէին իրականանում: Է. Բերնշտեյնի վերլուծությունը հիմնականում էմպիրիկ բնույթ ուներ: Նրա կարծիքով, կապիտալիզմը ապացուցել է իր կայունությունն ու ճկունությունը: Փոխանակ երկու հականախող՝ բուրժուական և պրոլետարական մեծ դասակարգեր առաջանային, նրա կարծիքով, տեղի է ունենում կապիտալիստական համակարգի մշտական բարդացում և դասակարգային հարաբերությունների տարբերակում: Բազմաթիվ բաժնետիրական հանրույթների ստեղծմամբ շատացել է սեփականատերերի քանակը և անհատ ազդեցիկ սեփականատիրոջ կերպարը մնացել է անցյալում: Արագ աճեց «միջին խավը», որը գտնվում է պրոլետարիատի և բուրժուազիայի արանքում: Ուստի Է. Բերնշտեյնը եզրակացնում է, որ կապիտալիզմն այլևս զուտ դասակարգային շահագործման հասարակություն չի: Այստեղից հետևում է, որ կապիտալիզմը կարելի է բարեփոխել արտադրության առաջատար միջոցներն ազգայնացնելու և բանվոր դասակարգի իրավական պաշտպանությունը և սոցիալական ծրագրերն ընդլայնելու միջոցով: Այդ գործընթացը կարելի է իրագործել խաղաղ միջոցներով և ժողովրդավարական ճանապարհով: Է. Բերնշտեյնին է պատկանում հետևյալ թևավոր արտահայտությունը.

«Շարժումն ամեն ինչ է, իսկ վերջնական նպատակը՝ ոչինչ»։ Դա նշանակում էր, որ բանվոր դասակարգը պետք է պայքարի սոցիալական որոշակի իրավունքներ ձեռք բերելու համար, սակայն վերջնական նպատակը՝ հեղափոխությունը անհմաստ է, քանի որ այն բանվորներին կրեթի կարիքների խորացում, աղքատություն և կործանում։ Կյանքը պետք է կարգավորել կապիտալիզմի շրջանակներում, բայց միաժամանակ պայքարել նրա կատարելագործման համար։

Ներկայացնենք սոցիալ-ժողովրդավարների և կոմունիստների հիմնական հակասությունները.

Սոցիալ-ժողովրդավարներ

Բարոյական սոցիալիզմ
Ռեվիզիոնիզմ
Ռեֆորմիզմ
Եվոլյուցիա
Կապիտալիզմը «մարդկայնացնել»
Վերաբաշխում
Մեղել դասակարգային հակամարտությունը
Հարաբերական հավասարություն
Խառը տնտեսություն
Տնտեսական կառավարում
Պաշտոնական կուսակցություն
Քաղաքական բազմակարծություն
Լիբերալ-ժողովրդավարական պետություն

Կոմունիստներ

Գիտական կոմունիզմ
Ֆունդամենտալիզմ
Ուտոպիզմ
Հեղափոխություն
Կապիտալիզմը ոչնչացնել
Հասարակական սեփականություն
Ոչնչացնել դասակարգերը

Բացարձակ հավասարություն
Պետական կոլեկտիվիզացիա
Կենտրոնական պլանավորումը
«Ավանգարդ» կուսակցություն
Պրոլետարիատի դիկտատուրա
Պրոլետարական-ժողովրդական պետություն

Անտոնիո Գրամշիի սոցիալ-ժողովրդավարությունը

Անտոնիո Գրամշի (1891-1937) - Իտալացի մտածող, հեղափոխական: 1913 թ. ընդունվել է սոցիալիստական կուսակցության շարքերը: Նրա վրա մեծ ազդեցություն են թողել Վ. Լենինը և Ռուսաստանի Յոկոտեմբերյան հեղափոխությունը: Սոցիալիստական կուսակցության Լիվորնոյի համագումարում «ձախ թևը» առանձնացավ Պ. Տոլյատիի և Ա. Գրամշիի գլխավորությամբ և հիմնեց Իտալիայի կոմունիստական կուսակցությունը: 1922-1923 թթ. Ա. Գրամշին Իտալիայի կոմկուսի Կոմինտերնի Գործկոմի պատվիրակն էր և ապրում էր Մոսկվայում: 1926 թ. իտալական ֆաշիստները ձերբակալեցին Ա. Գրամշիին և աքսորեցին Ուստիկ կղզին: 1928 թ. ֆաշիստական տրիբունալը նրան դատապարտեց 20 տարվա բանտարկության, որի մեծ մասն անցեկացրեց Թուրի բանտում, որտեղ և գրեց իր հիմնական աշխատությունը՝ «Բանտարկյալի գրառումները»: Համընդհանուր ներումով նրա բանտարկության ժամկետը մի քանի անգամ կրճատվել է, որի արդյունքում նա ազատվել է ժամկետից շուտ, սակայն, դրանից մի քանի օր անց մահացել է:

Ա. Գրամշին ձգտում էր բացահայտել ուղղափառ մարքսիզմի տնտեսական դետերմինիզմի այլընտրանքային տարբերակը: Նրա կարծիքով, դասակարգային ճնշումը հիմնականում կախված է ոչ թե տնտեսական միջոցներից կամ պետության հարկադիր գործողություններից, այլ բանվոր դասակարգի կողմից դրանք ընդունելու հանգամանքից: Ա. Գրամշիի պետության մասին ուսմունքի կարևորագույն հասկացությունը առաջնորդությունն է (հեգեմոնիան): Ըստ նրա, հետազոտության մեթոդաբանական քաղաքական պատմական չափանիշը՝ սոցիալական խմբի գերակայությունը, դրսևորվում է երկու՝ «իշխելու» և «հոգևոր ու բարոյական ղեկավարման» ձևով: Առաջնորդություն ասելով նա հասկանում է երկրորդ ձևը, երբ գերիշխողը հոգևոր-բարոյական հեղինակությամբ իր հետևից է տանում ենթականերին՝ ստանալով նաև նրանց համաձայնությունը: Զևափոխելով բռնության մասին Ն. Մաքիավելու գաղափարները՝ Ա.

Գրամշին ձևակերպում է «առաջնորդության» իր հայեցակարգը՝ օգտագործելով Արևմտյան Եվրոպայում բուրժուական կառավարման հզորության և բարդ կազմակերպվածության նկարագրումը, որոնք էլ հենց խոչընդոտել են կապիտալիստական երկրներում Հոկտեմբերյան հեղափոխության կրկնումը:

Ա. Գրամշիի կարծիքով, պետությունը ներկայանում է երկու տեսքով՝ որպես քաղաքացիական հասարակություն («ինքնակառավարում») և որպես քաղաքական հասարակություն («պաշտոնյանների կառավարություն»): Միսալ է պետությունը նույնացնել միայն «կառավարման ապարատի» հետ, որն իրականացնում է հարկադրական (իշխելու) գործառույթ: Քաղաքացիական հասարակությունը այն ոլորտն է, որտեղ արտահայտվում է «ամբողջ հասարակության նկատմամբ որոշակի սոցիալական խմբի քաղաքական և մշակութային առաջնորդության գործառույթը»: Ըստ նրա՝ պետության հասկացության «ամբողջական նշանակությունն» ընդգրկում է «դիկտատուրա գումարած առաջնորդություն» ձևակերպումը: Պետության այս սահմանումն Ա. Գրամշին առաջին հերթին տարածում է բանվոր դասակարգի դիկտատուրայի պետության նկատմամբ:

Այսպիսով, Ա. Գրամշիին հաջողվեց վերականգնել մարքսիզմի սուբյեկտիվ գործոնի դերը: Նա ձևավորեց գաղափարախոսության դերի նկատմամբ համակարգված մոտեցում, ինչպես նաև վերանայեց կապիտալիստական պետության դերը և հերքեց վերացական տեսությունը:

Նիկոս Պուլանգասի տեսությունը

Նեոմարքսիզմն ուսումնասիրելու առումով մեծ հետաքրքրություն են ներկայացնում խոշոր մարքսիստական տեսաբան Նիկոս Պուլանգասի մոտեցումները, հատկապես նրա «Պետական իշխանությունը և սոցիալիզմը» աշխատությունը (1978), որը գրելիս նա, հավանաբար, գտնվել է ֆրանսիական ստրուկտուրալիզմի (Լուի Ալյտուսսերի) ազդեցության տակ:

Նիկոս Պուլանգաս (1936-1979) - ծնվել է Աթենքում, հույն պրոֆեսորի ընտանիքում: Մասնակցել է երիտասարդական սոցիալիստական շարժումներին, ենթարկվել է բռնաճնշումների: 1960 թ. տեղափոխվել է Մյունխեն, ապա Փարիզ, որտեղ պաշտպանել է դոկտորական ատենախոսություն՝ «Իրերի բնույթը և օրենքը» անվանումով: Ջբաղվել է դասախոսությամբ: 1968 թ., հրատարակել է «Քաղաքական իշխանությունը և կապիտալիստական պետության սոցիալական դասակարգերը» գիրքը, որը նրան համաշխարհային ճանաչում բերեց: Նրա հայացքներն ուղղափառ մարքսիզմից փոխվեցին դեպի եվրոկոմունիզմը: Հունաստանի կոմունիստական կուսակցության հակաստալինյան թևի անդամ էր, պայքարել է Հունաստանի զինվորական խոնտայի դեմ (1967-1974):

«Պետական իշխանությունը և սոցիալիզմը» գրքի սկզբում Ն. Պուլանգասը ներկայացնում է պետության ժամանակակից տեսության կարևոր պարադոքսը: Նա պնդում է, որ բոլոր մարդիկ սերտորեն շրջապատված են պետությունով, որի առավել մանրամասնված պրակտիկան ցուցադրում է նրա կապը կոնկրետ և ծայրահեղ ճշգրիտ շահերին, միաժամանակ, քանի դեռ բուրժուազիան բազմաթիվ առավելություններ է քաղում այդպիսի պետությունից, այն բոլորովին ոչ միշտ է մեզ հետ համաձայնության մեջ: Ընդունելով ստրուկտուրալիստների հարաբերական ինքնիշխանության մասին տեսակետը՝ նա եկավ այն եզրակացության, որ եթե կապիտալիստական պետությունը ցանկանում է հաջող հանդես գալ հատկապես որպես դասակարգային պետություն՝ պաշտպանելով բուրժուազիայի երկարաժամկետ շահերը, ապա նա որոշակի ինքնիշխանություն պետք է պահպանի իշխող դասակարգից: Եթե կապիտալիստական պետությունը կառավարումից դուրս բերի անգամ մեկ դասակարգ կամ խավ, ապա հնարավորություն չի ունենա թաքցնել իր դասակարգային բնույթը: Ընդունելով այնպիսի տեսք, թե իբր պետությունն արտահայտում է բոլոր դասակարգերի շահերը, նա կարող է խոսել ամբողջ ժողովրդի բարօրության մասին:

Դասակարգային գերիշխանության պաշտպանության գործընթա-

ցում պետությունը գտնվում է իշխող դասակարգերի և ենթականների միջև գոյություն ունեցող անհամար համաձայնությունների անկայուն հավասարակշռության վիճակում: Արդյունքում, նա կարող է ընդունել այնպիսի որոշումներ, որոնցից շահում են զանգվածները: Ընդունելով այն տեսակետը, որ քաղաքական և գաղափարական մակարդակները հարաբերականորեն ինքնիշխան են, Ն.Պուլանգասն, այնուամենայնիվ, նկատում է, որ դա այդպես է, քանի որ քաղաքական և գաղափարական մակարդակներն արդեն կան արտադրական հարաբերություններում, առանց ինչի հնարավոր չէ նրանց վերարտադրությունը: Դա հասարակական հարաբերությունների կարևորագույն մասն է:

Նրա համար կապիտալիստական արտադրության ձևը պարտադիր ներդնում է դասակարգային նույնականացման և դասակարգային պայքարի գործընթացի մեջ: Իսկ եթե այդ հարաբերությունները պետք է միշտ վերարտադրվեն, ապա պետությունը դրանում ինչ-որ դեր պետք է խաղա:

Ն. Պուլանգասի կարծիքով՝ պետությունը գործում է ճնշման և գաղափարական մանիպուլյացիայի օգնությամբ: Դա նշանակում է, որ պետության գործնականությունը այն է, որ արգելում է: Այդ տեսակետից, տնտեսությունն ի վիճակի է ինքնավերարտադրման և ինքնակառավարման, երբ պետությունը դրան նպաստում է միայն բացասական կամ արգելքի կանոններ մտցնելով տնտեսական խաղի մեջ:

Կապիտալիզմն օժանդակեց ժողովրդավարության գաղափարին՝ «մեկ մարդ՝ մեկ ձայն»՝ որպես զանգվածային ժողովրդավարական հասարակության անհրաժեշտ պայման, դրանով դասակարգային պայքարը տնտեսական ոլորտից փոխադրելով քաղաքական դաշտ:

Պետությունը ոչ միայն հնարավորություն ունի վերահսկողություն իրականացնելու մի ամբողջ սերունդի գիտելիքի վրա, այլև՝ թե ինչպես այդ գիտելիքները կարելի է օգտագործել:

Նրա կարծիքով՝ օրենքը դա կազմակերպված հրապարակային բռնություն է: Պետությունը մոնոպոլ իրավունք ունի օրինականացնելու ֆիզիկական բռնությունը: Իրավունքի մյուս գործառնությունն անհատական սուբյեկտների վերարտադրությունն է դրանց միությունների ներկայացմամբ՝ որպես ժողովուրդ-ազգ: Դա ծառայում է

դասակարգային հարաբերություններին և քաղաքական ճգնաժամերի կանխմանը:

Ն. Պուլանգասի հետազոտություններն արտացոլում են պետության նկատմամբ ստրուկտուրալիստական մոտեցման զարգացումը և փոխակերպումները՝ դրանք դարձնելով պատմականորեն պայմանավորված, որի ժամանակ սոցիալական շարժումները վճռական դեր են խաղում: Այստեղ հարկ է առանձնացնել երկու պահ:

Առաջին, կապիտալիստական պետությունը և արտադրական հարաբերություններն էական փոփոխությունների են ենթարկվել և կրում են պատմականորեն որոշակի բնույթ, այսինքն կապված են արտադրության միջոցների զարգացման կոնկրետ աստիճանի հետ:

Երկրորդ, տեղի է ունեցել դասակարգային պայքարի տեղափոխություն արտադրական հարաբերություններից պետական ոլորտ:

Քննադատական տեսություն («Ֆրանկֆուրտյան դպրոց»)

Քննադատական տեսությունը մի խումբ գերմանացի նեոմարքսիստների մտորումների արդյունքն է, որոնք 1950-ական թվականներին բավարարված չէին մարքսիստական մտքի վիճակից, հատկապես՝ տնտեսական դետերմինիզմի (առանձնացում կամ սահմանափակում) միտումներից: **Քննադատական տեսության հեղինակները դարձան 1920-ականներին Ֆրանկֆուրտի Սոցիալական հետազոտությունների ինստիտուտում աշխատող մի խումբ գիտնականներ: Հետագայում նրանք ստացան «Ֆրանկֆուրտյան դպրոց» անունը:** Նացիստների իշխանության գալուց հետո 1933 թ. այդ ինստիտուտը փակվեց և նրա աշխատակիցներից շատերը տեղափոխվեցին արտասահման, մասնավորապես ԱՄՆ ու շարունակեցին իրենց գործը Կոլումբիայի համալսարանում (Նյու-Յորք): Երկրորդ աշխարհամարտից հետո նրանցից մի քանիսը (Մ. Յորկհայմեր, Թ. Ադորնո) վերադարձան Գերմանիա, ուրիշները (Հ. Մարկուզե) մնացին ԱՄՆ-ում: Հարկ է նշել, որ քննադատական տեսությունը դուրս եկավ Ֆրանկֆուրտի սահմաններից և մեծ ազդեցություն ունի ամերիկյան քաղաքական տեսության վրա: Այնուամենայնիվ, իր կողմ-

նորոշումներով այն առաջին հերթին եվրոպական բնույթ է կրում: «Ֆրանկֆուրտյան դպրոցի» ներկայացուցիչներից պետք է հիշատակել նրա հիմնադրին՝ Թեոդոր Ադորնոյին, ինչպես նաև նրա ականավոր ներկայացուցիչներին՝ Մ. Յորկհայմերին, Հ. Մարկուզեին, Է. Ֆրոմին, Յու. Հաբերմասին, Ֆ. Պոլոքին:

Ադորնո Թեոդոր Լյուդվիգ Վիգենգրաունդ (1903-1969) - Գերմանացի փիլիսոփա, սոցիոլոգ, կոմպոզիտոր և երաժշտության տեսաբան: Սովորել է, ապա դասավանդել Ֆրանկֆուրտի Գյոթեի անունը կրող համալսարանում: 1934 թ. էմիգրացիայում էր Անգլիայում, 1938 թ.՝ ԱՄՆ-ում: 1949 թ. վերադառնում է Ֆրանկֆուրտ: Տեսական հայտնի աշխատություններից են «Բարոյականության փիլիսոփայության խնդիրները», «Ավտորիտար անհատի ուսումնասիրությունը», «Բացասական դիալեկտիկա», «Սոցիալական գիտությունների լոգիկայի մասին» և այլն:

Քննադատական տեսությունը գլխավորապես ուղղված է սոցիալական և մտավոր կյանքի տարբեր ոլորտներին: Մարքսիզմը, որը ոգևորել էր քննադատական տեսությունը, ինչպես հայտնի է, առաջին հերթին ձևավորվել է որպես փիլիսոփայական գաղափարների քննադատական տեսություն, իսկ հետագայում դարձել նաև կապիտալիստական համակարգի քննադատություն: Այդ պատճառով քննադատական տեսությունը հենց սկզբից զբաղվում էր ինչպես հասարակության, այնպես էլ իմացության տարբեր համակարգերի խնդիրներով: Չնայած քննադատական ձևին, հետազոտողների այդ խմբի հիմնական նպատակը հասարակության բնույթի մանրամասն վերլուծությունն էր: Ամեն դեպքում, այդ հոսանքի կողմնակիցները միշտ հայտարարում էին իրենց ընդդիմադիր կեցվածքն ընդդեմ գերիշխող գաղափարների և կարծիքների:

Լինելով մարքսիստական տեսության տարբերակներից մեկը՝ քննադատական տեսությունն սկսվեց հենց մարքսիզմի քննադատությամբ: Առավելապես այն ուղղված էր տնտեսական դետերմինիզմի(լատիներեն սահմանում են բառից: Փիլիսոփայական ուսմունք, որը հաստատում է բնության ու հասարակության համընդհա-

նուր պատճառականությունը, պայմանավորվածությունը, օբյեկտիվ փոխկապվածությունը և օրինաչափությունը) կամ մեխանիստական մարքսիզմի դեմ: Քննադատներից մի քանիսը փորձեցին տնտեսական դետերմինիզմը գտնել Կ. Մարքսի աշխատություններում (Յու. Չաբերմաս), սակայն նրանց մեծ մասը զբաղված էին նեոմարքսիզմի քննադատությամբ: Նրանք տնտեսական դետերմինիզմը սխալ չէին համարում, քանի որ այն առաջնային ուշադրությունը դարձնում էր տնտեսության վրա, սակայն դա միակողմանի մոտեցում էին համարում, քանի որ գտնում էին, որ նույնքան ուշադրություն պետք է դարձվի հասարակական կյանքի մյուս ոլորտներին: Ձգտելով վերականգնել հավասարակշռությունը՝ քննադատները շեշտադրումը կատարեցին մշակութային ոլորտի վրա: Քննադատությունը ուղղված էր ոչ միայն մարքսիստական տեսություններին, այլև պրակտիկային, օրինակ՝ Խորհրդային Միությանը, որն, ինչպես նրանք էին կարծում (Չ. Մարկուզե), կառուցվում էր մարքսիզմի հիմքի վրա:

Քննադատության օբյեկտներ դարձան նաև փիլիսոփայական հետազոտությունների մի քանի մեթոդներ, մասնավորապես պոզիտիվիզմը: Այդ քննադատությունը որոշ առումով կապված էր տնտեսական դետերմինիզմի քննադատության հետ, որն ինչ-որ չափով ընդունել էր իմացության պոզիտիվիստական տեսությունը:

Քննադատական «դպրոցը» պոզիտիվիզմի դեմ հանդես էր գալիս մի քանի հիմնավորումներով:

Առաջին, պոզիտիվիզմը բացահայտում էր պարզունակության միտումներ:

Երկրորդ, այն փաստը, որ նրանք սոցիալական աշխարհը դիտում էին բնականի նման: Քննադատական տեսության ներկայացուցիչներն ի տարբերություն պոզիտիվիստների՝ շեշտադրումը կատարում էին մարդու գործունեության և հասարակության կառույցների նկատմամբ նրա ազդեցության վրա:

Երրորդ, պոզիտիվիզմը հատուկ ուշադրություն էր դարձնում որոշակի նպատակներին հասնելու միջոցների վրա, բայց չէր կարողանում հասկանալ նպատակները: Արդյունքում քննադատները հանգեցին այն եզրակացության, որ իր էությամբ պոզիտիվիզմը բավականին պահպանողական է և չի կարող ձեռնոց նետել գոյություն ու-

նեցող համակարգին: Անգամ նորագույն տիպի մարքսիստները չէին կարող համաձայնել մի տեսության հետ, որը չի կապում տեսությունը և պրակտիկան:

Քննադատական տեսությունը ձևավորվեց ոչ միայն մարքսիզմի, այլև Մաքս Վեբերի ազդեցությամբ, որը շեշտադրում էր բանականի նշանակությունը ժամանակակից աշխարհի ձևավորման վրա: Քննադատների ներկայացուցիչները դրանից եզրակացրեցին, որ տնտեսական բռնությունները փոխարինվել են բանական բռնություններով և հենց դա է դարձել գերիշխող սոցիալական խնդիրը:

Զնայած ժամանակակից կյանքի թվացյալ բանականությանը, քննադատներն այն ընկալում են որպես ոչ բանականով՝ իռացիոնալիզմով լցված և խոսում են ոչ բանականի բանական լինելու մասին, իսկ ավելի ճիշտ՝ ձևական (ֆորմալ) բանականության ոչ բանական լինելու մասին: Օրինակ, Զերբերտ Մարկուզեն գտնում է, որ «չնայած որ ժամանակակիցը բանականության դրսևորում է թվում, իրականում հասարակությունը ոչ բանական է»: Դա տեղի է ունենում այն պատճառով, որ բանական աշխարհը քայքայում է անհատին, ձևախեղում է նրա կարիքները և ընդունակությունները:

Քննադատական տեսությունը գլխավորապես ուղղված էր ձևական բանականության մեկ ձևի՝ ժամանակակից տեխնիկայի դեմ: Զ. Մարկուզեն համարում էր, որ ժամանակակից աշխարհում տեխնիկայի գերակայությունը տանում է դեպի տոտալիտարիզմ (ամբողջատիրություն): Տեխնիկայի զարգացումը անխուսափելիորեն տանում է անհատի նոր, չափազանց արդյունավետ և նույնիսկ արտաքին վերահսկման «հաճելի միջոցների»: Օրինակ, հեռուստատեսությունը ծառայում է ոչ միայն հասարակության սոցիալականացման, այլև «հանդարտեցման»: Նույն նպատակին են ծառայում սպորտը և սեքսը: Զ. Մարկուզեն մերժում է այն միտքը, թե տեխնիկան կարող է չեզոք լինել և այն դիտարկում է որպես մարդկանց նկատմամբ տիրապետման միջոց: Նրա համար ինքը՝ տեխնիկան չի թշնամի, այլ այն, թե ինչպես է այն օգտագործվում ժամանակակից կապիտալիստական հասարակությունում: Դրանով Զ. Մարկուզեն հաստատում է Կ. Մարքսի այն գաղափարը, որ խնդիրն իր՝ տեխնիկայի մեջ չէ, այլ նրանում, թե ինչպես կարելի է այն օգտագործել լավ հասարակություն կառուցելու համար:

Բացի այդ, «Ֆրանկֆուրտյան դպրոցը» մեծ ուշադրություն էր դարձնում մշակույթի ոլորտին: Քննադատության թիրախ դարձավ այն, ինչ իրենք անվանում էին «Մշակութային արդյունաբերություն», այսինքն բանականացված, բյուրոկրատացված կառույցները (օրինակ, հեռուստացանցերը), որոնք վերահսկում են ժամանակակից մշակույթը: Նրանք համարում էին, որ «մշակութային արդյունաբերությունը», որ զբաղվում է «զանգվածային մշակույթի» արտադրությամբ՝ դա բյուրոկրատացված, արհեստական կառույց է և ոչ թե իրական երևույթ: Ընդ որում, նրանք շեշտը դնում էին երկու խնդիրների վրա՝

1. «Զանգվածային մշակույթը» կեղծ բնույթ ունի: Այդ մտքին է հանգեցնում գաղափարների նախօրոք պատրաստված ամբողջությունը, որը հետո՝ զանգվածային լրատվամիջոցների օգնությամբ հասցվում է զանգվածներին:
2. «Մշակութային արդյունաբերությունը» մարդկանց նկատմամբ «հանգստացնող», բռնության, հիմարացման գործառնություններ է կատարում:

Այս տեսությունը նույնպիսի քննադատության է արժանացնում նաև «գիտելիքների արդյունաբերությանը» (համալսարաններ, գիտահետազոտական ինստիտուտներ), որոնք ժամանակակից արևմտյան հասարակություններում, փաստորեն, ինքնիշխան կառույցներ են դարձել: Ինքնիշխանությունը նրանց թույլ է տալիս դուրս գալ իրենց տրված շրջանակներից և նրանք նույնպես վերածվել են բռնության, հասարակության վրա իրենց ազդեցությունը տարածող կառույցների:

4. Մարքսի կողմից կապիտալիզմի քննադատությունն ապագայի նկատմամբ հույսեր էր առաջացնում: Ի տարբերություն նրա, քննադատական տեսության շատ ներկայացուցիչներ հիասթափության և անհուսության հանգեցին:

Քննադատական տեսության ներկայացուցիչների արդեն թվարկած բանականության, «մշակութային արդյունաբերության» և «գիտելիքների արդյունաբերության» նկատմամբ հետաքրքրություններին կարելի է ավելացնել ևս մեկ խումբ՝ գաղափարախոսությունների նկատմամբ հետաքրքրությունը: Պատահական չէ, որ

«Ֆրանկֆուրտյան դպրոցի» փիլիսոփայությունը սկզբնական շրջանում անվանվում էր «գաղափարախոսության քննադատություն»։ Գաղափարախոսության տակ քննադատական տեսությունը հասկանում էր հասարակության էլիտայի կողմից ստեղծվող, հաճախ կեղծ գաղափարների համակարգը։ Վերնաշենքի այդ բոլոր յուրահատուկ կողմերը կարող են միավորվել «տիրապետության քննադատության» անվան տակ։

Ժամանակակից աշխարհը վերածվել ու մտել է անհատին ոչնչով չսահմանափակող ճնշման փուլ։ Փաստացի վերահսկումն այնքան ամբողջական է, որ այլևս չի ենթադրում մտածված, զգույշ գործողություններ իշխանությունը կրողների կողմից։ Դրա հետևանքով տիրապետությունն այլևս չի դիտարկվում որպես վտանգ անհատի համար և ամենուրեք ընկալվում է որպես տրված սովորական վիճակ։ Փաստորեն մարդիկ կորցնում են կողմնորոշումները և այլևս չգիտեն ինչպիսին պետք է լինի նրանց շրջապատող աշխարհը։ Արդյունքում, քննադատական տեսաբանների հոռետեսությունը մեծ օժանդակություն է ստանում, քանի որ նրանք նույնպես չեն տեսնում, թե ինչպես բանական վերլուծությունը կարող է օգնել իրավիճակի փոփոխությանը։

Քննադատական տեսության մեջ կարևոր դեր է խաղում այն հասկացությունը, որը Յու.Հաբերմասը անվանում է լեգիտիմացիա։ Դրա տակ նա հասկանում էր գաղափարների համակարգ, որը առաջացնում և ներդնում է քաղաքական համակարգը՝ գոյություն ունեցող համակարգը։ Նրանք այն ձևով են ստեղծվում, որ միստիֆիկացնեն քաղաքական համակարգն այնպես, որ անհասկանալի լինի թե ինչ է իրականում կատարվում։ Բացի այդ, քննադատական տեսությունը հետաքրքրություն է ցուցաբերում ակտորների նկատմամբ, նրանց գիտակցությանը և նրան, թե ինչ է տեղի ունենում նրանց հետ ժամանակակից աշխարհում։ Զանգվածների գիտակցությունը գտնվում է արտաքին ուժերի (մասնավորապես, «մշակութային արդյունաբերության») հսկողության տակ։ Արդյունքում, զանգվածներն ի վիճակի չեն իրենց մեջ զարգացնելու հեղափոխական գիտակցությունը։ Այնուամենայնիվ, քննադատական տեսության ներկայացուցիչները, ինչպես և բոլոր մարքսիստները, չեն տարբերակում անհատական

գիտակցությունը և մշակույթը, ինչպես նաև, չեն որոշակիացնում նրանց մեջ եղած կապը:

Քննադատական տեսության մյուս կարևոր հետաքրքրության առարկան դիալեկտիկան է: Առավել լայն մակարդակում դիալեկտիկական մոտեցումը նշանակում է կենտրոնացում սոցիալական ամբողջատիրականության վրա: Սոցիալական կյանքի ոչ մի մասնավոր կողմ և ոչ մի մեկուսացված երևույթ հասկանալի չի կարող լինել, քանի դեռ այն կապված չէ պատմական ամբողջությամբ՝ որպես զլորբալ միասնության հետ: Այդպիսի մոտեցումը նշանակում է հրաժարում սոցիալական կյանքի որևէ մեկ առանձնահատուկ կողմի վրա կենտրոնանալուց, հատկապես առավել մեծ համատեքստից դուրս տնտեսության վրա: Այն ենթադրում է նաև սոցիալական իրականության տարբեր մակարդակների փոխկապակցվածության հետազոտություն, առաջին հերթին՝ անհատական գիտակցության, մշակութային վերնաշենքի և տնտեսական հիմքի: Դիալեկտիկան իր մեջ պարունակում է նաև մեթոդաբանական նախապայման՝ սոցիալական կյանքի մեկ կողմը չի կարող ուսումնասիրվել մյուսներից մեկուսացված:

Ապագան որոշ հետաքրքրություն է ներկայացնում քննադատական տեսության համար, չնայած որ Կ.Մարքսի նման նա վախենում և մերժում է ուտոպիզմը: Նրանք գերադասում են քննադատել ժամանակակից հասարակությունը և նրա փոփոխությունների հնարավորությունը: Փոխանակ Կ.Մարքսի նման ուշադրությունը կենտրոնացնելու տնտեսության վրա, նրանք կենտրոնացել են մշակութային վերնաշենքի վրա: Դիալեկտիկական մոտեցումը հետաքրքրություն բերեց իրական աշխարհի վրա: Դա նշանակում է, որ տեսաբանները բավարարված չեն ճշմարտության փնտրտուքից լաբորատորիաներում: Իրենց գաղափարների բարձրագույն ստուգումը համարում են պրակտիկայում ընդունելու և օգտագործելու աստիճանի մեջ: Այդ գործընթացը նրանք աուտենտիֆիկցիա են անվանում, ինչը նշանակում էր, որ մարդիկ՝ ձևախեղված կոմունիկացիաների զոհերը ընդունում են քննադատական տեսությունը և օգտագործում են այն համակարգից ազատվելու համար: Այստեղ մոտենում ենք քննադական մտածողների հետաքրքրության մեկ այլ կողմին՝ մարդու ազատագրման խնդրին:

Այլ կերպ ասած, քննադատական տեսությունը զբաղվում է նաև տեսության և պրակտիկայի հարաբերությունների և փոխհարաբերությունների հարցերով: «Ֆրանկֆուրտյան դպրոցի» ներկայացուցիչների կարծիքով, կապիտալիզմի ժամանակ ճեղքվածք է առաջացել տեսության և պրակտիկայի մեջ: Տեսությամբ զբաղվում է մի խումբ, իսկ պրակտիկայով՝ բոլորովին այլ խումբ: Շատ դեպքերում տեսաբանը վատ է տեղեկացված իրական աշխարհում տեղի ունեցող իրադարձությունների մասին, ինչը հանգեցնում է աշխարհից կտրված տեսությունների ի հայտ գալուն: Նրանց շարքին են դասում նաև մարքսիզմը: Ուրեմն, անհրաժեշտ է նորից միավորել տեսությունն ու պրակտիկան: Տեսությունը պետք է հարստանա պրակտիկայում, իսկ պրակտիկան ձևավորվի տեսության հիման վրա:

Չնայած այդ վերամբարձ հայտարարություններին՝ քննադատական տեսության ներկայացուցիչների մեծ մասը չկարողացավ միացնել տեսությունը և պրակտիկան:

Յուրգեն Հաբերմասի տեսությունը

«Ֆրանկֆուրտյան դպրոցի» բազմաթիվ անվանի ներկայացուցիչների մեջ առանձնանում է մեր ժամանակների քաղաքական փիլիսոփայության և տեսության ամենախոշոր դեմքերից մեկը, այդ դպրոցի «երկրորդ սերնդի» ներկայացուցիչ՝ Յուրգեն Հաբերմասը:

Յուրգեն Հաբերմասը ծնվել է 1929 թ.: Իր «Տեսությունը և պրակտիկան» (1963), «Սոցիալական գիտությունների տրամաբանության մասին» (1967) և «Գիտելիքն ու մարդկային հետաքրքրությունները» (1968) աշխատություններում Յու. Հաբերմասը տրամաբանական և մեթոդաբանական քննադատության է ենթարկում պոզիտիվիզմը, որով ճանապարհ է բացում քննադատական սոցիալական տեսության համար՝ որպես միջոց քաղաքական գիտակցության լուսաբանման և քաղաքական պրակտիկայի ուղղությունները մշակելու համար: Այնուհետև, «Լեգիտիմիզմի ճգնաժամը» (1973), «Կոմունիկացիան և հասարակության էվոլյացիան» (1976), «Բարոյական գիտակցութ-

**յունը և կոմունիկատիվ գործունեություն» (1983) և «Արդիակա-
նության փիլիսոփայական դիսկուրսը» (1985) գործերում նա
տվեց կոմունիկացիայի, սոցիալականացման, սոցնալկոթային
զարգացման, բանականության, բարոյականության և լեզվա-
նության հանգամանալից գնահատականը՝ որպես ժամանակա-
կից հասարակության քննադատական տեսության հիմնական
տարրերի: Հետագա աշխատություններով նա կարևոր ներդրում
կատարեց ժողովրդավարության նորմատիվային տեսության
մեջ:**

Նրա փիլիսոփայական աշխատանքներից կարելի է նշել գիտելի-
քի և մարդու շահերի հարաբերություններին, այսինքն, սուբյեկտիվ
և օբյեկտիվ գործոնների հարաբերություններին նվիրված գործերը:
Յու. Հաբերմասի կարծիքով, այդ գործոնները չեն կարող դիտարկվել
իրարից մեկուսացված: Գիտելիքների համակարգը գոյություն ունի
օբյեկտիվ մակարդակում, իսկ մարդու շահերը մեծամասամբ սուբ-
յեկտիվ երևույթներ են:

Յու. Հաբերմասը տարբերակում է գիտելիքի և դրանց համապա-
տասխանող շահերի երեք համակարգ:

Գիտելիքի առաջին տիպը՝ դա վերլուծական գիտելիքն է կամ
դասական պոզիտիվիստական գիտական համակարգերը: Նրա կար-
ծիքով՝ այս համակարգի հիմքում ընկած գիտելիքի շահը՝ դա տեխ-
նիկական հսկողությունն է, որը իրականացվում է շրջակա միջա-
վայրի, ուրիշ հասարակությունների, ինչպես նաև հասարակության
մեջ գտնող մարդկանց նկատմամբ: Նա կարծում է, որ վերլուծական
գիտությունը հեշտությամբ վերածվում է ճնշող հսկողության:

Գիտելիքի համակարգի երկրորդ տիպը դա հումանիստական
գիտելիքներն են, որի շահը կամ հետաքրքրությունը հանգեցնում
է աշխարհի ճանաչմանը: Դա գալիս է այն ընդհանուր պատկերա-
ցումից, որ մեր անցյալը հասկանալն օգնում է հասկանալ ներկան:
Այսպիսի համակարգի իմացությունը նաև միմյանց հասկանալու և
ինքնիրեն հասկանալու պրակտիկ հետաքրքրություն-շահ ունի: Այն
չի ճնշում, բայց նաև չի ազատագրում:

Երրորդ տիպը դա քննադատական գիտելիքն է, որը ներկայաց-

նում են Յու.Հաբերմասը և «Ֆրանկֆուրտյան դպրոցը»: Հետաքրքրությունը, որը ծնունդ է այս գիտելիքի տիպը, դա մարդու ազատագրումն է:

Յու. Հաբերմասը իր գործերում հաճախ նշել է, թե իր նպատակը մի այնպիսի տեսական ծրագրի մշակումն է, որով հասկանալի կդառնա պատմական մատերիալիզմի վերականգնումը: Յու. Հաբերմասն ընդունել է Կ. Մարքսի կարևոր դրույթը (մարդկային հնարավորությունները) որպես սեփական: Նրա կարծիքով, Կ.Մարքսը չի կարողացել տեսնել տարբերությունը աշխատանքի (նպատակաուղղված-բանական գործունեության) և սոցիալականի (սիմվոլիկի) համագործակցության միջև: Նա կարծում է, որ Կ. Մարքսը մի փոքր արհամարհել է վերջինը, ինչը սահմանափակել է նրա տեսությունը: Յու. Հաբերմասն ուղղակի ասում է այն մասին, թե որպես իր մտորումների նախնական կետ նա ընդունում է աշխատանքի և փոխհամագործակցության միջև եղած տարբերությունը:

Յու.Հաբերմասի համար առավել մեծ հետաքրքրություն է ներկայացնում կոմունիկատիվ գործունեությունը, այսինքն մարդկանց գործունեությունը, որը համակարգվում է ոչ թե եսասիրական հաջողության հաշվարկներով, այլ հասկանալուն հասնելու գործողությամբ: Այլ կերպ ասած՝ անհատական նպատակն անհասանելի է առանց կոմունիկատիվ փոխըմբռնման:

Յու. Հաբերմասը ժամանակակից ձախ թևի քաղաքական տեսության առաջատար տեսաբաններից է:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

Ներկայացնել՝

1. Սոցիալ-ժողովրդավարությանը հատուկ հիմնական գաղափարները:

2. Սոցիալ-ժողովրդավարների և կոմունիստների հիմնական հակասությունները:

3. Ա. Գրամշիի սոցիալ-ժողովրդավարությունը:

4. Ն. Պոլևանգասի տեսությունը:

5. «Ֆրանկֆուրտյան դպրոցը» և քննադատական տեսությունը:

6. Յու. Հաբերմասի տեսությունը:

Գրականություն

1. **Бэрри Б.**, Политическая теория: вчера и сегодня/ Политическая наука: новые направления/, М., 1999.
2. **Грамши А.**, Избранные произведения(пер. с итал., Под общ. ред. И. В. Григорьевой и др.), Политиздат, 1980.
3. **Пуланзас Н.**, Политическая власть и социальные классы капиталистического государства, М., 1968.
4. **Хабермас Ю.**, Демократия, разум, нравственность, М., 1995.
5. **Held D.**, Political Theory, Stanford University Press, 1991.
6. **Miler D.**, Political Theory, // The Blackwell Dictionary of Political Thought, N.Y., 1987.

Գլուխ 10. ԱՆԱՐԽԻԶՄ

Անարխիզմի հիմնական հոսանքները: Անարխիզմի քաղաքական տեսությունը:

Անարխիզմը (հուն. anarchia - անիշխանություն) սոցիալ-քաղաքական տեսություն է, որը հայտարարում է պետության ոչնչացման անհրաժեշտությունը և հարկադիր իշխանության բոլոր ձևերի փոխարինումը քաղաքացիների ազատ ու կամավոր միությամբ:

Անարխիզմը որպես քաղաքական տեսություն առաջ է եկել 18-րդ դարի վերջերին՝ նացիոնալիզմի և ազգային պետությունների առաջացման հետ: Անարխիզմի առաջին համակարգված ուսումնասիրությունը պատկանում է անգլիացի փիլիսոփա և գրող Ուիլյամ Գոդվինի (1756-1836) գրչին, ով 1793 թ. հրատարակեց «Քաղաքական արդարության և նրա ազդեցության համընդհանուր բարեգործության ու երջանկության վերաբերյալ հետազոտություն» գիրքը: Այնտեղ նա գրում էր, որ մարդիկ ձգտում են առավել կատարելության, սակայն պետության այդպիսի ինստիտուտները ճնշում են մարդկանց բանականությունն օգտագործելու հնարավորությունների վրա: Անարխիզմի քաղաքական հոսանքն իրականում ձևավորվել է 19-րդ դարի 40-70-ական թվականներին Արևմտյան Եվրոպայում: Նրա հիմնադիրներն են համարվում Մ. Շտիռները, Պ. Պրուդոնը, Մ. Բակունինը, Պ. Կրոպոտկինը:

Անարխիզմի հիմնական հոսանքները

Անարխիզմի քաղաքական տեսությունը բազմաբնույթ է: Նրա տեսաբանների մեջ կան այնպիսիք, որ սեփականությունը գողություն էին անվանում (Պ. Պրուդոն) և այնպիսիք, որ սեփականությունը համարում էին մարդու բնական իրավունք, այնպիսիք, որ անհամբերությամբ հեղափոխությանն էին սպասում և, ընդհակառակը՝ խաղաղասիրության կողմնակիցներ: Անարխիզմը հաճախ ծուլվել է այլ շարժումներին: Այսպես են առաջացել անարխո-ֆեմինիզմը, անար-

խո-էնվարամենտալիզմը («կանաչներ»), անարխո-սինդիկալիզմը և ուր.: Ամեն դեպքում, անարխիզմի ուսմունքի կենտրոնում բռնությունը ոչնչացնելու խնդիրն է դրված: Ստորև ներկայացնենք այդ խնդրի լուծման չորս մոտեցումները:

Անարխո-ինդիվիդուալիզմ - Անարխիզմի ինդիվիդուալիստական տեսությունը սկսվում է անհատից, որը աշխարհը կառուցող հիմնաքարն է: Ինդիվիդուալիստները հավատում են այն բանին, որ ամեն մարդ իրավունքներ ունի: Ոմանք դա անվանում են «բնական իրավունքներ»: Ոչ ոք չի կարող խախտել այդ իրավունքները, ոչ առանձին մարդը և ոչ էլ մարդկանց խումբը: Այդ իրավունքների մեջ սովորաբար ներառում են անհատի ապրելու, իր մարմնի վրա հսկելու և իր մտքերն ազատ արտահայտելու իրավունքները: Բացի այդ, մարդիկ ունեն որոշակի գործունեության, այդ թվում՝ ստեղծագործելու իրավունք և իր արտադրածին տիրելու իրավունք: Այս պարագայում անհատների միջև սոցիալական համագործակցության ձևերն են դառնում փոխանակումը (զնում, վաճառք կամ առևտուր) կամ պայմանավորվածությունը:

Ամերիկյան տեսաբան Ջոշուա Ուորենի ստեղծած անարխո-ինդիվիդուալիզմի կերպարն այդ տեսության առաջին մտածված և ձևակերպված տարբերակն է, որը հետևություն է արել, թե հասարակությունն այնպես պետք է վերակառուցվի, որ պաշտպանի ամեն մի անհատի ինքնիշխանության անձեռնամխելիությունը: Այնտեղ պետք է լինի շահերի, պատասխանատվության, ուժ կիրառելու, գործողության անհատականությունը: Ըստ նրա՝ սեփականությունը դա անհատի սեփական աշխատանքի արդյունքը պետք է լինի:

Անարխո-ինդիվիդուալիստական քաղաքական տեսության կանոնավոր և համակարգված արտահայտողը համարվում է Բենջամին Թաքերը, ով 1888 թ. հրատարակել է «Պետական սոցիալիզմ և անարխիզմ» գիրքը, որտեղ ցույց է տվել, թե ինչպես պետության չընդունման լայնածավալ պարտադրանքը կարող է ազդել ընտանիքի մեծահասակ անդամների ամեախնտին հարաբերությունների վրա:

Այդ ուղղությամբ պատկանող ամերիկացի տեսաբան Լիսանդեր Սփուներն, ուշադիր վերլուծելով իր ժամանակների իշխանությունը, եկավ այն եզրահանգման, որ այն լեգիտիմ չէ: Սահմանադրությունը,

որ այդ իշխանության լեգիտիմության հիմքն է, անհմաստ փաստաթուղթ է, քանի որ այդ համաձայնությունը կնքած մարդիկ վաղուց մահացել են, իսկ ժամանակակից մարդիկ «չեն տվել իրենց համաձայնությունն այդ փաստաթղթին, ուրեմն նրանց համար այն օրինական չէ:

Այս տեսաբանները քննադատում էին նաև մոնոպոլիաները, հատկապես՝ պետական մոնոպոլիաները, քանի որ նրանք պարտադրանք էին կիրառում անհատի նկատմամբ և սահմանափակում որոշում կայացնելու նրանց իրավունքները: Չնայած այն բանին, որ սկզբնական շրջանում շատ անարխիստներ համակրում էին սոցիալիզմը, սակայն ժամանակի ընթացքում նրանք առավելությունը տվեցին ազատ շուկային, ուստի զարմանալի չէ, որ անցան լիբերտարիստների շարքերը:

Փոխօգնության անարխիզմ - Փոխօգնության անարխիզմը (մյուլ-չիալիզմ) միջին դիրք է գրավում մի կողմից ինդիվիդուալիստական անարխիզմի, մյուս կողմից անարխո-սոցիալիզմի և անարխո-կոմունիզմի միջև: Այս մոտեցման հիմքում ընկած է Պյեր-ժոզեֆ Պրուդոնի ստեղծած իդեալական հասարակության կերպարը: Նա մասնավոր սեփականության հակառակորդ չէր և նրա տեսությունում անհատները կարող էին ունենալ գործիքներ և արտադրական այլ միջոցներ: Սակայն, մարդիկ պարզևատրվում են միայն իրենց սեփական աշխատանքի համար: Նա համոզես էր գալիս բոլոր մարդկանց հավասարության օգտին, անկախ նրանց ունեցվածքից:

Պ. Պրուդոնն ի տարբերություն Ու. Գոդվինի, կարծում էր, որ հասարակության մեջ չի կարող լինել համաձայնություն, քանի գոյություն ունի մասնավոր սեփականությունը: Նա կարծում էր, որ պետք է փոխել մասնավոր սեփականության բնույթը և բոլոր ապրանքներին տիրապետել միասին: Այնուամենայնիվ, Պ. Պրուդոնը ավանդական իմաստով կոմունիստ չէր: Կոմունիստական հավասարությունը խառնելով անարխիստական ինդիվիդուալիզմի հետ՝ նա ստացավ «մյուլ-չիալիզմը»: Նրա հայացքները որոշ ժամանակ տեղ գտան Ֆրանսիայում, սակայն անարխիզմի այս տիպն ամենակարճ կյանքն ունեցավ:

Անարխո-սոցիալիզմ - Այս ուղղության համար բնութագրական է հետաքրքրությունը կամավոր համագործակցության նկատմամբ, որը չկա սոցիալիզմի այլ հոսանքներում, որոնք սոցիալիստական պետության պարտադրման ձևերի կողմնակից են: Միխայիլ Բակունինի

(1814-1876) կարծիքով, իր ժամանակներում անարխո-սոցիալիզմը անարխիստական քաղաքական մտքի գերակայող ձևն էր: «Աստվածը և պետությունը» աշխատության մեջ Մ. Բակունինը կոլեկտիվիստական գաղափարների կողմնակից է և գտնում է, որ ունիվերսալ հեղինակությունները, սկսած կառավարությունից, եկեղեցուց կամ մեկ այլ ինստիտուտից, արժանի չեն ենթակայության: Մարդը պետք է իր բանականությամբ որոշի, թե ում ենթարկվի և ինչ պայմաններով: Պետության, եկեղեցու և անգամ ընտանեկան աստիճանակարգի մերժման գաղափարը մեծ հետաքրքրություն առաջացրեց Եվրոպայում և ապահովեց Մ. Բակունինի հայացքների երկրաժամկետ ժողովրդականությունը: Նրա գաղափարների հիմնական տարրը պետության առաջացման օրինաչափությունների և նրա «ոչնչացման» ու հասարակությունում առանց պետության ինքնակառավարման հաստատման հայեցակարգ է:

Անարխո-կոմունիզմ – Պյոտր Կրոպոտկինը (1842-1921) անարխո-կոմունիզմի ամենաճանաչված տեսաբանն է: Նա փորձեց մշակել անարխո-կոմունիզմին անցնելու գիտական ծրագիր: Նա գտնում էր, որ բոլոր ռեսուրսները պետք է լինեն կոմունայի անդամների հասարակական սեփականությունը և նրա ամեն մի անդամ կարող է իր պահանջների չափով օգտվել այդ ռեսուրսներից: Այդ համակարգում մարդիկ չեն աշխատի եկամուտ ստանալու ակնկալիքով: Եթե վերանա կարիքն ու նախանձը, ապա հանցագործություն կատարելու հիմքեր չեն լինի: Հանցագործության բացակայության պայմաններում կվերանա այնպիսի կենտրոնացված ինստիտուտների անհրաժեշտությունը, որոնցից են իրավապահ մարմինները: Բանվորները կարող են բարի կամքով միավորվել, որպեսզի կատարեն անհրաժեշտ աշխատանքը:

Զնայած գաղափարների տարբերությանը և շատ դրույթների հակասականությանը, անարխիզմը մեծ դեր խաղաց սոցիալական ու քաղաքական կարևոր նշանակություն ունեցող բռնությունից հրաժարվելու և պարտադրանքի մերժման թեմաների քննարկման գործում: Հնարավոր է, որ անարխիզմը կապահպանի իր նշանակությունը նաև 21-րդ դարում:

Անարխիզմի քաղաքական տեսությունը

Անարխիստական տեսությունում բավականին տարբեր մոտեցումներ կան նպատակները որոշակիացնելու և դրան հասնելու միջոցների մեկնաբանություններում, սակայն գոյություն ունեն մեծ քանի գաղափարներ, որոնք գտնվել են նրանց ուշադրության էպիկենտրոնում: Ստորև ներկայացնենք այդ գաղափարները:

Անտիսթեթիզմ - Սովորաբար անարխիզմը որոշում են հեղինակության սկզբունքի հերքումով: Դա այդպես է, քանի որ անարխիստները գտնում են, որ հեղինակությունը դա վիրավորանք է ազատության և հավասարության սկզբունքների նկատմամբ: Ավելին, անարխիզմը միակ քաղաքական տեսությունն է, որ պաշտպանում է բացարձակ ազատությունը և ոչնչով չսահմանափակվող հավասարությունը:

Անարխիստական քննադատությունը սովորաբար կենտրոնացնում է քաղաքական հեղինակության վրա, որին իր ողջ մեխանիզմով օժանդակում է ժամանակակից պետությունը: Մյուս բոլոր քաղաքական տեսությունները և գաղափարախոսությունները ելնում են նրանից, որ պետությունն օգտակար գործառություններ է կատարում: Միայն անարխիստներն են, որ պետության այնպիսի տարրերի մեջ, ինչպիսիք են իրավունքը և կառավարումը բացառապես բացասական և կործանարար ուժ են տեսնում:

Անարխիստական անտիսթեթիզմի հիմքում դրված է մարդու բնույթի նկատմամբ առանձնահատուկ մոտեցումը: Նրանք բավականին լավատես են մարդկանց ներուժի և բարոյական արժեքների գնահատման մեջ և համարում են, որ ամբողջ չարիքը գալիս է քաղաքական ինստիտուտներից: Ինչպիսին քաղաքական և սոցիալական պայմաններն են՝ այնպիսին էլ մարդկային որակներն են:

Բնական կարգը - «Պետությունը ոչ միայն չարիք է, այլև անպետք չարիք է»: Այսպես անարխիստ տեսաբան Ու. Գոդվինը գլխավոր շուրջ տվեց պետության հիմքը՝ «հասարակական դաշինքը»: Իրենց բնությով մարդիկ լիովին բանական են և ի շնորհիվ դաստիարակության ու կրթության ձգտում են ապրել իսկական և ունիվերսալ բարոյական օրենքներով: Մարդիկ բնական հակում ունեն իրենց կյանքը կազմակերպելու ներդաշնակ և խաղաղ ձևով: Անարդարությունը, ագահությամբ

յունը և ագրեսիվությունը բնական չեն, այլ պետության միջամտության արդյունքն են: Այսպիսով, կառավարությունը ոչ թե կարգ ու կանոնի խնդիրների լուծում է, այլ նրա քայքայման աղբյուրն է:

Հակակլերիկալիզմ - Ամարիսիզմը չի ընդունում նաև եկեղեցու հեղինակությունը: Գուցե դա էր պատճառը, որ ամարիսիզմը լայն տարածում գտավ հատկապես եկեղեցու ուժեղ ազդեցությունը կրող և կրոնական ավանդույթներ ունեցող երկրներում՝ Իսպանիայում, Իտալիայում և Լատինական Ամերիկայի մի քանի երկրներում: Նրանց կարծիքով, եկեղեցին գործիք է պետության ձեռքին և մարդուն պարտադրում է որոշակի բարոյական սկզբունքներ՝ դրանով իսկ ոչնչացնելով նրա բարոյական ինքնիշխանությունը:

Տնտեսական ազատություն - Մ. Բակունինը գտնում էր, որ քաղաքական իշխանությունը և հարստությունը անբաժանելի են: Ամարիսիստները 19-րդ դարում հիմնականում գործում էին բանվորական շրջանակներում և օժանդակում էին սոցիալիստական փիլիսոփայությանը: Ընդունում էին կապիտալիզմի դասակարգային էությունը և, այն, որ իշխող դասակարգը շահագործում և ճնշում է զանգվածների: Սակայն նրանք իշխող դասակարգն ավելի լայն էին հասկանում, քան մարքսիստները: Այն ավելի մոտ է մեր ժամանակների էլիտա(ընտրանի) հասկացությանը: Նրանք չեն ընդունում կապիտալիստական համակարգը: Ժամանակակից ամարիսիստները ժխտում են նաև «սոցիալական պետությունը» և «կառավարվող կապիտալիզմը»: Ուժեղ քննադատության են արժանացրել նաև խորհրդային կենտրոնացված պլանային տնտեսության համակարգը:

Ամարիսիան և հանրությունը - Եթե հրաժարվենք պետությունից, ապա հանրությունը դառնում է կենսական անհրաժեշտություն: Ամարիսիան հենց առանց պետության գոյատևելն է: Ցանկացած հանրություն, նույնիսկ այնպիսին, որ կարող ենք անվանել «մաքուր, ամարիսիստական», ներսում միշտ ունի սոցիալական կարգ ու կանոնի առանձնահատուկ ձևեր, այլապես այն չի կարող գոյություն ունենալ: Այստեղ հիմնական դերը ստանձնում է «պարտականությունը», սակայն ոչ թե պետության, այլ հանրության մյուս անդամների նկատմամբ: Սակայն որպեսզի հանրությունը կայանա՝ այն պետք է որոշակի բնութագրական գծեր ունենա:

Առաջին, հանրության անդամները պետք է ունենան ընդհանուր համոզմունքներ և արժեքներ:

Երկրորդ, հանրության անդամների հարաբերությունները պետք է լինեն ուղիղ և բազմակողմանի: Այսինքն, նրանց մեջ ոչ մի միջնորդող օղակ չպետք է լինի:

Երրորդ, հանրությունը կառուցվում է «փոխադարձության» սկզբունքի վրա: Այն իր մեջ ներառում է փոխօգնությունը, համագործակցությունը, ինչպես նաև մյուսների հետ կիսվելը:

Մյուս բնութագիրը, որ ոչ բոլոր անարխիստների կողմից է ընդունվում, դա համայնքի անդամների մեջ սերն ու բարեկամությունն է:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

Ներկայացնել՝

1. Անարխիզմի հիմնական հոսանքները:
2. Անարխիզմի քաղաքական տեսությունը:

Գրականություն

1. **Алексеева Т. А.**, Современные политические теории, МГИМО, 2007.
2. **Пирумова Н. М.**, Социальная доктрина М. А. Бакунина, М., 1990.
3. **Прудон П. Ж.**, Что такое собственность? или Исследование о принципе права и власти; Бедность как экономический принцип; Порнократия, или Женщины в настоящее время / Подгот. текста и коммент. В. В. Сапова. — М.: Республика, 1998.
4. **Прудон П. Ж.**, Французская демократия (О политической способности рабочих классов). Пер. с фр. / Под ред. Н. К. Михайловского; Вступ. ст. П. В. Рябова. Изд. 2, доп., М., КРАСАНД, 2011.

Գլուխ 11. ՍՏՐՈՒԿՏՈՒՐԱԼԻԶՄ ԵՎ ՀԵՏԱՏՐՈՒԿՏՈՒՐԱԼԻԶՄ

Ստրուկտուրալիզմ՝ Կլոդ Լեվի - Սթրոսս: Հետստրուկտուրալիզմը ժակ Դերիդայի և Միշել Ֆուկոյի մասնունմամբ:

Ստրուկտուրալիզմի կայացումը տեղի է ունեցել անցած դարի 20-50-ական թվականներին: Այն սկսվեց լեզվաբանության մեջ, հետո տարածվեց փիլիսոփայության, և վերջապես սոցիալական ոլորտի տեսությունների, այդ թվում՝ քաղաքական տեսության վրա:

Ստրուկտուրալիզմը դա հումանիտար գիտությունների ընդհանուր մեթոդների անվանումն է, որը կապված է մշակույթի տարբեր ոլորտների կառույցների բացահայտման և նկարագրման հետ:

Ստրուկտուրալիզմ՝ Կլոդ Լեվի – Սթրոսս

Ստրուկտուրալիզմը առաջացել է լատինական «strua» բառից, ինչը նշանակում է «շարքերով դնել մեկը մյուսի վրա, կառուցել, կարգով շարել»:

Ինչպես հուշում է անունը՝ ստրուկտուրալիզմն իր ուշադրությունը կենտրոնացնում է կառույցների վրա, ընդ որում՝ նրանց այսօր ավելի շատ հետաքրքրում է լեզվական կառույցները, քան սոցիալականը: Հետաքրքրությունների այդպիսի փոփոխությունը «լեզվաբանական հեղաշրջում» անունն է ստացել, ինչը կտրուկ փոխեց գրեթե բոլոր հասարակական գիտությունների բնույթը:

Ստրուկտուրալիզմի լեզվաբանության և ստրուկտուրալիզմի հիմքերը դրել է շվեյցարացի գիտնական Ֆերդինանտ դե Սոսյուրը (1857-1913): 1916 թ. լույս տեսավ նրա «Ընդհանուր լեզվաբանության դասընթացը», որտեղ նա հարց դրեց, թե անհրաժեշտ է լեզուն դիտարկել որպես նշանների կառույց: Ֆերդինանտ դե Սոսյուրի մոտեցման արժանիքը այն է, որ նա տարբերակեց լեզու և խոսք հասկացությունները: Նրա հետազոտության արդյունքում լեզուն իմաստ ձեռք բերեց: Նա պնդում էր, որ անհրաժեշտ է հասկանալ, թե ինչպես է

աշխատում լեզուն և գտնում էր, որ կարիք չկա ուսումնասիրել պատմությունը կամ «բնական արմատները»: Իրերի անվանումն ուղղակի սոցիալական համաձայնության արդյունքն է, քանի որ, օրինակ, «վարդի» մեջ չկա մի այնպիսի բան, որը պարտադրում է հենց այդպես անվանել այդ ծաղիկը: Այն կարող էր նաև այլ անուն ունենալ: Այստեղից հետևում է, որ ճիշտ չէ լեզուն դիտարկել որպես առանձին միավորների ընդհանրություն, որոնք բնական կապ ունեն օբյեկտների ու գաղափարների հետ, ուստի լեզուն չի կարող համարժեք լինել իրականությանը կամ ճիշտ արտացոլել իրականությունը:

Լեզվի գոյությունը հնարավոր է դարձնում խոսքը: Խոսքային արտահայտությունները նույնպես կամքի ու հասկացության անհատական գործողություններ են: Դրանից հետևություն է արվում, որ լեզուն պետք է դիտարկվի որպես նշանների համակարգ և ամեն մի նշանի իմաստը հասկանալի է դառնում համակարգում գտնվող նշանների հարաբերությունների ուսումնասիրության արդյունքում:

Կառուցվածքի նկատմամբ հետաքրքրությունը վերաճեց լեզվի նկատմամբ հետաքրքրության և տարածվեց ողջ նշանային համակարգի վրա: Այս ուղղությունը ստացավ «սեմիոտիկա» անվանումը և ունեցավ բազմաթիվ հետևորդներ:

Ֆրանսիական ստրուկտուրալիզմի մեջ առավել խոշոր դեմքերից է Կլոդ Լեվի-Սթրոսը:

Կլոդ Լեվի-Սթրոս (1908-2009) - Ֆրանսիայի հանրահայտ սոցիոլոգ, ազգագրագետ, մշակութաբան: 1960 թ. Կոլեջ դե Ֆրանսի սոցիոլոգիական մարդաբանության ամբիոնի ղեկավարն էր: 1961 թ. նա լեզվաբան Էմիլ Բենվենիստի և աշխարհագրագետ Պյեր Գուրուլի հետ հիմնեց «Մարդ» ամսագիրը: Թոշակի է անցել 1984 թ.: Կ. Լեվի-Սթրոսը Ֆրանսիական Ակադեմիայի առաջին անդամն էր, ով հասավ 100 տարեկանի:

Նա փորձեց ստրուկտուրալիզմ հասկացությունն օգտագործել իր հետազոտությունների տարբեր ոլորտներում, սակայն քաղաքական տեսության համար առավել մեծ նշանակություն ունի ստրուկտուրալիզմն անտրոպոլոգիայում (մարդաբանությունում): Կ. Լեվի-Սթրոսն

իր «Ստրուկտուրային մարդաբանություն» (1958), «Միֆոլոգիկաներ» (1964-1971), «Ստրուկտուրային մարդաբանություն-2» (1973) և այլ աշխատություններում շարադրել է **ստրուկտուրալիզմի մեթոդաբանության հիմնական սկզբունքները, որոնք են՝**

1. Մշակույթի երևույթները ուսումնասիրելիս հարկ է գլխավոր ուշադրությունը դարձնել նրա կառուցվածքի և ոչ թե տարրերի վրա:
2. Մշակութային երևույթներն ուսումնասիրելիս, հարկավոր է դա համաչափ անել (այսինքն՝ միաժամանակ դիտարկել նրանց համընկնումը ժամանակին) և ոչ թե դիախորոն (այսինքն՝ հետևողականությամբ):
3. Հետազոտություններում առաջնությունը տրվում է կառուցվածքներին և ոչ թե սուբյեկտներին:

4. Լեվի-Սթրոսսին հաջողվեց ցույց տալ, որ տարբեր ժողովուրդների առասպելներում, եթե անգամ այդ ժողովուրդները երբեք չեն առնչվել մեկը մյուսի հետ, արտացոլվում են նույն կառույցները: Նա ապացուցեց նաև, որ նախնադարյան մտածողության հիմքը ոչնչով չի տարբերվում ժամանակակից մտածողության հիմքից:

Հետստրուկտուրալիզմը ժակ Դերիդայի և Միշել Ֆուկոյի մատուցմամբ

1956 թ. ԽՄԿԿ XX համագումարում Խորհրդային Միության կոմկուսի ղեկավար Ն. Խրուշչովի հանրահայտ ելույթից հետո, որտեղ նա խստորեն դատապարտեց Ստալինի անձի պաշտամունքը, ֆրանսիական կոմունիստների մոտ լրջորեն սասանվեց Խորհրդային Միությունում ազատության մասին առասպելը: Միաժամանակ Ֆրանսիայում ակնհայտ սահմանազատում նկատվեց հին և նոր սերունդների մեջ: Վերջիններս չէին ապրել պատերազմի սարսափները և ցանկանում էին դուրս պրծնել սկսված սառը պատերազմի խեղդող մթնոլորտից: Նրանք շրջվեցին դեպի նոր սոցիալական գիտությունը՝ ստրուկտուրալիզմը, որի արդյունքում հաջողվեց մշակել քաղաքական փիլիսոփայության բոլորովին նոր մոտեցում: Դա կապվեց ժակ Դերիդայի (ուն մասնագետներն անվանեցին ուլտրաստրուկտուրալիստ) և Միշել Ֆուկոյի անունների հետ:

Ստրուկտուրալիստներին հուզող հիմնական հարցերից մեկն այն էր, թե ինչպես են բառերն իմաստ ձեռք բերում: Նույն հարցի պատասխանն էին որոնում նաև հետստրուկտուրալիստները: Ստրուկտուրալիստների և հետստրուկտուրալիստների գաղափարները դարձան հետմոդեռնիստական փիլիսոփայության հիմքը: Ոմանք նույնացնում են հետստրուկտուրալիզմն ու հետմոդեռնիզմը, սակայն դա այդպես չէ, որովհետև նրանք միասնական մտքի «դպրոց» չեն: Հետստրուկտուրալիզմն անջատվեց ստրուկտուրալիզմից 1960-1970-ական թվականներին:

Այժմ ներկայացնենք թե ինչն է միավորում հետստրուկտուրալիստներին՝

- Ընդհանուր հարցերն են. Հանդիսանում է արդյո՞ք տեքստն իմաստի աղբյուր: Դա ինչ-որ ձևով կապվա՞ծ է այն համատեքստի հետ, որտեղ հայտնվել է տեքստը: Կարո՞ղ է ընթերցողը կարդացածի մեջ ներդնել սեփական իմաստը: Որքա՞նով կարող է հեղինակը վերահսկել իր տեքստի մեկնաբանությունները: Հիշատակված գործոնների համագործակցությունից են արդյո՞ք սկիզբ առնում իմաստների արտադրությունը և, եթե դա այդպես է, ապա ինչպե՞ս են նրանք համագործակցում:
 - Հետստրուկտուրալիզմի աշխատություններն իրենցից ներկայացնում են քաղաքական տեսության, գրաքննադատության, փիլիսոփայության, հոգեվերլուծության, սեմիոտիկայի, ստրուկտուրալիզմի և, ինչ-որ չափով, ֆեմինիզմի զարմանալի խառնուրդ:
 - Տեքստերը սովորաբար համախմբված, խիտ բնույթ են կրում: Հետստրուկտուրալիստները ստրուկտուրալիստներից ժառանգել են երեք հիմնական գաղափարները՝
 1. Լեզուն չի կարող իրենից դուրս ինչ-որ ավելի բան ցույց տալ:
 2. Լեզուն արտադրում է (և ոչ միայն ռեֆլեկտիվացիայի է ենթարկում) իմաստը:
 3. Լեզուն անհատականության արտահայտությունը չի:
- Այսպիսով, նրանք բավականին մամուլություններ ունենին իրենց նախորդների հետ: Սակայն նրանք ավելի առաջ գնացին:

Ժակ Դերիդա

Ժակ Դերիդա (1930-2004) - ծնվել է Ալժիրում հարուստ հրեայի ընտանիքում: 1942 թ. Ֆրանսիայի Վիշիի ռեժիմի ներդրած կարգի պատճառով որպես այլազգի հեռացվել է վարժարանից: 1948 թ. սկսած լրջորեն ուսումնասիրում էր փիլիսոփայություն և տեղափոխվելով Փարիզ՝ հաճախում էր Միշել Ֆուկոյի դասախոսություններին և ծանոթանում Ֆրանսիայի հայտնի մտավորականների հետ: 1960-1964 թթ. Սորբոնի համալսարանի ասիստենտ էր, ապա՝ պրոֆեսոր: 1968-1974 թթ. դասավանդել է Բալթիմորի Ջոնս Հոպկինսի համալսարանում, ապա՝ Յուլի համալսարանում:

Բազմաթիվ հետազոտողներ հետստրուկտուրալիզմի ծննդյան ճիշտ օրը համարում են 1966 թ. Ժակ Դերիդայի կարդացած դասախոսությունը, ով, ի տարբերություն իր նախորդների, որոնք օժանդակում էին «լեզվաբանական հեղաշրջմանը» և գտնում, թե մարդիկ սահմանափակված են լեզվի կառուցվածքով, ամբողջ լեզուն հանգեցրեց «տեքստին», որը ոչնչով չսահմանափակված սուբյեկտ համարեց: Ավելին, Ժ.Դերիդան նույնիսկ սոցիալական ու քաղաքական ինստիտուտները սկսեց դիտարկել որպես «տեքստ», ինչի պատճառով նրանք ի վիճակի չեն սահմանափակել անհատին: **Ժ.Դերիդան ապակառուցեց լեզուն և սոցիալական ինստիտուտները, որից հետո պարզվեց, որ մնացել է միայն տեքստը:** Ապակառուցման նորությունը այն էր, որ այն ուղղված էր ստրուկտուրալիզմի ամենատարածված թեմաներին՝ «Ուրիշի» տարբերություններին և լրացվեց Մարտին Հայդեգերի տեսակետներով ու կատեգորիաներով:

Ստրուկտուրալիստները լեզվի համակարգում տեսնում էին օրենք և կարգուկանոն: Ժ. Դերիդայի համար լեզուն դարձավ անկարգության և անկայունության մարմնացումը:

Ժ. Դերիդայի համար անընդունելի դարձավ արևմտյան քաղաքական մտքի շրջանակներում տարածված լոգոցենտրիզմը (մտածողության ունիվերսալ համակարգի փնտրտուք, որն ի վիճակի է բացահայտել, թե ինչ է իրականը, ճշմարտությունը, գեղեցիկը և այլն):

Նա առաջ է քաշում նաև ապակենտրոնացում հասկացություն-

նը մշակույթում և քաղաքականության մեջ, ինչը նշանակում էր, որ, օրինակ, հեղինակը տեքստը տրամադրելուց հետո չպետք է միջամտի ներկայացման զարգացմանը, իսկ դերասաններն ազատ պետք է լինեն իրենց արտահայտելիս: Ժ. Դերիդայի կարծիքով, կենտրոնը կապված է խաղի և բազմազանության բացակայությամբ: Դա լինի թատրոն, թե՞ հասարակություն: Եթե նրանցում բացակայում են խաղը և բազմազանությունը, ապա դրանք ստատիկ (քարացած, անշարժ) թատրոն և հասարակություն են, այսինքն՝ նրանք մեռած են: Ընդհակառակը, եթե թատրոնը և աշխարհն ամբողջությամբ չունենան կենտրոններ, ապա կլինեն բաց, դյուրաշարժ և ինքնառեֆլեքսավորվող: Ուստի, հարկ չկա ինչ-որ բան սպասել ապագայից կամ փորձել այն կանխատեսել և անհնար է ապագայի հանելուկը գտնել անցյալում: Ապագան ստեղծվում և գրվում է մեր գործերով:

Այսպիսով, մերժելով արևմտյան ավանդական մվիրվածությունը տրամաբանությանը և մտավոր հեղինակություններին, Ժ. Դերիդան այդպես էլ չի տալիս հարցերի իր միակ պատասխանը: Մնում է միայն գրելու, խաղի և բազմազանության գործընթացը:

Քաղաքական հարաբերություններին Ժ. Դերիդան անդրադառնում է իր «Բարեկամության քաղաքականությունը» (1997) աշխատությունում, որը նրա միակ գիրքն է, որի վերնագրում քաղաքականություն բառն է օգտագործել: Նրա նպատակն էր ցույց տալ, որ քաղաքականության մասին ողջ արևմտյան մտածողության ավանդույթը խեղաթյուրվել է նույնականության տեսությամբ: Քանի որ մետաֆիզիկական ավանդույթը սովորեցնում է, թե մարդը նույնական է ինքն իր հետ, ապա այդ ներքին տարբերություններից ազատ ամբողջական անհատն իր սեփական նույնականությունը փնտրում է տարբեր խմբերի (օրինակ, ընտանիք, բարեկամություն, սոցալական դասակարգ կամ ազգ) անդամակցության միջոցով: Ուստի սկսած Արիստոտելից մինչև Ֆրանսիական հեղափոխությունը կարծում էին, որ լավ հանրապետությանը պետք է հատուկ լինեն եղբայրությունը, իդեալականացված բնական այրունակցական կապերը, որոնք անջատ անհատներին դարձնում են ինչ-որ միասնություն: Սակայն, նրա կարծիքով, բնական եղբայրություն գոյություն չունի, ինչպես նաև գոյություն չունի բնական մայրություն: Բոլոր բնական կատեգորիաները, ինչ-

պես նաև նրանցից բխող հանրային, մշակութային, ազգի, սահմանի մասին տեսությունները կախված են լեզվից, այսինքն՝ պայմանական են: Այդ պայմանականության խնդիրը այն է, որ նրանք թաքցնում են ենթադրվող միասնականության շրջանակներում եղած տարբերությունները: Նրանք նույնպես յուրահատուկ աստիճանակարգ են հաստատում իրենց մեջ՝ եղբայրների ու քույրերի մեջ, քաղաքացիների և արտասահմանցիների մեջ և, վերջապես բարեկամների ու թշնամիների մեջ: Դա Ժ. Դերիդային բերում է Կ. Շմիտտի հայտնի տեսության վերլուծությանը, որը քաղաքական հարաբերությունները նկարագրում էր որպես բարեկամների և հակառակորդների թշնամական հարաբերություններ:

Այդ տեսանկյունից, բոլոր արևմտյան քաղաքական գաղափարախոսությունները՝ ֆաշիզմ, պահպանողականություն, լիբերալիզմ, սոցիալիզմ, կոմունիզմ հավասարապես անընդունելի են: Դա Ժ.Դերիդայի կողմից լոգոցենտրիզմի քննադատության արդյունքն է: «Մարքսի ասպեկտները» աշխատությունում նա բացահայտում է 1989 թվականից հետո Արևմուտքում հաստատված համաձայնությունը՝ այն անվանելով «գլոբալ կապիտալիզմի զանգվածային լրատվամիջոցների կոնգլոմերատի Նոր Ինտերնացիոնալ», որը համաշխարհային տիրապետություն է հաստատել «մինչ այդ չտեսնված պատերազմի ձևով»:

Ըստ նրա, ստացվում է, որ բռնապետությունների իրական աղբյուրը ոչ թե բռնապետերն են, սպառազինությունները կամ էլ վատ ինստիտուտները, այլ այն սկսվում է լեզվից, որը բխում է փիլիսոփայությունից: Եթե այն պետք է փոխակերպվի (իր խոսքերով «չեզոքացվի»), ապա դրան պետք է հետևի քաղաքականության չեզոքացումը: Այսինքն, դրանից հետո անիմաստ են դառնում ժողովրդավարության մասին քննարկումները, քանի որ ոչ մեկն այլևս չի խոսի երկրի, ազգի, պետության և քաղաքացիության մասին:

1989 թ. Նյու-Յորքի գիտաժողովում Ժ. Դերիդան հանդես եկավ «Ապակառուցողականությունը և արդարության հնարավորությունը» զեկուցումով: Նա փորձեց ցույց տալ, որ չնայած ապակառուցողականությունը կարող է և կիրառվում է իրավունքում, սակայն դա չի կարող և չպետք է իջեցնի արդարություն հասկացության մշանակութ-

յունը: Իրավունքի խնդիրը կապված է նրա հետ, որ այն ստեղծվում և իրագործվում է հեղինակության հիմքի վրա, ուստի կախվածությունն ունի բռնությունից: Իրավունքի վրա ազդում են տնտեսական և քաղաքական ուժերը, այն փոփոխվում է հաշվարկի ու համաձայնությունների շնորհիվ, ուստի կախվածությունն ունի տեղից: Իրավունքը չարադրված է տեքստերում և պետք է մեկնաբանվի, ինչն ավելի է դժվարացնում վիճակը:

Աշխարհում ոչ մի տեղ արդարություն չկա, բայց գոյություն ունի «արդարության հավերժ գաղափարը», չնայած որ այն չի կարող մտնել մեր աշխարհը: Սակայն արդարության բացակայությունը մեզ չի ազատում նրա գալուստին սպասելու պարտականությունից, քանի որ մենք գիտենք, որ «մեսսիան (փրկիչը) կարող է գալ ամեն պահի, ցանկացած քաղաքային դարպասներով»: Այդ պատճառով, մենք պետք է սովորենք սպասել և գոյություն չունի դրան սպասելու ավելի լավ միջոց, քան ապակառուցողականությամբ զբաղվելը: Այստեղից ժ. Դերիդան հետևություն է անում, թե հենց ապակառուցողականություն է արդարությունը:

Սակայն «ձախ» և «աջ» քաղաքականությունները պասիվ սպասումներ չեն, այլ ենթադրում են գործողություններ: Քանի որ արդարության գաղափարը հնարավոր չէ ձևակերպել, ուրեմն այն չի կարող քաղաքականության նպատակ դառնալ:

Այնուամենայնիվ, ինչպես մյուս ստրուկտուրալիստները ժ. Դերիդան հավատում է նրան, թե ժողովրդավարության ընդարձակման միակ միջոցը դա այն լեզվի քայքայումն է, որով Արևմուտքը միշտ խոսել է դրանց մասին: Միայն զարգացնելով Արևմտյան քաղաքական մտքի բառարանը կարելի է հուսալ, որ հնարավոր է հասնել «ապաքաղաքականացմանը» կամ «քաղաքականության նոր տեսությանը»: Բայց երբ դրան հասնեն՝ կպարզվի, որ ժողովրդավարությունը՝ ինչին ձգտում էինք, հնարավոր չէ նկարագրել և պաշտպանել: Այն կարող է դիտարկվել որպես իռացիոնալ հավատի երևույթ, մեսսիական երազ:

Միշել Ֆուկո

Միշել Ֆուկո (1927-1984) - 20-րդ դարի երկրորդ կեսի ֆրանսիական փիլիսոփայության և քաղաքական մտքի ամենահայտնի դեմքերից մեկն է։ Նրան հանրաճանաչ դարձրեցին մի քանի յուրահատուկ ստեղծագործություններ, որոնք մեծ ազդեցություն թողեցին ժամանակակից սոցիալական և քաղաքական մտքի զարգացման վրա։ Նրա աշխատությունների մեջ աչքի ընկնող տեղ ունեն ոչ միայն իշխանության մասին գործերը, այլև սեքսուալիզմին նվիրված եռապատումը։

Հետստրուկտուրալիստական տեսության մյուս կարկառուն ներկայացուցիչը Միշել Ֆուկոն էր։ Ի տարբերություն ստրուկտուրալիստների, որոնք հիմնականում զբաղվում էին լեզվաբանական խնդիրներով, նա աշխատում էր մի շարք տեսական ուղղություններով։ Կրելով իր նախորդների ազդեցությունը՝ Մ. Ֆուկոն ոչ միայն հենվեց նրանց գաղափարների վրա, այլև կարողացավ դրանք փոխակերպել և ինտեգրել իր ոչ սովորական տեսական կողմնորոշման մեջ։ Օրինակ, նա վերլուծում է Մ. Վեբերի բանականության տեսությունը, սակայն դրանից այլ հետևություններ է կատարում, որ ոչ մի «երկաթյա վանդակ» չկա, քանի որ բանականությունն ամենուրեք դիմադրության է հանդիպում։ Նրա աշխատություններում կարելի է հանդիպել նաև մարքսիստական գաղափարներ, սակայն նրան առավելապես հետաքրքրում են «իշխանության միկրոքաղաքականությունը», քան հասարակության մակարդակի իշխանությունը։ Մ. Ֆուկոյի գործերում զգացվում է նաև հերմենեվտիկայի (հուն. բացատրում են բառից։ Ստեղծագործելու ընդունակություն, ստեղծագործելու նկատմամբ հակում, որը տանում է հիմնախնդրի, իրավիճակի նոր, ոչ սովորական դիտարկման) և ֆեմինոլոգիայի (գերմ. ֆեմինիզմների մասին ուսմունք, որն իր խնդիրն է համարում առանց նախկինի վրա հղումների գիտակցությունը ճանաչելու փորձը) ազդեցությունը, ինչպես նաև նրա տեքստերում առկա են ստրուկտուրալիզմի տարրերը։

Մ. Ֆուկոն իր ուսումնասիրությունները սկսել է մեթոդաբանության խնդիրների մշակմամբ և նրա՝ ինչն ինքն անվանում է «գիտելիքի

հնագիտություն»։ Նրա հետազոտությունների առարկան գիտելիքի տարրերն էին՝ գաղափարները, հավատամքը, դիսկուրսի տեսակները։ Նա իր «գիտելիքի հնագիտությունը» հակադրեց իմացության պատմությանն ու գաղափարների պատմությանը, որոնցում շատ մեծ տեղ է հատկացված բանականությանը։ Մ. Ֆուկոյի կարծիքով՝ իմացության պատմությունում չափազանց շատ են ուշադրություն դարձնում ժառանգականությանը։ «Գիտելիքի հնագիտությունը» ձգտում է որոշակի կանոններ սահմանել այն բանի ձևավորման պայմանների վրա, որոնք կարող են ասվել կոնկրետ դիսկուրսի շրջանակներում ցանկացած տրված ժամանակում։ Նրան առանձնապես հետաքրքրում էր այս կամ այն դրույթի հին ձևակերպումները և ձգտում էր բացահայտել այն հիմնական պայմանները, որը հնարավոր էր դարձրել տվյալ դիսկուրսը։

Հետագայում Մ. Ֆուկոյի հետաքրքրությունները բևեռվեցին «իշխանության ծագումնաբանության» վրա։ Շատ բան վերցնելով Ֆ. Նիցշեի իշխանության մասին մտորումներից՝ նա քննադատում էր գիտելիքի աստիճանականացումը։ Քանի որ ավելի բարձր գնահատվող գիտելիքները (օրինակ՝ գիտությունը) տիրապետում են ավելի մեծ իշխանության, ապա արժանի են առավել մեծ քննադատության։ Նրան հետաքրքրում էին այն տեխնոլոգիաները, որոնք դուրս են բերվում գիտելիքներից և այն, թե ինչպես են դրանք օգտագործվում տարբեր իմաստիտուտների կողմից՝ մարդկանց վրա իշխանություն իրագործելու համար։ Մ. Ֆուկոն իր գործերում հաճախ է դիմում բժշկությանը և հոգեբանությանը։ Մասնավորապես նա գտնում է, որ բժշկությունն է ձևավորել հումանիտար գիտությունները, ուստի այն կարևոր է մարդու մասին գիտության ուսումնասիրության համար։ Գիտելիքը և իշխանությունը ուղղակիորեն և անմիջականորեն կանխորոշում են մեկը մյուսին։ Նա քննարկել է նաև սեքսուալ խնդիրներ, որոնց ժամանակ ևս շեշտադրումը կատարել է իշխանության ծագումնաբանության վրա։

Անհրաժեշտ է նշել, որ մեր ժամանակներում հետստրուկտուրալիզմը մնացել է անցյալում՝ խառնվելով իր հետ սերտորեն կապված հետմոդեռնիզմի հետ, որը, թերևս ժամանակակից Արևմուտքի սոցիալ-քաղաքական ամենաազդեցիկ հոսանքն է։

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

Ներկայացնել՝

1. Ստորուկտուրալիզմն ըստ Կ. Լեվի-Սթրոսսի:
2. Հետստորուկտուրալիզմը Ժ.Դարիդայի մատուցմամբ:
3. Հետստորուկտուրալիզմը Մ. Ֆուկոյի մատուցմամբ:

Գրականություն

1. **Деррида Ж.**, Глобализация. Мир. Космополитизм. Пер. с фр. Д. Ольшанского // «Космополис», № 2 (8). 2004, с. 125-140.
2. **Деррида Ж.**, Призраки Маркса — М., Logos altera, 2006.
3. **Деррида Ж.**, Диссеминация (La Dissemination) / Пер. с фр. Д. Кралечкина; науч. ред. В. Кузнецов, Екатеринбург: У-Фактория, 2007.
4. **Леви-Стросс К.**, Структурная антропология, М., 1983.
5. **Леви-Стросс К.**, Первобытное мышление, М., 1999, с.19-28.
6. **Фуко М.**, Надзирать и наказывать. Подение тюрьмы, М., 1999.

Գլուխ 12. ՍՈՂԵՌՆԻՉՄ ԵՎ ՀԵՏՄՈՂԵՌՆԻՉՄ

Քաղաքական արդիականացման (մոդեռնիզացիայի) տեսությունը և նորագույն ժամանակների քաղաքական տեսական մեթոդաբանությունը: Էնսոնի Գիդենս՝ Մոդեռն - ռիսկի հասարակություն: Հետմոդեռնիզմը քաղաքական տեսությունում: Ժան Բոդրիարի արմատական հետմոդեռնիզմը: Ֆրեդերիկ Զեմետտի նեոմարքսիստական հետմոդեռնիզմը: Յու. Հաբերմասը հետմոդեռնիզմի դեմ:

Քաղաքական արդիականացման (մոդեռնիզացիայի) տեսությունը և նորագույն ժամանակների քաղաքական տեսական մտքի զարգացումները:

Քաղաքական արդիականացման (մոդեռնիզացիայի) տեսությունը քաղաքագիտության մեջ սկսել է ձևավորվել անցած հարյուրամյակի 50-60-ական թվականներին: Մասնավորապես այն զարգացել է Մ. Վեբերի այն գաղափարի վրա, որ վարքի ռացիոնալիզացիայի հիմքով եվրոպական քաղաքակրթությունը առաջ է գնում ավանդական հասարակությունից դեպի ժամանակակից հասարակությունը: Ֆ. Թենիսը և Է. Դյուկեյնը առաջադրեցին աշխատանքի բաժանման հիմքի վրա «մեխանիկական համաձայնության» հասարակությունից դեպի «օրգանական համաձայնության» հասարակությանն անցնելու էվոլյուցիայի տեսությունը: Արդիականացման մասնագետների տեսական հիմքի մեջ են մտնում նաև կառուցվածքային-գործառնական վերլուծության հիմնական դրույթները, մասնավորապես նրանց պատկերացումները հասարակության զարգացման մասին:

Մոդեռնիզացիա բառն իր սկիզբն առել է միջնադարյան լատինական «modo» (հենց հիմա, այժմ, հենց այս պահին) և «modus» (չափ, կարգ) բառերից, որոնք հետագայում ձևափոխվել են «modern», «modernizer» բառերի, որտեղ մոդայի տակ հասկացվում են այն սովորույթների ու ճաշակների ընդ-

հանրությունները, որոնք օրինակելի են համարվել այդ պահին որոշակի հասարակական միջավայրում: «Moderne» ֆրանսերեն նշանակում է նոր, ժամանակակից և նրանից ձևավորված «modernizer» բառը նշանակում է բարելավել, նորացնել, փոխել ժամանակակից պահանջներին համաձայն:

Քաղաքական արդիականացումը կամ մոդեռնիզացիան կարելի է բնութագրել բազմատեսակ քաղաքական ինստիտուտների, դերակատարների, կառույցների, քաղաքական նպատակների և կողմնորոշումների հստակեցմամբ: Պատահական չէ, որ **քաղաքագետ է. Շիլլզն այդ հասկացության մեջ ներառում է ավանդական տիպի պետությունից դեպի արդիական պետության կերպափոխության գործընթացը:**

Այսպիսով, քաղաքական արդիականացումը ժամանակակից քաղաքական գործընթացների կարևորագույն բաղադրիչներից մեկն է, որի ուսումնասիրությունն անհրաժեշտ պայման է դրանք ըմբռնելու, գնահատելու և զարգացման հեռանկարները պատկերացնելու համար:

Պատմականորեն քաղաքական արդիականացումը վերագրվում է քաղաքական կառուցվածքի և քաղաքական կուլտուրայի (մշակույթի) փոփոխությունների ամբողջությանը, որը կարելի է բնութագրել որպես հասարակության համընդհանուր կերպափոխություն, ինչի մեջ ընդգրկվում են աշխարհականացման, ինդուստրացման, սոցիալական շարժունակության, կենսամակարդակի աճի, գրագիտության, կրթության և զանգվածային միջոցների տարածման, ազգային համախմբվածության, բնակչության քաղաքական մասնակցության աստիճանի դրսևորումները:

Իր զարգացման ընթացքում քաղաքական արդիականացման տեսությունը պայմանականորեն երկու փուլ է անցել: Առաջին փուլում (1950-60-ական թթ.) այն ընկալվում էր որպես արևմտյան քաղաքական ինստիտուտների (կենտրոնացված պետություն, խորհրդարան, բազմակուսակցական համակարգ, համընդհանուր ընտրություններ,

իշխանությունների տարանջատում) կույր ընդօրինակում: Այդ փուլի գլխավոր գծերից էին թելեուլոգիզմը և եվրոկենտրոնությունը (ավելի ճիշտ ամերիկակենտրոնությունը, քանի որ ԱՄՆ-ը ներկայացվում էր որպես ամենազարգացած ժողովրդավարական երկիր, որին բոլորը, անկախ իրենց զարգացվածության մակարդակից, ազգային առանձնահատկություններից և այլ տարբերություններից, պետք է ընդօրինակեին): Այստեղ տեղին է հիշել իսրայելյան խոշոր քաղաքագետ Շ. Այզենշտադտի հետևյալ ձևակերպումը. «Պատմականորեն արդիականացումը դա Արևմտյան Եվրոպայում և Հյուսիսային Ամերիկայում 17-րդից մինչև 20-րդ դարերը զարգացած այն սոցիալական, տնտեսական և քաղաքական համակարգերի տիպերի փոփոխությունների գործընթացն է, որը հետագայում տարածել են այլ երկրների վրա...»:

Երկրորդ փուլում (1970-1980-ական թթ.) վերանայվեց արդիականության ու զարգացման միջև եղած կապը: Սկսեցին առաջնային համարվել սոցիալ-տնտեսական և քաղաքական կառուցվածքային այնպիսի փոփոխությունները, որոնք կարող են ընթանալ ոչ միայն արևմտյան ժողովրդավարացման մոդելում: Այս փուլում կարևորվեցին մարդու քաղաքական գիտակցության, մշակույթի, ավանդական և քաղաքական նոր արժեքների փոխներդաշնակության անհրաժեշտությունը:

Գերխնդիր համարվեց այնպիսի հնարավորությունների ստեղծումը, որը աշխարհակալական (գլոբալ) մակարդակով թույլ կտա աշխարհի ցանկացած տեղում ապրող մարդուն, ընդունելով ազատական արժեքների գերակայությունը, ինքնորոշվել (ինքնորոշված մարդ): Ընդունելով դա որպես ելակետ՝ ամերիկյան հայտնի քաղաքագետ Ս. Հանգթինգթոնը արդիականացումը դիտարկեց որպես «քաղաքակրթությունների բախում», այնուամենայնիվ համարելով, որ կառավարման ավանդական ինստիտուցիոնալ արժեքների կիրառումը չի կարող արգելք հանդիսանալ քաղաքական զարգացման և ինքնորոշված մարդու ինքնահաստատման համար:

Սամուել Ֆիլլիպս Հանգթինգթոն (1927-2008) - Ամերիկացի հանրահայտ քաղաքագետ, որի աշխատությունները վերաբերում են համեմատական հետազոտությունների, քաղաքակր-

թությունների տեսության և քաղաքական զարգացման ոլորտների: Տևական ժամանակ եղել է ԱՄՆ արտաքին քաղաքական ռազմավարության ազգային անվտանգության գծով փորձագետ: Երկար տարիներ նա գլխավորել է Հարվարդի համալսարանի միջազգային հետազոտությունների կենտրոնը, դասավանդել է ԱՄՆ առաջատար բուհերում, ընտրվել է քաղաքական գիտությունների ամերիկյան ընկերության նախագահ և այլն: 1989 թվականից Ջ. Օլինի անվան Ռազմավարական հետազոտությունների կենտրոնի տնօրենն էր: Բազմաթիվ արժեքավոր աշխատությունների հեղինակ է՝ «Քաղաքական իշխանություն ԱՄՆ-ԽՍՀՄ (1964), «Ավտորիտարիզմը արդի հասարակության քաղաքականության մեջ. զարգացած միակուսակցական համակարգերի դինամիկա» (1970), «Դժվարին ընտրություն. քաղաքական մասնակցությունը զարգացող երկրներում» (1976), «Համաշխարհային քաղաքականության երկընտրանքը (1985), «Քաղաքական զարգացում» (1986), «Երրորդ ալիք. դեմոկրատացումը 20-րդ դարի վերջին» (1991), «Քաղաքակրթությունների բախումը և համաշխարհային կարգերի վերափոխումը» (1996) և այլն:

Ս. Հանթինգթոնի հետազոտությունները քաղաքականության ուսումնասիրության նորագույն մոտեցումների արտահայտությունն են: Վաղ շրջանի աշխատություններում գիտնականը առաջարկում է տարբերել քաղաքական արդիականացման և քաղաքական զարգացման հայեցակարգերը՝ դրանք առանձնացնելով սոցիալ-տնտեսական արդիականացումից: Իր մոտեցումը նա հիմնավորում է համոզիչ փաստարկներով: Նրա կարծիքով, սոցիալ-տնտեսական արդիականացումը հանգեցնում է հասարակության մեջ սոցիալական ուժերի թվական ու բազմակերպության աճին: Այսինքն՝ բարդանում է սոցիալական կառուցվածքը, ավանդական հասարակություններին բնորոշ կրոնական և էթնիկական խմբերից բացի, առաջանում են պրոֆեսիոնալ, դասակարգային և այլ խմբեր: Այդ ամենի հետևանքով առաջանում է քաղաքական անկայունություն և քաղաքական ոլորտի անկում:

Քաղաքական արդիականացման տակ Ս. Հանթինգթոնն առաջին հերթին հասկանում է զանգվածային զորակոչում և քաղաքական գիտակցության զարգացում: Ըստ որում՝ քաղաքական արդիականացումը կարող է նախաձեռնվել ոչ միայն տնտեսական փոփոխություններով, այլև սոցիալական հաղորդակցության ինտենսիվությամբ, գրագիտության մակարդակի բարձրացումով և այլն:

Բարձր զարգացած հասարակության անքակտելի հատկանիշը հասարակական շահերն արտահայտելու ունակ քաղաքական ինստիտուտներն են: Ընդ որում՝ կուսակցությունը արդի քաղաքականության առանցքային ինստիտուտն է: Այստեղից ամերիկյան կառավարությանը նրա տված կիրառական երաշխավորությունը՝ ջանքերը կենտրոնացնել արդիականացվող հասարակություններում ոչ կոմունիստական կուսակցական շինարարությունը խրախուսելու գործին:

Համաձայն արդիականացման գործընթացի արագության և բնույթի՝ արդի աշխարհակալական քաղաքականությունը մեր ժամանակներում իրենից ներկայացնում է երկու տեսակի հասարակությունների (զարգացած և զարգացող) համագործակցություն: Նրանց այլ կերպ բնութագրում են նաև որպես «քայլող արդիականացում» ապրող հասարակություններ (Անգլիա, ԱՄՆ, Գերմանիա, Կանադա և այլն), որոնք քաղաքական զարգացում են ապրել արդյունաբերական առաջին հեղաշրջման պայմաններում՝ հռչակելով իրենց հավատարմությունը քաղաքացիական հասարակության սկզբունքներին և «վազող արդիականացում» ապրող հասարակություններ (լատինաամերիկյան, աֆրիկյան ու ասիական այն հանրությունները, որոնք նախընտրում են իրենց կենսաձևը ու կյանքի որակն արդիականացնել՝ մեխանիկորեն ընդօրինակելով Արևմտյան երկրներին): Վերջիններիս ջանքերը միանգամից արդիականացնել կյանքի բոլոր ոլորտները այդ երկրներում, բնականաբար, ձախողվեցին: Այդ փորձը հանրագումարի բերելով՝ որոշ մասնագետներ սկսեցին խոսել «մասնակի արդիականացման», «արդիականացման սինդրոմի», «փակուղային արդիականացման» մասին: Փորձը ցույց տվեց, որ այդ երկրներում գոյություն ունեցող քաղաքական ու տնտեսական պայմաններում պատրաստի մոդելների հանպատրաստի ներդրումը դրական արդյունքների չի հանգեցնում: Փաստորեն, տեղի է ունենում տիպաբանո-

րեն իրար հակադիր արժեքների բախում, որն էլ բերում է փոխադարձ անհանդուրժողականություն:

Այս ամենի կանխման նպատակով 1990-ական թվականներից սկսած աշխարհակալական քաղաքակրթության ենթատեքստում արդիակամացման խնդիրները հստակեցնելու համար՝ զարգացած երկրների հետ անցումային փուլ ապրող երկրների քաղաքական համակարգերի ներդաշնակության (նաև աններդաշնակության) խնդիրները սկսեցին դիտարկվել ժողովրդավարական անցման տեսանկյունից:

Զբիգնև Բժեզինսկի - Նորագույն ժամանակների քաղաքական մտքի վրա մեծ ազդեցություն ունեն ամերիկյան ճանաչված պետական գործիչ, քաղաքագետ, սոցիոլոգ, դիվանագետ, տոտալիտարիզմի տեսության ստեղծող (Կարլ Ֆրիդրիխի հետ), կապիտալիզմը տեխնոտրոնային դարաշրջան թևակոխելու և նոր տիպի ամերիկյան հեգեմոնիայի հայեցակարգի հեղինակ Զբիգնև Բժեզինսկին (ծնվ. 1928 թ.): Նա 1953 թ. ավարտել է Զարվարդի համալսարանը և նույն տարի սկսել է դասավանդել այնտեղ: 1961 թ.՝ ավելի քան 15 տարի գլխավորել է Ռոքֆելլերի կողմից ֆինանսավորվող և ԿՀՎ-ի կողմից ուղղորդվող Կոլումբիայի համալսարանի Ռուսական ինստիտուտը: Անցած դարի 60-ական թվականներին ԱՄՆ նախագահներ Ջոն Բեննեդու և Լինդոն Ջոնսոնի վարչակազմում խորհրդական էր: 1977-1981 թթ. Ջոն Քարտերի կառավարությունում զբաղեցրել է ազգային անվտանգության գծով ԱՄՆ նախագահի խորհրդականի կարևոր պաշտոնը: Զ. Բժեզինսկու հայտնի աշխատություններից են «Երկրորդ շանս», «Մեծ շախմատային տախտակ. Ամերիկայի գերիշխումը և դրա աշխարհառազմավարական իմպերատիվները», «20-րդ դար», «Հեգեմոնիայի սորուն ավազները», «Ինչպես չի կարելի արաբական աշխարհին դեմոկրատիա վաճառել», «Միացյալ նահանգները բոլորից բարձր: 1989 թվականի միջազգային հետևանքները», «ԱՄՆ և Ռուսաստան» և այլն:

Նա ամեն կերպ հիմնավորում է ԱՄՆ-ի համաշխարհային տիրապետության տարածման անհրաժեշտությունը և հանդիսանում է Արևել-

յան Եվրոպայում սոցիալ-տնտեսական և քաղաքական փոխակերպումների և ԱՄՆ արտաքին քաղաքականության մեջ մարդու իրավունքների շեշտադրման ու «դեմոկրատիայի հարկադրման», և այլ աշխարհամասերում բազմազույն «հեղափոխությունների» ճարտարապետներից մեկը: Ամերիկյան տիրապետության հաստատման համար նա առաջարկում է դրսևորել «առավել կառուցողականություն և ավելի պատվամոլություն», որպեսզի «համաշխարհային գործընթացը շարժեն մեռյալ կետից»:

Իմմանուիլ Վալլերշթայն - Ժամանակակից քաղաքական տեսական մտքի զարգացման համար կարևորվում են նաև ամերիկյան սոցիոլոգ Իմմանուիլ Վալլերշթայնի (ծնվ. 1930 թ.) աշխատությունները: Նա աշխարհահամակարգային վերլուծության տեսության ստեղծողն է, տնտեսության, պատմական համակարգերի և քաղաքակրթությունների ուսումնասիրության Ֆ.Բրոդելի անվան կենտրոնի տնօրենը: Հեղինակ է բազմաթիվ աշխատությունների, այդ թվում՝ «Կապիտալիստական աշխարհատնտեսություն» (1979), «Պատմական կապիտալիզմ» (1983), «Հեղափոխության փոխակերպումը. սոցիալական շարժումը և աշխարհամշակույթը» (1991), «Լիբերալիզմից հետո» (1991), «Ուտոպիականություն կամ պատմական այլընտրանքները 21-րդ դարի համար» (2000) և այլն:

Ի. Վալլերշթայնը աշխարհահամակարգային վերլուծությունը բնորոշում է որպես սոցիալական գիտության առանձին հիմնադրույթների քննադատություն, միաժամանակ դրանք նորովի իմաստավորման միջոց:

Նրա տեսության համաձայն աշխարհահամակարգային վերլուծությունը կառուցվում է հետևյալ դրույթների վրա.

- Գոյություն ունի հասարակության մասին միասնական գիտություն (արդի սոցիալական գիտությունները միասնական գիտության մասնագիտացված գումարելիներն են):
- Միասնական սոցիալական գիտությունը նաև պատմական գիտություն է (արդի համակարգերի վիճակը հասկանալու հա-

մար անհրաժեշտ է ուսումնասիրել դրա պատմական դինամիկան):

- Սոցիալական վերլուծության նախահիմնային միավորը ոչ թե հասարակությունն է կամ պետությունը (ինչպես նաև «դասական» սոցիոլոգիայի և քաղաքագիտության դեպքում), այլ պատմական համակարգը (որը միաժամանակ և՛ պատմական է, և՛ համակարգային):

Աշխարհակարգային վերլուծության շրջանակներում Ի. Վալլերշթայնն աշխարհը դիտում է որպես զարգացման ընդհանուր գործընթացի շրջանակում գտնվող միասնական (սոցիալական) համակարգ:

Գաբրիել Ալմոնդ (1911-2002) - Ամերիկյան ականավոր քաղաքագետ, որի քաղաքական համակարգերի և մշակույթների համեմատական հետազոտությունները, ինչպես նաև քաղաքական զարգացմանը նվիրված աշխատությունները համարվում են մեր ժամանակների քաղաքական գիտության դասական գործեր: Դասավանդել է ամերիկյան մի շարք առաջատար համալսարաններում, եղել է քաղաքական գիտության ամերիկյան ընկերակցության նախագահը: Հիմնական աշխատանքներն են՝ «Պայքարը դեմոկրատիայի համար Գերմանիայում» (1949), Ամերիկյան ժողովուրդը և արտաքին քաղաքականությունը» (1950), «Կոմունիզմի գալթակցությունները» (1954), Ջարգացող տարածաշրջանների քաղաքական համակարգերը(1960), «Համեմատական քաղաքականություն. էվոլյուցիոն մոտեցում» (1966), «Համեմատական քաղաքականություն. համակարգը, գործընթացը, քաղաքական ուղեգիծը» (1978), «Առաջընթացը և դրա թերությունները»(1982), «Արդի եվրոպական քաղաքականությունը» (1999), «Ժամանակակից համեմատական քաղաքականություն» (2000) և այլն:

Նրա աշխատությունները արժեքավոր են ոչ միայն ըստ էության համեմատական քաղաքագիտության և քաղաքական տեսության առումով, այլև ամբողջ գիտաճյուղի համակարգի համար:

Գ. Ալմոնդն առաջինն էր, որ զբաղվեց ժամանակակից քաղաքական համակարգերի հիմնահարցերով: Նրա կարծիքով, քաղաքա-

կան համակարգը վարքի ու փոխազդեցության կառուցվածք է, որն իրագործում է երկու տեսակի գործառույթ՝ լրատվության ներմուծում (քաղաքականության մեջ հաջորդականությունն ապահովող քաղաքական սոցիալականացում), բնակչության զորակոչ, քաղաքական դերերի բաշխում, շահերի արտաբերում, և երկրորդ՝ լրատվության դուրս բերում (օրենսդրական գործունեությունը որպես նորմերի ներմուծում, գործադիր գործունեություն՝ նորմերի դիտարկում, դրանց վերահսկում): Հասարակության կառուցվածքային տարբերակման զարգացման մակարդակի ցուցանիշի հիման վրա Գ. Ալմոնդը քաղաքական համակարգի տիպաբանությունը կառուցեց չորս գումարելիներով՝ անգլոամերիկյան, մայրցամաքային-եվրոպական, ավանդական և տոտալիտար:

Նրա ավանդը մեծ է քաղաքական կուլտուրայի խնդիրների մշակման ասպարեզում: Նրա կողմից առաջադրված դրույթները դարձան ազգային քաղաքականության ուսումնասիրման, քաղաքական համակարգերի կայունության-անկայունության վերլուծության մեթոդաբանության հիմքը:

Գ. Ալմոնդին է պատկանում քաղաքացիական կուլտուրայի՝ որպես դեմոկրատական հավասարակշռության տեսության մշակումը:

Դենիել Բելլ (1919-2011) - ամերիկյան փիլիսոփա, սոցիալական փիլիսոփայության սցիենտիկ-տեխնոկրատական ուղղության առաջատար ներկայացուցիչ, սոցիոլոգ, ֆուտուրոլոգ և սոցիալական կանխագուշակման ոլորտի կարկառուն մասնագետ: Ժամանակակից ամերիկյան նեոպահպանողականության («պահպանողական տեխնոկրատիզմ») գաղափարախոսական ոգեշնչողներից մեկը: Քաղաքական մտքի զարգացման գործում Դ. Բելլը մարդկության պատմության գիտության և տեխնոլոգիայի առաջատար դերի դրույթի հիման վրա հետինդուստրիալ հասարակության տեսության ստեղծողներից է: Հեղինակել է բազմաթիվ ուսումնասիրություններ, այդ թվում «Գաղափարախոսության վերջը» (1960) «Աջ արմատականություն» (1963), «Մարքսիստական սոցիալիզմը Միացյալ Նահանգներում» (1967), «Երկուհազարամյակի շեմին» (1968), «Գալիք

հետինդուստրիալ հասարակությունը, սոցիալական կանխագուշակման փորձ» (1973), «Կապիտալիզմի մշակութային հակասությունները» (1976) և այլն:

Դ. Բեկլին է պատկանում այն հետևությունը, որ հետինդուստրիալ հասարակության մեջ գիտության և տեխնիկայի հեղափոխականորեն արագ զարգացումը ոչ արդիական, նույնիսկ ավելորդ է դարձնում սոցիալական հեղափոխության պահանջը, քանի որ դրա տեղը զբաղեցնում է գիտական, տեխնոլոգիական հեղաշրջումը: Դա էլ հենց հասարակության ապագադափարականացման, սոցիալական կառավարման գործում գաղափարախոսության դերի նվազեցման, դրա ընդհանրապես սպառնալի պատճառն է: Նրա կարծիքով, ինդուստրիալ հասարակության համար զարգացման աղբյուրն ու ուղղորդող ուժը աշխատանքի և կապիտալի հակասությունն է, իսկ նրա նյութական հիմքը և միաժամանակ գործառնության ու կառավարման միջոցը՝ մեքենայական տեխնոլոգիան (այստեղից էլ դարեր ի վեր սկզբունքորեն տարբեր գաղափարախոսական համակարգերի՝ լիբերալիզմի և սոցիալիզմի սուր հակասությունը):

Հետինդուստրիալ հասարակության մեջ առաջին պլան են մղվում գիտական, նաև տեսական գիտելիքն ու լրատվությունը՝ որպես իշխանության և հասարակության աղբյուր: Իր հերթին համապատասխանաբար փոխվում է տեխնոլոգիայի բնույթը, քանի որ գիտելիքը պահանջում է մշակման, պահպանման և փոխանցման նոր միջոցներ: Ի հայտ են գալիս ինտելեկտուալ («խելոք») տեխնոլոգիաներ, որոնք կառավարման ոլորտից դուրս են մղում հիմը՝ «մեքենայականը»:

Ըստ Դ. Բեկլի՝ ամբողջությամբ վերցրած հետինդուստրիալ հասարակությունը բնութագրվում է.

- 1) տնտեսության մեջ սպասարկման ոլորտի գերիշխող դիրքերով,
- 2) սոցիալական կառավարումով, որը դառնում է ավանդական քաղաքական գործչին փոխարինող գիտնականի և պրոֆեսիոնալ-տեխնոկրատի զբաղմունքը,
- 3) ամենուրեք ինտելեկտուալ տեխնոլոգիաների տարածումով և դրա հիման վրա էլ՝ տեխնոլոգիական առաջընթացով:

Մեր ժամանակներում քաղաքական տեսության մեջ սուր բանավեճ է գնում այն մասին, թե արդյո՞ք արդի հասարակությունը գտնվում է Մոդեռնի դարաշրջանում, թե նրանում տեղի ունեցած հիմնարար փոփոխությունները հասցրել են Հետմոդեռնիզմին: Վերջինս կարելի է դիտարկել որպես հետստրուկտուրալիզմի շարունակություն և ընդլայնում:

Էլվին (Օլվին) Թոֆլեր (ծնվ. 1928 թ.) - Ամերիկյան փիլիսոփա, սոցիոլոգ և ֆուտուրոլոգ, «հետինդուստրիալ հասարակության» հայեցակարգի հեղինակներից մեկը: Եղել է հանրաճանաչ «Ֆորտունա» ամսագրի խմբագիրը, Կոռնելյան համալսարանի պրոֆեսոր, Սպիտակ տան բիզնես-խորհրդականը, կնոջ՝ Կոռնելյա Տոֆլերի հետ, ով համահեղինակ է նրա մի քանի աշխատությունների, Վաշինգթոնի ազգային պաշտպանության համալսարանի վաստակավոր պրոֆեսորներ են: Նրա ճանաչված աշխատություններից են «Ապագայի ցնցումը» (1970), «Երրորդ ալիք» (1980), «Իշխանության մետամորֆոզները» (2004) և այլն:

Իր աշխատություններում է. Թոֆլերը առաջ է քաշում այն գաղափարը, որ աշխարհում տեղի են ունենում հասարակության տիպերի ալիքային փոփոխություններ: «Առաջին ալիքը» դա ագրարային հեղափոխության արդյունքն էր, որը փոխարինեց որսորդների և հավաքողների մշակույթը: «Երկրորդ ալիքը» արդյունաբերական հեղափոխության արդյունքի հետևանքն էր, երբ հիմնադրվեց ընտանիքի միջուկային տիպը, կրթության կոնվերային համակարգը և կորպորատիվիզմը: «Երրորդ ալիքը» ինտելեկտուալ (մտավոր) հեղափոխության արդյունքն է, երբ ձևավորվեց հետարդյունաբերական հասարակությունը, որտեղ նկատվում են ենթամշակույթների և կենսակերպի ահռելի տարբերությունները: Այդ պայմաններում տեղեկատվությունը կարող է փոխարինել մեծ քանակի նյութական ռեսուրսներին, ինչը բանվորների համար դառնում է այն գլխավոր հիմքը, որը պայմաններ է ստեղծում միությունների մեջ ազատ համախմբվելու համար: Նրա կարծիքով այդ հերթական ալիքը պատմության մեծագույն շրջադարձն է, սոցիումի հսկայական փոխակերպում, սոցիալա-

կան և անհատական կենցաղի բոլոր դրսևորումների բազմակողմանի վերափոխում: Խոսքը սոցիալական հեղափոխության մասին չէ, որը հիմնականում ուղղված է քաղաքական կարգի փոփոխությանը, այլ վերաբերում է տեխնոլոգիական փոփոխություններին, որոնք հասունանում են դանդաղ, էվոլյուցիոն ճանապարհով: Ըստ Է. Թոֆլերի ինչքան շուտ մարդկությունը գիտակցի «Երրորդ ալիքին» անցնելու անհրաժեշտության մասին, այնքան քիչ կլինեն բռնության, թելադրանքի և այլ դժբախտությունների դրսևորման վտանգները: Ներկա՝ «Երրորդ ալիքի» շրջանը նա անվանում է «տեղեկատվական հասարակություն», որտեղ ձևավորվում են նոր տիպի ընտանիքներ և աշխատանքի ոճեր, քաղաքականության, տնտեսության և գիտակցության նոր ձևեր: Աշխարհը դադարում է մեքենա թվալ, լցվում է նորամուծություններով, որոնք ընկալելու համար անհրաժեշտ է մարդկային իմացության հնարավորությունների մշտական զարգացում: «Երրորդ ալիքի» խորհրդանիշներն են դառնում ամբողջականությունը, անհատականությունը և մաքուր, մարդկային տեխնոլոգիան: Այդպիսի հասարակության մեջ առաջնային են դառնում սպասարկման, գիտության և կրթության ոլորտները: Կորպորացիաներն իրենց տեղը պետք է զիջեն համալսարաններին, իսկ գործարարները՝ գիտնականներին: Հազարամյակներ շարունակ ժողովուրդների հիմնական ռեսուրսը համարվել է տարածքն ու ոսկին: Ներկայումս, ըստ Է. Թոֆլերի, դրանք իրենց տեղը զիջում են տեղեկատվական ռեսուրսին, որը մոտակա ժամանակներում դառնալու է որոշիչ: Նա իր ուսումնասիրություններում հատուկ ուշադրություն է դարձրել ժամանակակից իշխանության խնդիրներին, որը հնարավոր է միայն այնպիսի համատեղման պայմաններում, ինչպիսիք են պատահականությունը և անհրաժեշտությունը, քաոսը և կարգականունը: Սխալ է իշխանության գերկենտրոնացումը, միաժամանակ անթույլատրելի է նաև իշխանության ոչ լիարժեք կենտրոնացումը: Հակամարտությունը նա համարում է անխուսափելի հասարակական երևույթ, ուստի բնական է համարում պայքարը իշխանության համար:

ԷՆՏՈՆԻ ԳԻՂԵՆԱ՝ ՄՈՂԵՆՆ - ռիսկի հասարակություն

19-20-րդ հարյուրամյակների քաղաքական և սոցիալական տեսության խոշորագույն ներկայացուցիչներ Կ. Մարքսը, Մ. Վեբերը, Է. Դյուկհեյմը, Գ. Ջիմենելը և ուրիշներ մեծ ուշադրություն են դարձրել իրենց ժամանակների, այն է՝ Արդիականության քննադատական վերլուծությանը: Նրանք բոլորն առանձնանում էին Արդիականության ծննդյան կոնկրետ ժամանակը որոշելու ձգտումով: Սակայն դա հիմնականում հանգեցնում էր քննադատական վերլուծության:

Կ. Մարքսի համար Արդիականությունը, առաջին հերթին կապված էր կապիտալիստական տնտեսության հետ: Նա ընդունում էր կապիտալիզմի առաջընթացն իրեն նախորդած հասարակարգերի համեմատ, սակայն նրա աշխատությունների մեծ մասը նվիրված է այդ տնտեսական համակարգի քննադատությանը և նրա թերություններին (օտարացում, շահագործում և այլն):

Մ. Վեբերի համար հատկանշական էր, որ ժամանակակից աշխարհի սահմանագիծը դարձել է ձևական (ֆորմալ) բանականության էքսպանսիան մյուս տիպի բանականությունների հաշվին, ինչը, վերջիվերջո, հանգեցրեց բանականության «երկաթյա վանդակին»:

Նորագույն ժամանակների այն տեսաբաններից, որոնք պահպանել են «դասականների» հետ ժառանգական կապը, կարելի է հիշատակել Էնտոնի Գիլենսին:

Էնտոնի Գիլենս (ծնվ. 1938 թ.) - Մեծ Բրիտանիայի խոշորագույն սոցիալական տեսաբաններից և քաղաքական մտածողներից մեկն է: 1969 թ. սոցիոլոգիա է դասավանդել Քեմբրիջի համալսարանում: 1975 թ. գրեց «Ժամանակակից հասարակությունների դասակարգային կառուցվածքը գիրքը, որը նրան հանրաճանաչ դարձրեց: 1984 թ. երկարատև աշխատանքից հետո հրատարակեց իր հիմնական գործը՝ «Հասարակության կառուցվածքը՝ ստրուկտուրալիզացման տեսության ակնարկ»-ը: 1985 թ. դարձել է Քեմբրիջի համալսարանի պրոֆեսոր, ապա Լոնդոնի տնտեսության և քաղաքագիտության դպրոցի ղեկավար:

Մոդեռնի սկիզբը նա դիտարկում է 18-րդ հարյուրամյակից՝ նրան տալով հնդկական **Ջագերնատութ** անունը (Ջագերնատութը հնդկական առասպելում Վիշնու աստծո կերպարափոխություններից մեկն է: Սովորաբար այդ հասկացությունը նշանակում է անխիղճ, անսամձելի և անկանխելի ուժ): Ավելի ճիշտ, նա այդ եզրը կամ գիտաբառն օգտագործում է Արդիականության զարգացած (ուշ կամ բարձր) փուլը նշելու համար: Դրանով է. Գիդենսը հակադրվում է նրանց, ովքեր գտնում են, թե մենք արդեն մտել ենք հետմոդեռնի աշխարհը, չնայած որ ընդունում է ապագայում հետմոդեռնիզմի որևէ տիպի հնարավորությունը: Մենք դեռ ապրում ենք ժամանակակից աշխարհում, սակայն այն խիստ տարբերվում է Մ. Վեբերի և Կ. Մարքսի ժամանակների աշխարհից:

Է. Գիդենսն այսպես է նկարագրում Արդիականության «Ջագերնատութը». «...հսկայական ուժի անկառավարելի շարժիչը (որը մարդն է) մենք կարող ենք կառավարել միմյան որոշակի աստիճանը, բայց այն սպառնում է դուրս գալ կառավարումից և բաժանվել մասերի: Ջագերնատութը ջախջախում է նրանց, ովքեր դիմադրում են իրեն, չնայած որ երբեմն թվում է, թե նա շարժվում է ուղիղ ճանապարհով, ժամանակ առ ժամանակ նա նետվում է տարբեր ուղղություններով և կանխատեսել այդ նետումները հնարավոր չէ»:

Արդիականությունը որպես Ջագերնատութի ձև՝ բացառիկ շարժունակ է: Այդ «անկառավարելի աշխարհը» իր չափերով և դյուրաշարժությամբ չունի իր նմանակը ոչ մի նախորդ համակարգում: Բացի այդ, Է. Գիդենսը ենթադրում է, որ այդ նոր աշխարհը բոլորովին միագիծ չէ: Այն բաղկացած է բազմաթիվ հակամարտող մասերից: Ջագերնատութը շարժվում է ժամանակի և տարածության միջով: Ըստ Է.Գիդենսի՝ Արդիականությունը կարելի է որոշել հինգ հիմնական ինստիտուտների միջոցով.

1. Կապիտալիզմ, որը բնութագրվում է ապրանքային արտադրությամբ, կապիտալի մասնավոր սեփականությամբ, վարձու աշխատանքով և դասակարգային համակարգով:
2. Ինդուստրիալիզմ, որը ենթադրում է հսկայական էներգետիկ պաշարների և մեքենաների օգտագործումն ապրանքներ արտադրելու համար: Ինդուստրիալիզմի ազդեցությունը չի

սահմանափակվում օգտագործման ոլորտով, այլ ազդեցություն է գործում կյանքի այլ ոլորտների՝ տրանսպորտի, կոմունիկացիաների և նույնիսկ կենցաղի վրա:

3. Հսկողություն, նոր բնութագիր, որը հատուկ է հատկապես Արդիականությանը: Դա ենթականների վարքագծին հետևելու ունակությունն է:
4. Բռնության գործիքների, այդ թվում՝ ռազմական ուժի նկատմամբ վերահսկողություն: Սրա մեջ է մտնում նաև պատերազմի ինդուստրիալիզացիան:
5. Ազգային պետություն, որն արմատապես տարբերվում է մինչ Արդիականությունը եղած պետական ձևերից: Մեր դարաշրջանի ուսումնասիրության համար բնութագրական է շեշտադրումն ազգային պետության և ոչ թե հասարակության վրա

Արդիականության դյուրաշարժությունն ըստ է. Գիդենսի ապահովում են հետևյալ բնութագրերը.

Առաջին, ժամանակի և տարածության բաժանումը: Այն, ինչպես է. Գիդենսի բոլոր դրույթները ոչ գծային բնույթ ունեն, այսինքն՝ դիալեկտիկական են: Արդիականությանը նախորդող հասարակություններում ժամանակը միշտ կապված էր տարածության հետ: Սոդեմնիզացիայի զարգացման հետ այդ կապը խախտվել է և վերածվել մաքուր ձևերի: Այժմ պարտադիր չէ, որ նրանք միաժամանակ հանդես գան: Այսպես, կարելի է հարաբերվել մարդկանց հետ, որոնք բացակայում են այդ տեղից կամ հեռու տեղում են գտնվում: Սուբհանդակներին փոխարինել է լավ կազմակերպված փոստը, իսկ վերջինիս՝ հեռախոսը՝ իր բոլոր ձևերով: Ժամանակի և տարածության բաժանումը հանգեցրել է մի քանի ոչ երկրորդական հետևանքների՝

- այն հնարավոր է դարձրել ստեղծելու կազմակերպության (օրինակ՝ բյուրոկրատիայի) և ազգային պետության բանական միջոց, որն ունի մեծ դյուրաշարժություն և ի վիճակի է կապել լուրջ ու գլոբալ ոլորտները,
- այն հանգեցրեց նրան, որ համաշխարհային պատմությանը կարելի է նայել բանականության հայացքով և թույլ տվեց պատմությունում որոնել այն ինչը ձևավորել է ներկան,
- նման բաժանումն ազատագրման կարևորագույն նախադրյալն

է, ինչը դյուրաշարժություն է հաղորդում զարգացմանը:

Երկրորդ, ազատագրումը նշանակում է սոցիալական հարաբերությունների դուրս գալը սահմանափակ փոխհարաբերությունների համատեքստից և նրանց հավաքագրումը անորոշ ժամանակի տարածությունում: Ժամանակակից հասարակությունում գործում են ազատագրման երկու մեխանիզմներ՝

1. Սիմվոլները (օրինակ՝ փողը): Մենք կարող ենք համագործակցել մարդկանց հետ, որոնք մեզնից հեռու են թե ժամանակային և թե տարածքային առումով: Այսպես, Անգլիայում գտնվող բանկի միջոցով Մոսկվայից փող ուղարկել Յնդկաստանում ճանապարհորդող ընկերոջը:

2. Տեխնիկական ձեռքբերումների կամ պրոֆեսիոնալ փորձաքննության համակարգերը: Փորձաքննական համակարգերն օգնում են տներ կառուցել, որոնցում մենք ապրում ենք, կամ մեքենաներ, որոնցով երթևեկում ենք: Այդպիսով, փորձագետներն օգնում են հաղթահարել ժամանակը և տարածությունը: Այստեղ կարևորագույն դեր է խաղում վստահությունը, քանի որ ֆինանսական ու իրավական համակարգերը կարող են աշխատունակ լինել միայն այն դեպքում, երբ մարդիկ նրանց վստահում են:

Երրորդ, մա արդիականության մյուս որակն անվանում է ռեֆլեկտիվությունը: Ժամանակակից աշխարհում ամեն ինչ բաց է ռեֆլեքսիայի առաջ: Վերջինս ենթադրում է հավատ վերացական համակարգերի նկատմամբ, մասնավորապես փորձագիտական գնահատականներին: Իսկ դա, ըստ Է. Գիդենսի, ենթադրում է ռիսկային գոտու առաջացում, քանի որ ոչ բոլոր վերացական համակարգերն են ճիշտ (պոզիտիվիստների կարծիքով նրանցից ոչ մեկը ճիշտ չէ): Ռիսկը գլոբալ երևույթ է (միջուկային պատերազմը կարող է մեզ բոլորիս ոչնչացնել) և գնալով ավելի շատ երևույթներ կարող են ազդեցություն թողնել մարդկանց հոծ զանգվածների վրա: Դրա համար Է. Գիդենսը Արդիականությունն անվանում է Ջագերնաութ, այսինքն, որ մեր աշխարհում ներկայումս բացակայում է բնական (օնտոլոգիական) անվտանգությունը:

Նա արդիականության գալուստի բացասական հետևանքների չորս հիմնական պատճառ է նշում.

1. Այս աշխարհը ստեղծողների սխալները:
2. Ժամանակակից աշխարհը կառավարողների սխալները:
3. Բարի մտադրությունների ոչ դիտավորյալ հետևանքները:
4. Մեր սխալ գիտելիքները հասարակության մասին:

Է. Գիդենս կարծում է, որ սկզբունքորեն հասարակության հետագա զարգացման մասին սոցիալական ճշգրիտ կանխատեսում գոյություն չունի, ուստի ժամանակակից աշխարհն անկառավարելի է: Սակայն նա գտնում է, որ սոցիալական շարժումները կարող են իջեցնել այդ ռիսկերը:

Նրա համոզմամբ, Մոդեռնը դա ռիսկի մշակույթ է: Հարցը այն չէ, որ սոցիալական կյանքը սպասվածից ավելի մեծ ռիսկեր է պարունակում: Ավելի շուտ, ռիսկի կոնցեպցիան հիմնարար նշանակություն է ձեռք բերում այն միջոցի համար, որի օգնությամբ գործող անձինք և տեխնիկական մասնագետները կազմակերպում են սոցիալական կյանքը: Մոդեռնը սահմանափակում է ռիսկը հասարակական-քաղաքական որոշ ոլորտներում, սակայն միաժամանակ ստեղծում է այլ ժամանակների համար անհայտ ռիսկի նոր շրջաններ:

Այդ խնդիրն իր հետագա զարգացումը գտավ Ուլրիխ Բեկի աղմկահարույց «Ռիսկի հասարակություն՝ դեպի նոր Արդիականություն» աշխատությունում:

Ուլրիխ Բեկ (1944-2015) - գերմանացի սոցիոլոգ և քաղաքական փիլիսոփա, Մյունխենի համալսարանի և Լոնդոնի տնտեսության դպրոցի պրոֆեսոր: 1992 թ. մինչև իր մահը Մյունխենի համալսարանի Սոցիոլոգիայի ինստիտուտի տնօրեն: «Ռեֆլեքսային մոդեռնիզացիա» և «Ռիսկի հասարակություն» հայեցակարգերի հեղինակն է: Նրա աշխատություններից են «Ռիսկի հասարակություն՝ դեպի նոր Արդիականություն», «Ինչ է գլոբալիզացիան», «Իշխանությունը և նրա ընդդիմախոսները գլոբալիզացիայի դարաշրջանում», «Կոսմոպոլիտ աշխարհայացք» և այլն:

Նրա կարծիքով, մենք շարունակում ենք ապրել Մոդեռնի պայմաններում, սակայն դրա նոր ձևի մեջ: Նախորդած Մոդեռնի «դասա-

կան» փուլը կապված էր արդյունաբերական հասարակության հետ, իսկ ծնվող նոր արդիականություն, առաջին հերթին, կապված է ռիսկի հասարակության հետ: Մենք դեռ չենք ապրում ռիսկի հասարակությունում, բայց արդեն դուրս ենք եկել արդյունաբերական հասարակությունից: Դա նշանակում է, որ ժամանակակից հասարակությունն իր մեջ պարունակում է երկու Մոդեռնների տարրերը: Ավելին, ռիսկի հասարակությունը կարելի է դիտարկել որպես ինդուստրիալ հասարակության ձև, քանի որ շատ ռիսկեր բխում են արդյունաբերության գործունեությանից: Դա նման է նրան, թե ինչպես էր 19-րդ դարում մոդեռնիզացիան քայքայում ֆեոդալական հասարակությունը և ստեղծում արդյունաբերական հասարակություն: Նույն կերպ այսօր մոդեռնիզացիան քայքայում է ինդուստրիալ հասարակությունը և գալիս է ուրիշ արդիականություն: **Մենք այսօր դիտարկում ենք Արդիականության՝ այսինքն Մոդեռնի ոչ թե վերջը, այլ սկիզբը: Սա «դասական» տարբերակից դուրս տեսակետ էր:**

Նոր արդիականությունն Ու. Բեկը անվանում է ռեֆլեքսիվ Արդիականություն: Ինդուստրիալիզացիայի գործընթացը սկսվել է Արևմուտքում: Դա նշանակում է, որ մարդիկ առավել անկախ են դառնում կառուցվածքային սահմանափակումներից, ինչի հետևանքով ի վիճակի են ավելի շատ զբաղվել ռեֆլեքսային ստեղծագործությամբ ոչ միայն իրենց, այլև այն հասարակության համար, որտեղ իրոք ապրում են: Մարդիկ ավելի քիչ են կախված այն դասակարգից, որին իրենք պատկանում են և լիովին ինքնուրույն են գործում: Հենվելով սեփական ռեսուրսների վրա՝ մարդիկ ավելի ռեֆլեկտիվ են դառնում: Անհատական ընտրությամբ առաջ են գալիս նոր սոցիալական հարաբերություններ և նոր կապեր:

Հասարակության ժամանակակից փուլը բազմաթիվ նմանություններ ունի արդյունաբերական հասարակության հետ: Նախկին հասարակության գլխավոր հարցը հարստությունն էր և դրա բաշխումը: Ներկայիս հասարակության հիմնական հարցը՝ ռիսկի կանխարգելումն է կամ, ծայրահեղ դեպքում, այն փոքրագույնի հասցնելը: «Դասական» Մոդեռնի իդեալը հավասարությունն էր, ներկայիս՝ անվտանգությունը:

Ժամանակակից հասարակությունում, որպես կանոն, ռիսկն առա-

ջանում է հարստության աղբյուրներից: Արտադրության հետևանքով առաջացած վնասակար արդյունքները վտանգ են առաջացնում ոչ միայն կոնկրետ հասարակության համար: Գլոբալիզացիայի գործընթացները դրանք վտանգավոր են դարձրել ողջ աշխարհի համար: Ու. Բեկը պնդում է, որ ժամանակակից ռիսկերը չեն սահմանափակվում ոչ տեղով (արդյունաբերական արտանետումը մի երկրում կարող է վնաս հասցնել մեկ այլ երկրի) և ոչ էլ ժամանակով (Չերնոբիլի ատոմակայանի աղետը կարող է ազդել հետագա սերունդների վրա): Նոր Մոդեռնում իր նշանակությունը կորցնում է հասարակության դասակարգային կառուցվածքը:

Քաղաքականության ավանդական ոլորտը՝ կառավարությունը կորցնում է իշխանությունը, քանի որ մեծ ռիսկերն առաջանում են ի շնորհիվ, այսպես կոչված, ենթասուբքաղաքականության, օրինակ, խոշոր ընկերությունների, հետազոտական կենտրոնների և այլ նման կառույցների քաղաքականության: Հանուն բարձր նպատակների՝ առաջադիմության, գիտելիքի, հենց սուբքաղաքական համակարգում ձևավորվում են նոր հասարակության կառույցները, որոնք անտեսում են թե պառլամենտական համակարգը, թե ընդդիմությունը: Այդ գործընթացն Ու. Բեկն անվանում է «քաղաքականության անկում», երբ քաղաքականությունն այլևս կենտրոնացված կառավարությունը չի իրագործում, այլ զանազան ենթասուբքսմբերի և առանձին անհատների հսկողության ոլորտ է դառնում: Այդ ենթասուբքսմբերն ու անհատները կարող են ավելի ռեֆլեկտիվ և ինքնաքննադատ լինել քան կենտրոնացված կառավարությունը և, որպես կանոն, ավելի լավ են գլուխ հանում արդիականության ծնած խնդիրներից: Այսպիսով, դիալեկտիկան նրանում է, որ զարգացած Մոդեռնը միաժամանակ ծնում է աննախադեպ ռիսկեր և դրանք հաղթահարելու ռեֆլեկտիվ ունակություններ:

Հետմոդեռնիզմը քաղաքական տեսությունում

20-րդ հարյուրամյակի վերջին տասնամյակում մի քանի ոլորտներում (ճարտարապետություն, գեղանկարչություն, գրականություն և այլն) սկսեց զարգանալ մտքի նոր հոսանք, որը ստացավ «հետմո-

դեռնիզմ» անվանումը: Արդիականությունում բազմաթիվ խնդիրներ հայտնվեցին, որոնց վրա և ուշադրություն դարձրեցին նոր ուղղության և քաղաքական մտքի ներկայացուցիչները:

Քաղաքական տեսությունները, որոնք ներկայացվել են այս ուսումնական ձեռնարկում շարունակում են պահպանել իրենց նշանակությունը քաղաքական մտքի հիմնական հոսքի մեջ: Հարկ է նշել, որ հետմոդեռնիզմն ավելի շատ ազդեցություն է թողնում սոցիալական տեսության վրա: Հետմոդեռնիզմի ներսում արդեն կարելի է նույնականացնել մի քանի հոսանքներ:

Հետմոդեռնիզմն ուսումնասիրելու համար հարկ կլինի դուրս գալ քաղաքական տեսության շրջանակներից դեպի միջառարկայական դաշտը: Այն ավելի հարմար է դիտարկել ոչ թե որպես քաղաքական, այլ, ավելի շուտ՝ որպես սոցիալ-քաղաքական տեսություն: Չի կարելի հետմոդեռնիզմը հստակորեն անվանել տեսական մտքի «դպրոց»: Դա միասնական մտավոր շարժում չէ, որն ունի որոշակի նպատակ և իրեն հատուկ մոտեցում: Անհնար է անվանել որևէ մեկ հետմոդեռնիզմի տեսաբանի, ում մոտ հստակ տրված է այս ուղղության հիմնական դրույթները: Դա կապված է նրա հետ, որ հետմոդեռնիզմի գաղափարները ընկալեցին գրեթե բոլոր առարկաների ներկայացուցիչները, սկսած փիլիսոփաներից՝ վերջացած քաղաքական տեսաբաններով, աշխարհագրագետներից՝ մշակույթի պատմաբաններով: Ուստի գիտելիքի ամեն մի ոլորտ տվեց հետմոդեռնիզմի իր ձևակերպումը: Ընդ որում, մեկ առարկայում տրված հետմոդեռնիզմի ձևակերպումը չի համընկնում այլ առարկայում տրվածի հետ:

Այնուամենայնիվ, հետմոդեռնիզմում կարելի է տեսնել մի քանի մշտապես կրկնվող թեմաներ, որոնցից թվարկենք կարևորները.

- Պնդում, որ ներկայիս հասարակությունը, մշակույթը և կենցաղն էականորեն տարբերվում են հարյուր, հիսուն և անգամ երեսուն տարի առաջ գոյություն ունեցողներից:
- Ուշադրություն են դարձնում կոնկրետ հարցերի վրա: Օրինակ՝ զանգվածային լրատվամիջոցների, սպառողական հասարակության, տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման միտումների վրա և այլն:

- Ենթադրություն այն մասին, որ այդ տիպի զարգացումն ազդել է մեզ վրա՝ հասկանալու առավել վերացական հարցերը, օրինակ՝ իմաստ, նույնականություն և անգամ իրականություն:

- Եզրակացություն այն մասին, որ հնի վերլուծությունն այլևս չի կարող արդիական լինել, ուստի ներկան հասկանալու համար պետք է մշակել նոր մոտեցումներ և նոր բառարան:

Այսպիսով, հետմոդեռնիզմը դա մի նոր փորձ է նկարագրելու աշխարհն այնպես ինչպիսին է ինքը՝ աշխարհը: Այդ իմաստով հետմոդեռնիզմը մոդեռնիզմի նման (Յու.Յաբերմաս) կարելի է դիտարկել որպես չավարտված նախագիծ: Այն կարելի է ներկայացնել որպես աշխարհի նոր իրավիճակի վերլուծության նոր մոտեցումների փնտրտուքի գործընթաց:

Քաղաքական դիսկուրսի վերլուծության հետմոդեռնիստական մոտեցումը

Դիսկուրս հասկացությունը բազմանշանակ է (առաջացել է լատ. *diskursus* – մտորում, հիմնավորում բառից) և հաճախ այն օգտագործվում է որպես «տեքստ» բառի հոմանիշ: Ընդ որում, տեքստի տակ հաճախ հասկացվում էր ոչ միայն որպես խոսակցական գործունեության առանձնահատուկ արդյունքը, այլև իրականության ամենալայն ընդգրկումը, որը կառուցվել է առանձնահատուկ ձևով և որն իմաստ է կրում:

Գիտության մեջ «դիսկուրս», «քաղաքական դիսկուրս» հասկացության բազմաթիվ ձևակերպումներ կան, որոնցից կարելի է առանձնացնել երկու հիմնական մոտեցում.

Առաջին մոտեցումն ավելի ընդգրկուն է և դիսկուրս հասկացության տակ ներառվում են ժամանակահատված, տրամաբանություն և ավարտված ստեղծագործություն ներկայացնող իրականությունն է, որը ձևավորվել է իմաստային կողի օգտագործմամբ (բառարան և այլն) և իմաստների կազմակերպման հիմքի վրա (ավարտված «ստեղծագործություն», օրինակ՝ տեքստի տեսքով):

Ավելի նեղ մեկնաբանման կողմնակիցները դիսկուրսը ներկայաց-

նում են որպես կոմունիկացիայի (հաղորդակցության) առանձնահատուկ տեսակ: Այդ կոմունիկատիվ գործողությունը կարող է լինել բանավոր, գրավոր և ունենալ վերբալ և ոչ վերբալ մաս:

Դիսկուրս բառը կիրառական, «տեխնիկական» իմաստով նշանակում է որևէ օբյեկտի կամ հաղորդակցության գրավոր, բանավոր կամ պատկերավոր դրսևորում: Այս դեպքում կատարվում է ելույթների, տեքստերի, հարցազրույցների, զրույցների, քննարկումների և այլ նմանատիպ դրսևորումների վերլուծություն: Հասկանալի է, որ այս մոտեցումն օգտագործելու համար անհրաժեշտ են լեզվական, գրական, հոգեբանական և այլ այդօրինակ մասնագիտական գիտելիքներ:

Դիսկուրսի տեսությունը, չնայած որ խոր արմատներ ունի փիլիսոփայական ավանդույթներում՝ համեմատաբար նոր է գիտության մեջ: 20-րդ դարում դիսկուրս հասկացությունը սկսեց օգտագործվել լեզվաբանության մեջ, իսկ 1950-ական թվականներից ակտիվորեն օգտագործվում էր փիլիսոփայության, իսկ ավելի ուշ՝ այլ հումանիտար գիտություններում, այդ թվում՝ քաղաքագիտությունում:

Դիսկուրսի տեսության հիմքերը դրվեցին 20-րդ դարի 50-ական թվականներին քեմբրիջյան և օքսֆորդյան փիլիսոփայական դպրոցների ներկայացուցիչների կողմից: Քաղաքական դիսկուրսի հետազոտման առաջին հետազոտություններից էր 1956 թ.-ից սկսված Փ. Լասլեի «Փիլիսոփայություն, քաղաքականություն և հասարակություն» պարբերական հրատարակությունը: 1970-ականներից «դիսկուրս» գիտաբառը սկսում է ակտիվորեն օգտագործվել քաղաքական գործընթացները վերլուծելիս: 1980-ականներին Թ. Վան Դեյկի շուրջ առաջանում է դիսկուրսի վերլուծության հետ կապված լեզվաբանական կենտրոն, որի ուշադրության կենտրոնում էր ոչ միայն բովանդակային կողմը, այլև քաղաքական դիսկուրսի տեխնիկական վերլուծությունը: Այդ պահից կարելի է խոսել քաղաքական գործընթացի վերլուծության նոր տեսության ստեղծման մասին:

Քաղաքական դիսկուրսի ուղղություններից մեկը համարվում է նրա հետմոդեռնիստական մոտեցումը: Այն լայն կիրառություն է ձեռք բերում սոցիալական գիտություններում, այդ թվում՝ քաղաքագիտության մեջ և համարվում է «ամենամոդայիկներից» մեկը:

Քաղաքական դիսկուրսի վերլուծության ժամանակ հետմոդեռ-նիստները առաջնորդվում են հետևյալ սկզբունքներով: Նրանք ժխտում են բոլորի կողմից ընդունված միասնական իրականության կերպարի գոյությունը, որը կարելի է ուսումնասիրել և բացատրել: Շրջապատող աշխարհը ստեղծվում է մարդկանց հավատամքների և վարքի միջոցով: Գաղափարների տարածման հետ մարդիկ սկսում են հավատալ և գործել դրանց համապատասխան: Ամրապնդվելով սոցիալական հսկողության որոշակի կանոններով, նորմերով, ինս-տիտուտներով և մեխանիզմներով՝ դրանով իսկ այդ գաղափարները ստեղծում են իրականությունը:

Այդ ուղղության ներկայացուցիչների մեծ մասը գտնում է, որ իմաս-տը պետք է փնտրել ոչ թե շրջապատող արտաքին աշխարհում, այլ միայն լեզվում, որը հանդիսանում է անհատական պատկերացումնե-րի ստեղծողն ու ներկայացնողը: Ուստի լեզվի ուսումնասիրությունը համարվում է գիտության գլխավոր խնդիրը: Անհրաժեշտ է համար-վում հասկանալ, թե ինչպես է տեղի ունենում իրականության օբյեկտ-ների ստեղծումն ու ձևավորումը: Դրա միակ ճանապարհը համար-վում է լեզվի միջոցով տեքստի ուսումնասիրությունը:

Ինչպես գտնում են հետմոդեռնիզմի ներկայացուցիչները՝ դիս-կուրսը հասկանալու համար բավական միայն բուն տեքստի վեր-լուծությունը: Դրա ժամանակ նրանք անտեսում են տեքստի ստեղծ-ման պայմանները, նրա ստեղծման պատմությունը, հեղինակի անձը, գիտելիքները, ունակությունները և այլն: Այսինքն, տեքստի բովան-դակության իմաստը և նշանակությունը չեն պատկանում ոչ համա-տեքստին, ոչ հեղինակին, ոչ ընթերցողին, ոչ պատմությանը, այլ՝ միայն տեքստին: Ինչպես նկատել է Դ. Իսթոնը, այդ հեռանկարը ոչըն-չացնում է և օբյեկտիվությունը և սուբյեկտիվությունը, տեքստը խո-սում է ինքն իր համար, չի ընթանում երկխոսություն մարդկանց, հե-ղինակների և ընթերցողների մեջ:

Դրանով հետազոտողի համար մերժվում են այն արտաքին հիմքե-րը, որոնց վրա կարող է հիմնվել գիտական իմացությունը:

Շատ հետմոդեռնիստներ այդ մոտեցումն օգտագործում են ոչ միայն լեզվի նկատմամբ, այլև մարդկանց վարքագիծը վերլուծելիս: Նրանք գտնում են, որ մարդկային վարքագիծը «կառուցված է» ինչ-

պես տեքստը. «մենք կարդում ենք վարքագիծն ինչպես նախադասությունը: Վարքագիծը նշանակություն է պարունակում իր մեջ և իր մասին: Այդ պարագայում ակտորի մտադրությունները չեն ազդում իր վարքագծի նշանակության վրա: Հաշվի չեն առնվում նաև այն պայմանները, որոնց առկայությամբ դրսևորվում է մարդու վարքագիծը:

Այսպիսով, կարելի է ասել, որ հետմոդեռնիզմի շրջանակներում բացակայում է քաղաքական դիսկուրսի ամբողջական վերլուծությունը, քանի որ հաշվի են առնվում միայն սուբյեկտիվ իմաստները և դա այն հանգամանքներում, երբ տվյալ գիտաբառն լայնորեն օգտագործվում է նրանց կողմից:

Ժան Բոդրիարի արմատական հետմոդեռնիզմը

Ժամանակակից հետմոդեռնիստներից, թերևս, ամենաարմատականը կարելի է համարել Ժան Բոդրիարին (1929-2007): Նա միանգամից չի ընդունել այդ դիրքորոշումը և սկզբնական շրջանում՝ 1960-ականներին ստեղծագործում էր Մոդեռնի ավանդույթներով, որն ուներ մարքսիստական կողմնորոշում: Բայց շուտով նա հիասթափվեց մարքսիզմից և ստրուկտուրալիզմից ու սկսեց զբաղվել դրանց քննադատությամբ: Ծնվել է Ռեյմսում, ստացել բանասիրական կրթություն և զբաղվել գերմանիստիկայով: Սոցիոլոգիայի ոլորտի նրա առաջին ուշագրավ աշխատանքներից էին «Իրերի համակարգը» (1968), «Սպառողական հասարակություն» (1970) աշխատությունները:

«Արտադրության հայելի» (1973) աշխատությունում Ժ. Բոդրիարն ապացուցում է, որ մարքսիզմը դա պահպանողական քաղաքական տնտեսվարման հայելին է: Նրա կարծիքով՝ Կ. Մարքսը վարակվել է «բուրժուական մտքի վարակով», հատկապես այնպիսի պահպանողական հասկացություններով, ինչպիսիք են «աշխատանքը» և «արժեքը»: Ուստի նա հարց էր դնում մոր, ավելի արմատական տեսության անհրաժեշտության մասին: Նա ձևակերպեց խորհրդանշական փոխանակության մասին գաղափարը՝ որպես հակադրություն Մարքսի վերլուծած տնտեսական փոխանակությանը: Այդ գաղա-

փարն իր մեջ ներառում էր նաև քաղաքական ծրագիր, որն ուղղված էր այնպիսի հասարակություն ստեղծելուն, որի բնութագրական գիծը կդառնար սիմվոլիկ (խորհրդանշական) փոխանակությունը: Ժ. Բողոքիարը խիստ քննադատաբար է վերաբերվում բանվոր դասակարգին՝ նրան հակադրելով «նոր ձախերին» և անգամ հիպիներին:

Նույնքան աղմկահարույց էր նաև Ժ. Բողոքիարի մյուս գիրքը՝ «խորհրդանշական փոխանակությունը և մահը» (1976), որտեղ նա ժամանակակից հասարակությունը դիտարկում է որպես մահվան մշակույթ, որտեղ մահը հասարակությունից խտրականության և օտարման ենթարկված պարադիգմա է: Նա վերլուծում է երկբնույթ ընդդիմությունը՝ «կյանք/մահ»: խորհրդանշական փոխանակման հասարակությունը ոչնչացնում է այդ ընդդիմությունը, միաժամանակ՝ խտրականությունը և հասարակությունից օտարումը: Մահվան վախն է, որ մարդկանց ստիպում է ավելի խրվել սպառողական հասարակության մեջ: Նրա համար խորհրդանշանային փոխանակումն ավելի գերադասելի հեռանկար է, քան ժամանակակից հասարակությունը, որը չափազանց պարզունակ է տեսաբանի համար: Հակադրության գերադասելիությունը նա տեսավ նրանում, որ այն ավելի լավ է համապատասխանում ծնվող զգացմունքներին, ինչը հետագայում նա անվանեց հետմոդեռնիզմ:

Ժ. Բողոքիարը մեղիամշակույթը բնութագրում է որպես սպառողական մշակույթ: Իր «Սիմուլյացիա» աշխատությունում նա եզրահանգել է, որ ժամանակակից հասարակությունում գերակայում է ոչ թե արտադրությունն, այլ զանգվածային լրատվամիջոցները, կիրբերնետիկ մոդելները, հաշվիչ համակարգերը, համակարգիչները, տեղեկատվական պրոցեսորները, հանդիսությունները և գիտելիքի ինդուստրիան: Այդ համակարգերի ի հայտ գալու հետևանքը դարձավ նշանային պայթյունը: Կարելի է ասել, որ մենք արդյունաբերական հասարակությունից անցել ենք մի հասարակություն, որտեղ գերակայում են արտադրության կոդերը (նշանները): Նպատակը փոխվել է, առաջ խոսքը գնում էր շահագործման և եկամտի մասին, այսօր գերակայում են նշանները, դրանք արտադրող համակարգերը: Եթե առաջ այդ նշաններն ինչ որ իրական բաներ էին արտահայտում, ապա այժմ դրանք արտահայտում են ոչ ավելին, քան իրենք են: Այլ

կերպ ասած՝ նշանները ինքնառեֆլեքացվող են դարձել: Այժմ մեզ համար դժվար է տարբերել, թե որտեղ է իրականությունը և որտեղ պարզապես նշանը: Նրանց միջև այլևս սահման չկա: Դա, ի տարբերություն Մոդեռնի, բնութագրական է հետմոդեռնիստական աշխարհի համար:

Ժ. Բոդրիարը գտնում է, որ հետմոդեռնին բնութագրում է նաև ձևացնելը (սիմուլյացիան) և շատ դժվար է իրականը ձևականից տարբերելը: Մարդուն ավելի շատ հետաքրքրում է մշակույթի կոթողի մոտ նկարվելը, քան ինքը՝ արվեստի ստեղծագործությունը: Մարդն, ասենք, Փարիզ է գնում նախապես իմանալով ինչ է այնտեղ տեսնելու և համոզված, որ այնտեղ իր հետ ռոմանտիկ պատմություն է լինելու (այդպես են ներկայացվում կինոֆիլմերում):

Սակայն Ժ. Բոդրիարի համար սիմուլյացիան դա զուտ ձևացնելը չէ: Նա, ով հիվանդ է ձևանում, կարող է հավակնել նրան, որ ինքը հիվանդ է: Նա, ով սիմուլյացիա է անում, հիվանդության «իրական» նշաններ է զգում: Սիմուլյացիան վերացնում է տարբերությունը իրականի և կեղծի, իրականի և պատկերացրածի մեջ: Սիմուլյացիայի հիանալի օրինակ է Դիսնեյլենդը, որը գոյություն ունի նրա համար, որ հավատան, թե դա «իրական» երկիր է, «իրական» Ամերիկա: Այն ներկայացվում է որպես երևակայություն, որ մենք հավատանք, թե մնացած ամեն ինչ իրական է, այն ժամանակ, երբ ամբողջ Լոս-Անջելեսը և նրա շրջակա տարածքը իրական չեն, այլ սուպերիրական են կամ սիմուլյատիվ են: Նա մեր աշխարհը նկարագրում է որպես **գերիրականություն**, որն արդեն անբաժան է իր կերպարից: ՁԼՄ-ներն այլևս իրականության հայելին չեն, այլ վերածվել են իրականության, անգամ ավելի իրական են դարձել, քան ինքն է՝ իրականությունը:

Ժ. Բոդրիարին բոլորից շատ հետաքրքրում է մշակույթը, որը նրա կարծիքով լայնամասշտաբ և «աղետալի» հեղափոխություն է ապրում: Դա առանձնահատուկ հեղափոխություն է, որտեղ զանգվածները առավել պասիվ են դառնում և ոչ թե հեղափոխական, ինչպես գրում էր Կ. Մարքսը: Ձանգվածները դա «սև անդունդ է», որը կլանում է բոլոր իմաստները, տեղեկատվությունը, կոմունիկացիան (շփումները)՝ դրանք դարձնելով անիմաստ: Դա բոլորովին չի նշանակում, թե ՁԼՄ-ները խաղացնում են մարդկանց: Խնդիրն ավելի բարդ

է: Հարցը նրանում է, որ իրենք՝ զանգվածները ՁԼՄ-ներից մշտապես նոր կերպարներ ու ներկայացումներ են պահանջում:

Այսպիսով, Ժ. Բողրիարի հետմոդեռնիզմն արտահայտվում է նրանում, որ նա ընդգծում է իներցիայի արագացումը, իմաստների միաձուլումը ՁԼՄ-ների հետ և զանգվածների միաձուլումը նիհիլիզմի և անիմաստության «սև անդունդի» հետ:

Ֆրեդերիկ Ջենետիկ նեոմարքսիստական հետմոդեռնիզմը

Հետմոդեռնիզմի բնութագրող գիծը նրա և Մոդեռնի մեջ կապի բացարձակ բացակայությունն է: Այնուամենայնիվ, մի քանի հետմոդեռնիստներ, չնայած որ ընդունում են այդ երկուսի կարևոր տարբերությունները, սակայն տեսնում են նաև որոշակի ժառանգականություն նրանց մեջ: Այդպիսի մոտեցման ամենահայտնի օրինակը Ֆրեդերիկ Ջենետիկ «Հետմոդեռնիզմը կամ ուշ կապիտալիզմի Մշակութային տրամաբանությունը» (1984) էսսեն էր և նույնաանուն գիրքը, որը լույս տեսավ 1991 թ.:

Ֆրեդերիկ Ջենետիկ (Ջենյիսոն) - Ամերիկյան գրաքննադատ և մարքսիզմի տեսաբան: Ծնվել է 1934 թ. Կլիվլենդում, սովորել Հաֆերհորդի կոլեջում, ապա Ֆրանսիայում և Գերմանիայում, որտեղ խորամուխ է եղել փիլիսոփայության մեջ, այդ թվում մեծ հետաքրքրություն է ցույց տվել նոր սկիզբ առնող ստրուկտուրալիզմին: Վերադառնալով ԱՄՆ՝ պաշտպանել է դոկտորական թեզ:

Ֆ. Ջենետիկը գտնում է, որ կապիտալիզմն այսօր իր «ուշ» փուլն է ապրում, մնալով ժամանակակից աշխարհի գերակա գիծը, սակայն այն ընդունել է նոր մշակութային տրամաբանություն՝ հետմոդեռնիզմը: Եթե մշակույթն այսօր փոփոխվել է, ապա նրա հիմքում ընկած տնտեսական կառույցը պահպանում է իր ժառանգականությունը կապիտալիզմի ավելի վաղ աստիճանների հետ: Նա համաձայն չէ այլ տեսաբանների հետ, թե մարքսիզմը չի կարող համադրվել հետմոդեռնիզմի հետ և կարծում է, որ հենց մարքսիզմն է ներկայացնում հետմոդեռնիզմի լավագույն տեսական բացատրությունը: Ֆ. Ջենետի-

սոնը հետմոդեռնիստական հասարակությունում միաժամանակ տեսնում է թե՛ «աղետ» և թե՛ «առաջադիմություն»։ Հիշեցնենք, որ Մարքսը կապիտալիզմի մեջ տեսնում էր մի կողմից ազատագրում և առաջադիմություն, մյուս կողմից՝ շահագործում և օտարում։

Ֆ. Ջեմեսոնը առանձնացնում է կապիտալիզմի զարգացման երեք փուլ.

Առաջին փուլ - **շուկայական կառիսալիզմ**, այսինքն միասնական ազգային շուկաների ձևավորում։ Այդ փուլը վերլուծել է Կ. Մարքսը «Կապիտալում»։

Երկրորդ փուլ - **իմպերիալիզմ**, այսինքն գլոբալ տնտեսական համակարգի հանդես գալը։ Այս փուլի վերլուծությունը կատարել է Վ. Լենինը «Իմպերիալիզմը որպես կապիտալիզմի բարձրագույն փուլ» և այլ աշխատություններում։

Երրորդ փուլ - **ուշ կառիսալիզմ**, որը կապված է կապիտալի հզոր էքսպանսիայով դեպի այն շրջանները, որոնցում չէին եղել ապրանքային հարաբերություններ։ Այդ էքսպանսիան իրենից ներկայացնում է երբևիցե հայտնված կապիտալի «ամենամաքուր» ձևը։ Նրա կարծիքով, մարքսիզմը չի հասկանում կապիտալիզմի պատմական նոր բովանդակությունը, որը ենթադրում է մարքսիստական տեսության ընդլայնում։ «Ուշ կապիտալիզմը» հասկանալու բանալին, Ֆ. Ջեմեսոնի կարծիքով, նրա մուլտիազգային բնույթն է (արևմտյան ավանդույթից դուրս գալը) և այն փաստը, որ դա հսկայական չափերով ընդարձակեց շուկայի ապրանքների քանակն ու բազմազանությունը (սպառողական հասարակությունը)։

Տնտեսական կառույցների փոփոխությունները հանգեցրել են մշակութային փոփոխությունների։ Դրանում Ֆ. Ջեմեսոնը հետևյալ օրինաչափություններն է տեսնում՝

- ռեալիստական մշակույթը համապատասխանում է շուկայական կապիտալիզմին,
- մոդեռնի ոճի մշակույթը համապատասխանում է մոնոպոլիստական կապիտալիզմին (իմպերիալիզմին),
- հետմոդեռնիստական մշակույթը համապատասխանում է մուլտիազգային («ուշ») կապիտալիզմին։

Ակնհայտ է, որ վերոնշյալում նկատելի է Կ. Մարքսի «հիմքի և վեր-
նաշենքի» համապատասխանության մասին ժամանակակից տարբե-
րակը: Կապիտալիզմն էվոլյուցիա է ապրել մոնոպոլիստական կապի-
տալիզմի (իմպերիալիզմի) փուլից, այն դեպքում, երբ մշակույթը դեռ
ինչ որ չափով պահպանել է իր ինքնիշխանությունը մոլոտիագգային
փուլի ներկա պայթյունի նկատմամբ: Մշակույթի հզոր էքսպանսիա է
տեղի ունեցել, որը տարածվել է սոցիալական կյանքի բոլոր ոլորտնե-
րի վրա, սկսած տնտեսական արժեքներից և պետական իշխանու-
թյունից՝ մինչև մարդու հոգեբանության կառույցները, որը նույնպես
«մշակութային» բնույթ է ձեռք բերել: Այդ գործընթացների ազդեցու-
թյան տակ իրականությունը վերածվում է ինչ-որ իրականության «ձ-
և-ի», վերածվում է կեղծ իրադարձության, այսինքն դառնում է սիմուլ-
յակրում (լատ.simulakrum, որը նշանակում է «ձևացնել»․ այլ կերպ՝
կեղծիք, հորինվածք):

Ֆ. Ջեմետունը դա նկարագրում է որպես «մշակույթի իշխանու-
թյուն»: Այսպիսով, հետմոդեռնիզմը կարելի է նկարագրել որպես ու-
ժային դաշտ, որի վրա ներգործում են մշակութային տարբեր ազդակ-
ներ:

Ըստ Ֆ. Ջեմետունի՝ հետմոդեռնիզմը բնութագրվում է չորս հիմնա-
կան գծերով.

1. Խորքայնության բացակայություն, մակերեսայնություն:

Մշակութային նախագծերը բավարարվում են մակերեսայնությամբ
և չեն հետաքրքրվում խորքային իմաստով, այսինքն, սահմանա-
փակվում են սիմուլյակրումով, երբ, օրինակ, գեղանկարչության մեջ
հնարավոր չէ տարբերել բնօրինակը ընդօրինակումից: Սիմուլյարը
դա ընդօրինակման ընդօրինակումն է, երբ, ասենք, ընդօրինակվում
է նկարը, որն, իր հերթին, ընդօրինակված էր լուսանկարից: Ֆ. Ջե-
մետունը սիմուլյարը նկարագրում է որպես երբեք գոյություն չունե-
ցած բնօրինակից նույնականացված ընդօրինակում: Ըստ էության,
սիմուլյարը մակերեսային բնույթ ունի:

2. Չգացմունքների (էնոցիաների) կորուստ:

Նա համեմատում է երկու նկար՝ լուսանկարի մոտ Մերիլին Մոնրո (Ուորհոլ) և Մոդեռ-
նի դասական ավանդույթներով կատարված «Գիչ»-ը: Առաջինը մա-
կերեսային գործ է, որտեղ իրական զգացմունքը տեղ չունի: «Գիչ»-ը

սյուռեալիստական նկար է, որտեղ ներկայացվել է մարդը մեծագույն վշտի պահին: Այդ զգացմունքներով լի ստեղծագործությունը հեռացող Մոդեռն աշխարհին բնորոշ գործ է: Հետմոդեռնիստական աշխարհում օտարումը փոխարինվել է հատվածականությամբ (ֆրագմենտացիայով): Վերջինիս հետևանքը դարձավ անդենությունը:

3. Պատմականության կորուստ: Մենք չենք կարող հասկանալ անցյալը: Այն ինչ մենք ունենք, դրանք տեքստեր են, որոնք պատմում են անցյալի մասին: Այդ կապակցությամբ, Ֆ. Ջեմսսոնը շրջանառության մեջ է դնում «պոպուռի» եզրը, որն անչափ կարևոր է հետմոդեռնիստական մտածողության համար: Քանի որ պատմաբանները չեն կարող ճշմարիտ պատկերացնել անցյալը և անգամ փոխկապակցված ձևով շարադրել անցյալի իրադարձությունները, նրանք բավարարվում են «պոպուռիի» ստեղծմամբ (ծայրահեղ հակասական և խառնաշփոթ գաղափարների ամբողջություն): Ավելին, այսօր պատմական զարգացման և ժամանակի ընթացքի մասին պարզ պատկերացումներ չկան: Անցյալն ու ներկան սերտորեն կապված են: Պատմությունը մեզ չի տալիս անցյալի իրական պատկերը, այլ միայն ծանոթացնում է մեզ անցյալի նկատմամբ իր գաղափարների ու կարծրատիպերի հետ: Օրիակ, ցանկացած պատմական կինոնկարում ձգտում են ներկայացնել համապատասխան ժամանակաշրջանի պարագաները, որոնք, որպես կանոն, տրվում են ժամանակակիցների «աննկատելի» ներկայությամբ, իսկ հերոսները գործում և խոսում են ժամանակակից հոգեկերտվածքին (մենթալիտետին) համաձայն: Դա հենց պատմականության կորուստն է նշանակում: Մինչդեռ ժամանակի՝ անհատի մակարդակում զգացողության կորուստը, անցյալի, ներկայի և ապագայի տարբերությունների տարբերակման անկարողությունը՝ շփոթեցնիայի նշան է համարվում: Հետմոդեռնիստական անհատի համար իրադարձությունները միշտ հատվածային և կտրտված են:

4. Նոր տեխնոլոգիաներ: Դրանք նույնացվում են հետմոդեռնիստական զգացմունքների հետ: Նոր տեխնոլոգիաներն, օրինակ հեռուստացույցը կամ համակարգիչը, ոչինչ չեն ստեղծում, բացի մակերեսային կերպարներից կամ վիրտուալ իրականությունից:

Այսպիսով, Ֆ. Ջեմեսոնը ստեղծում է Հետմոդեռնի պատկերը, որտեղ մարդիկ, ապրելով այդ հասարակությունում, ի վիճակի չեն հասկանալու մուլտիազգային կապիտալիստական համակարգը կամ մշակույթի պայթյունը: Նա այդ իրավիճակից դուրս գալու համար առաջարկում է ներդնել իմացական քարտեր, որոնց շնորհիվ կարելի կլինի կողմնորոշվել: Սակայն անցյալի այդ քարտերը դժվար թե օգնեն:

Ն. Ջեմեսոնի ուժեղ կողմն այն էր, որ նա փորձեց սինթեզի ենթարկել մարքսիստական քաղաքական տեսությունը և հետմոդեռնիզմը: Բնականաբար, նրա մոտեցումները նմանապես գրգռեցին թե՛ մարքսիստներին և թե՛ հետմոդեռնիստներին:

Յու. Հաբերմասը հետմոդեռնիզմի դեմ

Յուրգեն Հաբերմասը բավականին մեծ ուշադրություն է դարձրել հետմոդեռնիզմի քննադատությանը: Նրա էսսեներից մեկը հենց այդպես էլ վերնագրել է՝ «Մոդեռնը Հետմոդեռնի դեմ» (1981): Այդ աշխատությունում Յու. Հաբերմասը հետևյալ հարցն է բարձրացնում. 20-րդ դարի բոլոր ավանդույթներն ու սխալները հաշվի առնելով՝ պետք է արդյո՞ք պահպանենք Լուսավորչական գաղափարներին հավատարմությունը, թե՞ մենք պետք է Մոդեռնի ողջ նախագիծը հայտարարենք անիմաստ: Ինչպես հայտնի է Յու. Հաբերմասն առաջինի կողմնակիցն է, ուստի իր ուշադրությունը կենտրոնացրել է նրանց սխալների վրա, ովքեր մերժում են Արդիականությունը:

Նրանց ամենամեծ սխալներից մեկը Յու. Հաբերմասը համարում է գիտությունից հրաժարումը՝ կյանքն ուսումնասիրող գիտությունից: Ինքը պնդում էր կյանքը ճանաչելու բանական, «գիտական» ուսումնասիրության հնարավորությունը, ինչպես նաև կյանքի ռացիոնալիզացման հնարավորությունը:

Յու. Հաբերմասի հետմոդեռնիզմի քննադատության հիմնական դրույթներն են.

1. Հետմոդեռնիստներն այդպես էլ չբացատրեցին, թե նրանք լրջորեն սոցիալ-քաղաքական տեսություն են ստեղծում, թե ուղղակի գրականությամբ են զբաղված: Եթե խոսքը տեսության մասին է,

ապա հասկանալի չէ, թե ինչո՞ւ են հրաժարվում ինստիտուցիոնալ հաստատված բառարանից: Եթե դա գրականություն է, ապա հիմնավորումները կորցնում են ամեն տեսակի տրամաբանական հավաստիությունը: Ամեն դեպքում, փաստորեն, հնարավոր չէ լրջորեն քննադատել հետմոդեռնիստներին, որովհետև նրանք կարող են հակաճառել, թե չենք հասկացել նրանց տեսությունը կամ գրականությունը:

2. Հետմոդեռնիստները պնդում են, թե տարված են նորմատիվությամբ, սակայն թե դա ասելով ինչ նկատի ունեն, հասկանալի չէ ընթերցողին: Հասկանալի չի նաև այն, թե ինչո՞ւ են նրանք քննադատում ժամանակակից հասարակությունը, ի՞նչն է նրանց նպատակը և այլն: Հետմոդեռնիստները մերժում են ամեն մի նորմատիվայինը: Դրա բացակայությունն է, որ հետմոդեռնիստներին խանգարում է նպատակամղվելու՝ լուծել այն խնդիրները, որոնք նրանք հայտնաբերում են կյանքում: Յու. Հաբերմասը դրան հակադրում է իր նորմատիվային զգացմունքներն (ազատ և բաց հաղորդակցություն), ինչն ամենայն պարզությամբ թույլ է տալիս տեսնել այն քաղաքական ծրագիրը, որը կարող է առավել արդյունավետ լինել: Հետմոդեռնիստների մոտ այդ ամենը բացակայում է:

3. Յու. Հաբերմասը հետմոդեռնիստներին մեղադրեց տոտալիտարիզմի մեջ, որից նրանք միշտ հրաժարվում էին, քանի որ այդպես էլ չկարողացան տարբերակել ժամանակակից հասարակության մեջ գոյություն ունեցող երևույթներն ու պրակտիկաները: Օրինակ, հետմոդեռնիստները խոսում են աշխարհի մասին, որտեղ տիրապետում են իշխանությունն ու հսկողությունը, սակայն դա բավարար չի ուսումնասիրելու համար ժամանակակից կյանքի ճնշման իրական արմատները:

4. Յու. Հաբերմասը մեղադրում է հետինդուստրիալիստներին նաև նրանում, որ վերջիններս արհամարհում են առօրյան ու նրա պրակտիկան:

Քաղաքական տեսաբանները հավատում են, որ հետմոդեռնիզմը, հատկապես՝ նրա առավել արմատական ձևերն, իրենցից այլընտրանք են ներկայացնում քաղաքական տեսությամբ: Ինչ որ առումով, հետմոդեռնիզմն ընդհանրապես տեսություն չէ: Քաղաքական տե-

սությունը կարելի է ձևակերպել որպես «մեծ գաղափարներ» քաղաքականության մասին, որոնք կարողացել են դիմանալ ժամանակի փորձություններին: Դա գաղափարների համակարգ է, որը շոշափում է կարևոր քաղաքական խնդիրներ և երկարաժամկետ նշանակություն ունի: Սակայն հարկ է նշել, որ մեծ «մեծ գաղափարներ» կան նաև հետմոդեռնիստներ Ֆ. Ջեմեսոնի և Ժ. Բոդրիարի մոտ:

Ներկայումս հետմոդեռնիստները շատ բեղմնավոր աշխատանք են կատարում, մեծ ազդեցություն ունեն արվեստի, ճարտարապետության, փիլիսոփայության, սոցիոլոգիայի և, վերջապես, քաղաքական տեսության վրա:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

Ներկայացնել՝

1. Նորագույն ժամանակների քաղաքական տեսական մտքի զարգացումները:

2. Է. Գիդենսի Մոդեռնը:

3. Ու. Բեկի ռիսկի հասարակությունը:

4. Հետմոդեռնիզմը քաղաքական տեսությունում:

5. Ժ. Բոդրիարի արմատական հետմոդեռնիզմը:

6. Ն. Ջեմեսոնի նեոմարքսիստական հետմոդեռնիզմը:

7. Յու. Հաբերմասը հետմոդեռնիզմի դեմ:

Գրականություն

1. **Белл Д.**, Грядущее индустриальное общество. Опыт социального прогнозирования, М., 1999.

2. **Бек У.**, Общество риска на пути к другому модерну, М., 2000.

3. **Бэрри Б.**, Политическая теория: вчера и сегодня/ Политическая наука: новые направления/, М., 1999.

4. **Бодрийяр Ж.**, Забыть Фуко, Сиб., 2000.

5. **Ильин И.**, Постмодернизм. От истоков до конца столетия. Эволюция научного мифа, М., 1998.

6. **Истон Д.**, Новая революция в политической науке// Социально-политический журнал-1993, N 8.

7. **Маркарян К. В.**, Общая теория постиндустриального государства, М., 2002.

8. **Маркузе Г.**, Одномерный человек// Антология мировой политической мысли в 5 томах, т.2, с.384-397.
10. **Маркузе Г.**, Разум и революция, Сиб., 2000.
11. **Парсонс Т.**, Система современного общества, М., 1998.
12. **Роулз Дж.**, Теория справедливости, Новосибирск, изд-во НГУ, 1995.
13. **Тофлер Э.**, Метаморфозы власти, М., 2004.
14. **Хабермас Ю.**, Демократия, разум, нравственность, М., 1995.
15. **Янг Ай. М.**, Политическая теория: общие проблемы./Политическая наука: новые направления, М., 1999.
16. **Brzezinski Z.**, Between Two Ages. America`s Role in the Technetronic Era. N.Y., 1970.

**«ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒՍՄՈՒՆՔՆԵՐԸ ՆՈՐԱԳՈՒՅՆ
ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՒՄ» ԱՌԱՐԿԱՅԻ
ԾՐԱԳԻՐ**

(Դասընթացի ծավալը 64, լսարանային ժամ` 40 դասախոսություն,
24 սեմինար)

«Քաղաքական ուսմունքները նորագույն ժամանակներում» առարկայի ուսուցման հիմնական նպատակն է քաղաքագիտություն սովորող ուսանողներին ծանոթացնել ժամանակակից քաղաքական ուսմունքների հիմնական ուղղություններին և համապատասխան գիտելիքներ տալ դրանց մասին, նրանց մոտ զարգացնել հետազոտական աշխատանքներ կատարելու հմտությունները: Մասնավորապես, ժամանակակից քաղաքական գործընթացների էությունը հասկանալու համար` մատուցել անհրաժեշտ տեսական գիտելիքներ և նրանց մոտ զարգացնել ուսումնասիրվող առարկայի հիմնախնդիրների մեջ խորանալու ունակությունները:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

**ԹԵՄԱ 1. «Քաղաքական ուսմունքները նորագույն
ժամանակներում» առարկա
(դասախոսություն 2 ժ., սեմինար 2 ժ.)**

**ԹԵՄԱ 2. Ժամանակակից քաղաքական տեսության
ակունքները
(դասախոսություն 4 ժ., սեմինար 2 ժ.)**
Մաքս Վեբերը ժողովրդավարության, իշխանության,
հեղինակության, տիրապետության մասին:

**ԹԵՄԱ 3. Ժամանակակից քաղաքական տեսության
հիմնավորման խնդիրները
(դասախոսություն 4 ժ., սեմինար 4 ժ.)**
Պոզիտիվիզմ: Տրամաբանական պոզիտիվիզմ և քաղա-
քական տեսություն: Ինստիտուցիոնալիզմ: Ռացիոնալ
(բանական) ընտրության տեսություն, ռացիոնալիզմը
քաղաքականության մեջ: Բիևիոթիզմ, վարքագծային
մոտեցումը քաղաքական ուսումնասիրության մեջ,
«Չիկագոյի դպրոցը»:

**Նորմատիվային քաղաքական տեսությունները`
«Աջ ուղղվածություն»:**

**ԹԵՄԱ 4. Նորմատիվ քաղաքական տեսություններ
(դասախոսություն 4 ժ., սեմինար 2 ժ.)**
Ուտիլիտարիզմ: Լիբերալիզմի էվոլյուցիան 20-րդ դա-
րում: Հասարակական դաշինքի ժամանակակից վար-
կածը: Արդարության սկզբունքները և արդարության
տեսության նոր մեկնաբանությունը:

**ԹԵՄԱ 5. Լիբերտարիզմ և կոմունիստարիզմ
(դասախոսություն 4 ժ., սեմինար 2 ժ.)**

**Լիբերտարիզմ: Ֆրիդրիխ ֆոն Հայեկի լիբերտարիզմը:
Ռոբերտ Նոզիկը «Նվազագույն պետության» մասին:
Գյունտեր Ռորնոգերը ժամանակակից լիբերալիզմի
ճգնաժամի մասին: Կոմունիստարիզմ: Կոմունիստարիստ-
ներն արդարության մասին:**

**ԹԵՄԱ 6. Պահպանողական (կոնսերվատիվ) քաղաքա-
կան տեսություններ**

(դասախոսություն 4 ժ., սեմինար 2 ժ.)

**Էդմոնդ Բյորկը դասական պահպանողականության հիմ-
նադիր: Ս. Հանթինգթոնը պահպանողականության հիմ-
նական սկզբունքների մասին: Կուլտուրական պահպա-
նողականության «Սոլսբերիի խումբը»:
Մայքլ Օաքշոթը ռացիոնալիզմի դեմ:
Կառլ Շմիտտը լիբերալիզմի դեմ:**

ԹԵՄԱ 7. Ֆաշիզմ

(դասախոսություն 2 ժ.)

**Ֆաշիզմի գաղափարական ակունքները: Ֆաշիզմի քա-
ղաքական ուսմունքը:**

«Ձախ ուղղվածության» փաղափական տեսությունները

**ԹԵՄԱ 8. Կարլ Մարքսը և քաղաքական տեսությունը
(դասախոսություն 2 ժ., սեմինար 2 ժ.)**

**Կարլ Մարքսի քաղաքական տեսությունը: Մարքսիզմի
զարգացումը Վ. Լենինի կողմից: Ստալինիզմի քաղաքա-
կան տեսությունը:**

ԹԵՄԱ 9. Նեոմարքսիզմ

(դասախոսություն 6 ժ., սեմինար 4 ժ.)

Սոցիալ-ժողովրդավարություն: Անտոնիո Գրամշիի սոցիալ-ժողովրդավարությունը: Նիկոս Պուլանզասի, Քնադատական («Ֆրանկֆուրտյան դպրոց») և Յուրգեն Հաբերմասի տեսությունները:

ԹԵՄԱ 10. Անարխիզմ

(դասախոսություն 2 ժ.)

Անարխիզմի հիմնական հոսանքները: Անարխիզմի քաղաքական տեսությունը:

**ԹԵՄԱ 11. Ստրուկտուրալիզմ և հետստրուկտուրալիզմ
(դասախոսություն 2 ժ., սեմինար 2 ժ.)**

Ստրուկտուրալիզմ` Կլոդ Լևիի - Սթրոսս: Հետստրուկտուրալիզմը ժակ Դերիդայի և Միշել Ֆուկոյի մատուցմամբ:

ԹԵՄԱ 12. Մոդեռնիզմ և հետմոդեռնիզմ

(դասախոսություն 4 ժամ., սեմինար 2 ժ.)

Քաղաքական արդիականացման (մոդեռնիզացիայի) տեսությունը և նորագույն ժամանակների քաղաքական տեսական մտքի զարգացումները: Էմսոնի Գիդենս` Մոդեռն - ռիսկի հասարակություն: Հետմոդեռնիզմը քաղաքական տեսությունում: Ժան Բոդրիարի արմատական հետմոդեռնիզմը: Ֆրեդերիկ Ջեմսոնի նեոմարքսիստական հետմոդեռնիզմը: Յու.Հաբերմասը հետմոդեռնիզմի դեմ:

ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԹԵՄԱՆԵՐ

1. Մ. Վեբերը 20-րդ դարի քաղաքական տեսության հիմնադիր:
2. Մ. Վեբերի նկարագրած տիրապետության հիմնական բնութագիր:
3. Մ. Վեբերի հայացքները ժողովրդավարության մասին:
4. Տրամաբանական պոզիտիվիզմը և քաղաքական տեսությունը:
5. Լ. Վիգտենշտեյնի տեսության հիմնական դրույթները:
6. Ինստիտուցիոնալիզմը և այդ մեթոդաբանության հիմնական մեթոդները:
7. Ս. Լիփսեթի քաղաքագիտական հայացքները:
8. Մ. Դյուվերթեի քաղաքագիտական հայացքները:
9. Ռացիոնալիզմը քաղաքականության մեջ:
10. Ռացիոնալ ընտրության տեսության գլխավոր դրույթները:
11. Ջ. Բյուկենենի հասարակության սահմանադրական մոդելը:
12. Բիհևորիստական քաղաքական տեսությունը:
13. Վարքագծային մոտեցումը քաղաքական ուսումնասիրության մեջ:
14. «Չիկագոյի դպրոցը»՝ որպես քաղաքագիտության մեջ բիհևորիզմի ներդրող (Չ. Մերրիհամ, Ջ. Լասսուել, Ֆ. Սքիններ):
15. Ուտիլիտարիզմ քաղաքական տեսությունը:
16. Ուտիլիտարիզմում գերակայող տեսական երեք «դպրոցները» և ուտիլիտար ստուգման ենթակա հիմնական ասպարեզները:
17. Ժամանակակից լիբերալիզմի առանձնահատկությունները:
18. Ջ. Ռոուլսի ռեֆորմիստական լիբերալիզմը: Հասարակական դաշինքի ժամանակակից վարկածը:
19. Արդարության սկզբունքները և արդարության տեսության նոր մեկնաբանությունը:
20. Ֆ. Ֆոն Հայեկի լիբերտարիզմը:

21. Ռոբերտ Նոզիկի «Նվազագույն պետության» մասին տեսությունը:
22. Կոմունիստարիստներն արդարության մասին:
23. Մ. Սենդելի խմբի տեսաբանների հայացքները:
24. Է. Բյորկի առաջադրած հիմնական սկզբունքները:
25. Կուլտուրական պահպանողականություն:
26. Կուլտուրական պահպանողականության «Սուլսբերիի խումբը»:
27. Մ. Օաքշոթը ռացիոնալիզմի դեմ:
28. Կ. Շմիտը լիբերալիզմի դեմ:
29. Ֆաշիզմի քաղաքական ուսմունքի հիմնական տարրերը:
30. Կ. Մարքսի քաղաքական տեսությունը:
31. Մարքսիզմի զարգացումը Վ. Լենինի կողմից:
32. Ստալինիզմի քաղաքական տեսությունը:
33. Սոցիալ-ժողովրդավարությանը հատուկ հիմնական գաղափարները:
34. Սոցիալ-ժողովրդավարների և կոմունիստների հիմնական հակասությունները:
35. Ա. Գրամշիի սոցիալ-ժողովրդավարությունը:
36. Ն. Պոլանզասի տեսությունը:
37. Քննադատական տեսությունը:
38. «Ֆրանկֆուրտյան դպրոցը» և քննադատական տեսությունը:
39. Յու. Զաբերմասի տեսությունը:
40. Անարխիզմի հիմնական հոսանքները:
41. Ժամանակակից ստրուկտուրալիզմը:
42. Ստրուկտուրալիզմն ըստ Կ. Լևի-Սթրոսի:
43. Ժամանակակից հետստրուկտուրալիզմը:
44. Հետստրուկտուրալիզմը Ժ. Դարիդայի մատուցմամբ:
45. Հետստրուկտուրալիզմը Մ. Ֆուկոյի մատուցմամբ:
46. Քաղաքական արդիականացման (մոդեռնիզացիայի) տեսությունը:
47. Նորագույն ժամանակների քաղաքական տեսական մտքի զարգացումները:

- 48. Զ. ԲԺԵԳԻՆՍԿԻԻ տոտալիտարիզմի տեսությունը:
- 49. Ի. Վալլերշթայնի աշխարհահամակարգային վերլուծության տեսությունը
- 50. Դ. Բելլի հետինդուստրիալ հասարակության տեսությունը:
- 51. Մոդեռնը քաղաքական տեսությունում:
- 52. Է. Գիդենսի Մոդեռնը:
- 53. Ու. Բեկի ռիսկի հասարակությունը:
- 54. Հեղտմոդեռնիզմը քաղաքական տեսությունում:
- 55. Ժ. Բոդրիարի արմատական հետմոդեռնիզմը:
- 56. Ն. Ջենետոնի նեոմարքսիստական հետմոդեռնիզմը:
- 57. Յու. Հաբերմասը հետմոդեռնիզմի դեմ:

ՀԱՐՑԱՇԱՐ

«Քաղաքական ուսմունքները նորագույն ժամանակներում» առարկայի

1. Ժամանակակից քաղաքագիտական հետազոտությունների կենտրոնում գտնվող հիմնական հարցերը:

2. Ժամանակակից քաղաքական գիտության այն գլխավոր գիծը, որով նա ցանկանում է առանձնացնել իր սահմաններն այլ առարկաներից:

3. Քաղաքական գիտության պատմաբանների առանձնացրած ժամանակակից քաղաքագիտության զարգացման երեք շրջանները:

4. Մ. Վեբերի դիտարկումները բյուրոկրատիայի և բյուրոկրատացման պատմական ընթացքի մասին՝ քաղաքական ինստիտուտների շրջանակներում:

5. Մ. Վեբերի նկարագրած տիրապետության հիմնական բնութագիրը:

6. Մ. Վեբերի հայացքները ժողովրդավարության մասին:

7. Ներկայացնել իշխանությունն ըստ Մ. Վեբերի և նրա առաջարկած իշխանության օրինականության տեսակները:

8. Տրամաբանական պոզիտիվիզմը և քաղաքական տեսությունը:

9. Լ. Վիգտենշտեյնի տեսության երեք թեզիսները:

10. Ինստիտուցիոնալիզմը և այդ մեթոդաբանության հիմնական մեթոդները:

11. Ինստիտուցիոնալ մոտեցման երեք հիմնական մեթոդները:

12. Ինստիտուցիոնալիզմի նկարագրական-անհատական մեթոդը:

13. Ինստիտուցիոնալիզմի ձևական-օրինական մեթոդը:

14. Ինստիտուցիոնալիզմի պատմահամեմատական մեթոդը:

15. Ս. Լիփսեթի քաղաքագիտական հայացքները:

16. Մ. Դյուվերթեի քաղաքագիտական հայացքները:

17. Ռացիոնալիզմը քաղաքականության մեջ:
18. Ռացիոնալ ընտրության տեսության գլխավոր դրույթները:
19. Ջ. Բյուկենենի հասարակության սահմանադրական մոդելը:
20. Բիհևորիզմի քաղաքական տեսությունը:
21. Վարքագծային մոտեցումը քաղաքական ուսումնասիրության մեջ:
22. «Չիկագոյի դպրոցը»՝ որպես քաղաքագիտության մեջ բիհևորիզմի ներդրող (Չ. Մերրիամ, Ջ. Լասսուել, Ֆ. Սքիներ):
23. Ուտիլիտարիզմ քաղաքական տեսությունը:
24. Ուտիլիտարիզմում գերակայող տեսական երեք «դպրոցները» և ուտիլիտար ստուգման ենթակա հիմնական ասպարեզները:
25. Առավելագույն օգուտի սկզբունքը:
26. Ժամանակակից լիբերալիզմի առանձնահատկությունները:
27. Քաղաքական տեսության առանձնահատուկ ուշադրության պատճառը քաղաքական լիբերալիզմի վրա:
28. Ջ. Ռոուլսի ռեֆորմիստական լիբերալիզմը: Հասարակական դաշինքի ժամանակակից վարկածը:
29. Արդարության սկզբունքները և արդարության տեսության մոր մեկնաբանությունը:
30. Ֆ. Ֆոն Հայեկի լիբերտարիզմը:
31. Ռոբերտ Նոզիկի «Նվազագույն պետության» մասին տեսությունը:
32. Կոմունիտարիզմ:
33. Կոմունիտարիստները արդարության մասին:
34. Գյուլտեր Ռորմոզերը ժամանակակից լիբերալիզմի ճգնաժամի մասին:
35. Մ. Սենդելի խմբի տեսաբանների հայացքները:
36. Է. Բյորկի առաջադրած հիմնական սկզբունքները:
37. Ս. Հանթինգթոնի պահպանողականության հիմնական սկզբունքները:
38. Կուլտուրական պահպանողականություն:

39. Կուլտուրական պահպանողականության «Սուլքերիի խումբը»:

40. Մ. Օաքշոթը ռացիոնալիզմի դեմ:

41. Կ. Շմիտտը լիբերալիզմի դեմ:

42. Ֆաշիզմի գաղափարական ակունքները:

43. Ֆաշիզմի քաղաքական ուսմունքի հիմնական տարրերը:

44. Կ. Մարքսի քաղաքական տեսությունը:

45. Մարքսիզմի զարգացումը Վ. Լենինի կողմից:

46. Ստալինիզմի քաղաքական տեսությունը:

47. Սոցիալ-ժողովրդավարությանը հատուկ հիմնական գաղափարները:

48. Սոցիալ-ժողովրդավարների և կոմունիստների հիմնական հակասությունները:

49. Ա. Գրամշիի սոցիալ- ժողովրդավարությունը:

50. Ն.Պուլանգասի տեսությունը:

51. Քննադատական տեսությունը:

52. «Ֆրանկֆուրտյան դպրոցը» և քննադատական տեսությունը:

53. Յու. Զաբերմասի տեսությունը:

54. Անարխիզմի հիմնական հոսանքները:

55. Անարխիզմի քաղաքական տեսությունը:

56. Ժամանակակից ստրուկտուրալիզմը:

57. Ստրուկտուրալիզմն ըստ Կ. Լևի-Սթրոսսի:

58. Ժամանակակից հետստրուկտուրալիզմը:

59. Հետստրուկտուրալիզմը Ժ. Դարիդայի մատուցմամբ:

60. Հետստրուկտուրալիզմը Մ. Ֆուկոյի մատուցմամբ:

61. Մոդեռնը քաղաքական տեսությունում:

62. Քաղաքական արդիականացման (մոդեռնիզացիայի) տեսությունը:

63. Նորագույն ժամանակների քաղաքական տեսական մտքի զարգացումները:

64. Ս. Հանթինգթոնը քաղաքական արդիականացման ժամանակակից խնդիրների մասին:

65. Զ. Բեքդինսկիի տոտալիտարիզմի տեսությունը:

66. Ի. Վալլերշթայնի աշխարհահամակարգային վերլուծության տեսությունը:

67. Դ. Բելլի հետինդուստրիալ հասարակության տեսությունը:

68. Է. Թոֆլեր «հետինդուստրիալ հասարակության» հայեցակարգը:

69. Է. Գիդենսի Մոդեռնը:

70. Ու. Բեկի ռիսկի հասարակությունը:

71. Հեդտմոդեռնիզմը քաղաքական տեսությունում:

72. Քաղաքական դիսկուրսի վերլուծության հետմոդեռնիստական մոտեցումը:

73. Ժ. Բոդրիարի արմատական հետմոդեռնիզմը:

74. Ն. Ջեմեսոնի նեոմարքսիստական հետմոդեռնիզմը:

75. Յու. Հաբերմասը հետմոդեռնիզմի դեմ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Բրաուն Բ., Միջազգային քաղաքականության տեսությունը և համաշխարհային հանրության գաղափարը, Եր., 1991:
2. Ենգոյան Ա. Փ., «Գաղափարախոսություն» հասկացության քաղաքագիտական մեկնաբանությունը (Դասախոսության նյութեր), Եր., 2014:
3. Լենին Վ., Իմպերիալիզմը որպես կապիտալիզմի բարձրագույն ստադիա, Եր., 1962:
4. Լենին Վ., Պետություն և հեղափոխություն, Եր., 1956:
5. Մանուկյան Ա. Ս., Քաղաքական բռնաճնշումները Հայաստանում 1920-1953 թթ., Եր., 1999:
6. Մանուկյան Ա., Ժամանակակից քաղաքական գործընթացներ, Ուս. ձեռն., Եր., 2011:
7. Մանուկյան Ա. Ս., Քաղաքական այլախոհությունը Հայաստանում 1950-1988 թթ., Եր., 2005:
8. Մարգարյան Մ. Մ., Քաղաքական ընտրանին և ժողովրդավարական անցման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, Եր., 2006:
9. Մարգարյան Մ. Մ., Հայ քաղաքական էլիտա: Տեսություն և արդիականություն, Եր., 1996:
10. Մարքս Կ., Էնգելս Ֆ., Կոմունիստական կուսակցության մանիֆեստ, Եր., 1967:
11. Շիրինյան Լ., Նոր աշխարհակարգը և Հայաստանը Եվրաքաղաքական քաղաքակրթական ակնարկ , Եր., 2006:
12. Սուքիասյան Հ., Տեղեկատվական հասարակություն. սոցիալ քաղաքական հիմնախնդիրներ, Եր., 2009:
13. Պողոսյան Գ., Արդի հայ հասարակությունը XXI դարասկզբին, Եր., 2006:
14. Պահպանողական հոսանքներ և գաղափարներ, Եր., 2010:
15. Վարդանյան Լ. Գ., «Քաղաքական տեսություն» դասընթացի ծրագիր և հանրագիտական բառարան 1-ին կուրսի ուսանողների համար, ԵՊՀ, Եր., 2014:
16. Քաղաքագիտություն, Ուս. ձեռն., ԵՊՀ, Եր., 2006:
17. Քաղաքագիտության հանրագիտական բառարան, (կազմ. Պողոսյան Վ., Միրումյան Վ. և ուր.), Եր., 2004:
18. Քեռյան Գ., Քաղաքական կուսակցություններ, Եր., 1996:
19. Օրդուխանյան Է., Իշխանություն և ընդդիմություն. Քաղաքական խոսույթի վերլուծություն, Եր., 2010:
20. Алексеева Т. А., Современные политические теории, МГИМО, 2007.
21. Алмонд Г., Политическая наука: История дисциплины/Политическая наука: новые направления, М., 1999.
22. Аренд Х., Истоки тоталитаризма, М., 1997.
23. Арон Р., Демократия и тоталитаризм// Антология мировой политической мысли в 5 томах, т. 2, с. 508-523.
24. Белл Д., Грядущее индустриальное общество. Опыт социального прогнозирования, М., 1999.

25. Бек У., Общество риска на пути к другому модерну, М., 2000.
26. Белов М. В., Витальева А. И., Эдмунд Бёрк - ранний идеолог Британской империи. Диалог со временем. Альманах интеллектуальной истории, 34, М., 2011.
27. Бэрри Б., Политическая теория: вчера и сегодня/ Политическая наука: новые направления/, М., 1999.
28. Бреннан Дж., Бьюкенен Дж. Причина правил. Конституционная политическая экономия, М., 2005.
29. Бьюкенен Дж., Сочинения. Конституция экономической политики. Расчёт согласия.
30. Бодрийяр Ж., Забыть Фуко, Сиб., 2000.
31. Вебер М., Протестантская этика и дух капитализма, М., 1990.
32. Грамши А., Избранные произведения (пер. с итал., (Под общ. ред. И. В. Григорьевой и др.), Политиздат, 1980.
33. Даль Р., Введение в теорию демократии, М., 1992.
34. Дегтяров А. А., Основы политической теории, М., 2000.
35. Деррида, Ж. **Глобализация. Мир. Космополитизм. (Пер. с фр. Д. Ольшанского)** «Космополис», № 2 (8). 2004, с. 125-140.
36. Деррида, Ж. Призраки Маркса — М., Logos altera, 2006.
37. Деррида, Ж. Диссеминация (La Dissemination) / Пер. с фр. Д. Кралечкина, науч. ред. В. Кузнецов, Екатеринбург: У-Фактория, 2007.
38. Дюверже М., Политические институты и конституционное право// Антология мировой политической мысли в 5 томах, т. 2, с. 643-661.
39. Дюверже М., Политические партии, М., 2007.
40. Енгоян А. П., Идеологические основы социально-политических трансформаций в постсоветском Армении, Е., 2011.
41. Коло Д., Политическое социология, М., 2001. С. 311-315.
42. Леви-Стросс К., Структурная антропология, М., 1983.
43. Леви-Стросс К., Первобытное мышление, М., 1999, с. 19-28.
44. Липсет, С. М. Третьего пути не существует (Перспективы левых движений) // Политические иссл... № 5-6, 1991.
45. Ильин И., Постмодернизм. От истоков до конца столетия. Эволюция научного мифа, М., 1998.
46. Истон Д., Новая революция в политической науке// Социально-политический журнал-1993, N 8.
47. Манукян А. С., Особенности политических процессов в Армении в послевоенное время, Материалы международной научно-политической конференций 28-29 января 2008г., ч.1, Краснодар, Кубан. гос. у-т, 2008.
48. Маркарян К. В., Общая теория постиндустриального государства, М., 2002.
49. Маркузе Г., Одномерный человек// Антология мировой политической мысли в 5 томах, т. 2, с. 384-397.
50. Маркузе Г., Разум и революция, Сиб., 2000.
51. Нозик Р. Анархия, Государство и утопия, М., 2008.

52. Парсонс Т., Система современного общества, М., 1998.
53. Пирумова Н. М., Социальная доктрина М. А. Бакунина, М., 1990.
54. Политический процесс: Основные аспекты и способы анализа, под ред. Мелешкиной Е. Ю., М., 2006.
55. Политология: хрестоматия (сост М. А. Василик, М. С. Вершинин), М., 2000.
56. Прудон П. Ж., Что такое собственность? или Исследование о принципе права и власти, Бедность как экономический принцип, Порнократия, или Женщины в настоящее время / Подгот. текста и коммент. В. В. Сапова. — М.: Республика, 1998.
57. Прудон П. Ж. Французская демократия (О политической способности рабочих классов). Пер. с фр. / Под ред. Н. К. Михайловского; Вступ. ст. П. В. Рябова. Изд. 2, доп., М., КРАСАНД, 2011.
58. Пуланзас Н., Политическая власть и социальные классы капиталистического государства, М., 1968.
59. Роулз Дж., Теория справедливости, Новосибирск, изд-во НГУ, 1995.
60. Соловьев А. И., Политология. Политическая теория. Политическая технология, М., 2000.
61. Сэндел М., Справедливость. Как поступать правильно?, М., 2013.
62. Скиннер Ф. О бихевиоризме (About Behaviorism). New York: Knopf. 1974.
63. Тофлер Э., Метаморфозы власти, М., 2004.
64. Френкин А. А., Новый консерватизм вызов для России, М., 1996.
65. Фуко М., Надзирать и наказывать. Подение тюрьмы, М., 1999.
66. Хабермас Ю., Демократия, разум, нравственность, М., 1995.
67. Хайек Ф., Дорога к рабству// Антология мировой политической мысли в 5 томах, т.2, с.416-428.
68. Шмитт К. Диктатура. От истоков современной идеи суверенитета до пролетарской классовой борьбы (Пер. с нем. Ю. Коринца под ред. Д. Кузницына), СПб.: Наука, 2005.
69. Шмитт К. Левиафан в учении о государстве Томаса Гоббса. М. Владимир Даль, 2006.
70. Шмитт К., Понятие политического// Антология мировой политической мысли в 5 томах, т.2, с.290-310.
71. Янг Ай. М., Политическая теория: общие проблемы./Политическая наука: новые направления, М., 1999.
72. Brzezinski Z., Between Two Ages. America's Role in the Technetronic Era. N.Y., 1970.
73. Hantington Samuel, Conservatism as an Igeology, The American Political Scense Review, N 12, June 1957.
74. Held D., Political Theory, Stanford Universiti Press, 1991.
75. Miler D., Political Theory, // The Blsckwell Dictionary pf Political Thought, N.Y., 1987.
76. Political Theory, tradition and Diversiti. Ed be A.Vinsent. Cambridge University Press, 1997.
77. Qutin Hogg, The Case for Conservatism, Harmondsworth, 1948.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Երկու խոսք	3
Ներածություն	5
Գլուխ 1. «Քաղաքական ուսմունքները նորագույն ժամանակներում» առարկա	8
Գլուխ 2. Ժամանակակից քաղաքական տեսության ակունքները ...	15
Գլուխ 3. Ժամանակակից քաղաքական տեսության հիմնավորման խնդիրները	27

Նորմատիվային քաղաքական տեսությունները՝ «Աջ ուղղվածություն»

Գլուխ 4. Նորմատիվ քաղաքական տեսություններ	51
Գլուխ 5. Լիբերտարիզմ և կոմունիստարիզմ	66
Գլուխ 6. Պահպանողական (կոնսերվատիվ) քաղաքական տեսություններ	79
Գլուխ 7. Ֆաշիզմ	94

«Ձախ ուղղվածության» քաղաքական տեսությունները

Գլուխ 8. Կարլ Մարքսը և քաղաքական տեսությունը	104
Գլուխ 9. Նեոմարքսիզմ	111
Գլուխ 10. Անարխիզմ	131
Գլուխ 11. Ստրուկտուրալիզմ և հետստրուկտուրալիզմ	138
Գլուխ 12. Մոդեռնիզմ և հետմոդեռնիզմ	149
«Քաղաքական ուսմունքները նորագույն ժամանակներում» առարկայի ծրագիր	183
Ինքնուրույն աշխատանքի թեմաներ	187
Հարցաշար «Քաղաքական ուսմունքները նորագույն ժամանակներում» առարկայի	190
Օգտագործված գրականության ցանկ	194

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԻԲԵԿԻ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒՍՄՈՒՆՔՆԵՐԸ ՆՈՐԱԳՈՒՅՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՒՄ
(Ուսումնական ձեռնարկ)

МАНУКЯН АРМЕНАК САРИБЕКОВИЧ

ПОЛИТИЧЕСКИЕ УЧЕНИЯ В НОВЕЙШЕЕ ВРЕМЯ
(Учебное пособие)

Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալաբյանի
Կազմի ձևավորումը՝ Ա. Պատվականյանի
Հրատ. սրբագրումը՝ Գ. Գրիգորյանի

Տպագրված է «Վարդան Մկրտչյան» ԱԶ տպագրատանը:
Երվանդ Քոչար 7-62

Չափսը՝ 60x84 1/16: Տպ. մամուլը՝ 12.4:
Տպաքանակը՝ 100:

ԵՊՀ հրատարակչություն

ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1